 Կախվեր է վրան Մոսկվայի:  
 Թուաստանը հոգնած մարտերեն եղեն  
 Ուշքը քեզ հանձնած անվրդով կը նիրճ  
 Մինչ Քրեմլի ժամացուցը հսկա  
 Կարծես մի առ մի իր հաշմե  
 Զարկերն անոր որտեհ՝ Հումկու և ուժելին:  
 Դում ուշադիր կը հսկե  
 Երգըրդ շովելու և տանանքին:



Դժվար է որոշել  
 Թե ով կը սիրե ավելի,  
 Մարդիկը քեզ, թե զո՞ւն զանգվածը մարդերուն:  
 Մանուկներն իսկ զեռաբարբառ  
 երբ ժպտին պատկերիդ առաջ,  
 Վանկին հետ առաջին, կը թոթովեն՝  
 Ստալին:  
 Չեն կրցեր բոլոր մեծավորներն անցյալի,  
 Ոչ իսկ իշխանավորները մեծահամբակ մեր դարուն,  
 Կապել իրենց այնքան սբուիք  
 Աշխարհներն հեռավոր:

## ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երշանկություն, վերշապես կրցա խլել քեզ կյանքեն,  
Այս գիշեր, երբ հարսնիք է ամեն քարի ու հարկի,  
Ու պահել քեզ որպեսզի ոչ մեկ սարսուռ, ոչ մեկ քեն  
Դան խոռվել սերերուդ անդորրությունը գաղտնի...

Լույսերու զով անձրկին մեջ ծփացող մայթերեն  
Կանցնինք այսպես միասին քայլերով մեղմ, իբր ստվեր,  
— Աչքերըդ փակ՝ ննջե զուն, ու կուզեմ որ չտեսնեն  
Թե ես ու զուն այս գիշեր գիրար գտել ենք կրցեր...

Երշանկություն, բայց գիտե՞ս կան քանիներ ձյունագես  
Աչքերնուն մա՞ս ու արցունք, որոնք հիմա կը դոզան  
Արյունաբորբ դեռ գալիք արեգակին դեմ վաղվան...

Կուզեմ քեզ տալ մաս առ մաս աղքատներու սեղանին,  
Տալ սիրահար որբ տղոց ու գեթ մասունքն ալ ետին  
Քայլերուա հետ ընթացող դնել մահվան գորշ ափին:

## ՍՏԱԼԻՆԳՐԱԴ

Ա.

Օտալինգրադ, Ստալինգրադ, Ստալինգրադ...  
Երկինք մը ծուխ, գեհեն մը բոց, ծով մը լավա,  
Ու դաշտերու, բլուրներու տեղ հարազատ  
Արյան օվկյան ու դիակի լեռներ հիմա...

Փամփուշտներու տեղատարափ, հեղեղ հսկա՝  
Անվերջ շաշով պողպատներու արյունաներկ,  
Ու փոթորիկ՝ սիրտերե սիրտ, ճամբե ճամբա  
Փըլատակված տուներե տուն ու փեղկե փեղկ...

Մերթ ալ հանկարծ մթին դադար մը կարճատե,  
Երբ ավելի սիրտերն ահեղ կը տըրոփեն,  
Բեռին ներքե սպասումին կապարաթե  
Եվ ականջներն ալ կը պայթին լոռվթենեն...

Եվ հուր շեղբեր, որոտ, ճիշեր սադայելյան՝  
Լույս գիշերին թե ցերեկվան խավարին մեջ,  
Աշխարհացոնց երկրաշարժներ ամեն վայրկյան  
Ինկող կուրծքեր՝ որոնց աշքին հույսեր անշեջ...

Բ.

Բայց ինչքան շուտ, ինչքան շուտ, դուն կը ցայտես վերստին  
Հրաշածին ով քաղաք, փառքիդ մեջ նոր և անմահ,  
Ուժեղ, անխոնջ բազուկեն, միտքեն կարմիր բանվորին  
Եվ այս անգամ ավելի հաղթակառուց ու վստահ:

Բայց դուն հիշես պիտի միշտ, հպարտությամբ մը արդար,  
Թե իրենց հուր արյունով քեզ կերպողներն երեկի՝  
Անիվներու մեջ հրեշ՝ ճմլվելով անբարբառ՝  
Փշրեցին սիրուդ գացող հրասայլեր թշնամի:

...Հանկարծ բոլոր հերոսներն հին դարերեն, գալիքեն  
Դըրոշիդ տակ շարվեցան, ու կարծես ուշմն անսահման՝  
Ինկողներուն՝ շարժեցավ ողջերուն մեջ գաղտնորեն,  
Կամ դիակներն ալ անշունչ անոնց կողքին կովեցան...

Գ.

Տվիր ինչ որ տալ չէին կրցած դարերն անսահման...  
Զեռքերուդ մեջ պատմության ճակատագիրը սեղմած՝  
Դարձար մեծ սիրտը՝ որուն հելքովն մարդերն ապրեցան,  
Եվ ուր վաղվան արկին կարմիր տրոփը պոռթկաց...

Դուն՝ ձյուներեն, արյունի ծովեն ծնած գարունին  
Հոգիներուն մեջ բացած շքեղ ծաղիկն հավատքին,  
Որ ծագելիք արկին կապրի շողերն առաջին,  
Որոնք իրենց հետ անմահ առտվան շունչը բերին...

...Ստալինգրադ—դուն դառնաս ուխտատեղի մը պիտի,  
Աւր ամեն օր երջանիկ քեզմով եղած մարդերեն  
Բյուրավորներ պիտի գան՝ չորս ծագերեն աշխարհի  
Եվ համբուրեն հողըդ սուրբ և հերոսներդ օրհներգեն...:

II  
Б Р 2 Б 4



## ՀԱՐՑԱԿԱՆԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ ՎԵՓԻՑ)

10.

1928 թիվն էր:

Անցնում էին տարիները տարիների ետևից: Վարդենին ու Անուշը սակայն չէին մտածում ծննդավայր վերադառնաւ և մասին:

Նուբարը վաղուց էր դադարել նրանց գրամ ուղարկել, և երկու քույրերը ստիպված էին աշխատելով շահել իրենց ապրուստը:

Աշխատել և ուսանել միաժամանակ...

Գերբնական ճիգով բռնած կատաղի ժամանակը, խառնը ված ընդհանուր հոսանքին, հավաքված ու ափերի մեջ ամուր սեղմած ցանկություններն իրենց, պայքարելով բոլոր խոշնդուների դեմ, վարդենին ու Անուշը վազում էին դեպի իրենց նպատակը:

Սկզբի շրջանում աշխատում էին գրասենյակում, հետո հյուսվածքի աշխատանոցում, բայց ի վերջո Հորել Օրտոլանը դարձավ նրանց փրկության աղբյուրը:

— Հիշ հոգ մի՛ ընեք, — ասում էր Շուշանը: — Կամաց կամաց ձեռներդ կը վարժվեն, վերշը մեքենայի դրամն ալ կը հանեք: Այդքան բան սորված եք, հիմա սորին կարե՞լը շպիտի կրնաք սովորել...

Ու Շուշանը, կյանքի դեմ պայքարողի փորձված արտահայտությունը դեմքին, խնամքով փաթաթում էր կարերի կապոցը:

Կարերի կապոցը...

Երբ առաջին անգամ Վարդենին թէկի տակ առած խոշոր այն կապոցը, տուն էր վերադառնում, ամոթից շիմացավ թե ինչպես անցավ փողոցով... Եվ երբ տուն ընկավ, քաշեց անմիջապես լուսամուտի վարագույրը, — ի՞նչ կը մտածեին հարկանները... Բայց նրանց մտահոգությունը երկար շտեհց: Նրանք շատ շուտով զգացին, որ այդ քաղաքում ոչ ոք իրենցով չէր հետաքրքրվում... Կայի՞ն, չկային, ո՞ւմ ինչ փույթըն էր...

Այնուհետև ամեն առավոտ կանուխ Վարդենին նետվում էր փողոց: Պետք էր կարը ժամանակին հասցնել, կրկին տուն վերադառնալ, վազել համալսարան, նորից տուն, նըստել մեքենայի առաջ, աշխատանքը ժամանակին վերջացնել, վազել գրադարան, իսկ առավոտ կանուխ նորից դեպի մետրո:

Արագ-արագ դառնում էր մեքենան Վարդենու ձեռքի տակ և հագուատները մեկը մյուսի ետևից նետվում էին Անուշի կողմը, որ իր հերթին շատապ-շտապ ամրացնում էր նրանց օճիքները, գոտիները, կոճակները:

Այսպես անցնում էր ժամանակը:

Այժմ մեկ տարի էր արդեն, որ Վարդենին ավարտել էր համալսարանը:

Մեկ ամբողջ տարի...

Առել էր վկայականը, փակել գզոցի մեջ, ո՞ւ... ու շրումակում էր կար անել...

Կար էր անում օրվա ապրուատը հազիվ շահելու համար, բայց չէր վերադառնում իր ծննդավայրը...

Վեց տարվա փարիզյան կյանքն այնպես է փոխել Վարդենում... Նոր մարդը բարձրացել էր արդեն իր մեջ, նոր մարդը, որ չէր ուզում այլևս ետ դառնալ դեպի հինը, իսկ հոգու խորքում հոռետեսությունն իր սերմերն էր ցանում...

Հոռետեսության սերմերը, որ գնալով նոր ծիլեր էին արձակում ու աճում, աճում...

Բայց ո՞վ էր արդյոք այդ սերմերը թափել Վարդենու Հոգու մեջ: Իր շրջապահութը, Փարիզը, թե՛ Զավենի ժպիտը...

Մի քանի տարի էր արդեն, որ Զավենը Փարիզ էր: Իր գալու առաջին իսկ օրից նա հորդորում էր քույրերին տուն վերադառնալ. գնալ հայրիկի և մայրիկի մոտ, որոնք ծերացել էին արդեն ու իրենց կարոտով էին ապրում:

— Փնտումների անվերջ ճամբաներ ենք բոնել մենք, Վարդենի, — ասում էր Զավենը, — փնտումների ճամբաներ... Եվ ով գիտե, թե այդ ճամբին մեր կորցրածը ավելի շատ չէ, քան մեր գտածը: Պետք է վերադառնալ, քանի ուզ չէ, որովհետեւ հետո ուզ կլինի այլևս... Մտածիր, թե ի՞նչ գնով, ինչպիսի ճիգով ես աշխատում դու ձեռք բերել թղթի այդ կրտորը... Դու կստանաս այդ թուղթը և կը դնես գգրոցի մեջ, կ նա այնտեղ էլ կը մնա... Այնտեղ էլ կը մնա, Վարդենի... Որ ի՞նչ: Աշխարհը շուր է եկել և արժեքները փոխվել են: Մենք մի սերունդ ենք, որի առաջ ճամբաներ չկան: — Պոկվեցինք մեր միջավայրից, կտրատվեց շղթան, և մենք դարձանք ցաք ու ցրիվ ընկած օղակներ: Մեր հոգիներում անդունդներ բացվեցին... Աշխատիր չկապել քեզ մեր սերունդի հետ, Վարդենի՛, մի՛ փորիր անանցանելի այդ փոսերը քո առաջ:

Վարդենին աշխատել էր ապացուցել Զավենին, որ մարդը պետք է միշտ ձգտե առաջ գնալու, պետք է շանալացնել իր մտքի հորիզոնը և այդպիսով հաղթահարե կյանքը:

— Առեղծվածային հարցեր են այժմ այդ հարցերը, Վարդենի, ամբողջ մարդկությունն այսօր հոգեկան տագնապ է ապրում: Չե՞ս տեսնում ամեն բան հիմնվել է նյութի վրա: Անհատը կորցրել է այլևս ինքն իրեն, մարդը կորցրել է իր Հոգին, ստեղծվել է ունիոն մի մարդկություն, իսկ դու եկել, քան ես փնտում:

Այսպես էր ասել Զավենը:

Եվ այն օրը, երբ Վարդենին վկայականը բացել ու փոել էր եղբոր առաջ, Զավենի ղեմքի վրայով տխուր մի ժպիտ էր անցել...

Փարիզ գալուց հետո Զավենը վճռել էր այլևս Թավրիզ շվերադառնալ: Այստեղ նա հանդիպել էր Նատային ու նորից կապվել նրա հետ:

Առաջին շրջանում նա հաճախ էր այցելում իր քույրերին, բայց կամաց-կամաց այդ հանդիպումները պակասում էին, ինչպես և պակասում էին ծնողներին ուղղված նամակները:

Նատայի մասին Անուշն ու Վարդենին զանազան բաներ էին լսում: Պատմում էին, որ նա ապրում էր մի ոռա երեմնի սպայի հետ, բայց միաժամանակ սիրում էր Զավենին և շեր ցանկանում բաժանվել նրանից... Ասում էին, որ նըրանք երեքով միասին միևնույն բնակարանի մեջ էին տեղափորված, բայց Վարդենին ու Անուշը ստույգ ոչինչ զգիտեին:

Ի՞նչ էր անում, ինչո՞վ էր վրադվում ինքը՝ Զավենը, նըրանք զատ բան չգիտեին: Գիտեին միայն, որ Զավենը նատայի հետ միասին աշխատում էր միենույն ձաշարանի մեջ: Բայց այդ մասին Զավենը բնակ շեր խոսում իր քույրերի հետ:

Ամեն անգամ, երբ Զավենը գալիս էր նրանց մոտ՝ շեր մոռանում Վարդենուն իր հերացումը կրկնել՝ շե՞ն վճռել արդյոք տուն վերադառնալ: Զավենը միշտ նույն տեսակետի վրա էր կանգնած: Խակ ինչ վերաբերում է իրեն՝ իրեն վրա Զավենը վաղուց արդեն խաշ էր քաշել կարծես:

Վարդենին ուսերն էր բարձրացնում ու գլուխը շարժում:

— Առայժմ ոչ Բայց վե՞րջը: Վերջը պետք է վերադառնան... Ի հարկե, պետք է վերադառնան, ի՞նչ պետք է անեն այստեղ, Փարիզում...

Վերջը... Բայց ե՞րբ: Այդ ինքն էլ զգիտեր: Նա գիտեր միայն, որ Փարիզը կրծում էր իրեն, կրծում թե հոգեպես, թե ֆիզիկապես, բայց հեռանալ նրանից դժվարանում էր այլևս...

Վարդենին զգում էր, որ Փարիզի պանդոկում, ուր ապրել էր ինքը, սրճարաններում, պողոտաների վրա, լույսերի

մեջ հալված, իր հոգուց մասնիկներ կային մնացած... Աւ թեև այդ զգացմունքը նրան ցավ էր պատճառում, բայց այդ այդպիս էր:

Ցավ էր պատճառում, որովհետեւ նա գիտեր, զգում էր, որ Փարիզը իրեն հարազատ չէ, որ կապվելով նրա հետ իր առաջ ոչ մի հեռանկար չկար: Բայց ի՞նչ աներ... Զէ՞ ո՞ր այնտեղ, հեռու իր ծննդավայրում, տխուր ու թախծոտ է ամեն բան, սուր ու տհաճ զգացողությունը մանր, ոշինչը կյանքի շարունակ պաշարում է մարդուն, և մեռնում են այնտեղ հոգու բոլոր թոփշքները...

Հեռու իր ծննդավայրում...

Ի՞նչ պետք է աներ ինքն այնտեղ:

Վարդենին զգում էր այժմ, որ այնտեղ ևս անելիք չկար իր համար:

Իսկ ժամանակը սահում էր, սահում... և կարի մեքենան շարունակում էր արագ-արագ պտտել Վարդենու ձեռքի տակ՝

Տիկ տակ-տակ, տիկ, տակ...

Դառնում էր հսկա ջրաղացքարը, դառնում ահաելի արագությամբ... Փարիզն իր խելակորուս ընթացքի մեջ էր շարունակ և Վարդենին ու Անուշը խառնվել էին արգեն այդ ընթացքին:

Իսկ անից եկած նամակներն այնպիս տխուր էին...

«Տունն այժմ տխուր է, ու գատարկ, — գրում էր Նուբարը, — պարտեզը լքված է բոլորովին և վարդի թիերը երկարել, փափել են սաքվի վրա... Թթենու հովանու տակ Մանին ամեն առավոտ, վաղեմի սովորության համաձայն, գցում է ձերքակ սփոռոցը, ինքնառոք վրան դնում, բայց մարդ չկա, որ նստե ու շանի շուրջը...»

Իսկ վերջին նամակը Տիգրանի մահն էր գուժում: Նուրաքն երկար-երկար գրել նկարագրել էր նրա թաղումը, իբենց ապրումները...

Մենակ, մենակ էին այլիս նուբարն ու Մանին...

Մեն-մինակ:

Նուբարի վերջին այս նամակը, ծանր, շատ ծանր տը-  
պավորություն էր թողել Վարդենու վրա:

Ամբողջ գիշեր տխուր ու սև մտքերը պաշարել էին նը-  
ռան, գիտեր, որ այլևս հասել էր ժամանակը և ինքը պետք  
է մեկներ... Պետք էր գնալ ծնողների մոտ... Փարվել նրանց  
սիրույն ու... ու միխճվել մոայլ այն իրականության մեջ...

Պետք էր գնալ այլիս:

Այդ գիշեր Վարդենին երկար չքննեց:

Վարդենին չգիտեր սակայն, որ կյանքն իրեն համար մի  
այլ ուղի էր գծել:

13

... Կայարանը լցված էր բազմությամբ:

Մարդիկ գնում էին, գալիս, վագում էին, շտապում:

Սուր հնչում էին մեկնող գնացքների սովորները: Հայկը  
շտապ մատեցավ գնացքների մեկնումի ժամերը ցուց տվող  
տախտակին ու քիչ հետո նրանք, երեքը միասին քայլերն  
ուղղեցին դեպի երկար մի մայթուղի:

Նրանք առաջանում էին դանդաղ՝ ուշադրությամբ նայե-  
լով գնացքի բոլոր լուսամուտներին: Բայց ահա, ահա Վար-  
դենու գլուխը... Կանգնած է նա լուսամուտի առաջ և թաշկի-  
նակով իրենց նշաններ է անում: Մոտեցան գնացքին: Ար-  
տոն մի վայրկյան կանգ առավ, մի բան խորհողի պես, հե-  
տո վճռական մի շարժումով բարձրացավ գնացք:

Այնտեղ, գնացքի բաժանմունքներից մեկում, տեղավոր-  
վել էին արդեն Վարդենին, Արմաշն ու Անուշը և սպասում  
էին Բագրատին:

Արտոն հանեց թաշկինակը, սրբեց քրտնած ճակատը,  
հետո նայեց շորս կողմից:

Իրար ձեռք սեղմելուց հետո բոլորը կանգնել էին լուս  
ու այլայլված... Կարծես էլ ոչինչ չկար իրար ասելու, կարծես  
ամեն ինչ վաղուց ասված էր արդեն ու այժմ մնում էր մի-  
այն մեկնելը, մեկնել ու հեռանալ:

Բարգենը, որ մոտեցել էր Արմաշին, աշխատում էր ձբ-  
նայել Վարդենուն: Նեղ եզրավոր գլխարկի տակից Վարդենու  
գեմքը տարօրինակ մի արտահայտություն էր ստացել, թշն  
էր մտածում նա արդյոք այդ պահին, Բարգենը շգփտեր, մինչ  
Վարդենին իր հերթին լուռ դիտում էր Բարգենին: Նա ու-  
զում էր մոտենալ նրան, խոսել նրա հետ,—բայց ինչի՞ ձև-  
սին: Գուցե կարելի լիներ փոխանակել նրա հետ մի քանի  
աննշան խոսքեր... Բայց չէ՝ որ միևնույն է, Բարգենն իրեն  
շպիտի հասկնար: Օտարութի մ' զգացում կանգնել էր  
այլև նրանց հոգիների միջև:

Անուշը քաշվել էր զնացքի մի անկյունն ու պարզ աշ-  
քերով դիտում էր այդ բոլորը:

Արտոն նստել էր Անուշի կողքին ու փորձված մար-  
զու նման զննում էր Վարդենու իրերը, որ դրված էին նրա  
զիսի վերեռում:

— Երկաթուղին ինձ միշտ մի քիչ տիրություն է պատ-  
ճառում,—ասաց Արտոն զառնալով Վարդենու կողմց:—Մար-  
դր, որ զնում է, կարծես թե հեռանում է քեզնից ընդհիշտ.  
Կարծես թե ուրիշ մի աշխարհ է զնում...

— Բայց այնտեղ, ուր գնում եմ ես, Արտո՛, ուրիշ աշ-  
խարհ չէ: Այնտեղ՝ մեր բոլորի հոգիներից մասնիկներ կան,  
մեր իսկական հոգիներից, մեր ճշմարիտ էությունից մաս-  
նիկներ... Այն, որ կորցնում ենք այստեղ, կորցնում օրեւ օր:  
Ուրիշ աշխարհը այս է, Արտո՛:

— Բայց այսօր պատնեշներ են կանգնած մեր միշն,  
Վարդե՞նի:

— Պատնեշները թղթե են, Արտո՛: Փորձիր հավատալ  
մեր երկրի վերածնունդին, փորձիր հավատալ, որ Արագածի  
լանջերի շուրջ վերաշինվում է մի նոր երկիր, ուր մի ժողո-  
վուրդ իր երջանիկ կյանքն է կոփում այսօր, և դու կը տես-  
նես, որ այդ պատնեշները չկան այլեւ:

Արտոն գլուխը շարժեց: Նա նայեց Վարդենուն: Վարդե-  
նու աշքերն այնպիսի փայլ էին ստացել... Հենված լուսա-

մուտին նա անդադար նայում էր դուրս, մեկին սպասողի անհամբերությամբ: Եվ հանկարծ... նա սկսեց թաշկինակն արագությամբ ճոճել օդում:

Մայթուղու երկարությամբ, աշքերը զնացքի լուսամուռներին հառած, արագ-արագ առաջանում էր Զավենը: Հեռվից նա նկատեց Վարդենուն ու քայլերն ուղղելով այն կողմբ, շուտով հե ի հե ներս ընկավ խցիկը:

— Որքան ուրախ եմ, որ եկար, Զավեն, — գոչեց Վարդենին, ակնհայտ հուզմունքով վագելով դեպի եղբայրը, — որքան ուրախ եմ:

— Եկա, եկա... ինչպե՞ս թե չգայի, Վարդենի, ինչպե՞ս թե չգայի... Չէ՞ որ...

Նա լոեց ինկույն, բայց Վարդենին նկատեց, որ հուզմունք ու սրտառուլ մի բան կար թափնված նրա ձայնի մեջ: Նա կանգնեց եղբայր դիմաց ու սկսեց դիտել նրան՝ անհուն սիրով լցված քրոջ աշքերով:

Իր եղբայրն էր նա, իր եղբայրը...

Բայց Զավենը շլողեց, որ քույրը երկար դիտեր իրեն: Նա շուտով վեր ելավ տեղից, սկսեց քննել Վարդենու երերը, հաշվել պայուսակները. լավ էին դրված արդյոք, վարչընկերին հանկարծ: Հետո մոտեցավ կրկին Վարդենուն, բռնեց նրա ձեռքերն իր ձեռքերի մեջ ու քնքշորեն սկսեց շոյել...

— Տաք հագուստներ ունե՞ս, քնելու տեղ ունե՞ս: Զգույշ եղիր, ճանապարհին շմբսես:

Արդ խոսքերը, խոսելու այդ եղանակը... Զավենի ձայնի ելեջները...

Վարդենու մեջ քաղցր մի զգացում էր արթնացել: Կարծես թե Զավենը շէր խոսողը, կարծես թե նուրարն էր եկել ու խոսում էր աչպիս: Գուրգուրում էր իր զավակին:

Հայրիկը...

Եվ Վարդենին առաջին անգամ լինելով նկատեց հանկարծ, որ իր եղբայրը՝ Զավենն այնքան, այնքան նման էր

Հալլբիկին... նույն ճակատը, նույն մազերը... ու ձայնի ջողագութը... սպառքենուն թվաց, որ տարիներ ի վեր կորցրած իր առը բորբ գտել էր հանկարծ: Իր մոտն էր նա այժմ իր հարազատ եղբայրը, այդուղ էր հիմա: Նա գրելեց Զավենին և ուղարկեց նրան:

— Զավեն...

Այո՛, այո՛, իր հարազատ եղբայրն էր նա: Վարդենին գտել էր նրան մի վայրկյանի մեջ... Բայց որքան պիտի տեղի ուղիղ այդ: Գնացքը նորից պիտի բաժաներ նրանց միջյանցից ու կյանքը հեռու, հեռու և պիտի տաներ նրան: Ու Ելայց Վարդենուն, որ ինքը գտել էր իր եղբորը նորից՝ ընդմիշտ կողը նելու համար:

Վարդենու աշքերը լցվեցին արցունքով և նա հագիւ կառողացավ՝ զսպել ինքն իրեն:

Զավենը շարունակում էր շոյել քրոջ ձեռքերը:

— Անուշին ես մենակ չեմ թողնի: Միշտ կայցելեմ իրեն, կ'օգնեմ մինչև որ նա իր գործն ավարտե:

— Իսկ դո՞ւ, Զավեն:

— Իսկ ես... Ես ակամա ալբել եմ նահանջի բոլոր կամուրջները, Վարդենի: Բայց դա կարևոր չէ հիմա... Խարեռ չէ զա: Քո նամակը ես կարդացի մեծ հուզումով: Փորձել եիր բացատրել ինձ քո զգացմոնները: Ես քեզ հասկանում եմ, Վարդենի: Դու սիրում ես Բագրատին... Բագրատը լավ տղա է, իսկ դո՞ւ, դու գեռ երիտասարդ ես, վերցրու կյանքն այնպես, ինչպես սիրուդ է տենչում: Ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես... Հասկանո՞ւմ ես, կատարյա՛լ երջանիկ:

Վարդենին հափշտակված կլանում էր Զավենի ամեն մի խոսքը: Այդ խոսքերը սպեղանի էին նրա սրտի համար: Նա իրեն այնպես մեղավոր էր զգում... մեղավոր իր ծնողների առաջ, Զավենի առաջ... Բայց Զավենն այնպես փոխված էր այսօր:

Մեկնումի ժամը կամաց-կամաց մոտենում էր: Կպասում  
էին Բագրատին:

Արտոն վեր կացավ տեղից ու մօտեցավ Վարդենուն:

— Վարդենի, — ասաց նա ձեռքը մեկնելով նրան: —  
Կարդացած գրքի նման դու էսօր ձալում, մեկ կողմ ևս նե-  
տում անցյալդ, բայց եթե մի օր հիշես մեզ, եղիր սր-  
գարամիտ: Դու գնում ես այսօր մի երկիր...

— Նա գնում է այսօր Հայրենիք, Արտո՛, գնում է նվիր-  
վելու նրա վերածնունդի մեծ գործին, խառնելու իր աշխա-  
տանքն ուրիշների աշխատանքին: //

Զավենը գարծավ, նայեց Արմաշին: Ի՞նչ աշքեր էին այդ  
աշքերը... Ինչքան կամք ու հավատ կար նրանց փայլի մեջ:  
Կամք ու հավատ... Հավատ հանդեպ մի գործի, մի գաղա-  
փարի, որի շուրջ Համախմբվել են մարդիկ ու կոփում ու-  
ստեղծում են ատաղձը նոր մի կյանքի: Իսկ ի՞նքը... իր ան-  
հատապաշտությունը... Ու թվաց Զավենին, որ անհատա-  
պաշտի իր փիլիսոփայությունը փոքրանում, փոքրանում,  
նեղանում ու վերածվում է փոքրիկ մի կետի: Մի կետ, որի  
վրա իր հոգին պտտվում էր անհանգրվան ու մենակ: Ու  
թվաց Զավենին, որ կյանքը, անցյալն իր ամբողջ, լարած մի  
մեքենա է եղել, որ պիտի դառնա, դառնա ու կանգ առնի  
մի օր...

— Այո՛, գնում եմ, Արտո՛, — պատասխանեց Վարդենին  
աղատելով ձեռքը եղբոր ձեռքից ու իր ափերի մեջ առնելով  
Արտոյի մեկնած ձեռքը: — Երբ պատահի, որ մի օր մենակ  
հնացած ժամանակ, բարձր Հարկի քո այն սենյակում նըս-  
տած, հիշես ինձ, եղիր անաշառ, Արտո՛:

Բայց այդ ժամանակ գնացքի երկար նրբանցքի մեջ ե-  
րևաց Բագրատի բարձր հասակը: Գրեթե միաժամանակ  
հնչեց առաջին սուլիշը...

Ու թեև ամենքն այդ ըոպեին էին սպասում, սուլիշն  
անպես անսպասելի թվաց հանկարծ...

Հո՞... Հո՞...

Ճշաց նա...»

Բագրատն արագ քայլերով ներս մտավ խցիկը: Մի բռպէ հայացքը պատեցրեց ներկաների վրա, հետո մոտեցավ, մեկիկ-մեկիկ սեղմեց բոլորի ձեռքերը: Արտոն անշարժ մնացել էր կանգնած իր տեղում: Երբ Բագրատը մոտեցավ նրան, նրանք լուս իրար ձեռք սեղմեցին ու երկար, երկար նայեցին իրար աշքերի մեջ:

Զավենը գրկեց Բագրատին ու շերմորեն Համբուրեց նրան:

— Քրոջս քեզ եմ Հանձնում, Բագրատ, — ասաց նա, — Հետո դարձավ, գրկեց Վարդենում:

Զավենի գրկից ազատվելով, Վարդենին սեղմեց իրեն Անուշի գանգրահեր գլուխը:

— Զավենը քեզ մենակ չի թողնի, Անուշ, իսկ հետո... — Բայց նա խոսքը շվերջացրեց:

Այդ ժամանակ, մինչ այդ լուսած ու մի կողմ քաշված Բարենը մոտեցավ Վարդենուն, արագ բռնեց նրա ձեռքը, Հետո առանց մի բառ արտասանելու, կուացավ ու շտապ մի Համբուրը դրոշմելով նրա վրա, համարյա վազելով դուրս եկավ գնացքից:

Նրա ետևից Հերթով ցած իշան և բոլորը:

Գնացքում մնացին Վարդենին, Արմաշն ու Բագրատը, որ կուացած նեղիկ լուսամուտից նայում էին վար, որ սկսվել էր արդեն հրաժեշտի իրարանցումը:

Գնացքի մի ծայրից մյուսը պաշտոնյաները դրոշակներով իրար նշաններ էին անում: Ուրիշ մի պաշտոնյա՝ երկար մուրճը ձեռքին՝ թեթևորեն խփում էր անիվներին ու առաջանում:

Հանկարծ շոգեկառքի սև ծխնելույզից ծուխի թանձր պալաններ դուրս շպրտվեցին վեր: Մեկ անգամ էլ մեկնող ներն ու մնացողները նայեցին իրար: Մեկ անգամ էլ լուսամուտից մեկնած ձեռքերը ճոճվեցին օդում և գնացքը տքաց ու հեաց և կամաց-կամաց առաջացավ՝ մութ կամարների

տակից թանձր խավարը ճեղքելով դեպի լուսաբաց մտնելու  
շամար:

Քնիացող գնացքի հետ միասին Անուշը քայլում էր ա-  
ռաջ, առաջ... Աշա Վարդենու զվիարկի ծայրը, աշա Ար-  
մաշը, Բագրատը...

Նա գրեթե տարվել էր այդ ընթացքով...

Քնիացքով... թէ՝ Բագրատի աշքերով... —

Կիսախավարի մեջ, շարժվող գնացքի լուսամուտից  
դուրս նայող այդ աշքերը...:

Այդ աշքերը...

— Բագրատ... Բագրատ...

— Մնաս բարե, Անուշ, մնաս բարե...

— Քո աշքերը նման են թեհեղ տատի աշքերին, Բագ-  
րատ... թէ-հեղ տատի աշ-քե-րին...

— Հու...

Ճշաց շոգեկառքի սուլիչը վերջին անգամ ու գնացքը  
նետվեց այլևս տարածության գիրկը:

Ամենքն անշարժացած էին այլևս:

Ամենքը նայում էին հեռու, հեռու՝ երկաթե դույգ այն  
գծերին... ու նրանց վերը բարձրացող պալան-պալան թանձր  
այն ծուխին...

Մայթի վրա քարացել, մնացել էր Արտօն:

Մեկը զգուշությամբ բռնեց Անուշի թեփ:

— Անուշ...

Զավենն էր:

Լուրջ ու տիսուր նա նայեց Անուշի աշքերին, իր ափի  
մեջ սեղմած պահելով կապույտ թղթի մի կտոր... — մի հե-  
ռագիր, որ նա թագցրել էր Վարդենուց... Մի հեռագիր, որ  
Հայրիկի մահն էր գումարմ:

Նուբարը մեսել էր:

Մեռել էր ու թաղել էին նրան արդեն... Գրիգորի Եղան-  
գուլին էր հեռագրել:

Անուշը լուս բարձրացրեց գլուխը: Նայեց եղբորը: Հետո  
կրկին աշքերը սենուց հեռուն, հեռում...

Անհետացող ծուխի քովաները պալան-պալան պտտվում  
էին օդում...

Անուշը նայում էր, նայում թանձր այն ծուխին, ոլոր-  
ուր պալաններին...

ԱՅտ, ահա վերջին քովաները կը բարձրանան վեր, վեր  
ու կը ցրվին, կը ցրվեն օդում... Անուշի կյանքի պես, Անու-  
շի անցյալի պես:

**ԴԵՐՁԱԿ ՄԸ, ԻՐ ԵՐԿՈՒ ՀՅՈՒՐԵՐԸ  
ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԴԵՊՔԵՐ**

Շենքը շափաղանց հին թլալուն համար փոք տված էր բակին կողմը, իսկապես վտանգավոր կերպով: Եվ որպեսզի ք փլի, անոր կոթնցուցած էին փոքրիկ ավել մը, որ իր կանաչ կոթին վրա կը կրեր դեռ Կալբոի Լաֆայաթի պիտակը: Այս անարդանքեն զատ շենքին կոթնցուցած էին նաև երկու հակա գերաններ, որոնք սալաքարերեն մեկնելով կը նետվեին մինչև երկրորդ հարկ, և հոն, պարագային համաձայն— շկանց կուտացին թոշնիկի մը դալլացին կամ կը շորցնեին նամակաբերի մը շորերը: Ահա այդ գերաններու տակն էր կծկտած Տիրանի բնակարանը, որ կը բաղկանար գետնահարկ երկու սենյակներեն, անոնցմե մեկը հազիվ հազ կրնար անկողին մը պարունակել, որով Տիրան առանց վարանելու զայն կը կոչեր ննջարան և հոն կը պառկեր: Իսկ մյուսը, որ ընդարձակ է, միաժամանակ կը ծառայե իբրև գերձակի աշխատանոց և իբրև գերձակի խոհանոց: Մեքենային տակ, արդուքին քով և սեղանին շուրջը կերպասի կտորներ կը սուզան որդերու պես, խանձած շուխայի հոտ մը կա, կան ամուրիության վկայականներ քիչ մը ամեն կողմ, և պատին վրա էլեկտրականության հաշվող ջին գործիք մը (compteur) զոր Տիրան կըթած է: Ան կը հաշվե, երբոր Տիրան պատշաճ նկատե, և կը դադրի գործելե, երբոր Տիրան անհրաժեշտ շտեսնե: «Ո՛ւ, կեցիր» կըսե երիտասարդը թթքերեն լեզվով, որպեսզի քիչ վճարե, և իրավամբ կը Գաջողի կեցնել զայն՝ տալով մեկ քանի ճարտար ապտակներ, որոնց զալտնիքը ինք ունի, և զոր ձեռք ձգած է երկարատև փորձերեցել:

Խոհանոցը աշխատանոցին կը պատվի պատին փակցված պատկերով մը, որ պարբերականն մը փրցված է և կը ներակայացնե Կապի Մոռլեյ՝ ոտքի: Բացի կիրակին (բարեկամուհին օրն է այն) Տիրան տունը կը ճաշե, կերակուրները ինքն իր ձեռքովը պատրաստելով: Երբոր պատահի, որ ձախողի և ճաշը անհամ ըլլա, գերձակը իր բարկությունը կառնե Կապիին՝ բացականչելով սա խոսքը կամ անոր մեկ փոփոխակը.

— Քեզի մա՛րդ գիտցանք տե յահնիի Հսկիչ կարգեցինք... զերասան շե՞ք մի, Հավկիթ մը անգամ խաշել շեք գիտեր...

Իրականին մեջ սակայն իրենց Հարաբերությունները խիստ սիրալիր են: Կերակուրները Հավկագեպորեն միայն անհամ կըլլան, որովհետև այժմ գոնապանուհին սորված է արևելյան կերակուր եփել: Խնդումներես և առատաձեռն Հայը կրցած է սիրաշահել տիկին Պյուքը, որ Հակառակ իր Համիտենական Հղության, կաշխատի ու կը շարժի անվերջ: Ացդպես է, որ առանց իր վիճակին ուշադրություն ընելու բռնեց պայուսակներին մեկուն ականչեն և ուզեց զայն ինք անձամբ փոխազրել մինչև գերձակին սենյակը, երբ Հասկցավերկու նորեկներուն ինքնությունը: Որովհետև երկու նորեկները ժամանեցին, և անոնք կեցան վողոցի դռան հոսանքին մեջ երեք պայուսակներու և տգեղ շոֆեռոփի մը Հետ: Տիկին Պյուք ըստավ մեծ իրարանցումով.

— Դուք օրիորդ Ալիսն եք, իսկ գուք, պարո՞ն, օրիորդ Ալիսի Հայրն եք... գիտեմ, գիտեմ, Պոլսեն է որ կուգաք...

Եվ անմիջապես շոփեռոփին ձեռքեն դրամատոմար խլելով վերագրածուց Հայուհին և իր փեշը վեր առավ իր գրպանեն վճարելու Համար կառքին ծախքը: Կարծեք թե կտոր մը դեղին բոմպինեզն վճարեց և ավելցուց—«Աս ալ ձեր փուռպուռն է»:

Դռնապանուհին և երկու նորեկները սենյակ անցան և հոն մեծցավ տիկին Պյուքի ոգեսրությունը: Ան ըսավ, թե մեսիոն Տյուռանը շուտով պիտի գա, շատ շուտով, թե ան

անհամբեր կ'սպասեր ձեր ժամանումին ~և երկարորեն խոսած էր ինձ: Միշտ ճիացումով կ'արտահայտվեր ձեր վարպետությանը մասին և կ'ըսեր, թե գերձակությունը ձեղմեն է, որ սորված է Պոլիս եղած ատեն: Բայց նախ տիկին Պյուք պահանջեց, որ նստին ու հանկչին սա աթոռին վրա, Հանեն իրենց օձիքը և Յետո լվացվին, եթե կ'ուզեն: Ո՛չ, ծորակո այսպես պետք է բանալ, իսկ գալով սուրճին, զայն կրնանք պատրաստել գյուրությամբ: Հավատացեք, որ շատ լավ ըրիք հոս գալով. շա՛տ լավ: Ինչո՞ւ պիտի մնաք այդ զգվելի երշիքը, որը այլևս գործ չկա մանավանդի հայերուն համար: Փառք Տիրոջ, հոս գործը առատ է, և մանավանդ ձեզի պես վարպետ դերձակ մը բնավ պարապ /չի մնար: Տեսի՛ք մեսեն Տյուտանը, այն միշտ կ'աշխատի և բնավ պարապ չի մնար: Բայց ուրիշ բան կա, ի՞նչ պատճառով բոլորդ մեկ չը գաղթեցիք: Որովհետեւ գուք տունը շորս հոգի եք և ոչ թե երկու: —Հակառակ իր շատախոսության, գիրուկ տիկին Պյուքը այնքան համակրելի էր, այնքան պարզ մտերմությամբ մը կը խոսեր, որ զաղթական հայերը սիրով մտիկ կընեին զայն, թեն գերձակը ոչինչ կը հասկնար, իսկ իր աղջիկը՝ քիչ բան: Թուրքերը կատե՛մ, կրսեր տիկին Պյուք, ամբողջ հոգիովս կատեմ այդ գաղանները, որ ձեզ չարդեցին: Նույնիսկ երեխանները շարդեցին: Տեսեք, Հիմա ալ նոր օրենքին համաձայն այլևս չեն թուցատրեր, որ հոն վերադառնաք, հակառակ որ ձեր երկիրն է ան դարերե ի վեր: Բայց դուք ագելի կանուխ Փարիզ գալու էիք, որովհետեւ...—և հանկարծ տիկին Պյուք ըսավ հայուշիին—օրիո՛րդ Ալիս, շատ համակրելի եք դուք, և տարօրինակ բան՝ զորսիրացիի հնչում ունիք: Պայտապակները բացվեցան, զանազան առարկաններ տարտըզնվեցան հարմար ու անհարմար անկյուններ և կտրեցավ ծուրակին ջուրը: Տիկին Պյուք գնաց ու հեկավ անդադար, իսկ իր տղան բակի գերաններեն մեկուն վրայեն վար իշնալով՝ եկավ կանգնիլ բաց դրան մեջ: Անոր հաջորդեց երկրորդ մանշ ո՛ը, ավելի պղտիկ և Յետո երրորդ մը, որ այլևս շորս ոտքի վրա կը բաւեր: Եվ կարծեք թե այս բոլորը բավական ըըլլային,

բաց դռնեն ներս անցավ նաև անթիւի մը ճոխնչը, սև կատու մը, իր մեկ ձագը, իր ձագերը: Սուրճը ճորդեցավ:

...Անշուշտ մեծ էր Տիրանին ուրախությունը, քանի որ տարիների ի վեր ասոնք առաջին ազգականներն էին, հոդ չէ, թի ոչ շատ մոտավոր, որոնց երեսը կը տեսներ: Տագիս աղաւուրջը նայելով ըսավ—«Ծո տղա, գուն ե՞րբ դերձակ եղար.. Մարսը ո՞ւր, դերձակությունը ուր»: Ճիշտ է, որ Տիրան տարի մը միայն աշակերտած էր Տագես աղային մոտ և հետո մեկնած՝ այս արհեստին մեջ հարժարություն շռնենալուն համար: «Գործի մտած օրս մայրիկս մատնոց մը նվիրեցինձ և խառնվածքս գիտնալով՝ ըսավ թե պետք է շանամի խելքս կարին տալ և աշքը մտնալ հայրիկիդ: Եվ առաջին որո իսկ, երբ որ երեկոյին տուն դարձա, մայրիկիս վիզը նետվելով ըսի թե անմի՛ջապես, անմի՛ջապես աշքը մտած էի վարպետիս: Խանութին մեջ մուկ մը սատկեցուցած էի: Մի՛տքդ է, վարպե՛տ: Իրավ է, որ մեծ քանոնը կոտրեցավ. բայց սատկեցավ նաև մուկը: Ա՛սափ մուկ մը»:

Բայց հանկարծ տրտմեցավ երիտասարդը, որովհետի հեռավոր ու սիրական գիմագծեր իրեն երևան շատ նորոշ գույներով, անփոխարինելի ջերմությամբ և ինք ըսավ իր վարպետին սա տեսակ տրտում խոսքեր—«այս աշխարհը պարապ աշխարհ է» և «օ՛ֆ, օ՛ֆ»: Բարեբախտաբար ծագեցան ուրիշ հարցեր և վարպետը Տիրանի մեկ հարցումին պատասխանելով ըսավ, թե հակառակ ստացած ապահովիչ տեղեկություններուն, ինք չէր ուզած իր այսափ տարվան տունը քանդել մեկ անգամեն և այդ պատճառով է, որ Փարիզ չէին եկած ամբողջ ընտանյուր:

— Նայի՛նք, ըսավ վարպետը. Եթե աստեղի վիճակը գործիս գա, կարենանք ապրիլ, այն ատեն քրոջս կը գրեմ և ան ամեն քան ծախելով Սմբատին հետ կ'ըլլա կուգա: Նայի՛նք...

Ասկե հետո պատահեցան մեկ քանին այն սովորական դեպքերուն, որոնք անխուսափելիութեն կը հաւածեն դադիւ-

կանները: Այն մոտավոր պանդոկը, ուր ապաստանեցան Հայր ու աղջիկ, մլուկ ելավ: Ամբողջ գիշեր մը անքուն անցնելե վիրշ—որուն պատճառավ հանդիմանություն ալ ստացան պանդոկապետեն, որ նշմարած էր լույսին երկարատև վառ մնացած ըլլալը—ուրիշ սենյակ մը ուզեցին: Բայց ան ալ երկու պոլսեցիները լեցուցին գիշերային անեծքով: Հետևանք՝ նաստիկ հարրուխ մը եղավ Ալիս, բայց բարեբախտաբար վրա հասավ իր ընկերուհին, Աստղիկը, որ զինքը տարավ իրենց տունը, Սեն-Մանտե: Գալով Տագես աղային, ան սկսավ գիշերել Տիրանին մոտ, մինչև հարմար սենյակի մը հայտնությունը, մինչև Ալիսի վերադարձը: Եվ որովհետև այս բոլորին պատճառով դերձակին գործը բավական ետ էր մնացած, վարպետը թերը սոթթեց և սկսավ աշխատիլ իր նախկին աշակերտին Հետ, և միաժամանակ խոսեցան Հինեն ու նորեն, սարեն ու ձորեն, Հայերեն ու թրթրեն:

Երբոր Իղմիրլյանը խորան կ'ելլեր և փայտե մուգմը ձեռք կ'առներ, մենք գիտեինք, թե իմ մեծ եղբայրս է, որ «դռնաբացեք»-ի տախտակը կը բռնե վարագուցրին ետև: Իղմիրլյանն ալ գիտեր: Ի՞նչ օրեր, ի՞նչ օրեր էին, այս օրվան պես միտքս է: Ան Զատկին նոր շապիկներ կարվեցան և իմինս մասնավորաբար շատի վրա շինված էր. օձիքին տակն ալ Տ մը և Պ մը կար: Տագես Պալապանյան: Գալրաց դասուն մեջ շկար մնկը, որ շուշեր տախտակը ինք բռնել-բայց լուսահոգի Հերիմյանը՝ չէ՛ կ'ըսեր: Տախտակը Լևոնը սիրտի բռնե՛ վեսելամ կ'ըսեր: Եղբորս պես ձայն ունեցող մեկ հատ մըն ալ շկար. Երբ որ թող տար «Օվասաննան» մինչեւ մեր տունեն կիմացվեր: Աս Լևոնին ձա՛յնն է կ'ըսեին: Մասնավոր հոճաներ կուգային եյուպներեն, Ֆաթիհներեն մեր երգեցողությունը լսելու համար: Անոնց գալրաց դասը ամինեն կատարյալն է կ'ըսեին: Ի՞նչ օրեր էին, ո՞ւր ե՞ն այդ օրերը: Բոլոր տղաքը զատկան օրորոցներուն մեջ կը խաղան, կը խնդան, հավկիթ կը փոխանակեն, իսկ ես ասդին

կովամ: Կ'ուզեմ անպատճառ Հետս առնել շապիկս: Զէ՞ մի  
որ անոր օձիքին տակ Տ մը և Պ մը կա: «Ան իմինս է, հետս  
պիտի տանիմ» կ'ըսեմ: «Տագես Պալապանյանը ե'ս եմ» կ'ը-  
սեմ: Ի՞նչ ըսես, տղու խելք: «Տարիներ վերջ (դեռ դպրապետ  
չէի) հարցուցի իդմիրլյանին—Սբբազա՞ն, կը Հիշե՞ք, որ մը  
արարողության տաեն նվազեցա ըսի, որովհետև ծոմ բռնած  
էի Ս. Հալորդություն առնելու համար, ըսի: Խորհրդարանին  
մեջ է, որ խոսեցա: «Կը Հիշե՞մ, կը Հիշեմ» ըսավ: Եղբա՛յրս  
ալ Հիշեց: «Անոր ձայնը դեռ ականջներուս մեջն է» ըսավ:

Երենց զբաղումին պատճառով չէին կրնար գնում կա-  
տարել և կերակուր եփել, այնպես որ Տիրան իր վարպետը  
առաջնորդեց մոտակա թքն - ոչո ճաշարան մը, ուր կերան  
ծեծ ուտելու պես: Երբ որ ազատեցան աղմուկեն, հրմշտուքեն  
և խոհանոցի ծանր հոտեն, կրկին վերադարձան կարի և  
անվերջանալի խոսակցության: Այդ քմահաճ խոսակցության  
ընթացքին է, որ Տիրան կանգ առավ կարեսը նյութի մը առ-  
ջեւ: Ի՞նչ պիտի ըներ վարպետը, Երբ որ պատահմամբ կոր-  
սվեր Փարիզի մեջ: Բնշաբե՞ս պիտի գտներ իր ճամբան, Երբ  
Փրանսերեն ըլ գիտեր: «Մենք ատոր դարմանը դատած ենք»  
ըսավ Տիրան և անմիջապես սպիտակ թուղթի մը վրա գրեց  
հետեւալը—«Կը կոշվիմ Տագես Պալապանյան, հայ եմ, ու կը  
բնակիմ Մառքսատե փողոց: Կը խնդրեմ, որ զիս հոն առաջ-  
նորդեք»: Եվ վարպետին պատվիրեց, որ այս թուղթը պահե  
ինամքով:

Տիրան իր ետևեն քաշեց վարպետը—որուն վրա այլս  
բնավ կարողություն չէր մնացած, այնքան, որ շրջած էին  
պանդոկե պանդոկ—և ներս մտավ նեղ դռնեն: Հետո պան-  
դոկին գրասենյակը անցնելով հարցուց.

— Ներեցեք, օրիո՞րդ, երկու հոգինոց սենյակ մը ոմնի՞ք  
արդյոք: Բարեկամիս և իր աղջկանը համար է... այո՛, ամ-  
սըլվան համար:

— Ոչ, պարո՞ն... դժբախտաբար ոչ... երկու հոգիի հա-  
մար ըսիք, չէ՞... այսինքն թե... թեև սենյակ մը ոմնի՞ք,

բայց այս պահում ներսը մարդ կա... չե՞ք կրնար ժամ մը  
վեջ անդամ մը ևս հանգիպել սենյակը այցելելու համար...  
հեռո՞ւ կը բնակիք... ո՞ր կողմ կը բնակիք:

Ճիշտ այդ պահում է, որ գրասենյակին խորը գտնվող  
ապակեպատ դուռ մը բացվեցավ աղմուկով և ներս խուժեց  
կին մը: Այս ներխուժումը եղած էր այնքան բիրտ, որ դռան  
բռնիշը մնացած էր կնոջ ձեռքը: Չորս կողմը միսի գունտեն-  
բով բեռնավոր, խոշորակաղմ, կաշը մբռւճն էդ մըն էր եկո-  
վը, թեզանիքները մինչև արմուկներն վեր սոթթած և դեմ-  
քին կարմրություննեն կը հասկցվեր, որ խոհանոցի կրակեն  
կուգա: Թերեւս կուգա՝ սղմոտուքե: Խոյացավ գրասեղանին  
առչել նստած աղջկանը վրա, որ նիշար էր ծրագիր—կանո-  
նագրի մը պես, ու գոռաց.

— Աղջի՛կ, գուն խե՞նթ ես, հիմա՞ր ես, թե չէ գիտ-  
մամբ ընել սկսար: Աս երրորդ անգամն է, որ քու տիտար  
պատասխաններովդ իմ հաճախորդներս կը փախցնես: Երեկ  
նույն բանը ըրիր, առջի օր նույնը: Մինչև այսօր ինայցիցի  
քեզ, բայց հիմա փառավոր ապտակի մը արժանի ես: Ար-  
ժանի ես ըսի՛ լուե: Ո՞ւր տեսնված է, որ 19 տարեկան աղ-  
ջիկ մը հաճախորդին պատասխանե—«վերջը չե՞ք կրնար  
բալ... ո՞ւր կը բնակիք... հեռո՞ւ կը բնակիք... Զեր ոռուեր-  
ցուն ալ ձեզի հետ կը բնակի»: Բերանդ շբանաս՝ ինքնիրմես  
կ'ելլեմ... Մտիկ ըրե և սորվե, թե ինչպե՞ս կը խոսին Փա-  
րիզին մեջ:

Եվ դառնալով դպրապետին, որ ֆրանսերն բա՛ռ մը  
իսկ չեր հասկնար, արտասանեց հետելալը.

— Այս, պարո՞ն, երկու հոգինոց սենյակ մը ունինք:  
Գինը 200 ֆրանք է: Անմիջապես կրնաք այցելել զայն, եթե  
կը փափաքիք:

Տագես աղա արդեն հոգնած ու դժգոհ, քիթը բերանը  
ծամածուելով հարցուց.

— Ծո Տիրա՞ն, ինե ի՞նչ կո՞ւզե կոր աս պաշշավուշը:

— Բայց չե՞ն կրնար այցելել, ներսը մարդ կա, առար-  
կեց աղջիկը վախով:

Պանդոկապետութին ավելի կատղեցավ, բայց վիճաքաւնության ամենեն տաք կետին վրա՝ հանկարծ գուրս նետվեցավ գրասենյակին, առարկելով, թե բոպէ մը իսկ ավելի եթե մնա Հոն, ձեռքին դժբախտություն մը պիտի ելլի: Դուան բռնիչը, որ ահավասիկ՝ աղջկան քթին բերնին պիտի նետե, եվ երկու հայերը ետևեն քաշելով՝ սկսավ սանդուղները բարձրանալ: Վեր կ'ելլեր սանդղամատերը սարսափեցնելով, թեզանիքները վար կ'առներ, զոգնոցը կը նետեր յուզուաբարիքին վրա, շարունակելով պոռպառալ: Այդպիս գրգռված վիճակով հասավ թիվ 11 սենյակին առջև ու զարկավ:

Երրորդ և զորավորագույն հարվածին վերջ՝ խորունկան եկող ձայն մը պատասխանեց.

— Բայց, տիկի'ն ժամու, չե՞մ կրնար բանալ... բարեկամիս հետն եմ...

— Ինձի հետ ըլլալու չեի՛ր յա, բացականչեց մյուսը, հարկա՛վ բարեկամիդ հետ պիտի ըլլաս... ինձի նայե, ու քեզ կուկու, կարծեմ գուն շափը անցուցիր: Ամեն օր կուկասինձմե սենյակ կը վարձես մեկ ժամկան համար, և փոխանակ ըստ ընդունված սովորության մեկ ժամը յոթանասովք հինգ վայրկյան հաշվելու, երեք ժամ կը փակվիս ներսը: Մինչև հիմա gentille գտնվեցա հետդ և դիտողություն չըրի, շայց եթե խելացի աղջիկ ես, պիտի ջանաս, որ հետդ շավը գիմ: Որովհետեւ հետդ պիտի ավրդիմ, եթե այսպիս տես:

— Բայց, տիկի'ն ժամու, առարկեց ձայնը, միայն կես ժամ եղավ մեր սենյակ մտնելը...

— Կե՞ս ժամ: Երբե՛ք, քառորդ մը միայն եղավ, բայց հակառակ ատոր, կ'ուզեմ որ դուռը բանաս: Լուրջ հաճախորդներ ունիմ հոս, և երեկվան պես զանոնք կրկին քոչ պատճառավագ կորսնցնելու բնավ տրամադրի չեմ: Լո՛ւրջ հաճախորդներ ունիմ հոս, օտարականներ, որոնք ամսվան համար պիտի վարձեն...

Լուրջուն մը տիրեց և հետո վերսկսավ փոխասացությունը: Երբ որ պանդոկապետութին բոունցքի հարվածները սաստիկացուց գուան վրա, կուզն աղերսից ներսին.

— Բայց, տիկի'ն ժամու, մեր այս վիճակով... անմիշապես:

— Անմիշապես ձեր այդ վիճակով դուքս ելեք ըսառչունիմ: Ֆրանսերե՛ն է խոսածս: Անկողին մտեք, եթե դուրսն եք, վերմակով ծածկվեցեք ամբողջությամբ, և մնացեք անշարժ՝ մինչև որ մենք մեկնինք: Արգեն ակնարկ մը միայն պիտի նետենք և դուրս ելլանք: Այդպեսով դուք իմ առևտուրիս արգելք եղած շեք ըլլար, և ես ալ... անհոգ եղեք՝ երկու ծեր պարոններ են:

— Բայց, տիկի'ն ժամու, հավատացնք, որ չենք կրնար հիմա...

— Sapristi! պատճառը շատ աղեկ գիտեմ: Անպայծան նորեն վերմակը կորսնցուցած եք: Ով գիտե ուր նետեցիք: Մահմակալին տակ աղեկ նայեցեք...

Բանակցությունները ավելի տաքցան, մոտակա դռներ բացվեցան հետաքրքրությամբ, երկու կինները լրջորեն առին տվին, իսկ Տիրան ըսավ վարպետին ականջն ի վար—«ասանկ դռնբացեմ դուն տեսած էիր»: Վերջապես համաձայնություն գոյացավ: Նիդը բացվեցավ, մինչ աղջկան ձայնը միաժամանակ կը հրամայեր.

— Մինչև որ «ներս մտեք» շրսեմ, մի՛ մտնաք:

Բոլղիկ ոտքերը փախան, մահմակալը երկու անգամ հազար, կտավներ բացվեցան, պրկվեցան, և հետո հեռվեն, կարծես հորի մը խորեն ձայնը ըսավ—մտե՛ք:

Երկու մեռել՝ պատանքված:

Վերմակը երկու հոգինոց վերմակ շէ, ոչ ալ բավականին թանձր, այդ պատճառով, երբ որ երիտասարդները քաշեր ու պրկեր են զայն լավ ծածկվելու համար, տվեր են պարզապես իրենց մերկ մարմնին կաղապարը: Վերի երկու գունտերը անշուշտ երկու գլուխներն են, հետո կուգան ուսերը, հետույքները և սրունֆները: Ո՛չ, ո՛չ, աղջիկը այս կողմինը պետք է ըլլա, որովհետեւ... Տեսե՛ք, մեծ պատուհան մը ունիք հոս, որուն վարագույրը եթե բանաբ՝ փողոցը կ'երևա ամ-

Քողջությամբ: Դիրքերնիս շատ լավ է, քանի որ առև կստանանք առավոտները: Իսկ հոս ոմինք տաք ջուր և պաղ ջուր: Կա նաև... ի զուր կինը սենյակ մտնելուն պես սկսած էր իր այս դասական խոսքերուն՝ Տիրանին և վարպետին ուշագրությունը հրավիրելու համար մեծ պատուհանին վրա, որդիկ տաք ջուր և պաղ ջուր կը վազե, կամ վարպետը ըստ վրա, որոնք հանգստավիտ են... երկու հայերը իրենց ակնարկը անմիջապես դարձուցած էին նախ գեղի մահճակալը, և հետո աթոռները: Անոնցմեն մին կը կրեր կնոջ հագուստ մը, կարմիր զույլինեզոն մը, սեղմիրան մը, իսկ մյուսին վրա կային այլ մարդու զգնուտներ, ճերմակեղեններով հանդերձ: Շըմինեին վրա էին Petit Parissien մը, ակնոց մը և երկու գլխարկի: Այլ մարդուն գլխարկին վրա ոսկեհյուս տառերով գրված էր.

### Chaussure Raoul

Բայց, երբ Տիրան շըմինեի քարին ծայրը նշմարեց շատ ավելի մտերիմ և աղտոտած առարկա մը, գլուխը անմիջապես դարձուց վարպետին: Եվ տեսնելով անոր արտահայտությունը, իր երկու ափերովը մեկեն ծածկեց իր քիթն ու բերանը՝ խնդրութին՝ ժայթքումը կասեցնելու համար: Շառագոնեցավ, աշքերը բացվեցան, կասկած չունեցավ, որ մարդը նշանավոր բան մը պիտի ըստ... ահա, որ վարպետը իր ձեռքը երկարեց դեպի մահճակալը... ահա, որ բերանը բացավ... Ճառու: Մինչդեռ երկու հայերը կը նայեին անշարժ պառկողներուն, ստացան այս պատասխանը—Ճառու...

Պարզապես շատ պրկված հին սավանն է, որ պատուած էր վերեն վար, մեծ աղմուկով:

Սնկողնին մեջ երկու մարմինները ցնցվեցան, կուուն սուր ճիշ մը արձակեց, իսկ «կոշիկ Ռատու» ըսավ—merde!: Խեղճերը կը կարծեին, որ ծածկոցն ալ սավանին հետ պատռելով իրենց մերկությունը մեջտեղ էր ձգած:

Պանդոկապետուհին երեք անգամ պոռաց, թե աղետը մեծ չէ, անմիջապես երկու հայերը դուրս հրեց սենյակեն և անսպասելի ձայնով մը սկսավ ինդալ սաստի՛կ, սաստի՛կ:

Տիրան փլավ տեղն ու տեղը, ինկավ ըստ բաղդի սանդուզի մը վրա, երկուքի ծալվեցավ և կոկորդը պատռեց խնդալով Հետո գինովի մը պես իշավ սանդուզներեն, գեշ պանդոկին դրան մեջ գտավ վարպետը և նիհար աղջիկը, ու փափութեցավ համբուրել զանոնք երկուքն ալ: Իր աչքերուն մեջ առցոնքները պայման առատ էին, որ չեր տեսնեթ ո՛չ Ֆագեա աղայի խոժոռությունը և ո՛չ ալ աղջկան գոհունակությունը, այլ միայն կը փափաքեր համբուրել զանոնք երկուքն ալ:

Երբոր տեղատարափին կործանումը ավարտեցավ, վարպետը ուզեց մեկնիլ իրենց ապաստանած սրճարանեն, որոկ հետև ջղայնացած էր և չեր կրնար տեղ մը նստիլ: Բայց վերջին նորաձեռությամբ հագված Տիրանը իր հագուստներուն խնայեց, մանավանդ, որ մերը յին ծակը բավական հեռու էր: Քիչ մը ևս մնացին կաթնասուրճի պարապ գավաթներուն դիմաց և Տիրան շարունակեց խնդալ: Թեև կը խոսեին բարովին չեզոք նյութի մը, այսինքն Պոլսո տեղատարափներուն և կարկուտներուն վրա, բայց Տիրան ատենը անգամ մը մարդուն աշքերուն մեջ կը նայեր, փո՞թ կ'ըներ ու կը խընդար: Տագես աղա անգամ մը ևս ըսավ, թե դռնի անամոթին մեկն ես, թե ինծի պես հորդ տեղը մարդ մը այդ տեսակ պանդոկ մը տարիր և հիմա անպատկառորեն... ավելի շատ սկսավ խնդալ Տիրան՝ ըսելով թե վարպետը ամուսիններ կարծած էր սիրահարները:

— Ի՞նչ կարծեցի՞... ի՞նչ, ի՞նչ ըսավ՝ վարպետը, որ բնավ այդ մտածումը չեր ոմնեցած, և չուզելով արտասանել այն ծանր խոսքը, որ շրթներուն վրա կը դոզար, դուրս ելավ սրճարանեն:

Տագես աղա մերույին մեջ տեսավ ու ծրար մը և Տիրանը արկահարելով անոր հասկուց, թե ուրիշ արհեստակից մըն ալ կար, որ գործ կը տաներ հանձնելու: Ապահովաբար: Տիրան նայեցավ գետնի ծրարին, հետո անոր տիրոչ կռնակին ու բացականչեց: Ճանչցած էր Պարույրին կռնակը:

Սկսան խոսիլ առատորեն և ներկայացվեցավ վարպետը: Այդ խօսակցության ընթացքին է, որ տվին կարեոր որոշում մը, այսինքն Պարույր իր բարեկամին գործի խնդրանքին պատասխանելով ըստվ, թե դուք կրնաք հիմա անմիջապես իր հետը գալ **Belle Jardinière**, որպեսզի ես ձեզ ներկայացնեմ մարդուն և ձեզի ալ գործ տա: **Coupeur**-ներեն մեկը Հովնագրացի մըն է, որոն հետ ես շատ լավ եմ և երբ որ ըսեմ, թե դուք լավ աշխատողներ եք... կուտա՛, կուտա՛, գործը շատ է: Տագես աղա առաջարկեց ուրիշ օր մը երթալ, քանի որ այժմ Հովնած էր ինք, բայց Պարույր՝ իր ականջին ետևեն վերցնելով սիկառեթի աղտոտ կտոր մը գետինը նետեց, և խստորեն հասկցուց, որ Փարիզ է Հոս, ճգճգել ըլլար Հոս, երկաթը տաք-տաք կը ծեծեն Հոս: Նայե՛, այսօր շաբաթ է, եթե այսօր շիգաս, անգամ մըն ալ Հաջորդ ուրբաթ միայն կրնամ քեզ մարդուն տանիլ: Ըստ նայիմ, դուք ի՞նչ պիտի ընեք ամբողջ շաբաթ մը: Սա ալ ըսեմ, որ՝ ձեր գիտնալիք բանն է: Պարապ նստեցեք:

Կիսում եղած՝ երեք դերձակները հասան **Belle Jardinière**: Այդ աշխարհը տեսնելով (մանավանդ գարշելի պանդոկներե վերը) իսկապես զարմացավ ու հիացավ Տագես աղա: Անվերջանալի սանդուղներ, լափյուրինթոս նրբանցքներ, լեռնակոտակ պատատներ, և հետո վերելակներ, պաշտոնելիքուն, կիրթ հեղեղ: Մինչ կը սպասեին իրենց կարգին, Տիրան իր ընկերող պատմեց ժամուկես առաջվան պանդոկի դեպքը: Երկու երիտասարդները շափականց խնդրացին, ձեզ ոզմեկ հըմցտկեցին, «էյ ըլլա՛լիք բան չէ» ըսելով, «աշքդ խաղա, վարպետ», ըսելով և Պարույր ճշաց, թե այս դեպքը գրվելու արժանի բան է: Այո՛, անպայման պիտի գրե Կավոռշին մեջ: Թեև գտտված էր խմբագրին հետ, բայց դարձյալ հաշտվեցան և արդեն իսկ նյութ մը տվավ գալ շաբթվան թվին համար: Եթե առնես, կը տեսնաս: Եվ որովհետեւ կրկին Տիրան կ'ըսեր, թե վարպետը ամուսիններ կարծած էր երկ կու սիրահարները, Տագես աղա բարկացավ: Ինք բնա՛վ ալդպ պիսի մտածում չէր ունեցած:

— Հոգ չէ՝, վարպետ, ըստի Պարուցր, կարծեր ես,  
չես կարծեր՝ կարևոր այդ չէ: Կը բավե, որ գրությանս մեջ  
լավ կը փախի... ես կը գրեմ:

Բնականաբար Տագես աղա շատ ավելի ներողամտու-  
թյուն ուներ Տիրանին հանդեպ, քան թե այս օտարին, որ կը  
համարձակվեր այսքան քիչ ակնածանքով խոսիլ իրեն հետ:  
Գունատեցավ վարպետը և բերանը բացավ: Անշուշտ պիտի  
գժութեին, եթե շուտով չկարգեր իրենց խոսակցությունը:  
Ստիպեցան հունգարացին մոտենալ աճապարանոք, քանի  
որ իրենց կարգը եկած էր:

Երբ ամեն ինչ կարգադրվեցավ այնպես, ինչպես որ կը  
փափաքեին և փողոց եւան երեք հայերը, պատահեցավ  
զեպք մը ես: Տագես աղա չկրցավ իր գլխարկը գլուխը անց-  
նել: Զայն ձեռքերուն մեջ դարձուց քանի մը անգամ և  
ըստի, որ սխալած էր, որից մեկուն գլխարկը առած էր  
գործ ելած ատեն: Բնավ երբեք... ուուն իր խեղճուկ գլխարկն  
էր, միայն թե դերձակը ներսը եղած ատեն զայն գրած: Էր  
անկյուն մը, ապահովաբար շատ տաք խողովակի մը կամ  
չեռուցիվ մը վրա և թաց գլխարկը քաշված, կծկված էր:  
Մարգը այնքան հուսահասական գեմք մը ուներ և իր գըլ-  
խարկը այնքան ծիծաղելիորեն կը թառեր գանկին գագաթը,  
որ երկու երիտասարդները սկսան խնդալ: Պարուցր գլխանո-  
ցին երկու եղերքներեն բոնելով վար քաշեց, սաստկացուց  
իր խնդուքը և ըստի, թե տակավին շատ ձյուն պիտի գա քու  
գլխուդ, այս Փարիզին մեջ: Այնպես չէ, խելքեդ չեր անցներ,  
որ մայիս ամսուն կրնա տաք խողովակ ըլլալ ներսը: Թշո՛,  
այս քու կարծած աշխարհագ չէ... աճա որ քեզ այս վիճակին  
մեջ կը ձգե և բնավ փուլթը շրներ: Քանի երիտասարդները  
կը խնդալին, այնքան կբարկանալ Տագես աղա և զանոնք  
կորակեր «Չոշորթ»-ի նման ածականներով: Երբ որ տեսավ  
թէ չպիտի հանգարտին անոնք, գլուխը առավ ու գնաց:

Երկու ազգականները մերրոյին մեջ կեցան իրարմի հե-  
ռու: Տիրան կռնակը դարձուց, որպեսզի շտեսնա գլխարկին  
ծիծաղելիորենը, կղակն ու ծոծրակը ձգմեց անգթորեն,

որպեսզի շխնդա, բայց չկրցավ, քանի որ խնդութը ջղային եղած էր այլևս: Ճամբորդներն զինվոր մը մասնավորաբար՝ գուշակած էր հայուն ծիծաղին նյութը, և կը նայեր մեյ մը Տագես աղայի գլխարկին, մեյ մըն ալ՝ Տիրանին:

Մերբոյի սանդուղներուն վրա է, որ վարպետը նետեց իր գլխարկը, բայց Տիրան հավաքեց զայն, գիտնալով, որ մարդը ուրիշ գլխանոց չունի: Երբ որ տուն հասան, տեսան որ Ալիս և իր ընկերուցին սենյակն են: Աղջիկները մեծ ուրախությամբ ընդունեցին երկու դերձակները, բայց շատ շուտով ալլավեցան տեսնելով, որ հայրիկը վճռականորթն մնշտեղ կը քաշե պայուսակները և մեկնելու խոսք կընե: Ուզեցին գոնե տեղյակ ըլլալ անցուդարձներուն, «Աստծո սիրուն՝ խոսեցիք» ըսին, և քանի որ բնավ կարելիությունը չէին տեսներ հայրիկը խոսեցնելու, կառչեցան երիտասարդին:

— Ի՞նչ, ի՞նչ... ըսել է պիտի պատմե՞ս... առանց ամշընալու պիտի պատմե՞ս եղածները...

Նախկին դպրապետը Տիրանը լոեցուցած էր անոր առաջին բառերն իսկ: Այլ վարանոտ բառերը բոլորովին անվնաս էին և կը վերաբերեին միմիայն գլխարկի պատահաւուին, բայց պոռթկացած էր վարպետին բարկությունը: Ան կ'ըսեր, թե մարդ գոնե աղջիկներն կամշնա և հիթ երեսը մյուսոն չէ մնացած ու իր հոր տարիքը ունեցող տնձ մը չի հարգեր, գոնե՝ աղջիկ զավակներե կ'ամշնա:

Եվ դառնալով Ալիսին, Տագես աղա խստորեն ըսավ, որ փոխանակ աղե արձան կտրելու՝ լավ կ'ըներ գալ իրեն օգնելու, որպեսզի ժամ կապեն պայուսակները ու մեկնին: Այո, անմիջապես պիտի մեկնի ասկե և վաղն իսկ մութն ու լուսուն թրբական հյուպատոսարան պիտի երթաւ: Ըսե նայիմ, ո՞ւր է տաճիկին հյուպատոսարանը:

— Խենդեցա՞ր, վարպե՞տ, ըսավ Տիրան, կեցիր նայինք, ի՞նչ կըլլանք կոր...

Եվ որովհետեւ դարձյալ երիտասարդը իր այս խոսքը ըսած էր ժպիտով, ափելի ևս կատղեցավ մարդը: Ան ըսավ,

թե ինք խենթ չեր և քեզի պես խելացիները ելեկին պղտիկ գրպանեն կը հաներ: Ինք ըսավ, թե այս երկրեն պիտի մեկնի, և պիտի մեկնի: Այս տարիքը եկած էր և տակավին օր մը օրանց ուել մեկը չեր համարձակած իրեն հետ վերաբերիլի ալյաքան անպատկառությամբ, այսքան ծաղրանքով: Ինք գիտեր հարգել ու հարգվիլ կաթնավաճառեն և փաշային, հացագործեն և վեզիրեն: Եվ դուն ջիմա հետո կը զվարժանա՞ս ժամերով, որովհետև առաջվան Տագես էֆենտին չեմ և նյութապես կարոտ եմ մնացեր, քու դուռդ եմ ինկեր...

Խստորեն բողոքեց Տիրան այս տրամաբանության գեմ և երկու դերձակները բարձրացուցին իրենց ծայնը: Վարպետը պնդեց իր ըսածին ճշմարտությանը վրա, ավելցնելով, թե Տիրան իր վրա ծիծաղելու համար է, որ միայն զինքը առաջնորդած էր այդ վատահամբավի պանդոկը: Հսե տեսնեմ, դուն որ ֆրանսերեն կը հասկնաս և ըմբռնեցիր, թե ներսք ովեր կան, չէի՞ր կրնար առնել ու քալել: Չէի՞ր կրնար ոսեւ—«վարպետոս, այս քու մտնալիք սենյակի չէ»: Ինչո՞ւ վերջն ալ այս դեպքը պատմեցիր բարեկամիդ, որ քեզի պես էշուն մեկն է: Եվ ան ալ պիտի ելլի իմ վրաս հոգված պիտի գրի եղեր... Տագեսին վրա ալդպիտի բան գրել... Տագեսին վրա, որ մինչև այս տարիքը հարգված է մեծեն ու պղտիկեն, սրբազնեն և պատրիարքեն...

Վարպետը կը դոզգար: Թե՛ ազջիկներուն միջամտությունը և թե՛ մանավանդ Տիրանին հակաճառությունը զինքը ավելի կը բարկացնեին և ինք խոր հուզումով կը պնդեր, թե գլխարկ ըսվածը մարդուս պատի՞վն է: Դժբախտությունը մըն է պատահհեցավ՝ աղեկ. բայց դուք ինչպե՞ս այդ պատվին վրա կը ինդպաք անվերջ: Ինչպե՞ս կը համարձակիս «Դոնբագեք» ըսել բոզի դուն զարնելով...

Պայտսակները կապվեցան, բայց Տիրան չի թողուց, որ անոնք մեկնին, որովհետև բարկացած էր ինքն ալ և շափազանց անարդար կը գտներ վարպետը: Կ'ըսեր, թե ինք ամբողջ կարելին ըրավ օգտակար ըլլալու համար և երբեք ալդպիտի վարձատրության մը չեր սպասեր: Այս, անախորժ

գեպքեր էին պատահածները, բայց ինք հանցանք չուներ պնոնց մեջ: Խնդացած էր միայն, ան ալ հակառակ իր կամքին: «Անխելք և հինգլուխ մարդու խոսքեր են ըրածներդ» ըստ վարպետին:

Տագես աղա, որ մեծ գդվարություն կը քաշեր իր սիկարեթը վառելու համար, այնքան, որ ձեռքը կը դողար, բնավ չկրցավ հանգուրժել այս խոսքերուն: Ըսավ թե, եթե երբեք մեր միջև տարբերություն մը կա, ան ալ գլխին հնությունը չէ, այլ մյուսոնք: Այսինքն կրթությունը, զգացումը ամոթին, գիտակցությունը մեղքին, պատշաճության: Մեկը, որ իր մազն ու մորուքը ճերմակցուցած էր այդ արժեքներուն մեջ, և նույն արժեքներուն մեջ մեծցուցած էր իր զավակները, չէր կրնար ապրիլ Փարփակ: «Ֆոենկ ըսվածը ես նոր շփիտի Հանչնամ», ըսավ. անոնց ինչքան թեթևողիկ, շոշորթ, շողոքորթ և մանավանդ անբարո ըլլալը ինք շատոնց գիտեր: Եվ դուք ալ անոնցմե բնություններ առեր եք, քանի որ հոս մեծցաք:

Տագես աղա Փարփակ հասած օրն իսկ այս իրողության գիտակցած էր: Հանդիպած էր էշու կտոր Հայ կառավարի մը, որ առանց նկատի առնելու թե երիտասարդ աղջիկ մը նստած է իր շոր հետ, ամենազգվելի երդ մը երգած էր: Եվ դեռ քանիներ իրեն հետ վերաբերված էին արհամարտանքով կամ կոպտությամբ: Պանդոկապետը իր երեսն ի վեր կը պոռա գիշերը լուս վառած ըլլալուն համար, երբոր ստիպած էին մլուկին պատճառավ: Շաշարանի ծառան կերակուրը իր առջե կը նետե, որպես շոնի: Դուք կրնաք այս բոլորին հանդուրժել, բայց ինք, Տագես, չէր կրնար բնավ, մանավանդ, որ լեզվի չգոյության պատճառավ պիտի ստիպվեր լուել միշտ ու տանիի: Ո՞ւ չէր կրնար, քանի որ ինք մարդ էր և կը նախընտրեր ապրիլ Պոլիս, հոգ չէ, թե շոր հացով, քան թե որանալ ինքինքը: Եվ Տագես աղա այնքան կը կըրկներ «ես մարդ եմ»-ը, որ հանկարծ բան մը հիշելով իր գրամապանակեն դուրս քաշեց թղթիկ մը և ըսավ շափազանց քծինքով—«ես կը կուզիմ Տագես Պալապանյան: Մյուայոււս,

Կը խնդրեմ, որ զիս տունս առաջնորդես...» Մինչ վարպետը կրցածին շափ փոքր կտորներու կը վերածեր թուղթը, Տիրան թերը վեր առավ, ըսավ, թե անկարող է այս տեսակ մարդ մը հասկնալու, թե դուն մարդ ես, ես ալ մարդ եմ, բայց հայ ենք, հա՞յ...

Թանի որ փոթորիկը մեղմացնելու իր բոլոր ճիգերը ապարդյուն էին անցած՝ կուպար Ալիս: Ան գիտնալով, որ իր հոր բարկությունը գեշ է, կը խնդրեր Տիրաննեն, որ շապտաս-խանն բնավ, բայց Տիրան չէր կրնար: Ան մեծ զղայնոտու-թյամբ կը շրջագայեր սենյակին մեջ և պահ մը կենալով Compteur -ին առջև, զորավոր ապտակ մը տվավ գործիքին և ճամբա հանեց զայն: Իր սուր ձայնով Աստղիկ ըսավ վար-պետին, որ պետք է նախ խաղաղիլ: Իրավունք ունիս, շատ ճիշտ կը խորհիս, բայց պետք է նախ խաղաղիլ:

— Ճիշտ չեմ խորհիր, պոռաց Տագես աղա: Իս շատ սխալ կը խորհիմ... բայց ասկե պիտի երթանք ըսի՝ և պիտի քրթանք:

Աստղիկ ինքն ալ տարվելով վիճաբանութենեն, ըսավ, թե վերջապես պետք է տրամաբանել քիչ մը և մեղքնալ նաև իր շուրջինները: Ի՞նչ ըսել է քաշված զլխարկի մը համար վիրավորել ամեն ոք և մեկնիլ Փարիզեն, երբ որ այդքան պարտք ըրեր եք մինչև հոս գալու համար: Տագես աղա պարտք բառը ապտակի մը պես ընդունեց և անմիջապես խոյացավ իր աղջկանը վրա: Բայց իր բարձրացուցած բա-զուկը միայն օդը կրցավ ճեղքել, որովհետև Տիրան նետված էր իրենց միջև: Մարդը փրփրելով ու հեւալով կը պոռար Ալիսին, թե այս բանը երբեք պիտի շնորեր իրեն, երբեք: Ինք միշտ սեց ներս և ճերմակը գուրս ապրած էր և քեզի ալ այդպես սորվեցուցած էր: Դուն հիմա ի՞նչ համարձակու-թյամբ կ'ելլաս օտարներուն կը պատմես, որ պարտքով եկանք հոս, պատանք ձգելով միայն դրամ գտանք... Մոխի-րի գույն եղած էր մարդը, որ հանկարծ ձեռքը կուրծքին տա-րավ ու կփեցավ: Բառերը իրարու խառնվեցան, թափեցան բերնեն ու կփեցավ:

Անկողնին վրա պառկեցուցին զինքը և Տիրան նախ քիչ  
մը շուր տվավ և վերջն ալ շիշին տակ մատ մը օզի գտնելով՝  
ան ալ վարպետին բերանը լեցուց: Աղջիկները մարդուն  
դաստակները կը շփեին, բայց ան կը պահանջեր, որ կոր-  
սվին բոլորն ալ և զինքը առանձին ձգեն:

...Աշխատանոցը իր անկյունները հանձնած էր մութին՝  
առանց գիմադրության, իսկ ծորակը կը կաթկթե՛ռ երբեմն  
կանոնով, երբեմն առանց կանոնի: Շատոնց է, որ Տիրան  
պայտաւակները փոխադրած էր մլուկին պանդոկը, իսկ հիմա  
կը պատրաստվեր իր ազգականներն ալ հոն առաջնորդելու:

Ալիս իր հորը աշ թեր մտավ: Փողոցի մութ դրան մեջ  
Տիրան փորձեց մտնել մարդուն ձախ թեր, բայց Տագես աղա  
ձեռքի շարժումով մը, որ ամեն պատասխան կը մերժեր,  
վանեց երիտասարդը.

— Շատ շնորհակալ եմ... քեզի բավական անհանգստու-  
թյուն տվինք՝ ա՞ֆ կընես: Հարկավ մենք ալ օր մը տակը  
շենք մնար:

Տիկին Պյուք ճիշտ հոտառությամբ մը գերձակին վիշտը  
կապեց անոր ազգականներուն հանկարծական մեկնումին, և  
գարձ-գարձիկ հարցապնդումներով փորձեց մանրամասնու-  
թյուններ խելել Տիրաննեն: Եվ որովհետեւ չկրցավ՝ ըստվ, թե  
իր ծննդաբերությունը տեղի պիտի ունենար ճիշտ սաշափ  
օր վերը: Պյուքացած էր ան՝ մասամբ: Այսինքն, թե փոքրի-  
կին անունը որոշված էր: Եթե մանչ ըլլա՝ Գամիլ: Եթե աղ-  
ջիկ ըլլա՝ Գամիլ:

Իրապես կը տառապեր Տիրան և դեպքերու վերջիշումը  
իրեն կը պատճառեր այնպես իրական նեղություն մը, որ  
ատենը անգամ մը կարը ձգելով՝ կը ստիպվեր շրջիլ սենյա-  
կին մեջ: «Աս ի՞նչ գեշ բան եղավ», կ'ըսեր ու կը պնդեր, թե  
ուեէ մեկն ալ իրեն պես պիտի խնդար եղածներուն վրա,  
առանց վարպետ ծաղրելու դիտավորության: Թե մեղավորը  
գեպքերն էին միայն, որոնք դժնդակ էին, անտարակույս,  
բայց միաժամանակ ծիծաղելի էին անվիճելիորեն: Եվ հե-

առո՞ հուսահատական դիպվածով մը կարճ ժամանակի մը  
մեջ անոնք հաջորդած էին մեկզմեկու, առանց առիթ տալու,  
որ անցյալը ընտելանա ներկային:

Երիտասարդը անստգության մեջ սպասեց լուրի մը, որ  
միշտ ուշացավ: Կ'ուզեր մանավանդ գիտնալ, թե արդյոք  
իրապես Փարիզին պիտի մեկնի՞ն հայր ու աղջիկ, թե չէ ար-  
դին հանդարտած են հիմա, որ երկու օր անցավ: Դերձակը  
շատ հուսաց, որ Ալիս կուգա զինքոր տեսնել իր հորը թուշ-  
լատրությամբ, կամ անկե գաղտնի, բայց աղջիկը չերեցավ  
բնավ: Գիշերը գալուտագողի Տիրան գնաց անոնց պանդոկը և  
պանդոկապետն լսեց, որ Հոնին երկուքն ալ, թե մեկնումի  
խոսք չեն ըրած բնավ:

Օրերը ամբողջությամբ գրավվեցան նույն մտապաշարու-  
մով: Որովհետև բաղնումը մնացած էր կիսավարտ, անոր  
ընթացքին ամեն ինչ չէին կրցած ըսել, որովհետև, մանավանդ  
երկու դերձակներն ալ եղած էին թե իրավացի և թե անիրավ,  
Տիրան կը մնար անլուծելի հանգուցի մը մեջ: Ոչ միայն  
շափէ դուրս նեղացուցիչ էր ան, այլ նաև ենթական կը նե-  
տեր հակոտնյա զգացումներու: Երիտասարդը ունեցավ  
բուն բարկության պահեր, որոնց ընթացքին ամբաստանեց  
ոչ միայն վարպետին աներախտակետ վարժունքը, այլ նաև  
մյուռոնը, դպիրը, արևելքը: Հետո կը տրտմեր խորապես,  
մտածելով, որ խառնվածքի խնդիր է, թե անոնք իրենց գր-  
խոն պատճառով պիտի տառապին այժմ: Կամ պիտի մեկ-  
նին, ինչ որ մեծ աղետ է, կամ պիտի մնան և իր աշակցու-  
թնեն զրկվելով պիտի շարշարվին անտեղիորեն:

Աննկարագրելի վախով մըն է, որ երիտասարդը բարձ-  
րացավ պանդոկին սանդուղներեն, իրենց բաժանման երրորդ  
առավոտը: Երբոր հասավ իր ազգականներուն դուն առջև,  
փողկապը շակեց սիրտը տեղավորելու փորձով՝ ու զարկավ  
դուն: Հետո Ալիսի հարցումին պատասխանելով ըսավ, թե  
ինքն էր՝ Տիրանը: Անմիջապես փսփսուք մը սկսավ ներսը,  
«մտե՛ք»-ը ուշացավ, և նույն աղջիկը պատասխանեց տար-  
քեր ձայնով.

— Հիմա ես կը փոխվիմ կոր...

Եկած էր ներողություն խնդրելու համար, և եթե պետք է նույնիսկ վարպետին ձեռքը համբուրելու համար, բայց ահա որ չէին ընդուներ զինքը: Տիրան կեցավ նրբանցքին մեջ, հետո քիչ մը անդին սանդուղին գլուխը. նայեցավ գուան մը բանալիին, որմէ կախվող թիվը դեռ կը ճոճեր, և վախկուռ քայլերով վերագարձավ նույն փակ դռան առջեւ: Հարցուց — «Քիչ մը վերջը գա՞մ»: Կը կարծեր դարձյալ փսփսուք մը լսել, բայց շատ ապահով չէր: Ալիս պատասխանեց.

— Մենք քեզի կուգանք...

Օրբ անցավ առանց այցելության, հետո երկրորդ մը ևս, բայց Տիրան չզարմացավ բնավ, քանի որ աղջկան պատասխանը արդեն մատնած էր իր իսկական իմաստը: Հակառակ ատոր սակայն դերձակը սպասեց միշտ սրտի սեղմումով և ժամանակի թավալումին հետ անդրագարձավ, որ սկսած է հետզհետեւ ավելի ցավ զգալ, այսինքն հետզհետեւ ավելի սիրել ու ատել իր ագգականները:

Երեկոյան ստվերները գրաված էին իր աշխատանոցը, որուն մեջ կեցած էր Տիրան վարանումով: Պիշտ պիշտ կը նայեր իր ձեռքերուն, որոնց մեջ կար քիչ առաջ գնված շիշ մը օղի. արմացած և զարմացած շիշ մը օղի: «Ինչո՞ւ գնեցի», կը սկսեր և հետո կավելցներ — «գնած ատենս գիտեի և կը խորհեի, որ տունը մարդ չկա: Հակառակ ատոր ինչո՞ւ գնեցի»: Պահ մը իր նեղությունը այնքան անտանելի թվեցավ, որ ուզեց փախուստով մը ձերբազատվիլ անկե և անմիջապես քննեն մը գրեց իր բարեկամութիին, զայն իր սենյակը հրավիրելով: Գրած ատենս իր աշքին առջեւ ուներ միմիայն Ալիսը: Հաջորդ իրիկունը ֆրանսութին չեկավ սակայն և Տիրան իր երկար սպասումով զղագրգիռ՝ նետվեցավ փողոց:

Պուլը վառ Տը Գլիշիի վրա հանդիպեցավ անոնց: Առաջին անգամն էր իրենց բաժանումն ի վեր, և Տիրան բնագդաբար ու հապճեպով պահվածեցավ: Անդրադարձավ, որ ցնցված էր այնպես, որպես թի հանդպած ըլլար սիրութի մը: Դանդաղ գնացրով կը հառաջանացին երկուքը երեկոյան

բազմության մեջ և Ալիս իր հորը թևն էր մտած: Միշտ նույն խեղճովկ գլխարկը կար վարպետին գլուխը և նույն սրճառույն գգեստը հայուժիին վրա: Տիրան նայեցավ անոնց կոնակին, անոնց կրոնակներուն, բաներ որոնց կը նայեր առաջին անգամ ըլլալով: Տեսավ անոնց առանձնությունն ու կարութը, ինչպես նաև մեկուն համառ քենը, իսկ մյուսին այլանելի հետեղականությունը: Հեռվեն բավական մը հետեղավ անոնց, բայց հակառակ իր մեծ ցանկության, չհամարձակեցավ քովերնին երթալ: Աւ հանկարծ վախցավ նըշմարվելե, որովհետև կողմնակի շարժում մը ըրած էին անոնք և ինք անփիտակցարար շատ մոտեցած էր: Երբ որ ետին կը դառնար փախչելու համար, իր աճապարանքի մեջ կոպտորեն զարնվեցավ երկու տնցորդներու: Բալապեխ մարդիկ էին անոնք, երկվորյակներու պես մը նման էին մեկզմեկու, և իրենց բասքեթին վրա գրված էր ոսկեհյուս տառերով—կոշիկ Ռապու:

Քանի որ հանդիպումի վախը շկաթ այլևս, Տիրան համարձակորեն գնաց մլուկին պանզոկը և այս անգամ իր ստացած լուրը զինքը որպահացուց: Անոնք մեծ սենյակ մը ուզած էին: Անոնք պիտի աշխատեին:

Անսպասելի պահու մը երեցավ իր բարեկամունին և մեծ գորով ցուց տվավ Տիրանին հանդեպ: «Պղտի՛կս, ըսավ ան, անմիշապես գուշակեցի, որ վիշտի մեջ ես, քանի որ տակավին բնավ ինձի այդ տեսակ նամակ չէիր գրած: Օ՛, այս մարդիկ որքան քաղցր, որքա՞ն սիրելի կըլլան, երբ որ ցավ ունենան»:

Պահարանի պես նեղ այդ ննջարանին մեջ պառկած՝ հայը սկսավ սաստիկ նեղվիլ ֆրանսացի աղախինին քով, որ կը կոչվեր Ժոռժեթ և որ բնավ շրթումք չուներ: Զերմությունը դաղը էր և հաճելի, բայց Տիրան ուրիշ բան կը ցանկար գտնել միսերու ետին: Բան մը ըրած ըլլալու համար նկարագրեց Կոեթա Կառապոյի մեկ հոշակավոր և Տիմար Փիլմը՝ նախ անկողնին մեջ և հետո ոտքի վրա հագվելու

միջոցին: Ինք ամբողջությամբ հագված էր արդեն, իսկ եղը քնացած, երբ որ դուռը զարնվեցավ: Վարպետն էր:

Նախ բացարձակապես բան մը Հասկցավ Տիրան Տագեն ազայի պուպոցեն, միայն թե անոր թշնամական երևույթը շատ որոշ կերպով կ'ըսեր, թե ծանր բան մը պատահած է: Տիրանի հարցումներուն պատասխանելով վարպետը կ'ըսեր.

— Զը հասկնալու մի՛ գար: Ինծի ատանկ բան շանց-նի՛ր... շանցնի՛ր...

Վերջապես պարզվեցավ, որ մարդը եկած է իր աղջիկը մինտոելու, և ավելի քան ապահով է թե Տիրանն է զայն պահողը: Անշուշտ երիտասարդ գերձակը ըսավ, թե բանն մը տեղյակ չէ ինք, թե Ալիսին երեսն իսկ չէ տեսած ձեր մեկ-նումեն ի վեր: Բայց հայրը, որ շափականց գրգռված էր, սկսավ սպառնալ և հայցոյիլ, ըսավ, թե իր աղջիկը անհետացած էր նախորդ գիշերվնին ի վեր, թե իր փնտուուրները—Աստղիկին կողմը—ապարդյուն էին անցած, և ինք սպահով էր, որ Տիրանն է զայն պահողը: Ուրիշ ո՞ւր պիտի երթա, կ'ըսեր ան, որո՞ւ կրնա երթաւ, բանի որ իմ քովես փախավ, անշուշտ քեզի պիտի գա և դուն զայն տեղ մը պի-տի պահես: Վարպետը նշարան մտավ, բայց նույնիսկ ֆրանսուհիին ներկայությունը զի՞նքը շխաղաղեցուց: Ընդհա-կառակը: Բոնեց Տիրանի օձիքներեն և պահանջեց որ խոսի, խոստովանի, ապաստանին տեղը հայտնի, և որովհետեւ արտակարգորեն, և սկսավ քիրել Տիրանին, անոր պատվին, արյունին և արևին:

Թե Ժոռժեթ և թե տիկին Պյուք, որ վրա հասած էր, ոչ կրնային կոփվը խաղաղեցնել, ոչ ալ բան մը հասկնալ պա-տահարեն: Վարպետը կը պոռար, թե հակառակ իր բացար-ձակ արգելքին: Ալիս հոս եկած էր ամեն օր, համաձայնած էր Տիրանին հետ, ու փախած: Եվ կավելցներ.

— Ես ձեզ երկուրդ ալ կը սատկեցնեմ... են՛մ քեզ, են՛մ Ալիս օլանախը...

Տիրան սենյակեն դուրս նետեց մարդը:

Բաց պատուհանին առջև կ'աշխատեր Տիրան գլուխվէ կախ և բերանը կիսաբաց: Բերանը կիսաբաց էր, որովհետեւ իր քթին ծակերուն մեջ մխրճած էր բամբակներ՝ արյունա-հոսությունը դադրեցնելու համար: Երիտասարդը այդ արյունահոսությունը կը վերագրեր իր բուռն հուզումին և անվերջանալի մտասեեման: Հին բակը իր բորբոսած և հիվանդուապատերով կը նեղնար Տիրանի գեմն ու վրան, կը նմաներ շրջված ձագարի մը, որուն նեխոտ և պղտիկ բերնեն կ'երեւար առավոտյան արևը, կամ անոր մեկ համբան, կամ ավելի հեռավոր բան մը: Որպեսզի չը փլչի՝ գերաններ կոթնած էին գանկի մը:

Մանը քայլերով Տագես աղա կտրեց անցավ այդ բակը Տիրանի ակնարկին տակ, դժուը բացավ և անցավ ներս: Երիտասարդը իր գլուխը շբարձրացուց բնավ, շբարեց բնավ և շարունակեց կարը: Մյուսն ալ ձայն չհանեց, այլ միայն գնաց նստիլ, աթոռին վրայեն ծրար մը գետնախնձոր մեկդի դնելով: Դեռ երեկ իրիկուն է, որ սենյակը կը լիցնեին իրենց պոռպոռցով՝ իսկ այժմ կը լսվի վերի հարկերի թափող անթելի մը խուզ ձոփնչը և հետո այն սկրթութը, զոր բաշփող թելը կընե կերպասին մեջ:

Երկար ատեն լոեցին, երկար ատեն ծխեց մարդը, և իր կապտորակ ծուխը շորջանակի վարանումներեւ վերջ գտավ բաց պատուհանին համբան: Տագես աղա ըսավ բռնադրոսիկ մեղմությամբ մը.

— Հիմա՞ ալ շպիտի ըսես... նայե՛, շեմ պոռար կոր... շենք շնորհք կը խոսիմ կոր... ո՞ւր է այս աղջիկը...

Անմիջապես ցցեց Տիրան իր գլուխը, ձեռքի տարատը շատ ուժով զարկավ սեղանին վրա և խոյացավ դեպի վարպետը: Կեցավ անոր առջև աշխերը արտակարգորեն բաց և մատները օդին մեջ պրկած: Հետո Թիշ առ քիշ մեղմացավ, թուլացավ և երկար հառաշ մը արձակելով վերադարձավ իր կարին:

Բավական մը վերջ, երբոր վարպետը կը մեկներ առանց

երբեք անգամ մը ևս բերանը բացած ըլլալու, Տիրան ըստավ խստությամբ.

— Բարարեսները նորեն աթռոփն վրա դիր... մենք առտեղ քու սպասավորդ չենք...

Մարդը իր ետին չնայեցավ, բայց ելավ դուրս երկար զարանումներով; Ծովիմին պես:

Հաջորդ առավոտուն գարձյալ եկավ և նստավ նույն աթռոփն վրա, մեկ ծայրին: Բարեկց այս անգամ: Մորուքը եկած էր, թափթփած էր և Տիրան խորունկ ակնարկօվ մը զայն քննեց բազմաթիվ անգամներ: Հետո ըստավ.

— Կար կուզե՞ս:

Այս, կ'ուզեք քիչ մը աշխատիլ, բայց չկրնալով՝ հանցավոր հանեց կերպասին կարծրությունը և միշտ փրթող թելին փառությունը: Երկարորեն կը նայեր Տիրանի աշքերուն մեջ, բայց չէր խոսեր: Կեսօրին չկրցավ իսկ ճաշել: Չէր ուզեք հայտնի ընել, բայց պատառները կը մեծնային իր բերնին մեջ և կը մնային հոն:

— Վարպե՞տ, ըստավ Տիրան, ինչի՞ վրա երդում բնեմ նեկը հավատաս, որ բանե մը լուր շունիմ: Ալիս ես չե՞մ պահած:

Պատասխանը այնքան ուշացավ, որ երիտասարդը ստիպվեցավ կրկնել իր հարցումը: Այն ատեն հայրը ըստավ.

— Մարդեն մեծ սենյակ մը ուզեցինք, պիտի նստեինք՝ պիտի աշխատեինք: Ինչո՞ւ այս աղջիկը առավ քալեց... գիտեմ, որ ես խիստ եղա, ձեր սիրտը կոտրեցի. դուք ալ իմինու կոտրեցիք... բայց ալ կը բավե. ըստ Ալիսին թող գա... ալ կը բավե:

Երկար լսութենե մը վերջ Տիրան ըստավ (կարծես ինքն իր հետ խոսելով, որովհետեւ պատասխանի մը կարելիությունը չէր տեսներ)՝ «Հը՞մ, խիստ մարդ եղեր ես, միշտ քուկիներդ հպատակեցուցեր ես քեզի... բայց շես հասկնար կոր, որ այլես քու ատենդ անցավ: Ով գիտե աղջկանդ ալ ինչ ըրիր և ան հեռացավ: Անիմաստորեն հեռացավ»:

Կարելով հանգերձ՝ երիտասարդը մեծ տրտմությամբ կը

Խորհեր, որ միշտ դժբախտ պիտի ըլլա իր բարեկամություն-ներուն մեջ: Իր բազմաթիվ ծանոթներուն մեջեն պիտի չկրնա գտնել ոչ իսկ մե՛կ հոգի, որուն հետ կապվի ամբողջությամբ, հոգվով և մարմնով: Ոչ իսկ մե՛կ հոգի, որուն հանգեց ունեցած սերը լման ըլլա, հարգանքն ու եղբայրացումը կատարյալ ըլլա: Եվ այս անկատարությունը այն պատճառով, որ նմանության եղբերու կողքին, պիտի գտնվի միշտ բաժանման անխուսափելի կետը: Տիրան տրտմությամբ կը հիշեցր իր հրձվանքը, երբ այս սենյակը մտնելով իր աղջական-ները տեսավ: Հանկարծ անպատում հոգեր անցան իր մեջեն, մոռցված ձայներ լսվեցան և Տիրան վարպետին մեջ տեսավ իր լքած ընտանիքը, ծննդավայրը, ամեն՝ բան: Ավելի մեծ եղավ իր հակումը Սլիսի հանդեպ, որ երիտասարդ և մանավանդ աղջիկ ըլլալով քիչ մը ավելի սիրելի էր իրեն: Իվ առա, որ Տիրան դարձյալ հեռացած կը զգար ինքինքը անոնցմե, որովհետեւ այդ երկուքին մեջ կը գտներ ծուռ, սխալ մտածումներ և պարզելու կերպ: Բայց այլևս այդ ծուռ բաները չե, որ կատեր, այլ մյուսը, ջիշտը, իրեն նման եղող մասը: Որովհետեւ, կը խորհեր, եթե ան ըլլա, կրնաս մեկ անգամեն վանել բարեկամդ, սիրելիդ և անմիջապես ուրանալ զայն: «Հիմա ալ չեմ նեղանար, կ'ըսեր մտովի, եթե վարպետը անտեղիորեն քֆրե: Աս մեղմությունն է, որ զիս կնեղացնե»:

Նախ առավոտուն կանուխ, և հետո երեկոյին է, որ կուտա Տագես աղա Տիրանին և կը նայի նույն ձեռվ, պիշ պիշ: Կը սպասե, կը նստի հոն, նույն աթոռին վրա և կը սպասե: Երիտասարդը առաջարկեց, որ սենյակը ձգե ան և առաջվան պես գա հոս պառկիլ, որպեսզի ծախսը ըլլա, բայց մարդը շնորունեց: Տիրան աշքին պոշովք կը նայի անոր և կը հովավի, կը տագնապի, որովհետեւ երբեք այսպիսի փոփոխության մը չեր սպասեր: Զուր առնելու դիտավորությամբ, կամ ուրիշ պատրվակով մը կ'անցնի մարդուն մյուս կողմը և կրկին կը նայի այդ վլած էակին: Կ'ստիպե, որ ածիւլի, կամ գոնե սեփ-սկ եղած օծիքը փոխե, կամ առնվազն շնորհքով

կապե զայն: Որովհետև ելեր է ետևի կոճակեն և բարձրացեր  
է ծոծրակն ի վեր: Եվ որովհետև ձեռքը կբարձրացներ ինք  
անձամբ շտկելու համար, մարդը դեպի դուռը գնաց:

— Աղե՛կ, աղե՛կ, ըսավ Տիրան մարդուն պատասխա-  
նելով. չեմ նեղանար: Դու միայն նայե, որ ասկե վերջ աղ-  
ջկանդ հետ խիստ չերթաս... ատ տարիքեն վերջ ըլլաշ՝  
ըլլաշ՝...

Վարպետը ըսավ, թե իր բնավորությունը այդպես էր,  
այդպես մեծած էր, և թե իրենք ալ, երիտասարդներն ալ  
պետք է, որ զինքը հասկնալ ջանային:

— Նորե՛ն այդքան չէի բարկանար ըսավ մարդը. բայց  
դուն ո՞վ ես որ... երեկվան լակոտն ես...

Տիկին Պյուքի տղան, որ դարձյալ կը շուլլվեր գերանն  
ի վեր, գլուխը ծոեց պարապին մեջ և աշխատանոց նայե-  
լով ուզեց միհմոսություն մը ընել: Բայց բան մը շըրավ  
որովհետև անվստահելի մթնոլորտ մը ուներ աշխատանոցը,  
որովհետև երկու դերձակները պետք եղածեն ավելի երկար  
ժամանակ կը մնային գլխիկոր, չեին աշխատեր և բնավ չեին  
նայեր իր կողմը: Տագես աղա, որ իր հին ու փոշեծածկ կո-  
շիկներուն կը նայեր, ըսավ տխուր ժպիտով.

— Գիտե՞ս, Տիրան, մեր օթելիթին գրել տվի թուղթի մը  
վրա իմ անունս և հասցես... փողոցները փեխ աղեկ կը ճան-  
շնամ հիմա, բայց խելքս գլուխս չե... կը կորսվիմ կոր...

Ավրիված էր մարդը քրիչ ճաշարանի ուտելիթիներեն  
և Տիրան կարելին ըրավ, որ վարպետը իր հետ ճաշե, բայց  
ան շընդունեց: Միայն թե սկսավ ավելի կանոնավորությամբ  
գալ և ավելի կանոնավորությամբ աշխատիլ: Նույնիսկ վե-  
րագրավ իր խոսելու կարողությունը և շաղակրատեց գրեթե  
առաջվան հանդարտությամբ:

Ահա այսքան: Տագնապը անցավ: Ան տևած էր Ալիսի  
անհետացման ինը օրերու շրջանին, և երբ Տիրան այդ ին-  
ներորդ օրը հանկարծ կես ձգելով մթնոյի գործարանին նկա-  
րագրությունը սկսավ Ալիսը խստորեն քննադատել, որովհե-  
տև այլս ինքն ալ սկսած էր նեղվիլ այս բացակայութենեն,  
մարդը ըսավ.

— Նամակ առի: Բայց չի կրցավ շարունակել, զղջաց խոսած ըլլալուն համար և հակառակ Տիրանի մեծ զարմացումին ու տեղացող հարցումներուն, լուր մնաց երկար պահ մը՝ գլուխը կախ: Հետո ըսավ.

— Նամակ առի: Մեկնած օրը արդեն թուղթ մը ձգած էր ֆի տերտ լընեմ... Ես եթե քիչ մը քովեղ հեռանամ՝ շատ աղեկ պիտի ըլլա, գրած էր... Հիմա ալ կ'ըսե կոր ֆի պիտի գա: Դուն նայն, որ Տիրանին երթաս, անոր սիրտը առնես կ'ըսե կոր... Հետո առաջվան պես ամեն բան ծայրեն կ'սկսինք կ'ըսե կոր... քիչ մըն ալ իմ խոսքս մտիկ ըրե, կ'ըսե կոր...

Մարդը կը խոսեր առանց գլուխը վեր առնել համարձակելու, և բացահայտ է, թե դժվարություն կը քաշեր իր բառերը ընտրելու համար, թե իր ստացած գրություններին խնամով կը հեռացներ այն խոսքերը, զոր անկարող է հոս կրկնելու, և իր շրթները երբեմն կը շարժեին պարապին մեջ: Սաստիկ հուզված էր Տիրան: Ան անգամ մը գլուխը ծոկց և շատ մոտեն նայեցավ պարապին մեջ շարժող այդ կախ բերնին, կարծես ավելի լավ հասկնալու համար, ինչ որ չէ ըսվեր, բայց շուտով ետ քաշվեցավ, որովհետև ամշցած էր: Քիչ վերջ Տագես աղա ըսավ.

— Ծո՛ տղա, մեր աստեղի եկեղեցին փե՞մ աղվոր է եղեր: Ալիսը գացեր տեսեր է, շատ կը գովե կոր... Հարսնիքի շաքարի տուփ է կ'ըսե կոր.. Մինակ ֆի երգեցողությունները Պոլսո շափ լավ չեն եղեր... Հայրի՛կ, քու վարած պատարագդ ուրիշ բան էր, կ'ըսե կոր...

Եվ նախկին դպրապետը հակառակ Տիրանի շատ խոշոր «հարկավ»-ներուն, այդ «ուրիշ բանը»-ը ցույց տալու համար քիչ հետո սկսավ երգել իր երգեցողությունը, նախ մեղմ ձայնով մը, որ սակայն շուտով բարձրացավ: Սկսավ երգել իր Տեր Ողորմյան, արևելքցիներու պես գլուխը երեցնելով, ձայնը դողդողացնելով, և աշխատանոցը լեցվեցավ խոր հուզումով: Վարպետը չէր լար իր անկումին վրա—Տեր Ողորմյան է, որ լալագին է: Վարպետը չէր աղաշեր կյանքին, երիտասարդներուն—Տեր Ողորմյան է, որ պաղատագին է:

Խոշոր արցունքներ կային—բայց Հինգած կոկորդն է հանցավորը: Տիրանն ալ հետևեցավ մարդուն, և բնավ չնայեցան մեկզմեկու, և բնավ չնայեցան մեկզմեկու, որովհետև Տիրանին կոկորդն ալ հինգած էր՝ այդ օր:

Լաճը, որ կրկին շուլպած էր գերանն ի վեր, քանի մը բռակե զսպեց, բայց երբ պայթեցավ «Ազգիս Հայոց Ազատություն»-ը խլացուցիչ լաց մը թող տվավ: Մանուկին ւեղին պատռած էր:

Դա զդուարթիսևն տպաց մասդու շա մժուանմժ ։ Ամերիկան  
-սփի մզիտմէն մէկ ։ Ոմզոյ զգմղցատ մզնցուփութ մէկ ։ Աղջուոչ մէկ  
տմի խսժուամտեացոյ մզուսիկմզ ։ Ամուսնութ մուսկա մէկ ։ Քուոյ  
-տէկ մզուսն—ոգիո մը շանտ քուսնմո—մը դմչոյ մսիտյուի  
շա ստյուաշ ։ Զիվունովիլոյ մէկ ձգր զտրթիսնաթթ արաբնա վզտգին  
ժզամս ։ Զզմզուղմզտ նզգմզ զզկի լունուկմզոյ մմզուտք ։ Ձգր զումզզ  
-տասնսիո դ զումզունսփի զզմունտմ մէ մզիտպա զզյութ լուի  
-տպաց շա կոչմուացուո զզյունսի զուիսք ։ մէ մզկդ մսյուց

Դաշտուն զգմղտունքը նստղմնու մղվար եղամի զղու-  
մղղթ զգմցափութը մի ձգու զգմնափ մք փոսփ կտու զւտղմտ  
ժղսմն մազիտչ տան ողերդի առափեցացու տուի ուսպղզին  
ժղու կտղսմուն իսլուստու ժղովագար մի զվասկից ուրացուկ  
մազղցակմի քուսկմսով զգտուսն ու ողիսչ զղումն քոն  
տութը զգտուս ովզղցամուք : մղորդա զվու մաս իսլուցումտն  
ովզմղցուգմի ու մազցակուս մզք մի մղնցափութ զւացիւսիք  
բրատահոյտ մք կտոզ : մարտչ շալգփուտանի զգմղջգօթի  
ժուուտի մք կտոզ : մարտչ շալգփուտանի զգմղջգօթի  
զղցացու ու վմուցցուկ անցրտու մղում են քանումուցուք  
ու ուղարկու ու ուղարկու անցրտու մղում են քանումուցուք  
ու ուղարկու ու ուղարկու անցրտու մղում են քանումուցուք

ւալզմգը մղմող դ շալզչպաց պիտեն մտցմգի և մմոկ զորիո  
մասնչպաժում մղկութե մի շատաս զցյու ովհու իշտեզուի  
-մը լու մոխցօ զտա մղը մս ՚իտեղ ողիովտ գտցչետց

(ՑՎԱԳԻ ԶՈՒՏՈՂ)

J G J U φ

մղկոցասմտեն մի մմղղիսչ մզը մս 'մք վետետն մզդ  
 տպաց մի զտ մտղոսգչ մի քայլմեն տմի պմժստի մմդ ։ մզ  
 քոնքոցա ծղուտմա կզը ։ ս վմսնսմ մղիումտեն դշամդտմեն մմդ  
 Շուտմա քոնք մտի ոզմկողունդոռ մմտաբուղետեն նսինաչ  
 և նսինուն ոզրունչ ոտղզգտողցր յամդդտմար մս 'մքը  
 տոց ոզմկ անցտիուղոք մէ զոչ մկուզմօմտա իզ յանչի մոր  
 կի ոզք ոզմոտ զակի դիմզգցն սսրով և նմոց մդիմտը  
 կզկտուց և կտուցտմանց ոզմկ զումթիւնետ քզը վ 'մք մօ<sup>ւ</sup>  
 մսե 'մկուցւեն քոյտուցնզ մզոկումզի վտվի մկմմուժ : մտ  
 ւն վտվի կփումձկ յամդզմդմուժ քոյնուժ զկուտ մկմմուժը  
 ոզդցը յամդզտամթիւնուտուտ զտրցտողտ մզմոր վտվի մզդոտ  
 ոզդզոգին տկոչ զգունեսթուկիմկ ։ մոլլ վտվի քմսետոզմցը  
 քզը ոզմուետենուզ ։ լիմսու և լվտոզ զդտու նու դղուիք զտամդզմցը  
 կի մոկմզ ոտմոք մէ քոմմ յունմզ ոմմունզ ։ ոզմունզուիչ  
 զվտեր մի մք իսլուփ յոտմտա մմդժ՛տ 'տմի զտամդկուսք ։  
 քոնչ մժուզեմզի քրսդու մս 'մմսզչ վուս մք մմկի ոմնուժ  
 ։ անզուն տմի զտմթաքումտա նսլոյտի դո նմտ ոժտա լուզմուկ  
 ժզմմզ նոյտու 'ոչփիշ զգուտգչ մի զզը զտամդտետեն կտչմտենզ  
 յամդզնսզուտույտ զմկմզ մզը 'կրազտը սէն 'ոզ զուսմ ։ մժուն  
 զուզ տզչ նոզմկ և մք վրտ մմսուքցտ ։ տմի ոզմուգի քուն  
 սիթ մժուն մզուց նոզմկ մզուրակտաւեն յամդեյտ զսզմուդ  
 ոչցու ոտմոքու ոզկուզկ դիմումի զմմրգն մզբնուկի մմզյտու ովին  
 ոտմզ ։ ըմսի ոզմուոզմցը մզեմն մի մմզը նոզ մմզը մք իսլ  
 շանցն ոզմունն մզք ։ ոզմութ ենուտողտ և ոզմունց վմտետեն  
 ոտ մոզը մի քուստի զմիտկուտ մմտվի մսզտ քմդնուցտուս  
 ու մոզը մի քուստի զմուրկնուց մի զտրցինզ յոդն յնսու ոզմուոզմցը մզ  
 մք ։ ոզմուտտակուց մի զտրցինզ յոդն յնսու ոզմուոզմցը մզ  
 մք զումկուտ ոկմմուն ։ տմի զտամդզմկ մզը իսլունի զզման  
 ոչտք և յանցումաչ ոզմունզտի մմզյոր նոզ զտա մզք  
 ։ յամդյունտ վմտվմի ։ ոզմունսիսի քոյինսչով մոզուն  
 շուտմա մի յամդտիթ մզուտմտի յամդժստի դ նսինուն  
 ոզմուոզտ յամդուտնումնուտ մմզնուն յամդզմտետու զտկուտ  
 ոչզու ։ ոզմուոզտ ոզմու ոզմուոզտ մի նորմումբուց մուսմթիուուսով

Մայրս լայնակուրծք ու հուսաբեկ կը հառաչեր անոշ  
խանդավառ պատմություններեն:

— Անտե՛րը, ամառն ալ չեկած եղավ, գոնե կանաչե-  
ղենները աժան ու առատ կը լային, գործերը քիչ մը կ'ավե-  
լանային...

Մորս միտքը միշտ զբաղած էր իր եփելիքով: Ամեն ինչ  
սուլ էր, կրակի գին ու օրե օր վրա կուտար: Ածուլս սուլ,  
օդային կազը դադարեցուցած էին ընկնդութենեն քանի մը  
ամիս անվճար մնալե ետք: Շուտով ելեքտրական հոսանքն  
ալ պիտի դադարեր ու մովթ տան մեջ իրիկոմները լածա-  
ռոններուն պես պիտի նստեինք՝ երազելով գարնան լույսին,  
առատաձեռնության և արգասիքներուն:

Մայրս տեղեն ելավ: Բացավ դարակը ու ճերմակ հաց  
մը հանելով՝ հավասար մասերու բաժանեց ու ամեն մեկուն  
տվավ իր իրավունքը: Այս գործողության ամբողջ տևողու-  
թյան ընթացքին դեմքը ցավազնորեն կը ծամածուեր՝ սաս-  
տելու համար հուզումը, որ աշքերուն մեջ կը փայլատակեր:

— Գո՞րծ գտեք, գո՞րծ. աս ասպես չերթար, հոգիս բե-  
րանս եկավ ալ, պոոթկաց հանկարծ մայրս չկարենալով զըս-  
պել արցունքները, որ սկսան հոսիլ իր խորը ինկած աշքե-  
րեն:

Ահավոր լուսթյուն մը տիրեց: Մայրս կուլար: Վիզերնիմ  
ծուած, ինչպես հանցավորներ, չեինք համարձակեր ոչ խոսիլ  
և ոչ ալ անոր երեսը նայիլ, մինչ իր սանձարձակ հեծքը ար-  
հավիրքի նման դառնացուցած և սպավորած էր մթնոլորտը,  
որ անխնայորեն կը ճզմեր մեր հոգինները:

Եղբայրս վախկոտ ու վարանող քայլերով մոտեցակ  
լուսթյան մեջեն մորս ու թեր պլորեց անոր վզին շուրջ.

— Մի՛ լար, մամա՛...

Մայրս շղային շարժում մը ըրավ: Եղբայրս՝ ապշած գե-  
տին փուկեր էր: Զէր հասկնար, թե ի՞նչ կանցներ կը դառ-  
նար մայրիկին հոգին մեջ:

— Գո՞րծ գտեք, գո՞րծ, չեմ դիմանար կոր աղքատու-

թյան, կ'աղաղակեր մայրս սրտակտուր ու հացի կտորը շը-  
պըրտելով սենյակին անկյունը, վաղը աս ալ չկա, կը հա-  
կընա՞ք, երեք ամսուն դադար տվին, կարեն ալ հույսը  
կտրվեցավ: Վեց ամիս է տան վարձքը չենք տված, ամեն  
բան ծախեցինք ու քանի մը օրեն փողոցն ենք: Մեզի պես  
մարդիկ միայն ծովը կը մաքրե, կը հասկնա՞ք, գո՞րծ գտեք,  
գո՞րծ... կամ... ծովը...

Մորս ամբողջ զայրույթը անուղղակիորեն ինձի կուտար:  
Քույրս գուեր էր գործ մը, կարի արհեստանոցի մը մեզ, ուր-  
կե հազիվ կրնար իր գուղպաներուն ու պատիկին տետրակ-  
ներուն դրամը հանել: Ուրեմն խնդիրը իմ շուրջը կը դառնար:  
Կծկտած տեղն ու տեղս, մկաններս պրկված ու շրթունքներս  
կծոտելեն կընդունեի անոր արձակած ակնարկությունները:

— Աստված չունի՞ք դուք, քիչ մը մեղքցեք ինձի, ո՞ւր  
պիտի երթա ասոր վերջը: Աստվա՛ծ իմ, գոնե քոլերա մը  
գար առներ տաներ մեզ, կը շարունակեր մայրս հետզե-  
տե ձայնը նվազելով ու մարելով կրկին հեկեկանքի մը հե-  
ղեղին մեջ:

Ամբողջ գիշերը մղձավանշի մեջ անցուցի: Անմիջապես  
որ աշքերս կը գոցեի՝ անտեսանելի ձեռներ վզիս կը շոքեին,  
կը խեղդեին զիս: Ու այսպես շարունակ:

Առուվան գեմ ցուրտը զգալի դարձեր էր: Կծկվեր մնա-  
ցեր էի վերմակիս տակ:

— Մամա՛, ես ալ դպրոց չերթամ, ՀԵ՞ ինձի գործ մը  
կը գտնես ու փարա կը վաստկիմ:

— Գրո՞ղ, կը պատասխաներ մորս սրտնեղ ձայնը, քե-  
զի է մնացեր ատոր վրայ մտածելը:

Նրբանցքին մեջ եղբորս վարանոտ քայլերուն հնչունը  
դրան բացվելուն ու գոցվելուն դրխկոցը: Հետո լուռ, խեղդ-  
ված հեծկլտուքը մորս՝ որուն դողացող շրթներեն անիմա-  
նալի մրմունչներ կը թափեին: Դառն լուսթյուն մը կը ծորեր  
ձեղունեն ու ոգիներու հանդիսավոր թափոր մը կը շրջա-  
գայեր մեկ սենյակեն մյուսը, որ ընկերանալով մորս հետըզ-

... ի՞ լուսով ածումնեան

ձենեաց մասմաշ՝ մոբաց տալզառ յատեն կ մզեզ տալուն դառումզեն պարզպար մզզչվմաս զվզչուստց մի մոբաց զվիստը ուժու կ քստ ճշտմի մոնեաց մասմաշ մս ողոն իզ —

զգանեսի լզեցք եւմուռ-եւմուռ  
զվդկուցումուն մի ւ զվդումի զուումզն վլուշուլը —

մատուցելու դիմունով պահպան մէջ զգուշացնելու

մը իսկով կազմակերպություններ մը մգղցնելու մի մգղցնելու մի  
ջղը դասմածք մգիք մի լուր ջղը ովհացի յակ տշպջ մա ու ու-  
շամբաւախտացու նետ վկյան նետ յամգղաւանոց մգեւակ  
լոռ մը զամ մմարդութամաւ նոյսմա մմգղիք մը վժցդն նուսե-  
առ զբգմի և տեղակու իսկով կազմակերպություն դաշ վեռոց  
մը շտու մտիմզ ովհացի պղկաց ովհ յամգղաւանոց ու ու-  
շամբաւախտացու մը վրակի մգեւակ լոռ մը մմգղութամաւ ու ու-  
շամբաւախտացու մը վրակի մգեւակ լոռ մը մմգղութամաւ ու ու-

վեցիուսման սովորությունը

մղօհի խսկումուն մտ

-մալսպիլյա մղոտ զվածողակիցն և սիրափառ տղա հոմնելու դադը

ԵՐԵՎԱՆ - ԱՐԴՅՈՒՆ

Ձել զարդ վկիվճակուղմ ովն վբրագոտաց մը կտորա խաղի  
զամդղի մս ճը մզկտակ մէ մզիցնեակ ճզը ողոմքիւսկոկուղմզ-  
մզեց մէ ծաստ վեռքն տնվը ծաստ վեռքն ովն մը բա թազ  
տաքզո զիմու յիտնզմանձն մը չզաւ զիմու ճզը ովմքմասկ ճը  
յիսորան ստիւնաս զինզկտառնափ ոմզժու քմտկզոց Դ

Հայութեան առաջարկութեան մասին

ՏԵՇԱՐՄԱՆ

«Դա նպաստեցմա ու դժվարութիւն մտածեց»

մեկ երկուքի ետևի կողմեն ցատկեցի հանրակառքին վրա:  
Կես օրեն առաջ պետք էր հասնիլ մտադրված տեղը:

Հանրակառքը կանգ առավ ծովու բաղնիքին առջև: Երեք  
կիներ բարձրացան իմ գտնված կողմեն: Ասիկա լավ նշան  
չէր:

Հիմա ծովեղերքեն կը սուրայինք: Հովին պաղ շունչեն  
կնճոտած կապտավուն ալիքները երկնքին կը ժպտեին մը-  
տերմությամբ: Հորիզոնը հեռավոր ու հստակ երիզով մը կը  
սահմանվեր: Թևս երկաթե ձողին անցուցած կը դիտեի ծովը՝  
ուր կղզիներու խումբը տեսակ մը ակնապարար նկարչություն  
էր այդ օր:

Մինչև այդ, արշավանքիս բուն գրդապատճառը ուղեղիս  
չէր հասած: Թափուն, բնազդական մղումի մը ազդեցության  
տակ ամբողջ կենդանական մեքանիզմս շարժման մեջ էր,  
քայց իմացականությունս տակավին կ'անդիտանար խնդրո  
առարկան: Երբ արդեն ճամբուն կեսը անցեր էր ու հետզե-  
տե կը մոտենայի երևակայությանս մեջեն աշքերուս առջև  
եկող քաղաքին այդ սիրուն անկյունին, որուն կապված է  
Մոնդե Քրիստոյի հիշատակը, մտքիս մեջ լույս կը տեսներ  
բուն իրականությունը: Եվ այն ատեն միտք ամբողջությամբ  
միրճեցավ մտածումներու բուսառատ պարտեզի մը մեջ և  
աշքերուս առջև բովանդակ բնությունը — ծովը, երկինքը,  
լեռները — կես ստվերային նշավ: Բնության այս թափանցի-  
կությանը մեջեն շարժարվեստ, ձերմակ աստառը կ'անցներ  
իր վրա ցոլանցնելով ստեղծագործություններս և զանոնք  
տեսնելով հպարտությամբ կուտեի: Մոոցեր էին արդեն ամեն  
ինչ, ամփոփված ինքզինքիս մեջ, հանձնուած երջանիկ խո՛-  
հերուս հոսանքին, ահա, իմ կառուցանելիք ժապավեններս,  
դերերս, բեմադրություններս, ստեղծագործություններս, ա-  
րուեստ... դրամ... հարյուր հազար...

— Պարո՞ն, տոմսակնիդ... տոմսակնիդ, պարո՞ն...

Ասանկ ձայն մը հասավ ականջիս խորոնկեն ու զիս  
երազանքն սթափեցուց: Բաղնիքին քովեն կառք մտնող

Նրեք կիները ապուշ ապուշ կը ծիծաղեին ու անոնց հնաձն  
անձոռնի գլխարկներուն վրայեն տոմսակավաճառին դեմքը  
կը ցցվեր անզգա ու խոժոռ:

— ԱՅ, ներեցե՞ք, աղաղակեցի գրեթե ու արագ շար-  
ժումով մը ձեռքս գրպանս տարի գրամ հանելու ձեռվ և միա-  
ժամանակ գացած ուղղությանս հակառակ ուղղության հա-  
մար տոմսակ ուզեցի:

— Սիսակած եք, ըսավ երիտասարդ տոմսակավաճառը ու  
հեգնական սրամտությամբ մը ավելցուց, գլուխնիդ ծախսած  
կ'երեկիք: Ու երեք պառակ կիները այս գեպքեն զվարճացած  
խնդուք մը ունեցան, զոր մինչև իրենց մսին մեջ զգացին:

— ԱՅ, շնորհակա՛լ եմ, ըսի օգտվելով անոնց հաճույքի  
պահեն ու շվարած երկույթ մը առնելով՝ հանրակառքին վար  
ցատկեցի:

Անպայման սատանային խելոք մեկ պահին հանդիպած  
էի: Ավելի աղեկ եղավ, որ գլուխս ծախսված կարծեցին փո-  
խանակ գրպանիս խեղճ դրությունը հասկնալու: Չէ՞ որ գլու-  
խուս ծախսված ըլլալը կրնան նշանակել անոր մեծ գաղա-  
փարներով զրադված ըլլալը, ինչ որ հարգանք ու ակնածանք  
պիտի հրավիրեր իմ վրա: Այո, ինչո՞ւ պահեմ, այս միտքը  
պահ մը ինքնասիրությունս գրավեց, գգվեց ու քիմ տակեն  
կը խնդայի երբ տոմսակավաճառին պատկերը դեմս կուգար,  
ձեռքը երկարելով «պարո՞ն, տոմսակդ...» կ'ըսեր: Տեսա՛ք,  
պարո՞ն տոմսակավաճառ, ինչպես խարեցի ձեզ, ՀԵ, գուք, որ  
հեգնական ու ինքնահավան ժպիտով նայեցաք ինծի: Կը հի-  
շե՞ք օր մը, գուք կամ ձեր ընկերը, պարո՞ն տոմսակավա-  
ճառ, ինծի համար դուք կամ ձեր ընկերը միևնույնն է—այո,  
օր մը մեկ սու պակաս ունենալուս համար կառքեն վար նետե-  
լով զիս ժողովորդին առջև խայտառակած էիք: Կը հիշե՞ք:

Հետո, մինչև հանրակառքին հեռանալը կեցա իշած տե-  
ղըս, իբր թե մյուս կողմեն գալիքը առնելու սպասեի: Անմի-  
ջապես որ ինքզինքս մինակ զգացի՝ արագ մը շարումակեցի  
ձամբաս: Ազ կողմիս ծովը կը փովեր՝ ինչպես հոգնարեկ

բանվորը իր խշտյակին վրա, կիսաբաց աշքերով ու փոթուտած ձակատով։ Անոր ժեռուտ ափերուն զուգահեռաբար կը հետևեր օճաղալար ճամբան՝ որուն երկայնքին, նոր հարսներու պես, սպիտակ վիլաները. քմայքոտ ու այլազան ոճափրումներով, կը թառեին բլրակներու կողերուն ու գագաթներուն, հորդառատ կանաչությամբ ու ծաղիկներով պարտեզներու մեջ, որոնց վրա սիրահար պարտիզանը իր մկրատին խաղերը չեր զլացեր։ Ու երկարաբուն նիշար շոնինելու, որոնք կը բարձրանային տանիքներեն վեր, իրար խառնելու համար գոնդ-գոնդ գլուխնին ու քնանալ մեկզմեկու ոսի վրա, կը ձևացնեին արեանոցներ, որոնք վիլաներու շքեղության կուտային երազային հով մզ։

Վերջապես տեսնվեցավ վիլան, որուն փողոցին նայող պատին վրա կը կարգացվեր առ մեծատառ կապույտ գրությունը՝ «Քբսելսիոր ֆիլմ»։ Հոս ծովը փոր տվեր ու մտներ էր ցամաքին մեջ օգտվելով ձորակեն, որ ձկնորսներու մակույկներուն օճախ մըն էր։ Այդ ձորակին կապված է և Մոնղե Քրիստոյի անունը։ Մանկությունս ամենեն ավելի զբաղնցնող այս տիպարը մտքիս մեջ խաղալ սկսած էր, երբ կապույտ արձանազրությունը կրող տան զրան առջև կանգ տռեր էի։ Զերս վարանումով երկարեցի զանգակի չվահին։ Սիրտս դող ելավ, ձեռքս զղչումով ետ քաշեցի, բայց արդին զանգակը իր ճուղոցը տված էր։ Ապշահար չորս կողման նայեցա ու, ինքնինքս ապահոված, թե մարդ մարդաստան չըկար շուրջս, ետ-ետ քաշուեցա։ Հազիվ երկու քայլ առեր էի՝ գլուխս վերեեն թավ, հարբուխոտ ձայն մը առի.

— Ո՞վ է հոդ...

Աշքերս վերցուցի ու տեսա պատին վրայի մարդը՝ լայն ուսերով, խոշոր գլուխով ու ականջներով։ Սև ու թափւությունքերուն տակ սուր նայուածքներով բիբերը կը փայլեին։

— Ես եմ, ըսի, կարելի եղածին շափ վարանքս պահելով, Տիկին Առեքի կողմեն կուգամ։

— Լավ, վայրկյան մը, ըսավ մարդը ու հեռացավ։

Այն ատեն լայն շունչ մը քաշեցի: Կարձ և ծանր բեռ  
մը վար նետեր էի ուսերես: Ինչքան գոհ պիտի ըլլայի, կթե  
մեյ մըն ալ չ'երեվեր այդ անժպիտ դեմքը՝ որուն վրա հոն-  
քերը իրենց խոժող շուրջ նետեր էին: Մնալու և շմալու երկ-  
վության մեջ էի, երբ շրայիկ, դուռը բացվեցավ: Երկու պա-  
տերու մեջ տեղը տասը-տասնըհինգ աստիճաններով նեղ  
սանդուխն մը վեր ելաւ: Տափարակ պարտեզ մը անխնամ ու  
անաշխատ, երկհարկանի վիլան ու քովիկը մանրանկար  
զենք մը՝ որուն վրա գրված էր «Բեմադրիչին գապինեն»:  
Վտիտ արեւ սփռեր էր իր տժգույն լույսը վիլային առշե-  
ուր ոզորե թիկնաթոռի մը մեջ բազմեր էր մարդը:

— Արդյոք կրնայի՞ տեսնել պարոն Սանդոռոն, եքսել-  
սիոն ֆիլմի բեմադրիչը:

— Նույն ինքը, պատասխանեց մարդը, որ բարկու-  
թյան դերի մեջ եղող դերասան կարծեր էի նախ, բայց իր  
խոսքին վրա շտկվեցա ու պաշտոնական դիրք բռնեցի: Ինք  
անշուշտ խեղճ ու կրակ հագնվածքիս համար շշարժեցավ  
անգամ ու անտարբերությամբ շարունակեց.

— Ի՞նչ կը փափաքիք, երիտասարդ:

Մարդը տեսնելով վարանիլս հարցումը կրնեց ու շա-  
ռունակեց.

— Բայց խնդրեմ նստեցեք սա աթոռին վրա ու բացա-  
տրեցեք, թե ի՞նչ կ'ուզեք:

Գլխարկս ձեռքիս, մոմի պես ուղիղ կանգնած, չէի հա-  
մարձակեր ծունկեր ծալել ու նստիլ աթոռին վրա: Ամշկո-  
տութենես այտերս կը կարմրեին ու ձայնս կը վարագուրվեր:   
Ինծի այնպես սովորություն եղած էր, թե ես իրավոնք շու-  
նեի նստիլ կողք կողքի մարդու մը հետ՝ որմե աշխատանք  
խնդրել եկած էի և որ մաքուր ու լավ հագնված էր, ինչպես  
գործարաններու պաշտոնյաները, որոնք արհամարհանքով ու  
մեծամտությամբ կը նային բանվորներուն վրա: Ընդհակա-  
ռակը պետք էր ձեռքերը կուշտերեն վար կախած, դեմքը ա-  
զերսող, գլուխը թեթև մը ծոած, անշարժ մնալ: Բայց քաջա-

լերվելով Պրն. Սանդոռոյի ձայնին հետզհետե մտերիմ դարձող շեշտական, քաշեցի աթոռը, միշտ տեսակ մը շվարուն շարժվածքով ու նստա:

— Ո՞հ, շնորհակալ եմ, շատ ազնիվ եք, Պր. Սանդոռ... Հրաշալի է օդը այսօր, չէ...

— Այս, թիշ մը ցուրտ է, բայց արևը բացառապես հունելի է ու ծովը խելոք: Ես շատ կը սիրեմ խելոք ծովը:

Պր. Սանդոռոյի արտահայտության վրա էր, որ գլուխադարձոցի դեպի ծովը: Ակնարկությունը, զոր ըրեր էի օդի մասին, պարզապես շվարումես ըսելիք շգտնելով՝ բերանս եկածը դուրս տվեր էի խոսելու համարձակություն ձեռք բերելու ակնկալությամբ:

Արդարե, հեռուն, ժեռուտ լեռներու շղթան լերկ բազուկը երկարեր էր ծովուն մեջ՝ վարագուրելով հորիզոնին մեծ մասը՝ ուր կը ձևանար հանդարտ ու կանաչավուն ջուրերով ծովածոցը:

— Զմայելի տեսարան ունիք, Պր. Սանդոռ, միշտ բանաստեղծի արժանի, ըստ հիացումով ու միանգամայն շարժում մը ընելով՝ աթոռը քաշեցի ու նստա:

Ամենայն ինչ լավ է, որ լավ կը վերջանա, կ'ըսն առածքը: Հիմա, նստեր էի մարդուն դեմ՝ որուն աշքերը, ոչ աւ ձայնը կը հուզեր զիս այլևս:

— Գիտե՞ք, — շարունակեցի, հանդարտ ու անխոռվ, — եկած եմ ձեզմե շատ լուրջ բան մը խնդրելու:

— Ինչպես կրնայի ձեզ օգտակար ըլլալ:

— Զիս ձեր խումբին մեջ առնելով: Տիկին Առեք ինձ դրեց այն հուզով, թե դուք երբեք շպիտի ուղեիք մերժի գինքը:

— Ներողություն, խնդիրը ինչ բանի վրա ըլլալը չափ չասեցա, այսինքն շարժապատկերի մեջ խաղաղ կ'ուզեք:

— Ճիշտ այդպես, Տիկին Առեք ըսավ, թե դուք լավագույն բեմադրիչներն եք և ես ձեզմե շատ-շատ կրնամ օգտըվիլ:

Ամեն խոսքիս ետև, դիտումնավոր կերպով կ'ավելցնեի՞ Տիկին Առլեքի անունը, խոսակցիս ուշադրությունը արթուն պահելու նպատակով: Եվ տեսնելով, որ իրապես ան բացառիկ հետաքրքրությամբ կը հետեւը այդ անունին, այսպես կամ այնպես այդ անունով կը վերջացնեի նախադասություններս, գործս հաջողությամբ պսակելու համար:

Ու երևակայությանս մեջ սինեմայի դրան առջևի ձարգոց խոսակցությունը կը կրկնվեր:

«Եվ ըսել, որ հարյուր հազար ֆրանք առած է այս խաղին համար... այս դարուս սինեմայի դերասան ըլլալու է եղեր»:

Այնպես որ, վճռեցի անպայման հաջողիլ: Արդեն կը գտնվեի մարդու մը դեմ՝ որմեն կախում ուներ ամեն բան: Երբեք շպիտի թողեի անոր օձիքը:

«Հարյուր հազար ֆրանք, խոշոր դիմանկարներս, այս կամ այն դերիս մեջ ու մեծատառ անունս փողոցներու անկյունները, շարժարվեստի շենքերու ճակատին, ամեն տեղաշխարհի ամեն կողմերը, մարդիկ հիացած զիս պիտի դիտեին ժամերով... Հարյուր հազար ֆրանք, այսինքն երկու անգամ հիսուն հազար: Մայրս երանութենեն պիտի ժատեր, պիտի խնդար, պիտի գորգուրար իմ վրա... ու կոթական եկեղեցիին դեմի անկյունի սափրիչին նիհարաշուրթն աղջիկը շպիտի փախչեր իմ երենալովս, իրեն պիտի ցուցնեի դիմացի շենքին վրայի պատկերս, անունս: Եվ հետո, լավ հագված պիտի ըլլայի, գրպանս լեցուն պիտի ըլլար, լեփ լեցուն: Ֆիկարոյին աղջիկը գլուխը պիտի ծոեր, կարմրեր ամոթենու... սերեն... և կոթական եկեղեցին իր նետաձև զույգ գըմբեթները եղջյուրներու նման դեպի երկինք ալ ավելի պիտի ցցեր»:

Մինչդեռ երևակայությանս մեջ տեսիլքները իրարու եւ տեէ կյանք կառնեին, ոչ առանց խանգարելու խոսակցությունս, որ երբեմն անիմաստ ու անկապ կը դառնար:

— Ուրկե՞ կը ճանչնաք Տիկին Առլեքը, Հարցուց Պր.  
Սանդոռո մեկեն, Հոնքերը կիտելով:

— Ե՞, Տիկին Առլե՞քը, շատ մոտեն կը ճանչնամ: Երբ  
մեր երկրեն, ծնողներես գալտնի, փախա Ֆրանսա գալու հա-  
մար, շարժարվեստով զբաղելու մարմաշեն տարված, ժա-  
մանակ մը իր փեսային տունը մնացի և իրենց փոքր աղջը-  
կան, Ատելատին դասեր կուտայի: Կը ճանչնաք անշուշտ  
Պր. Տ'Առողուան, Ատելատի Հայրը, որ հորս ծանոթներեն է  
վաճառականության ասպարեզին մեջ:

Երբ այսպես խրոխտ շեշտ մը տված ճայնիս կուշտ-  
կուշտ կը պատմեի, Պր. Սանդոռո զիմ կը քններ ոտքերես  
մինչեւ գլուխս: Կը մտածեր անշուշտ, թե իս, անպիտան արա-  
րածս, կեղտոտ ու անկերպարան, / ինչպե՞ս կրնալի մուտք  
գործել այդպես պերճափարթամ տուները: Սուտ էր, բայց  
սուտը անանկ ճշմարտության վեղարով Հագցուցեր էի  
բերնիս մեջ, որ անկարելի էր տարակուախի: Ուրկե՞ միտքս  
ինկեր էր գաղափարը խաբելու համար մարդ մը, որ այն-  
քան բարյացակամ գտնված էր ինձի ճանդեալ:

Բայց միթե ուրիշ ձև կա՞ր հաջողելու:

«Հարյուր հազար ֆրանք... ու անունդ պատերուն վրա...»  
Կ'արճագանգեր ուղեղիս մեջ ու սելյուկոտիե ամբողջ ժապա-  
վենը կը սկսեր զառնալ: Մայրս, քույրս, եղբայրս, սակրի-  
չին աղջիկը, այծի գլխու նմանող կոթական եկեղեցին՝ որուն  
միայն տեսքը զիս զղագրգիռ վիճակի մեջ կը նետեր: Ինչո՞ւ  
զայն կանգնեցուցեր էին մեծ պողոտային գլխուն, բարձրա-  
դիրք ու տիրապետող: Որպեսզի մուրացիկները ավելի՞ աղատ  
ասպարեզ ունենան, ինչպես պողոտային սկիզբը սակարա-  
նը՝ իբրև քաջալերանք գողության: Հապա ինչո՞ւ զայն կանգ-  
նեցուցեր են սակրիչին աղջկան աշքին դեմ, այս էր արդյոք,  
որ զիս կընվազեցներ: Չեի հասկնար:

Պր. Սանդոռոյի կասկածելի մտածումները փարատելու  
համար և որպեսզի նայվածքներն ալ հեռացնեմ հնամենի

Հագուստներես կերպով մը շարունակեցի շինել պատմություն:

— Տարի մը մնացի հոս միշտ միևնույն փափաքս հետապնդելով: Քանի մը տեղեր դիմեցի ապարդյուն: Ատեն մըն ալ Պր. Թոմայի խոստումներեն տարվելով՝ հաճախեցի իր շարժարվեստի դպրոց-արհեստանոցը:

Վերջին խոսքիս վրա Պր. Սանդոռո սկսավ անզուսպ ու զվարճությամբ խնդար:

— Դո՞ւք ալ ինկեր եք այդ խաբերային ծուղակը: Ատոնք պարզապն զրամաշորթության համար հիմնված հաստատություններ են: Իր արվեստը ըմբռնած բեմադրիչ մը անպայման պետք չունի սինեմա-դպրոցներու կամ թատրոններու դիմելու, ան յուրաքանչյուր քայլին կը զննե իր շուրջը դարձող անձերու արտաքնացման հատկությունները: Շարժարվեստի հասկացողությունը տակավին չէ ընդհանրացած, բոլորին համար ան աժան, դյուրըմբռների, ժողովրդական թատրոն է: Դերասանը ինքն իսկ շփիտեր, թե պետք է արտահայտությունը տալ բոլորովին նոր միշտոցներով, այն միշտոցներով, որոնց սահմանին վրա մյուս արվեստները կանգ կառնեն՝ անկարող ավելի առաջ երթալու երեակայության պատուզները մեզ հրամցնելու համար:

Զարմանքս մեծ էր տեսնելով, որ Պր. Սանդոռո այնքան շահեկանությամբ կը խոսեր ու իր տրամաբանությունը գեղարանի ամենազգայուն նժարով կը կշռեր:

— Այո՛, այո՛, կը հասկնամ ձեզ, ես ալ արդեն շուտ մը կուահելով իր սովորեցուցածներուն փուճությունը, շուտով ձգեցի և Փարիզ մեկնեցա: Հոն միակ զբաղումս եղավ հետապնդիլ նպատակաւ Անոթի, ծարավ, վրաս գլուխս հինգած, երբեմն փողոցները, կամուրջներուն տակ և կամ խարխուլ պանդոկի մը մգլած մեկ անկյունը պառկելով, չի վարաներ ներկայանալ Կոմոնին, Պոճարիսի իր աշխատանոցները երթալ, դիմել Ատոռամառնդին, Ֆոքսին, Օպեռին և այլն... մինչև որ ճարահատ՝ իրազեկ դառնալով այդ բոլոր ընկերու-

թյումներու ներքին աններելի խաղերուն՝ հազիվ ինքինքու կրկին հոս գտնելու զբաղիլ Տիկին Առեքի կամ իր հանրածանոթ ամուսնուցն օգնությամբ, որոնք, ինչպես կը տեսնեք, զիս արդեն ձեր պաշտպանության հանձնեցին:

Պր. Սանդոռո ձեռքերը շփեց, շարժում մը ըրավ ու ցած ձայնով խոսեցավ.

— Եատ լավ, ես կրնայի օգտակար ըլլալ, ինչո՞ւ չէ, բայց կը ցավիմ, որ առ այժմ ոչ մեկ խոստում կրնամ տալ: Տիկին Առեքը շատ լավ գիտե զլսուա ևկա՛ծ պատահարը: Ութը ամիսե ի վեր հիվանդանոցն էի Փարիզ՝ ուր ինքնաշարժ մը զիս ճզմած էր: Տակավին բոլորովին ինքինքիս չեմ եկած: Հիվանդությանս պատճառով դրամագլուխս սպառեցի և հիմա կը շանամ գտնել մեկը, որ կարենար 50.000 ֆրանք տրամադրել, որուն դեմ ես կապահովեմ տոկուն աշխատությունս:

Անիկա խոսքը չեր լմնցուցած, իմ մեջ ամեն հույս խորտակված էր: Տրամադրությունս մոռայլեցավ, պաղ զգացում մը զիս դեպի ետ կը մղեր, անմիջապես հեռանալու համար: Մինչ խոսակիցս ավելի մոտենալով և մտերմորեն կը խոսեր, կը բացատրեր գործնական բաներ, որոնց մեջ զիս հետաքրքրող ի՞նչ կը գտներ, չեի հասկնար: Տարօրինակ փոփոխություն մը կը հայտնվեր անոր նայվածքներուն, ձայնին ու շարժուածներուն մեջ:

Երկար բացատրություններե վերջ գրավանեն երկայն տեսրակ մը հանեց, որ կը պարունակեր բեմադրություն մը իտալական վեպե մը առնված: Երբ, մեկ քանի հատվածներու ընթերցումը լրացուց, խորհրդավոր նայվածքը մը նետեց իմ վրա ու ըստավ.

— Այս յեսու Première-ը ճիշդ ձեր գերն է, ձեր ընդհանուր կազմվածքը շատ հարմար է, միայն թե... միայն թե...

Պահ մը լուսվուն տիրեց մեր միջեւ և այդ լուսվուն ընթացքին մեր նայվածքները զիրար թափանցեցին: Միայն թե, այո, միայն թե, Պր. Սանդո՛ռո, այդ միջոցին ձեր արտա-

ևովոր արտահայտությունը, քանի մը փողեր անցնելե ետք,  
իր սկզբնական անտարբերութենքն սկսելով, խելագարածի  
հոգիին անկայուն ու հարափոփոխ պատկերը ըլլար կարծես:

Հանկարծ պարզվեցավ առեղծվածը:

— Կ'ըսեք, թե ձեր հայրը վաճառական է և դուք հոս  
անգործ ու այս խեղճ ու կրակ վիճակին մեջ: Խնդրեցեք ձեր  
հորմեն հարկ եղած գումարը ու ընկերութին աշխատինք:  
Փոխագարծ համաձայնագրություններ կը ստորագրենք, վիլ-  
ւան և թեքնիքական կազմը ամբողջությամբ իբրև ապահով-  
ված փոխարժեք ձեր գրամագլուխին, այնպես որ դուք ձեր  
փափաթին հասած կ'ըլլաք, իսկ ձեր հայրը՝ առետրական  
փայլուն գործը մը:

— Գեշ գաղափար չէ,—ըսի լեզուս խածնելով,—և Հե-  
տագային կրնանք մեծ ընկերության մը հիմնադիրը ըլլալ  
ու մրցիլ որիշներու հետ:

— Անշուշտա, — հաստատեց Պր, Սանդոռը, ձայնի բա-  
րակցած շեշտով մը,—և դուք ի վերջո կրնաք առաջին գերեր  
խաղալ, ձեր համբավը պարտադրել աշխարհի առջև: Կը կար-  
ծեք, որ բոլոր անվանի գերասանները մեծ արվեստագետներ  
են, հանրությունը չգիտեր թե էրանին ետև ի՞նչ զղձիմօմ-  
բինայուններ կան: Մեծ մասամբ, մանավանդ կիները, որոնք  
ի գին ամեն բանի, իրենց մերկությունը ձերմակ պաստա-  
ռին կուտան, ինձի ու քեզի պես հասարակ մարդեր են:

Ես բոլորովին հուահատեր էի արդեն: Չեխն բավեր եր-  
շանկության խոշընդոտները և ահա Պր. Սանդոռը, փոքր  
գովասանքե մը վերջ, իմ մեջ հասարակ մահկանացու մըն է,  
որ կը գտներ: Կուզեի փախչիլ, բայց այն տեսակ խոսակ-  
ցության մը բռնված էի, որ շատ երկարելու հավանականու-  
թյուն ուներ: Կրնայի անշուշտ մեկ խոսքով պարզել խնդիրը,  
թե պարզապես փողոցը շպրտված որբուկ մըն եմ և որ ինձ-  
մե նման օգնություն սպասելը տվելորդ հոգնություն է:

— Ուրիմն ես կարելի եղածին շափ շուտ կը գրեմ հորս,  
ավելցուցի հանկարծ ուրախ՝ օձիքս ազատելու միջոցը գտած

ՎԱՐԱԼՈՒՄ:—ՎԱՍՏԱՇ եմ, որ այս տեսակ շահավետ գործ մը կրնա հայրս ինձով զբաղիլ տալ:

— Այս, ձեր հայրը ձեր մեջ գործնական մարդու զիզը նշմարելով, թե ձեզի և թե իրեն նկատմամբ առաջարկնիդ բանիմաց պիտի հաշվի և հուսամ որ ձեր ցանկությունը պիտի իրականանա: Բայց այսօր իսկ գրելու եք, կրնա ըլլալ, որ ես մինչև իրիկուն ուրիշներ գտնեմ, ինչպես որ արդեն մեկ պահեն մլուսը մեկը պիտի դար հոս վերջնական համաձայնության մը հանգելու համար:

— 0-, անմիջապես կը գրեմ,—եղավ պատասխանս ուրախութենեն իսենգեցողի մը պես ու միաժամանակ ինքինքս գեպի դուռ նետելով: Ա՛լ կարծես խարեռության խաղս իր գագաթնակետին հասած պիտի պայթեր: Քիչ մնաց, որ խոստովանեի ամեն բան: Անտեսանիլի ձեռքեր վիզս կը սեղմեին:

Պր. Սանդոռո ինձ ընկերացավ մինչև սանդուխներուն վարը: Երբ ձեռքը առի հրաժեշտի համար, իր թափանցող ու տիրապետող նայվածքները ծանրացնելով իմիններիս վրա՝ ըստի, կտրուկ ու վճռական.

— Կը սպասեմ:

— Այս, կը գրեմ, որ հավանությունը հեռագրով իմացնե:

Շվարած էի: Բառերը բերնես կը թափթիենի: Երբ փողը ինքինքս մինակ գտա, սկսա վազել: Ինծի անանկ կուգար, թե եթե գլուխս ետև դարձնելու ըլլայի, գնդակի հարված մը պիտի հասներ ճակատիս: Այնքան սարսափած էի: Երեսներես կրակ դուրս կուգար: Քրտինքը թրչեր էր ճակատ:

Հազիվ հարյուր քայլ առեր էի, երբ զգացի, թե անոթի եմ: Քաղաքին կեդրոնը հասնելու համար առնվազն մեկ ժամ կար ոտքով ու ծունկերս կը դողային: Հանրակառքերը կ'անցնեին մարդերով լցուն:

Կես օր էր:

Խորհեցա երթալ Պր. Սանդոռոյն հինգ ֆրանք փոխ ուղել: Անշուշտ պիտի տար, քանի որ հիսուն հազարի հույսը կ'օրորեր զինք տակավին: Բայց աստի հորս պատասխանը

իրեն հազորդելու պիտի գայի մեկ կամ շատ-շատ երկու օրեն: Այդ առթիվ կրնայի այդ հինգ ֆրանքի շնչին հաշիվը փակել:

Ի՞նչ աղվոր գտած էի: Ասկե ավելի լավ միջոց գոյություն չեր կրնար ունենալ: Պր. Սանդոռո զիս շվատացնելու համար այդ պղտիկ գումարը սիրով պիտի տար և թերես ալ գոհ պիտի ըլլար ինծի ծառայություն մը մատուցած ըլլալուն: Սփանչելի՝ գաղափար: Հինգ ֆրանք, այսինքն փառափոր ճաշմը, որ հետեւյալ ձևով պիտի բաղկանար. մեկ քիլոկրամ ճաշոր կ'արժեն երկու ֆրանք քսան սանդիմ, հետո՝ հետո՝ քան մը, որ քիչ արժեն և առատ ըլլա: Պանի՞ր... երշի՞կ, շոքոլա՞թ... այս՛, շոքոլաթ: Շոքոլաթը թե շատ կ'ըլլա և թե արյուն կուտա, արյուն: Հացով շոքոլաթ, հարուստի տղաքը բոլորն ալ հացով շոքոլաթ կ'ուտեն:

Սակայն միտքս պղտորեցավ: Տիրեցա: Ի՞նչ ըսելով այս բոլորը տուն պիտի տանեի: Ուրկե՝ գտած էի դրամը: Փողոցե՞ն... աշխատա՞ծ էի... բայց ո՞ւր... ա՛յ, ա՛յ, գտա, կայարանեն ճամբորդի բնու փոխազրած էի: Հիանալի գյուտ: Երբ մարդուս ստամոքսը և ազիքները բողոքի կ'ելլեն, այն ատեն մարդ ամենահմուտը և ամենեն խելացին կ'ըլլա: Ու խորհեցա նույնիսկ, որ անսպասելիորեն ինծի գործ գտած էի: Որոշեցի, որ հետեւյալ օրն իսկ առավոտուն, կ'երթամ կայարան այս գործով զբաղելու: Ե՛յ, ապօ՛ւշ, կը հանդիմանեի ինքնինքս ասոր վրա, ինչո՞ւ պետք գործարաններու առջև սլքուտալեն հսկիչներու քմայքներուն խաղք ըլլալ: Վաղ առավոտ կերթաս կայարան, ժամանման դրան առջև կը կենաս ու ձեռքը պայուսակը ունեցող ճամբորդներուն վրա կը ցատկես, պայուսակը կը խնդրես, շտալու պարագային կը համառիս, նաբոլիի լածառոններուն պես: Ա՛յ, այսպիս լավ էր, լավ: «Պանի՞ր ֆրանք», երկու ֆրանք, պարո՞ն, երկու, մեկ պայուսակը երկու ֆրանք է, երկու հատը՝ չորս, նայած հեռավորության, երկու ֆրանք միայն քաղաքի կեդրոնին համար: Այսպիսով հարկավ օրական քսան պայուսակ կրնայի ձեռք

Ճգել՝ որ կ'ընէ քառասուն ֆրանք: Պատվական օրական և  
անկախ գործ: Կրնամ նույնիսկ հետզհետե տուն գնել, տո՛ւ  
և այն ատեն մեր չար տան տիրոջ քթին խնդալ: Քառասուն  
ֆրանք, կատակ չէ, տասը՝ մայրիկիս, տասը իմ մանր  
ծախսերուս՝ սրճարանի կամ ծխախոտի ծախսերուս, ու քսա-  
նըն ալ կպահեմ: Օրական քսան ֆրանք— տասը օրը երկու  
հարյուր, երեսուն օրը վեց հարյուր: Ամիսը վեց  
հարյուր ուրեմն: Տասը ամիսը վեց հազար, երկու ամիսն աէ  
հազար երկու հարյուր, տարեկան յոթը հազար երկու հա-  
րյուր: Հինգ տարիեն կ'ունենամ մոտավորապես քառասուն  
հազար ֆրանք ու նպարավաճառ Կիրակոս աղային պես խա-  
նութ մը կը բանամ, երշիկ, պանիր, լուրիա, ալյուր, օճառ,  
հավկիթ և այլն կը ծախսեմ, կը խաթեմ հաճախորդներս, լաւ  
կը ձեացնեմ: Հավատացնեք, ձեզի համար երկու հիսուն է,  
կ'երդնում, որ երկու սու կը վնասեմ, հաճախորդ եք, վարժ-  
ված մարդ եք, չեմ կրնար ձեզ պարապ ճամբել, առեք, եր-  
կու քառասուն թող ըլլա, վագ անցանք, վագ... այսպիսով քա-  
ռասունը ութիսոն կ'ըլլա, ութիսոնը՝ հարյուր, ա՛յ, անպիտան  
հարյուր հազար, եթե շարժարվեստի դերասանը քեզ ունե-  
ցավ, ես պակաս չեմ մնար անկե, ես՝ նպարավաճառս, ես՝  
խարեւության ու ստության իմ գերս կը խաղամ իմ խա-  
նութիս մեջ, կյանքի բեմին անծանոթ այս անկյունը, ու ոք  
կը տեսնե ու կը կուածե իմ գաղտնիքներս, ես մեկի կը գը-  
նեմ՝ երկու և կիսի կը ծախսեմ, հավատացնելով թե կիս ալ  
կը վնասեմ, որովհետեւ իմ գործս, աղբա՛ր հայրերի գործ է...  
«հը՛, հայրեք, սատանան տանի հայրեք... բայց գանք սա  
մեր հինգ ֆրանքին հիմա: Եվ կասկածներու տեղի շտալու  
համար, առայժմ, ավելի նախընտրելի է տուն շերթալ: Այդ  
պարագային ճաշացուցակս փոփոխության ննթարկել, թեթև  
մը ձոխացնելով: Կես քիլո հաց, փոխանակ մեկի, որ կ'ընէ  
մեկ ֆրանք տասը սանդիմ: Կես քիլո՞ն, հո՞, ինչո՞ւ չէ, ինծի  
կը բավի, բազուկիս չափ հաց, կե՛ր-կե՛ր չհատնիր: Հետոն  
ալ կ'առնեմ մեկ հերթո պանիր երկու ֆրանքնոցեն ու քսան

սուի երշիկ, շերտ-շերտ կտրված: Շոքոլաթը ի՞նչ պիտի  
ընկմ, հացին հետ շոքոլաթ կ'ուտափի՝, անիկա հարուստի տղու  
ուտելիք է՝ որոնք արդեն կուշտ կ'ըլլան, մեզի պեսներուն  
համար երշիկ պետք է, երշիկ՝ որ ջուր խմցնե և ուսեցնե  
փորբ: Հետո կրնամ առնել նաև... բայց, կեցի՛ր, նախ հաշիվ  
ընեմ: Մեկ տասը հաց, մեկ հեքթո պանիք՝ երկու ֆրանք,  
քսան սուի երշիկ— շերտ-շերտ կտրված: Արդ, գումարը,  
1. 10-ը, 2. 10-ը, 3. 10-ը, ա՛հ, չեղավ: 1. 10-ը հաց, 2  
պանիք, 20 սուի երշիկ, ընդհանուր գումարը՝ 1. 10-ը,  
2. 10-ը, 20 սու ալ երշիկ 3. 10. սատանա՞ն տանի, կարծես  
թե սխալ է: Միտք անձրենն ծեծված չոր տերեկի կը նմանի:  
Մատներուս վրա կը համբեմ, ձախ ձեռքիս բթամատը սեղ-  
մելով ձկույթիս վրա, ուժով մը, որ կարծես թիվերը չփախ-  
ցընելու համար ըլլա ու կարտասանեմ կամաց մը շրթներս  
շարժենալ՝ 3. 10-ը, հետո բութս կը դնեմ մատնեմատիս  
վրա՝ 3. 10-ը, բայց ոչ, անպայման սխալմունք կա նորեն,  
որովհետեւ ես այն մարով կազմած էի ճաշացուցակս, որ  
ինձի թրամվելի դրամ սնա, մինչդեռ մատներուս հաշիվը  
մեկեն հանկարծ երեքի կը բարձրանա: Մեքենաբար ձեռքս  
գրպանս կը տանիմ, ոչ թուղթի և ոչ ալ մատիտի կտոր մը  
կա: Կեցի՛ր, ահավասիկ հիանալի գաղափար մը ես: Կարելի  
է բարի կտորով մը գետնին վրա գրել: Ու կը ծոփմ, տակ  
տակի կը շարեմ գիրերը: Այդ պահուն, ինքնակոչ հյուրի նը-  
ման, բարձրահասակ, այծի մորուքով ուսուցիչս, խոշոր աշ-  
քերը բացած ինձի կ'երևա ու խիստ կ'արտասանե—«Թվա-  
նշանները մաքուր և տակ-տակի, միավորը միավորին տակ,  
տասնավորը տասնավորին տակ և շարունակաբար...»: Թեթև  
ժպիտ մը կ'ունենամ, կարծես ըսելու համար թե, սիրելի՛  
ուսուցիչս, մեր ուղեղները այնքան հոգնեցան մեր կրած ու  
կրելիք հալածանքներեն, որ ձեր խրատները շատոնց մոռ-  
ցանք և հիմա թող ավել մեզ, որ մենք զինենք մեր խոր-  
շուրդները և հաշվելու մեր եղանակը: Ու տեսիլքը անհետա-  
ցավ: Գործողությունս կը շարունակեմ: 1. 10-ը՝ հաց, 2. 00՝

պանիր, 1. 00` երշիկ, կը քաշեմ գիծը. 1-ը վար, ստոր,  
մեկ երկուք ալ՝ երեք, մեկ ալ չորս, աշ, այսպե՞ս, չորս  
տասը: Հերն անիծած, քրտինքը աղբյուրի պես կը հոսի ճակ-  
տես: Գիտեի, որ սխալ էր երեք 10-ը, այդքան հաշիվն ալ  
շփիտի՝ կրնայի ընել: Նպարավաճառ կիրակոսին ներելի է  
միայն մատիտով հաշվելը: Լավ, ուրեմն՝ չորս տասը, հիսուն  
սանդիմ ալ հանրակառքին՝ չորս վաթսուն, կ'արտասանեմ  
ու բութս ճկուցթիս վրա կը դնեմ, ութսուն՝ մատնեմատիս  
վրա, իննսուն՝ միջնեմատիս վրա, հարյուր՝ ցուցամատիս  
վրա: Չորս մատ՝ քառասուն սանդիմ: Ուրեմն քառասուն  
սանդիմ կը մնա քովս: Աւ ետ կը դառնամ Պր. Սանդոռոյին  
երթալու... Օ հոյ... ինչ տեսնեմ, արգեն ծովու բաղ-  
նիքի մոտ էի, կես ժամե ավելի է քալեր էի առանց նշմա-  
րելու վիլաներու թափորը, որ ետևս թողուցեր էի: Ակռաներս  
փշրվելու աստիճան կը սեղմվեին, աջ ոտքս գետին կը զար-  
նեմ բարկութենես ինքինքս կորսնցուցած: Զա՞ր սատա-  
նա... օ՛հ, այնպես անոթի էի և ուտելու հույսը կորսուած,  
որ անճարությանս դեմ կատղած շրթունքներս կը կրծեի, կը  
կծոտեի հետզհետե ավելի արագ, ավելի ուժով ու բռունքք-  
ներս սեղմած, աշքերս ծուռ, քարացած ու հրացայտ: Կեցած  
տեղս գամված, ավելի և ավելի լարվելով մեշքիս վրա աղե-  
ղի մը պես՝ ուրկե հանկարծ սրածայր նիզակ մը պիտի ար-  
ձակվի՝ դժոխային աղաղակ մը թռավ կուրծքս, որ ցավեն կը  
կոտտար: Զերս ցավի ազդեցության տակ ինքնաբերաբար  
բերնիս գացեր էր, որով հաստատեցի թե վսրին շրթունքնս  
արյուն կը հոսեր: Մեկը կարծես իր ճանկերը խոթեր էր ու  
սիրոս կը պատռեր: Աշքերս դուրս թափելու աստիճան ու-  
ռեր էին: Փորս ներս քաշվեր ու կռնակիս փակեր էր և թո-  
քերս դժվարավ կը լեցվեին օդով, որ ունգերես առատորեն,  
վայրկյանը անգամ մը կը հորդեր փնջալով: Ծնչառությունս  
ընդհատումներ կ'ունենար, ամբողջ մարմինս կը դողար,  
ծունկերս կը տղղային ու խով հոնդյուն մը կը խեղգվեր կո-  
կորդիս մեշ:

Աշքերս գոցվեցան և աշխարհը մեկեն խավարեցավ:

Այլև չեմ հիշեր, թե ի՞նչ պատահեցավ: Միայն թե, երբ աշքերս բացի, ինքզինքս անծանոթ դեմքերու մեջ գտա: Մազերս ու հագուստներս թրջվել էին: Ոչինչ ինձի ապշեցուցիչ թվեցավ, քանի որ անմիջապես միտքս եկավ նվազումիս առջի պահը: Մարդոց զարմացկու դեմքերը ինձի ուղղվեր էին, մինչ ես՝ քունք նոր արթնցողի պես՝ կը ճմլեի աշքերս ու կը թոթվեի մարմինս:

Բաղնիքին գիմաց գանգող սրճարանը կը գոռնվեի՝ որուն տերերը ճաշի էին: Անշուշտ հասկցեր էին նվազանքիս պատճառը, որ ինձ կը պնդեին ճաշել:

— Կերե՛ք, և ամեն ինչ կ'անցնի, — կ'ըսեին:

Նայվածքներս կը շրջեին սրճարանին չորս կողմը: Գավթ մը սուրճի, գինիի կամ գարեջուրի առջև նստած անձեր ինձ կը նայեին հետաքրքրությամբ: Սրճարանատիրոջ փոքր տղան, ստահակ մը, պատառը բերնին մեջ, վիզը պրկելով զիս կը զիտեր ապշած: Տեսակ մը հուզում գրավեց զիս: Շուրջիս գութով լեցուն նայվածքները փոխանակ զիս փաղաքշելու՝ երակներս լեցուցին առնական արժանապատվությամբ մը ու մերժելով սեղանին ինձի տրամադրված առատությունը, ոտքի ելա ու շնորհակալ ըլլալով իրենց բարի արարքին մեկնեցա:

Հազիվ հարյուր քայլ ըրած, զորանոցներու արևաշար պատերուն տակ էի, երբ վերստին անոթությունը խարապանեց զիս: Քայլերս նորեն սկսան քաշքշվիլ: Կարծես ձգողության ուժն էր, որ ոտքերս դեպի երկրին կեզրոնը կը քաշեր: Այսպես օրորվելով հասա այն շրջանաձև հրապարակը՝ ուրկեա անցած էի և որ ԶՈՐՍ ՍԵՊՏԵՄԲԵՐ անոնք կը կրեր: Գրո՛ղ... շես գիտեր պատմության որ էշերեն փրցված էր այդ անոնք: Սեպտեմբեր, սեպտեմբեր... կը խորհեի ու միտքս չէր գար: Ապուշցեր էի: Հովիս, ա՛հ, հովիսը գիտեմ, Տասնըշորս Հովիսը, այն օրը, որ Ֆրանսայի ծովն ուցամքը կը պանծան հրախաղերու, եռագույն դրոշակներու և այդ

փառավոր օրվան արժանիքը խաթարող մարդոց բառախա-  
ղերուն մեջ: Հը՝ Սեպտեմբեր Չորս, սխալած չե՞ն... Գրո՛վը  
տանի, ստամբուխ մեջ ճճիներն ու որդերը խուժան կազմած  
բողոքի են ելել ու կը սպառնան Պասդիլին: Մտածում  
կանգ առավ կառքի մը պես, որուն անիվները մեկեն տե-  
ղահան եղած են:

Ապո՛ւշ, կը սպառնայի ինքինքիս, ճամբաս շարումակե-  
լով հանդերձ անզգալարար, քեզի ի՞նչ հպարտությունը, ար-  
ժանապատվությունը: Ատոնք փոր կը կշտացնե՞ն, շոտե՞իր  
Միլանի պատվական երշիկեն: Զվիցերական պանիրեն՝ կա-  
ռագի պես, գինիին հետ...

— Կերեք, և ամեն ինչ կ'անցնի:

Հարկավ, երբ մարդ ուտեամեն բան կ'անցնի, ամեն  
ինչ ուտելու վրա հիմնված է, ատիկա չէի՞ր գիտեր, հի-  
մա՛ր, ուժու և զղային շարժումով մը բռունցքս ճակտիս  
իշեցնցի: Ճակատս սկսավ ցավիլ ու կոտտալ պրկված մատ-  
ներուս կապարե հարվածեն, որուն ազգեցության տակ, ինք-  
նակորույս, փողոցե փողոց թափառեցա, առանց որոշ նը-  
պատակ մը հետապնդելու:

Անցա սակարանի առջենն, ուր մարդերու խուժան մը  
հալաքվեր էր: Ներսեն դուրս ու դուրսեն ներս կը սահեին  
մարդկային շլապինդ դեմքեր, որոնց հուև կարծես խորհըր-  
դավոր դեպք մը կանցներ: Դեմքեր, որոնք կը խորհեին դը-  
ժընդակորեն ու խորապես, բայց, որ անոնց արտահայտու-  
թյան մեջ կար կեզրոնախույս շեշտ մը, որ ոճիր կը հոտեր:  
Մինոլորաը լեցվեր էր անոնց խլացուցիչ ազմուկներով:  
Մարդ այն զգացումը կ'ունենա, թե հոն կը կովին, զիրար  
կը բզկտեն ու անզամ մըն ալ գլուխս վերցուցի և նայեցա  
հուև, թե արդյոք չէի սխալեր: Այդ պահուն սակարանին  
ճակատը եղող ժամացուցը շորս ու կես զարկավ: Օրը կը  
լմնար գրեթե: Մութը կամաց կամաց կիշներ ու փողոցները  
կը լուսավորվեին:

Ես ճամբաս շարունակեցի, թաղելով սակարանի սան-

դումաներուն վրա ընդհարով՝ մարդերու զանգվածը, իրենց ժխորով միասին, ճանկերնին իրենց որսի սրտին վրա:

Վերը, ծառուղիին ծայրը, կոթական եկեղեցին իր ոռզասով կույր միականի բուի կը նմաներ: Կիներ ու աղջիկներ իր բարձրանալին շտապով անոր վեհափառորեն տարածված սանդուխներեն ու պղտիկ դուռե մը ներս կը մտնեին՝ ինչպես մանր ձուկ մը ներս կը մտնե խոշոր ձուկի մը կոկորդին: Այդ սանդուխներուն դեմ, ծառուղիի ծառերուն տակ, հուշաբանը խրոխաւ կը ցցվեր: Պատերազմի մեջ ինկողներո՞ւն, թե պատերազմին իսկ հիշատակը գրգուելու համար կանգնեցուցած հիշատակարանին գլխուն կնոջ մը արձանը, մայր երկիրը, դրշակը ուսին ու սուրը ձեռքին, ահավոր, խոտապահանջ, նախանձու՝ ինչպես ԵՀՈՎԱՆ, խումբ մը զինվորներ դեպի կրակը կը հորդորե: Մարդիկ անոնց շուրջ երկաթի ցանցերով շրջապատ մը քաշեր էին, ուր երկյուղածությամբ տնկված ծաղիկները հասակ կը նետեին, ինչպես մարմարի տախտակներու վրա նշանակված զոհերու անվանցանկը:

Սափրիշին աղջիկը մերկ ու բարակ բազուկները հովին՝ հաճախորդի մը անուշահու օճառ կը ծախեր, ապուշ ժպիտ մը շրթունքներուն ծայրը:

Քիչ անդին, Դանայան կույսերու ավագանին քով, ժողովրդական երգերը երգելով կը ծախվեին:

Տուն հասնելուս ուղղակի անկողին մտա ու պառկեցաւ:

Մայրս եկալ զիս հարցուսիրձեց: Անոր ձայնը կենդանի ոչ մեկ շեշտ ուներ: Իր շուրջը ուրիշականի պես սենյակս մը տակ ու անձայն հեռացավ: Լոռվթյուն մը, որուն մեջ ընկըղմելս կըզգայի և որ իր մեռելալին ծանրությամբ ահավոր ու ձնշիչ էր: Եղունգներս միարձած անկողնիս մեջ, կզակս պինդ սեղմած տատամնաշարերուս դեմ, շունչս սեղմելով՝ աչքերս գոցեցի: Առավոտուն եղբայրս կը գեկամակեր զպրոց երթալու: Մայրս սրտի հատնումով ի զուր զայն համձզել կը ճըգներ: Տղան կ'աղաւեր զրեթի, որ շտիպեն: Լացը քթին՝ իրա-

բու վրա կը շարեր պատճառներ ու կը պատրվակեր տան օգտակար ըլլալու իր պատրաստակամությունը:

— Քա մամա, մի՛ պնդեր, չեմ երթար, չեմ, ամենքը կը խնդան կոր վրաս, հանգիստի պահերուն տղաքը մուրացկանի տղա պոռալով ետևես կը վազեն,—պոռթկաց վերջապես եղբայրս:

Մայրս հիասթափ եղած այս հայտնութենեն չկրցավ պատասխան գոտել, տղան ուժ առնելով՝ ավելի առաջ գնաց իր հայտնության մեջ:

— Երեկ տղաքը անանկ հոգիս բերանս բերին, որ մեկ հատը քիչ մնաց պիտի սատկեցնեի: Հիմա ինձի պիտի պատժեն, չե՛մ երթար, կը հապենա՞ս... ևս հանցանք չունիմ, բայց ինձի պիտի պատժեն:

— Ատանկ բաներու համար մարդ կը պատժե՞ն, տղա՞ս, ըսավ մայրս, առանց համոզված ըլլալու իր ըսածին վրա:

— Չեմ երթար, սատկեցնեք անգամ չեմ երթար, ամենքը կը տանջեն զիս: Բան մը կերած ատեննին երեսս կը նային և ևս անոնց կերածին մեջ նայելովս կ'ուրախանան: Անոնք ամենքն ալ լավ հագված են ու ինձ կը հալածեն գեշ հագված ըլլալուս համար:

Այս անգամ մայրս լոեց:

— Աստված իմ, դո՛ւն օգնության հասիր: Զէ՛, Աստված չկա... մեր մեղքը ի՞նչ է եղեր... մեղա, տե՛ր, մեղա, չորնա բերանս, մեծ է զորությունդ, Տե՛ր Աստված, դուն օգնության հասիր մեզ:

Նորեն արցունքը լճացավ մեր տան մթնոլորտին մեջ, որ գերեզմանաքարի պես կը կշռեր մեր ուսերուն:

Անկողնիս վրա կծիկ եղած նստեր էի:

Անողոք իրականության առջև կարողությունս այնքան պղտիկ էր, այնքան վտիտ ու զյուրաբեկ, որ ի զուր բռունցքներս կը ցցվեին օդին մեջ, ի զուր պատնեշի նման կը կանգնեցնեի կործքս կյանքի հարվածներուն դեմ, որոնք փշթեր խորտակեր էին զայն: Մտածումներս հեռագրասյումներու նը-

ման կը շարվեին երևակայությանս մեջ, հեռանկարի ձևով, կը ծիծաղեին ու կը թքնեին երեսիս: Ինչքան փոքր, անուժ ու մինակ էի կյանքեն վլրեժ լուծելու համար: Եղբորս աղաշող ու շետո հանկարծ, վճռական ձայնը կը հնչեր տակավին ու ասեղի պես կանցներ մտածումներուս մեջեն:

Փողոց ելա մեր տան հալածող տեսիլքներու տվայտանքեն հոգիս աղատելու համար:

Օքք ցուրտ էր ու տժույն: Երկինքը ծածկված էր ամպի ծվեններով: Անմիջապես որ ինքզինքս դուրս գտա, քայլերս ուղղվեցան շուկայի կողմբ: Խջնելով ծառուղիներեն, գեպի ձախ դարձա ու ինկա ժիրորալի բազմության մը մեջ; Նեղկակ փողոցներու երկու կողմերը խանութները խճողվեր էին իրենց վաճառքներով:

Ահա պտղավաճառը, որ իր դարակներն ու սեղանները լեցուցեր է գեղնորակ սև խալզողի ողկույզներով, սալորներով, տանձերով, կարմրաշուրբն խնձորներով: Ազամաթուզի խոշոր ողկույզները պատերեն կը կախվին: Պանրավաճառը պանիրն ու կարագը կոշտերով դիզեր է մարմարե մաքուր տախտակներու վրա աներևակայելի առատությամբ մը: Հոս ալ հավեղենի խանութն է: Սպանված հավեր, վայրի բաղեր, նապաստակներ, լորեր, հնդկահավեր, խայտահավեր, կը տցարներ խանութին պատերը կը զարդարեին: Հավկթավաճառը մեծ զուրս ինկած փորով, բարձրահասակ, խոժոռադեմ մարդ մըն է, որ աշքերը կիրքով լեցուն կիներուն կը հետեւի, ուրիշ կնոջ մըն ալ միւնույն ատեն քնքուշ բառերով հավկիթ կը համրե լրագրի կտորի մը մեջ: Անոր կուշտ՝ բանջարեկեն ծախողը բարձրածայն կը գովաբանե իր ստեղունը, ճակընդեղը, կաղամբը, ընդակաղամբը, գոնգեղը, շողքամը, բողկը, աղատեղը, հազարը, սոխն ու սիստորը:

Ու հրավերի, գովասանքի, անուններու ու գիներու խառն կանչը կը թիմվին ականջներուն մեջ և ուղեղը կը ծանրացնեն: Կիները պայուսակներ անցուցած իրենց թերուն կը դրշին, կը կենան, կը նային, կը համտեսեն, կը գնեն կամ

Հեն գներ, կերթան, քսակնին կը բանան ու կը նալին, Հետո  
կրկին կուգան: Խանութներու առջև ծախողները կը կանչեն,  
կը քաշեն անցորդներու թերեն, ծախածներուն Համը նալիլ  
կուտան ու անդադար, առանց շունչ առնելու կը պոռան, կը  
Համողեն:

Մոտեցա շաքարեղեն ծախող աղջկա մը, որ շատ շնոր-  
հալի ձեեր կ'առներ, ակռաներուն մեջեն կը ժպտեր, կը խըն-  
դար, կը խնդրեր անցողներուն: Երբ իրեն մոտեցա, առանց  
այլկայլի վննտեց զիս: Զկրցա գուշակել պատճառը ու կրկին  
մոտեցա գնորդի ձեեր առնելով, բայց աղջիկը կրկին սպառ-  
նաց: Հեռվեն ոստիկանի մը գուստը երեցավ ու սիրաս մե-  
կեն, անգիտակցորեն թունդ ելավ: Ամբոխին ոտքերուն տակ  
սպրդելով փախա: Ոստիկանը Հետքս կորանցուցած էր ար-  
դեն, երբ ինքզինքս լրջորեն հարցուցի, ու ինչո՞ւ Համար  
փախած էի: Բայց մսավաճառին խանութին քիվերեն կախված  
եղան ու Հորթի ահագին զիստերը ուշադրությանս առարկան  
դարձած էին: Եշքերս սքանչացումի տեսիլքներեն Հափշշ-  
տակված՝ կես մը փակվեր էին, մտքովս Հեռացեր էի զու-  
կայեն, ոռնդերուս մեջ խորովածի մը բուրմունքը ախորդակս  
կը սրեր ու լափելու տրամադրություն մը կը մտրակեր զիս:  
Հարձակիլ ամբողջ զիստի մը, կամ ոշխարի մը վրա ու Հում-  
շում գիշատել:

Ուսիս Հարված մը ստացա ու ցնցվեցա: Ժիսորը կատա-  
ղորեն կը շարունակեր:

Փողոցին ծայրը Հասնելով՝ աշ թեիս վրա շարունակվող  
փողոցը մտա, որ ձուկի գոց շուկան կը տաներ: Շուկան ամ-  
բողջ Հրապարակը կը գրավեր: Ցած շինություն մը, որուն  
լայն ու վար կախված քիվերուն տակ ձկնավաճառութիները  
շարեր էին իրենց սեղանները՝ զարդարված ծովու մամուսով  
ու ալկերով, որոնք արծաթագույն փորով ու ծովերանդ կը ս-  
նակով սարտիններու իբրև անկողին կը ծառայեին: Անոնց  
մեջ կը Հանգչեին նաև անշարժ ու ալեղի պես կոր մեռլան-

ները, անձրուկը, կապտավուն և ազնվական յուակյումբին։  
Հոս ալ կիները կը պոռան թավ ու հաստ ձայներով։

Կ'անցնիմ շենքին ներքին մասը։ Հետո դուրս կուգամ  
կրկին մյուս կողմի դռնեն, կը կենամ ճիշդ դիմացը աղջկան  
մը՝ որ զիս կը հրավիրե ձուկ գնելու։ Կը ժպտիմ իրեն հիշա-  
րորեն, բառ չեմ գտներ ըսելու։ Աստված' իմ, երբեմն հա-  
զարներով ըսելիք կ'ունենամ կիներու ներկայության։ Եվ խո-  
սելիք չգտնելով՝ կը շարունակեմ ժպտիլ ու ժպտելով ավելի  
կը մոտենամ անոր։ Հոգիս մեջ անբացատրելի խանդավա-  
ռություն մը կա, որ շրթներս կը փակե։ Աղջիկը կը շարունակ'  
իր ձուկերը գովել ու կարմրիլ։ Աշքերուն մեջ տարօրինակ  
փայլ մը կա և որ շրթները մեքենաբար կը գովարանեն իր  
վաճառքի առարկաները։ Երբ աղջկան սեղանին մոտ էի ու  
ան կրնար ինձ ավելի հստակորեն իմանալ, կամաց մը ծոե-  
ցա ու ըսի։

— Գիտե՞ք, ձեր շրթունքները կարմրախայտի անուշ  
դույնը ունին...

— Ա՛հ, ատիկա չէի գիտեր, — ըսավ քահ-քահ խնդալով։

— Դուք շատ գեղեցիկ եք, — շարունակեցի քաշալերվելով  
անոր բարեացակամութենեն։ — Դուք շատ գեղեցիկ եք, — կը կը-  
նեցի մեղկ ու հափշտակությամբ նայելով անոր աշքերուն  
մեջ, որոնք լեցվեր էին խոսքերուն թագուն իմաստին գուշա-  
կումովը ու, հանկարծ, իր գեմքը լուսավորող ժպիտը ներո-  
վամիտ հանդիմանության մը վերածվեցավ։

— Կը ստեք, զիս կը ծաղրեք, — ըսավ, իսկույն, կարծես  
խոսքերուս փափկանկատութենեն վիրավորված ու սկսավ շա-  
րունակել անցողները կանչիլ, գովել ձուկերը, անոնց թար-  
մությունը։

Ես կեցեր էի Հոն ծառի մը պես, որ ճյուղերը տարածեր  
էր անփութորեն ու նայվածքներս ձուկերուն՝ կը խորհի:  
Քանի կը խորհի՝ տեսողությունս կը պատորեր, իրերը իրար  
կը ձուկվեին ու մեյ մըն ալ աղջկան սեղանը ծովու պես փրո-  
վեցավ, իրերուն ու ծփուն ալիքներուն՝ ուր ձուկերը կը լողա-

չին իրենց պոշերնին ջուրը ծեծելեն: Չեմ գիտեր ինչպես պատահեցավ, որ հարձակեր էի անոնց վրա, կարծելով թե իրապես կենդանի ձուկեր էին ու կը փախչին: Ափերս լեցվեր էին անոնցմով:

Աղջիկը մեկ ոստումով ցատկեց տեղեն ու ձեռքերս ըըռնելով՝ երեսիս ապտակ մը իշեցուց: Իրենց կողմեն կիները զարնել կը խրատեին թունավոր բառերով: Շվարեր մնացեր էի: Դեռ մեկ ոտքս իմ զգլսանքի աշխարհին մեջ էր ու մյուսը հաղիվ տեղ գտեր էր իրականության մեջ: Խառնափնթոր երազներն արթնցողի մը պես էի:

— Դուք շատ սիրուն եք, — կը փսփսացի հիմար ժպիտը միշտ գեմքիս, — ձեր շրթումքները կարմրախայտի գույն ունին...

Զկնավաճառուհիներու տեղացուցած կոպիտ հայհոյանքները զիս վերջնականապես սթափեցուցին: Այն ատեն միայն տեսա անոնց այլանդակված, ծամածուռ ու ժահրոտ գեմքերը՝ որոնք կը սպառնային: Աղմուկը մեծ համեմատություն կառներ ու հանկարծ միտքս եկավ, որ ոստիկանի մը ներկայությունը կրնար վտանգավոր ըլլալ: Մինչ ամբոխին մեջ հետքս կորսնցնել կը ճգնեի, գեռ հեռվեն ականջիս կը հասներ կիներու առնական պոռտուքը, որ արյունս կը սառցներ «բռնեցե՛ք գողը»:

## ՔՆԱՑԻՌ, ՄԱՍԱ...

Կես գիշերն անցեր է:

Այդեստանն ամբողջ մութի թանձր ու թեթև անկողնի մը մէջ կը քնանա:

Վերեն, հետաքրքիր աստղեր միայն կարեկից նայվածք-ներ կը տեղան վար, կարծես ծանոթ՝ մեր փոքրիկ աշխարհի անհամար ցավերուն:

Մեղմ ու անուշ հով մըն ալ կ'անցնի ալգիե ալգի, ա-մըշկոտ աղջնակի մը պես և խաղողի թուփերուն մէջ կը թափե անվերջ սարսուռներ:

Մարդկային շշուկ չի լսվիոր թոլոր աշքերը շատոնց փակվեր են և իրենց կափարիչներուն տակ բանտարկեր՝ ամեն օր պատերազմեն հասնող նոր նոր սարսափիներ:

Անդին, կանաչներուն գիրկը կորսված անծանոթ անակի մը մեկ սենյակին մեջ ծերունի մայր մը կա, որ երկու, երեք ժամե ի վեր անկողինն է ինկեր, բայց չի քնանար, չի կրնալ քնանալ...

— Բայց ինչո՞ւ չի քնանար...

— Հա՛, պատերազմ կա, սարսափելի պատերազմ. գա-գանը կը շարդե, գազանը մոխիր ու կրակ կը փոխե ամեն դի...

— Մամա՛, քնացի՛ր, մամա՛, ինչո՞ւ չես քնանար:

Մեծ թոռնիկն է հարցնողը, անիկա լավ կը ճանչնա մամային ցավը: Գիտե, որ ծերունին գիշերները կը լուսցնե առանց աշքերը փակելու, ցորեկներն ալ հազիվ կատվի մրափ մը կ'առնե ծառերու հովանիին տակ և, կամ փոքրիկ պատուհանի մը առաջ տնտնացող խապրիկի մը սպասելեն...

Մաման շատ ծեր է, շատ ծեր:

Փոքրիկ, խարխով մարմին մը հազիվ մնացեր է հին  
օրերու իր ուժեղ և շարքաշ էութենեն: Հազիվ կը շնչե, աղա-  
ղուն թռչունի մը հեքն ըլլա՛ր իրենը:

Ծերության բոլոր օրերն ալ ապրեր, լրացուցեր է, բայց  
տակավին կ'ապրի, տակավին կը ծերանա...

Հայու բնագավառեն է եկեր, անոր հազվագյուտ մեկ  
տիպարը, որ բարություն միայն կը խոսի և բարությամբ  
միայն կը սնանի: Իր կուրծքի փոքրիկ տուփին մեջ աշխարհ-  
ներ լեցնող սեր և գուրգուրանք ունի:

Նախորդ մեծ պատերազմին պատմությունը իր աշքովն  
է տեսեր, ապրեր է անոր բոլոր կարմիր ու ճերմակ հաւա-  
ծանքները: Կարավաններու հետ անցեր է անանուն ձորերե  
և անապատներե... արցունքներուն ակունքը աշքերուն մեջ  
շորցուցած, շրթունքներն ալ կաթիլ մը ջուրին կարոտեն պա-  
պակած:

Բայց ինչո՞ւ բանալ այս սե և հին էշերը:

Հիմա Ամերիկա է եկեր ան, հասեր է մինչև Քալիֆոր-  
նիա, և այգիի մը փոքրիկ անկյունին մեջ սըթար է եղեր:  
Իր արևն ալ հոս է միայն, որովհետև հետզհետև մեծցող իր  
թռոնիկները հոն տեղվանքը միայն կը վազեն ու կը խաղան  
անվախ ու երշանիկ...

Խաղողի և շամիշի քաղցր աշխարհին մեջ մաման քսան  
տարի ապրեր է և ամեն տարի քիչ մը ավելի հեռացեր՝ պա-  
տերազմի և կոտորածի աղի ու լեղի հիշատակներեն...

Բայց որո՞ւ շար բախտեն ըլլար, նոր պատերազմ մըն  
ալ ծագում առեր է հիմա և շարժուն դժողքի մը պես կը  
տարածվի երկիրե երկիր արա՛գ, արա՛գ, կրա՛կ, մոխի՛ր,  
արյուն և արցունք սփոելով:

Ռադիոն կը պոռա, ուադիոն կը ճշա, ամեն ժամ շարդ  
կա, ամեն ժամ աղաղակ կա: Ի՞նչ աշխարհ մնացինք, ՏԵ՛Ր  
Աստված:

Մաման բառ չի հասկնար, բայց անոր բերած շունչը  
կը զգա, թե շարագուշակ է ու խոռվիչ:

Ամեն ժամ թռոնիկներուն կը հարցնե, լուրերու փըշ-

բանքներ կ'ուզե անոնցմե, ականջները կ'այրին բարի լուրի  
մը կարուտեն...

— Ի՞նչ լուր, Գառնիկ, ի՞նչ խապար, ձագո՛վկ:

— Մամա՛, Ֆրանսան շատ գեշ վիճակի մեջ է. Ես  
կերթա, կը քանդվի, կը կոտորվի:

Մաման դեփ-դեղին, մեղրամոմ կը դառնա, խորումկ  
շունչ մը կ'առնե ան և կը մթափնի...

Մաման կը զգա, որ լուրերը ամեն օր անգութ կը դառ-  
նան և սիրտ բզբտելու վազող նետի մը պես կը մխվին  
թույլ մկաններով հազիվ պատսպարված իր կուրծքեն ներս:

Սերունին գիր ու նշան չի ճանչնար, պատմություն,  
աշխարհագրություն թոռներուն բերանեն միայն լսած է  
առանց անոնց համն ու հոտը ըմբոնելու, բայց գիտե, թե  
Ֆրանսան մը կա, որ ընտանի է իր ականջներուն, մարդու մը  
պես անուն ունի, կ'ապրի, կ'ուտե, կը քնանա; բարի է եղեր  
մեզի, թեև իր զավակներեն ոմանք կարեկից չեն եղեր, բայց  
մյուս գագանը միշտ շար է եղեր, շա՛ր խրատ, շա՛ր նախանձ  
է ներարկեր, սպառնացեր ամբողջ երկրագունդը կանանց ա-  
րյունով ներկելու...

Ասոր համար մամային սիրտը կը հատնի, ամեն վայր-  
կյան ցավի մը ծանրությունը կը զգա, հաց ու ջուր չուզեր:  
Ֆրանսան կը պարտվի, փոքրիկ ազգեր կը տանջվին... Հա՛յ  
վախ, հա՛յ վախ...

Առտուն, կենօր, թե իրիկուն՝ թոռնիկին հետ է ծերունին»

— Գառնիկ, ի՞նչ լուր, ի՞նչ խաբար, ձագո՛վկ:

— Մամա՛, Ֆրանսան գեշ վիճակի մեջ է. շա՛տ գեշ,  
ճակատը կը փլչի, երիտասարդները կը կոտորվին, Փարիզ...

— Կարելի՞ բան է աս, Տե՛ր Աստված, կարելի՞ բան է...

Ռադիոյին մեջ սխալ մը ըլլալու է, մեքենան ավրված  
ըլլալու է:

Բայց ուադիոն անտարբեր՝ շարախոս բերանի մը պես  
կը պոռա, մամային հույսերուն ու աղոթքներուն հակառակ...

— Բերանդ չորսա՛ր, ուադիո...

Բայց որո՛ւ կ'ըսես, այդ փայտե բերանը կը ճշա ու կը

Ճշա աղետաբեր պատմություն միայն, գիշեր, թե՛ ցորեկ, անընդհատ:

Հիմա կես գիշերն անցեր է, մեկ, երկու, երեք ժամերով, բայց դեռ մամային թարթիչները իրարու դպած չեն:

— Մամա՛, — կրկին ձայն կուտա իր թոռնիկը, անոր սենյակին գոնեն ներս երկնցնելով իր գլուխը, — մամա՛:

— Ի՞նչ է ձագուկ, Գառնիկ:

— Ինչո՞ւ չեմ քնանար, լուսանալու մոտ է, մամա՛:

Ծերունին չի խոսիր: Ի՞նչ խոսի, իր մտքին հոգնած աղորիքը անիմանալի խորհուրդներ ունի, վեր կը դարձնե, վար կը դարձնե, չի կրնար աղալ, երկաթի կտորվանքներ՝ այդ խորհուրդները, ինչպե՞ս կրնա աղալ զանոնք:

Թոռնիկին սիրտը կը ցավի, մամային տանջանքը շատ եղավ, շատ շատ եղավ... ու կը խոսի.

— Մամա՛, քնացի՛ր, ֆրանսացիները մեծ հաղթություն մը տարեր են այսօր, շատ մեծ հաղթություն, հիմա ուաղին իմացուց...

— Հա՞, ձագո՞ւկ, իրա՞վ է, իրա՞վ է:

— Հա՞, մամա՛, հա՞, իրավ է, դուն քնացի՛ր, աղվոր քնացիր, մամա...

Ծերունիին միամիտ հոգին կը լուսավորվի: Իր պրկված շիղերուն վրային ծանր բեռներ կ'իյնան վար: Գլուխը կը դարձնե պատուհանին հակառակ, աղոթքի անիմանալի փըշ-ըանքներ կը զրուցե մութին. ապա շուտով կը քնանա՝ քաղցր և գոհունակ ժպիտով մը, լույսով ողողած՝ իր քամված դեմքըն ամբողչ:

—————

## ԱԱՏ ՀԱՆԳՉԻ...

Պր. Միջյան Թելյան Ուստրի երկաթեղեններու գործարանին մեջ պարզ աշխատավոր մըն էր ասկե մոտավորապերառասուն և ութ, հիսուն տարի առաջ:

Կարճահասակ, բայց աշխույժ և մտացի երիտասարդ մըն էր այն ատեն և Ուստրի փոքրաթիվ հայ գաղութին մեջ, որ մեծ մասամբ ամուրի կամ անամուսին երիտասարդներե կը բազկանար, ծանոթ անուն մըն էր իրենը:

Ուսում գրեթե շուներ: Երկիրը քանի մը տարի թաղային վարժարան գացեր էր և քիչ մըն ալ շուկայի քերականություն էր ուսեր, այսինքն քյուրտերուն հետ առևտուր ընելու էական կանոններուն և անոնց տոմարակալության սկզբունքներուն էր ծանոթացեր որոշ շափով...

Երբ քահանքինդ տարիքն անցավ, թողուց տուն և ծննդավայր ու բոնեց շիփ շիտակ Ամերիկայի ճամբան:

Շատ գնաց, քիչ գնաց, լեռներ ու ծովեր կտրեց՝ խորամանկ և աշալուրզ: Ապտակ և ծեծ կերավ, բայց կաշառքի փշրանք մը չցուցուց թուրքին, փողոցները հոժարեցավ պառկիլ, բայց նավահանգիստներու այն ատենուն սմարներուն ճանկը շինկավ: Ամենքն ալ մատ կը խածնեին անոր ետևեն:

Երբ ապահով նյու-Յորք նավահանգիստն հասավ.

— Ո՞ւր է Ամերիկան, հարցուց զինք դիմավորելու եկող մեկ-երկու հայ բարեկամներու:

— Աս է Ամերիկան, Պր. Թելյան, պատասխանեցին անոնք զարմացած:

— Ո՞ւ, բարեկամ, էսի Ամերիկան չէ, ասշափ ատեն է Հոս եք, դեռ այդքան բան չեք սորված:

Մյուսները հայտնապես վախ մը զգացին, մի գուցե ողէ-կիանոսին ցնցումները Պր. Թելլյանին ուղեղին ազդած ըւ-լային...

Թելլյան ինքնավստա՞ և հրամայական շարունակեց.

— Ուստին է Ամերիկան, Ուստիր, հասկցա՞ք հիմա: Ո՞ւր է, շատ հեռո՞ւ է, ինչպե՞ս կրնամ երթալ:

Եվ թրենն առավ ու քանի մը ժամեն Ուստր ժամանեց: Գործարաններուն մուկսը տեսավ և կափ-կանանշ դաշտին մը հանդիպող անոթի ավանակի մը պես խայտաց.

— Հո՛տդ սիրեմ, Հո՛տդ սիրեմ, օօ՞խ...

Մարդը դրամին սիրովը կ'աղնծեր: Ի՞նչ ըներ... պարտք ըրեր էր, ծախքը ըրեր էր, և հիմա շիտակ Ամերիկա էր եկեր, Ուստրը: Եվ հափշտակված՝ քթին առջև կը կրկներ.

— Շատ շիտակ ըսեր են, շա՞տ շիտակ.

«Տերտեր կա նը մեղքն ի՞նչ է.

Ամերիկա կա նը պա՛րտքն ի՞նչ է»:

Ուստի, վայրկյան շկրսնցուց և մտավ թելին գործա-րանը:

Մեքենաներուն ահարկու թավալը, բոցավառ հնոցը և առվակի մը պես վազող հալած երկաթին դժոխային տեսաքը ազդեցություն շգործեցին իր վրա: Կոկըլիկ ոսկիներուն կա-րոտովը լեցված էր ինք, պետք էր քաջությամբ փարիլ գործի, քրտնիլ ու դիզել:

Մեքենաներին շատ բան չէր հասկնար, բայց հրահանգ-ները թարգմանին բերնեն իյնալուն պես կը բռներ և ամե-նայն զգուշությամբ կը գործադրեր զանոնք, թե վտանգ մը շգալու և թե իր մեծերուն համակրությունը շահելու բարի գիտավորությամբ:

Ասոր համար քանի մը ամիսեն գործավորի մը անունը շինեց վերակացուներուն մոտ: Ազդեցությունը շատցավ տո-լարներու թիվին հետ:

Թելլյանի աստղը սկսավ բարձրանալ նաև Ուստրի հայ-գաղութին վերև:

— Պր. Թելյան, կը հաճիս եղբորս տղուն գործ մը առ ձեր գործարանին մեջ, երկրեն նոր եկած է, հոն ընտանիք ունի, պարտք ունի: Բան մը ընեիր, պապուդ հոգուն թող ըլլար, քեզ շենք մոռնար, իրավունքո՞ւ իրավո՞ւնք է:

— Շատ լավ, կը խոսեր Թելյան գործարանին տիրոջը պես, անգամ մը գրասենյակը երթամ, տեսնեմ բաց տեղ մը կա՞, և եթե կա, ինչո՞ւ չէ, բայց երկու ամիս իր փեյ-ին կեսը ես կառնեմ... խոսքը մեջերնիս մնա:

Ուրիշ մը.

— Պր. Թելյան բարեխոսություն մը ընեիր եղբորս մասին, քանի տարի է, որ ձեր տեղին մեջ կը գործե շարաշար, բայց հավելում մը շեն ըներ, ի՞նչ կըլլա, վարձքո՞ւ ինչ որ է գլխնուս վրա...

Թելյան, որ այլևս շաթ-փաթ անգլերեն խոսելու ալ վարժված էր, պոսին բան մը կը հասկնցներ, եթե իր միջոցավ, կամ պատահաբար գործ մը գտնվեր և հավելում մը ըլլար, իր բաժինեն սենթ մը շեր գեղշեր: Ընտանիք, պարտք ու զավակ շեր խաղցներ:

Այսպես իր եկամուտին աղբյուրն ու քանակը կերպով մը կը շատանային ամեն ամիս: Մյուս կողմեն ծախքերուն բոլոր դռներն ու պատուհաններն ալ փակած են: Ուտելիքի մեկ սենթ դրամ չեր տար: Պարզ էր գաղտնիքը, իր ծննդավայրեն եկող կարգ մը երիտասարդներ էր հավաքեր, խոհարար մըն ալ վարձեր, անոնց ամեն օր տաքուկ կերակուր, երկրի համեղ շոր լուբիան և սիսեռը վայելել կուտար: Մախքերը բոլորին վրա կը բաժներ հավասարապես, ինքն ալ այս գործերուն որպես կարգադրիչն ու հաշվապահը՝ բնականաբար գիտեր ընելիքը: Ալ այդ մասին՝ բեն է բե խըբե...:

Հագուստի մասին՝ ավելորդ է ըսել, շաբաթը վեց օր արդեն գործարանն էր լայնկեկ և գորշագույն վրանոցով: Կիրակի օրերուն ալ համար ձեռք մը զգեստ՝ տարիներով իր մարմնուցն փակած՝ կը դեղներ և կը մաշեր, բայց հավատարիմ ծառայութենե չեր դադրեր ան:

Սուրբ օրերը կը պահեր: Եկեղեցի և ժողովարան կնր-  
թար՝ կարելի եղածին շափ ուշ՝ պնակներու շրջագայութենան  
հետո, և եթե ժամացուցին հաշիվը սխալ ըլլար, ձեռքի շար-  
ժում մը կ'ըներ դեպի իրեն մոտեցող պնակները, ոչ ոք կրնար  
դիտնալ, թե ինչ ձգեց, եթե իրապես բան մը ձգեց Պր.  
Թելյան:

Խոսք չէր ուզեր, հնարամտություն կար մարդուն քով:



Օր մը ծանոթ բարեկամի մը տղան եկավ երկրին, Պր.  
Աբրահամ Բարդիկյանը: Ապավրված ապրանքի մը պես ուղ-  
ղակի Պր. Թելյանի հասցերն զրկված էր այն՝ լեցուն բա-  
րեներով:

Սովորական խոսքերը լրանալեն ետք.

— Երկար պիտի շկենամ Ամերիկա, Պր. Թելյան, խո-  
սեցավ նորեկը, միայն երկու տարի, ուստի գործին ճարռ  
նայինք: Հորս գրած ձեր նամակով գործ մը խոստացած էիք  
ձեր գործարանին մեջ, ատիկա շուտով կարգադրեիք, քիչ մը  
դրամ վաստկիմ և վերադառնամ տուն, զավակներուս քով:

— Ամենայն սիրով, Պր. Աբրահամ, գրասենյակը խո-  
սիմ, դուն արդեն մեքենական բաներե կհասկնաս, կը հու-  
սամ թե երկու ամիս քու շաբաթականներուտ կեսը ինծի կու-  
տաս, բայց մենք բարեկամ ենք, երկու ամիսն ալ բավական  
է: Ասիկա գաղտնիք է, միայն քեզի պահելու ես:

Աբրահամ հավնեցավ, որիշ բան չէր կրնար ընել ար-  
դեն:

Իրավ ալ բանի մը օրեն նորեկը հագավ իր գործագորի  
վրանոցը և ներս մտավ գործարանեն գոհունակ սրտով: Երի-  
տասարդ էր և գործելու աշխուցքը կը զգար: Տալերներ շա-  
հելու պատեհությունը իրեն էր հիմա, որպեսզի գրապանն ու  
մեջքի գոտին գրամով լեցուցած վերադառնար երկիր: Յրհ-  
նյալ Ամերիկա, արդարեւ:

Ամիսներ անցան:

Թելյանի և Աբրահամի բարեկամությունը շարունակեց անալիքայլ: Երկուքին ալ վաստակը գոհացուցիչ էր:

Աբրահամ մեքենական ուշագրավ ընդունակություն ցուց կուտար: Պապենական պարզե մըն էր, որ կը հայտնվեր ամենեն հասարակ գործին և շինություններուն մեջ անդամ:

Գործարանին մեծավորները աշքե չփրիպեցուցին այս երիտասարդին բնական տաղանդը, անոր լուրջ և խոհուն ընթացքն ալ նկատի ասին և ութը-տասը ամսվան ընթացքին երկու անգամ շաբաթականի և դիրքի բարձրացում շնորհեցին անոր, որ զերմապես շնորհակալ եղավ անգլերեն կարճ բառերու իր փոքրիկ պաշարով:

Թելյան սակայն շատ անհանգիստ գգաց: Ինք շատ ավելի երկար ժամանակով գործեր էր հոն, ծանոթ ուներ, անուն շիներ էր, բայց ասանկ գնահատության մը արժանի հզած չէր տակավին: Ինչո՞ւ, աս ի՞նչ տեսակ վարձատրություն է: Իր բարեկամը կարճ ժամանակեն իր առածին երկու անգամեն ավելի շաբաթավարձք կը ստանար այժմ: Շատ խորհեցավ, բայց որոշեց գանգատ և դժգոհություն չհայտնել, թեև նախանձը՝ ամեն շաբաթ օր, վարձքերն առնելու ատեն, ծանրապես կը խայթեր թելյանի հոգին:

— Ափո մը գա և իմ ոտքս առնե... Հը՞ս, սպասե ես անոր հախեն կուգամ...

Երկար մտմտաց: Հայտնապես բան մը կորոճար, տաղանդավոր ծրագրի մը գծագրությունը կը պատրաստեր մտքին մեջ:

Բայց, բարեկամը տեսնելուն պես անոր աշքը լուսեց, խնդակցեցավ և հայտնեց, որ պոսին ինք խոսած և ինք հաջողցուցած էր այս հավելումները:

— Մեծապես շնորհակալ եմ, բարիքդ չեմ մոռնար, Պրեելյան, խոսեցավ Աբրահամ ամենայն անկեղծությամբ:

Տարին բոլորեցավ և երկու-երեք ամիս ալ ավելի գնաց: Առավոտ մը մեկեն գործարանին գրասենյակեն կանչվեցավ Աբրահամ: Երեք բարձր պաշտոնյաներ ներկա էին և թարգման մը կար:

Պր. Աբրահամ խոնարհությամբ բարեկց և կեցավ քաղաքավարությամբ. սիրտը կը նետեր ուրախութենեն, կաւկած չուներ, որ պաշտոնի նոր բարձրացում մըն ալ պիտի ստանար:

Մեծավորը թարգմանին միջոցավ հարցուց.

— Ինչո՞ւ գործարանեն գործիքներ կը գողնաս, ամոթ քեզի նման մեկու մը:

Աբրահամ այլայլեցավ, կատակ կարծեց պահ մը և լոեց, բայց խոսողին լուրջ և դառն կերպարանքը զինքը շվարեցուց, հարցումը կրկնվեցավ, ինք տակավին լուռ էր և անկարելի կը գտներ պատասխան մը տալ. լախտի մը հարվածին նման այդ խոսքերը միտքը անդամալուծած էին, բայց ուշաբերեցավ շուտով և զուապ զայրութիով բողոքեց.

— Ամենեին, Պարո՛ն, ես ատանկ բան մը ըրած չեմ, բացարձակապես սիալ է ձեր ամբաստանությունը:

— Երբե՛ք, խոսեցավ պաշտոնյան ավելի խիստ ու զայրացկոտ, մենք ապացուցներ ունինք հոս, ահավասիկ:

Եվ հանեց քանի մը փոքրիկ, բայց կարեռ գործիքներու տրցակ մը, հին լաթերու մեջ ծրարված:

— Ասոնք քու սենյակիդ մեջ գտանք այս առավոտ: Գործենք գոհ էինք, վարձատրություն, հավելում ըրինք, բայց այժմ անկարելի է, որ կարենանք քեզ պահել. հանեցեք ձեր վրանոցը և մեկնեցեք: Եթե հայ շրլայիք ձեզ կրնայինք ոստիկանության հանձնել, ատիկա շենք ըներ, բայց շենք ալ կրնար այս հաստատության մեջ պահել ձեզ:

Աբրահամ ծանրապես վշտահար և արժանապատվության մեջ վիրավոր՝ խոսեցավ թարգմանին, խնդրեց, բողոքեց, որ

բացատրե թե և զածը հիմնապես սխալ է, ինք երկաթի փըշ-  
բանք մը անդամ տարած չէ տուն:

Պաշտոնյաները ականջ տալու հոժար չեղան: Առավո-  
տուն իրենք անձամբ գացեր էին, կղպված դուռը բացեր և  
գողոնին ծրարը գտած էին սենյակին մեջ: Այդ բավական էր,  
ուստի իրենց սեղաններուն և գործին վերադարձան: Դատ և  
վճիռ վերջնական էին:

Աբրահամ գլուու պատույտ կ'ունենար, կը զգար թե շեն-  
քին պատերը իրեն կթափեին, լեզու չէր գիտեր, որ տեղն ու  
տեղով բացատրեր և վիրավորված անմեղությունը վերա-  
հաստատեր:

Թարգմանն ալ հայերեն լեզվով հասկցուց, թե ավելորդ  
է պնդել, և խոստացավ, որ ինքը խոսի առանձին, թերևս առ  
կերպը ավելի օգուտ ընե:

Աբրահամ դուրս ելավ: Խորհեցավ անմիջապես իր բա-  
րեկամին, Պր. Թելյանին հանդիպել և անոր բանալ իր ցավը:

Թելյան՝ լավ ալ դերասան էր, հանկարծակիի եկավ, այ-  
ցայլեցավ և շատ խորունկ ցավ հայտնեց, միանգամայն վըս-  
տահացուց, որ ինք պոսը պիտի տեսնե, բարեխոսություն  
ընե և ութ օրեն գործը ետ առնե:

Թելյան ապա իր գործին անցավ, մինչ իր շվարած խո-  
սակիցը վրանոցը հանեց, կեսօրվան հաշին ծրարն առավ և  
դուրս քալեց վշտահար և գինովի դանդաշուն քայլերով:

— Աս ի՞նչ տեսակ երկիր է, Տե՛ր Աստված, աս ի՞նչ  
հանելուկ է, գոնե ձայնս լսեին... լեզու ունենայի...

Ու հազար մտածումներով մեկնեցավ իր սենյակը, դու-  
ռը բացավ և ինքզինքը ձգեց հին ու մաշ աթոռի մը վրա:

Աշխարհը մթնեց և Ամերիկան դժոխք մը դարձավ ամ-  
բողջությամբ:

Նույն պահուն տան տիկինն ելավ վեր, ծերումի մը՝ մեծ-  
ովի կազմվածքով:

— Մը. էյա, ըսավ ան, այս առավոտ քու մեկնելեղ քիշ

հտք գործարանեն երեք մարդիկ եկան, ըսին որ դուռը բանամ՝ սենյակի նայեցան, ծրար մը առին ու գացին:  
— Ի՞նչ ծրար, կակազեց Աբրահամ:  
— Չեմ գիտեր, լաթերով փաթթված ծրար մը:  
— Անոնցմե առաջ, երեկ կամ առջի օր ուրիշ մը եկա՞լ Հոս:  
— Չեմ հիշեր, Մր. Թելյան կարծեմ եկավ և քեզ հարցուց երկու անգամ, բայց այս վերջին օրերը չեմ տեսած, քուրանցս գացեր էի:

Աբրահամ լոեց, ձեռքերն իր գրպանին մեջ սպասեց մինչև կեսօր: Ապա ճաշին ծրարը բացավ, բան մը փորձեց ուտել, չկրցավ, զայն իր եղածին պես ձգեց ու դուրս ելավ: Քանի ժամերը կանցնեին, այնքան ավելի կը ծանրանար այս անտանելի ցավը: Մեկնություն մը կը փնտուեր, բայց չեր կրնար ունենալ, այնքան բարիք ըրեր և բարեխոսություններ շուայլեր էր ան:

Իրիկվան Թելյան եկավ աճապարանոք.

— Դուրս երթանք և քիչ մը օդ առնենք, ըսավ իր բարեկամին, առանձին ալ կ'ըլլանք և կը խոսինք, թող մյուս տըղաքը բան շգիտնան:

— Շիտա՛կ ես, երթանք, պատասխանեց Աբրահամ՝ տիսրությամբ, գլխարկն առավ և հետևեցավ Թելյանին:

Փողոցն ի վեր քալեցին, Թելյան պատմեց, թե ինք խոսած է պաշտոնյաներուն և անուշությամբ խնդրած է, որ վերաբանան խնդիրը:

— Հոս բողոք, ազմուկ բարձրացնել անօգուտ է. թե շահ չի բերեր և թե ծանր արատներ կը քսե անվանդ: Եղածը սուս կամ իրավ ամեն մարդու բերնին մեջ ծամոց մը ձոթ կը դառնա:

Այս մասին Թելյան խիստ կերպով և սրտացավորեն զգուշացուց իր բարեկամը, որ օրինական քայլեր առնելը, և կամ թննիշ մարմիններու դիմում կատարելը՝ մտքեն շանցնե: Թելյան գիտեր, որ ասանկ քայլ մը կրնար իր գլուխն ալ

ցավցնել և հետո աղետ մը դառնալ, դավերու մեքենան երեւան հանել: Նոր գործավոր ներս առնելու և ասանկով շաբաթավարձքերեն բաժին կորզելու նպատակով դավագրություններ կային, որոնց մեջ ուղղակի մատ և գործակցություն ուներ Թելյան: Իր գոհերը՝ Հայերն էին ամբողջությամբ, միջավայրին անծանոթ և անգիտակից էակներ առհասարակ:

— Ապահով եղիր, մի՛ մտածիր, ասանկ սխալմունքներ շատ կը պատահին և երկու մարդ չսած ալ կը կարգադրվին, եզրակացուց Թելյան:

— Ծիտակ է, կակազեց իր բարեկամը տիրությամբ, որ ոչ Ամերիկան ճանչցեր և ոչ ալ գործարանեն դուրս բան մը տեսեր էր: Իր սիրտն ու միտքը իր հեռավոր տնակին և անոր մեջ բնակող հոգիներուն հետ եղած էր միշտ:

— Բրավ, ես, Պր. Թելյան, բայց Ամերիկան զգվելի երկիր է եղեր: Եթե ութ օրեն գործս ետ չստանամ, մեկ վայրկյան շեմ կենար այստեղ: Արդեն 7—800 տոլարի չափ ունիմ, ատիկա մեծ դրամ է, երբ երկիր հասնիմ: Խանութ, գործ, ամեն բան կարգի կը դնեմ, ընտանիքիս և մեծ մորս ու պապուս ապրուստը կապահովեմ, հետո աս սատանաներու երկրեն ալ կ'ազատիմ:

Ութ օրն անցավ, Թելյան ստիպեց իր բարեկամը, որ քանի մը օր ևս սպասե, որովհետև պոսը սկսեր էր «կակուղնալ»:

— Գալես ի վեր դուն ինծի մեծ բարիքներ ըրիր, Պր. Թելյան, խնդրեմ, կամ «այո՛» կամ «ո՛չ», սա քանի մը օրվան մեջ ինծի լուր մը բեր, ավելորդ է, որ պարապ մնամ և զրամս ալ վատնեմ ամեն օր:

Մյուսը թելադրեց, հույս տվավ քաղցրությամբ և հաշորդ օր գործարան երթալուն, երբ մեծավորը իր քովեն անցավ՝ Թելյան ցավ հայտնեց, որ ատանկ անպիտան մը բերած էր հոս և պատճառ եղած, որ գործ ունենալ և ետքն ալ ապելլախտորեն գողություն ընել:

— Աղտո՛տը, ավելցուց ան, այլևս աս տեղը չի տես-

Յու զմյր քտիկոտի ստգջ՝ իմակցատուի՞ն դասմզդոտեն պցչտե մէ  
Ֆըր դվիտսեն վժճզր մմզդցտմն մկ դուրց դասմզհոց մաւսե ուսի՞ն  
+...մտղիոտց մկ դամզդոցսմթիւստքմսե նիտ լու ու դ ժզվ մզտվե  
տժդոտե լս դամզչիսմս ՚նիտ մկ զետմզի զնսետիոլ մս ՚իմեզի,  
-նսբոց ոգիոտմզի ՚նզեի ՚նւսեմզի ՚իմեզցմսով յուշումմց

— այսպմանտեսուի մի ող ճգուհուն  
— ողի առաջնաշահութեան մասին առաջարկութեան մասին —

Դիմումը պատճենաբառություն է այս գործությունը կատարելու վեհականության մասին:

ինչտես բղկմն մէ վեզդ եւազզոյոց մվկմդ  
ողեք ոտղմի վքզի մլոմնողը՝ գոյց լո պյումն ևվթզժվթ՝ ստ  
մուստ օՏ—ՕԽ մայոց նվթպտք շամցոց վտուց : ո՞ւ ողտպի  
‘կեզ? մժսզգ տամզզմորո ոնմոց քոյիսող? : ձզը շամզզժունոժ  
քանդրդու մտու բակ սվթմու.թ ովեւպնդոց մէ շամզզուն շոյ  
գտփի իս : զ մահունեցոտի տկվտու ողդուա նոց դ ո ողիոտի  
մվտսե մա մզմնուղթ յոց : զ ովմուն տուշ տկվտու —

Եղիշեաւոց Աժմվյ կղմնեց.

ուղարկելու համար առաջ գտնվութեան մասին պատճեան գույքը առաջ գտնվութեան մասին պատճեան գույքը առաջ գտնվութեան մասին պատճեան գույքը

Ճանաչելու մասին

զվիտիկմցը մզք ժողոված մմզդի ժաւել լուս  
տղմի մը տրամիտ տոփեղոց լու որումն գոնեցու 'զ զոկիտի  
-ում մս կղուղոց ցվկոոց զայ մմզ 'վղենոց վագի մոզի շա վճ  
-ում Տ: զասա լուզամետմզի զպկմոտ շակմզ վէ մզնոտոսով ոճուզ  
-մի ո ովֆնսզօ : կղմզ վնզմեն կորաոց զպնմու լու զասա մվի  
-մզ նվիկցը մզ գուսամը : վերջ վնզուցատու զամբիւնզու տառ  
-պնմու 'մորոց վքով մկղեսց վը լու 'զ, ոմլզօ : մլի —

մսղտ խոռոշ պաց:

պայմանագրութեան մասին առաջարկութեան մասին առաջարկութեան մասին

## ԱՎԻԱԿԱՆ ԽՎՈՒԴԻ Հ ՔՄՆԱԾ

-ա մս 'Դ քոնդ կտստահով դոժդիմ լու զուման դղեմմ ճպդը

: քոյիտահեռածմշ խսճգչկոցսկ շակմոցտ ՝մէ  
ունի կմողին կվմժսփ քոյիեց միսք ՝միտո դէզվոլուփ  
ձըր մը վեմոնշ զնունց դ լողտանու դուկո մմդոցզ ջմդո  
ումքմութ մսդո ու զժունութ նզժօ : մմզնութ զփուզովիիո վե  
զն իտենածուտց դ լուովիզոցտիոց վժմսց շանզ նունսթ միտո  
զվունիկնմոց բոցտմմդլ մնգ ՝մէ զմը տսիտստ կվեզնդի

\*\*\*

: տմի ուսովին Շմոլ տոշ —

: ուողսսյը լուտ ումզոյմութ կրստոց լու նմսշ : ոզտպի  
զովով կ քոսզց վմտտ լոինցոտ ումլու : բվզուն մզոյտկունետ  
չկմու լու ՝ոզմումքոց մի մմսզգ ովմնուժուտց ՝ուտ ումզոյն  
ուութ եռնսզնմոց ՝վլլու նտզց մմզՏ Շմուութ ոոթմմզ —  
: ի սմութ ոոթզը ՝ոոթզ

— սսը յ, զ նժվմութ զումտվիոց ՝ոգ լոկտամոզ տոշ —  
: մմզնդ բզնենոց մի խսդոյթ  
աոկնչոց նյումն ոգ գմն կոյտոց նուազզոոոց զուՏ : ովտտետ  
ոյորտ մս ՝ոոցի մկնոյտ խստուն ՝մոոզկ վը նզու ՝ովիմտոյի  
ոչզմզմոյորու ՝մուտ նսց նժզվենցկ ՝մմնզ նու սեց —

: մսդո իտիտ մզոտուոյ տոստ դ մնսզկը նզու  
— սոյես դ եզուսպուոյ զոմլոց ձզը զվզումունեկ վմտուՍ : ժմսց  
աոնզ իտեզզից կով զդոսկիվմկ զոյիմօ նմսծոց դ զվուկոյն  
ուութ մկ եզզչոց մմունստ օօց ՝իտիտ մցունսմս խստուԶ  
: մոկէ ուսաթիւսմախսո նուզու  
— ստ զոկտետոտ կովչրաց ՝ովկ մզութ կոմոոոց տուն մլտո  
ովսփ ու զլզզչոց բումն շամումկ ուսամզմօ վլզումզ ո՞՛՛  
: լվզունզը

մորսիւսմնուզը մսդո ՝ոմէզկ լու ՝ոզմկ մէ քոնիսնկոոոի  
բումն դ քոմմ ժվմութ ոյոմութ ձզը վմտկվմզրը ոուշ նոյոիտոց  
ուոց ՝ովկ մզկդ մզնուն եսմեն զփուովը եսսկտեն ՝մէ զմը  
յոտկոմութ զոկտզկուուն մզոմլոց ՝մլը զմն դ փոսի վսվո  
ուսմս ՝մուս ՝զզը վսվու նուկ ՝օմմկմզ լոյոտոց բումն կվոյ  
ոյուկ տոյմի մզզմոոոփսփ մստտ դ զստ մը ժզ մմզ զը ՝մոկ

Վերն ու վարը՝ անսահման կապույտ միայն: Բոլորակ և  
անձայն հորիզոն մըն ալ հեռուն, Հակա կաթսայի մը բերա-  
նըն ըլլար, կըսես, որ ջուրով լեցված է, եռացող կոհակավոր  
և կատաղի ջուրով մը: Այս խոռվքին մեջ նավը կը սահի եր-  
շանիկ, անոր վրայի բազմությունն ալ ուրախ է, աղմկոտ և  
խնդուն:

Սբրահամ երկար, երկար նայեցավ ետև, Ամերիկան  
չկար ալ, բայց անկե առած հիշատակները իրեն հետն էին  
և լեղի: Խորհեցավ երկար, մինակ էր ու տխուր: Վերագարձը  
կ'ոգեսրեր և քաղցրագույն պատկերնեցով կը միսիթարեր,  
կ'ուժովցներ զինք:

Իր խոհերուն և երազներուն հետ հասավ Մարսել, հետո  
Փաթրաս և Պոլիս, անկե ալ գալառական քաղաք մը: Այս  
վերջինը իր տունն էր, իր բնլոր երազներուն բույնը:

Ծնողք, կին ու զավակներ բոլորվեցան իրենց անգին  
Էակին շուրջ և ողջագուբեցին: Այդ փոքրիկ տունը ամբողջ  
թաղին խոսակցության առարկան դարձավ:

Որովհետև անօրինակ բան էր պանդուխտի մը այդքան  
կանուխ վերագարձը դեպի տուն:

Դուռը գրացի աշքի լույսի եկան, խոսեցան, տեղեկու-  
թյուններ խնդրեցին իրենց ղարիպ իկիտներուն շուրջ: Ամենքն  
ալ երնե՛կ կուտային Բարդիկյան ընտանիքին:

— Աշքը լո՛ս, Մարիամ քորո, տղադ եկավ: Քու ըլ  
աշքը լոս, աղջի՛կ եղսա, զլիսավորդ եկավ, ալ կտուրներդ  
վրա չի գար...

— Շատ շնորհակա՞լ եմ, տարոսը ձեզի, բոլորին ըլ  
տունը հասնի:

Ուրիշ գրացի մը.

— Բարո՛վ վայելես, օղո՛ւ, տարոսը մեր Առաքելին և  
Տոնապետին... ա՛խ, ա՛խ, ֆելեկին աշքը քոռնա, շորս տարի  
է գացեր են զեռ էս կողմը նայելու վրա շեն խորհիր, Աստ-  
ված ինքը հասնի:

Սբրահամ շատ խելացի մարդու մը համբավը շինեց,

որովհետև այդքան կարճ ժամանակեն վերադարձեր էր և շուկաներ ալ կային, թե շատ դրամ բերեր էր հետը:

Տուն հասնելուն հաջորդ օրն իսկ Աբրահամ նամակ մը գրեց իր անձնվեր բարեկամին՝ Միհրան Թելյանին և խընդուց, որ անհապաղ դրամն հասցնե իրեն ամենեն կարճ միշոցով, որ կարելի է:

Ավելի վստահ ըլլալու համար ութ օր ետքն ալ կրկնեց իր նամակը և ապահովագրյալ թղթատարով ճամբեց զայն:

Շաբաթներ և ամիսներ անցան: Պատասխանը կ'ուշանար: Զարմանալի բան: Աբրահամ անհանգստության նշաններ սկսավ ցուց տալ: Ի՞նչ ընկլու էր, դրամի պետք կար շատ գեշ կերպով, գործի, խանութի կարգադրություններ ըրեր էր և աշքը ճամբան էր մնացել:

Խնդրանքները կրկնեց, ստիպողական խոսքեր ըրավ: Կրկին լոռություն: Կարելի՞ է միթե: Ամերիկայի մեջ ճիկերեն տաղ մը առեր էր... մի գուցե... աս ալ երկրորդ մը:

Կատկածները սկսան օձի պես արթննալ և կծու խայլոցներ տալ Աբրահամի խոռված կուրծքին:

Թելյանեն ասանկ բան մը չէր սպասեր, աշքովը տեսնար՝ չէր հավատար, բայց դրամին պետքը շատ սուր հանգամանք առեր էր և ատոր վրա պարտքեր ըրեր... և ամեն օր ժտահոգությունը կը խոցեր ու կը շատնար:

Օր մըն ալ ստացավ ապահովագրյալ ծրար մը, նամակ մըն ալ միասին, որուն երկու էջերն ալ գրությունով լեցված էին և ստորագրության տեղ չէր մնացեր: Ծրարը կը պարունակեր իր ամբողջ դրամները, տասնոց և հինգնոց տոլարներ, լման 650 տոլար:

Փա՛ռք քեզ Աստված:

Լայն շունչ մը առավ Աբրահամ և մեկ շունչով կարդաց նամակը: Թելյանին զիրն էր, կը թելագրեր, որ պանքան կամ միսիոնարներուն տաներ զանոնք և անոնց միշոցավ թրքական դրամի վերածեր շուտով: Հապաղումն ալ կվերագրեր իր անակնկալ հիվանդության:

— Ես գիտեմ, որ Պր. Թելյանը այդպէս բան չըներ, խոռոշավ ծերութիւնի հայրը ինքն ալ խաղաղած:

— Ես ալ վստահ էի, անիկա ինձի բարիք շատ ըրավ, ավելցուց Աբրահամ և առանց վայրկյան կորոնցնելու ուղղակի ամերիկացի միսիոնարներուն գնաց իր ծրարը լավ մը փաթթած և ամուր իր թերերուն տակ սեղմած:

Առանձին տեսակցություն մը խնդրեց միսիոնարներէն:

Ներս ընդունեցին զինք քաղաքավարությամբ:

Աբրահամ ծրարը բացավ սեղանի, վրա՝ ժպտելեն, իր շաթ-փաթ անգլերենով խնդրեց, որ պարոնը հաճի ասիկա տեղական դրամի վերածել, եթե ծախք մը կար, սիրով պատրաստ էր վճարելու: Ապա տվավ իր կարճ պատմությունը քիչ մը հայերեն, քիչ մըն ալ անգլերեն լեզվով, որովհետև միտոնարը ինքն ալ քիլ մը հայերեն սորված էր, երկար չէր ըներ, որ եկած էր Շիբակոյին և միսիոնարական հաստատության մեջ գանձապահի պաշտոնը կը վարեր:

Ամերիկացին ակնարկ մը նետեց թուղթերուն վրա և հեգնանքով հարցուց.

— Այս թուղթերը ո՞վ դրկեց քեզի:

— Իմ բարեկամու Պր. Թելյանը, Ուստի քաղաքէն, ուր կը մնա և գործարանին մեջ շատ բարձր դիրք ունի:

— Ասոնք դրամ չեն, Պր. Աբրահամ՛, խոսհավ միսիոնարաց գանձապահը հատիկ հատիկ, ասոնք տոլարի նմանությամբ տպագրված թուղթեր են, որոնք Ամերիկայի մեջ իբրև խաղալիկ կը գործածիլին և կաշիկ դրամապանակներու մեջ կը դրվին ծանուցման նպատակով: Հօն շոեսա՞ր, աս ամբողջ թուղթերը մեկ սենթի արժեք չունին....:

— Ի՞նչ կ'ըսեք, խոսհավ Աբրահամ դողդողագին և խելացնոր. լավ նայեցեք խնդրեմ, քննություն մը ըրեք, ատանկ բան չըլլար, իմ բարեկամս անկարելի է, որ այսպիսի խարեւայություն մը ընե...

Ամերիկացին իրական տոլար մը հանեց իր երկաթյաղը ասնատուկեն և դրավ սեղանին վրա կարեկցաբար, որով-

Հետեւ ըմբռնած էր ստորին խաքեքայության այս մեքնացությունը: Ապա ուրիշ միսիոնար մըն ալ կանչեց, ան ալ նույն բանն հաստատեց, մինչ Աբրահամ Հոգեկան զարհուրելի տանջանքի մը մեջ՝ կը մղմղար:

— Խնդրեմ, խնդրեմ, բան մը բրեք, պարոննե՛ր, ապա թե ոչ գործս, տունս, զավակներս, ծերունի և անկարող ծովողքս, ես, ամենքս, ամենքս ալ կորսված ենք...

Միսիոնարները խորհեցան, խոսեցան, Աբրահամին ըստացագիր ուզեցին, բայց դժբախտաբար չուներ: Ապա Միհրան Թելանին հասցեն և դեպքին պատմությունը առին: Հավատացին, որ եղելությունը շինծու չեր, ընդհակառակը իր բոլոր մանրամասնություններով իրականությունը մը կը թվեր:

Անոնք խոստացան անմիջապես գրել Կ. Պոլսո Ամերիկյան Հյուպատոսին, և անոր միջոցավ աշխատիլ, որ անիկառ հարկ եղած քայլերն առնե: Եվ ասիկա առ նվազն ամիսներու և տարիներու խնդիր նկատեցին, քանի որ բավականաշափ օրինական թուղթեր և ապացուցներ կը պակսեին:

Աբրահամ կես մեռել՝ դարձավ տուն: Այդ իրիկուն սուրդի ոգիով բացավ բերանը և քաջալերեց.

— Կյանքով թող ողջ ըլլա, ձագո՛ւկս, Աստված էնոր Հախեն կուգա: Ծակծկելով ուտե էտ փարան, կյանքին մեջ օր-արե շտեսնա, գետինը կպի, տափտակին վրա ելլե... ի՞նչ ըսեմ...

Աբրահամ կրակուբոց նամակ մը գրեց Միհրան Թելանին, Ուստի, հետո մեղմացավ և հանուն բարեկամության խնդրեց, որ այդ գրամը հասցնե, ապա թե ոչ ծերունի ծնողքը, ընտանիքն ու զավակները շատ դժբախտ օրեր, անսվազ և շքավոր կյանք մը պիտի քաշքշեն:

Նամակը գնաց: Բայց ինքը բան մը ընելու էր: Նավակը բեկանած էր և անոր խլյակներուն վրա ինք և իր հոգե-

Հաստորները չէին կրնար ապրիլ։ Ուստի հին օրերու քաջությունը ետ կանչեց, գյուղերն ինկավ առուժախ ընելու և գեթաց ու պանիր մը ապահովելու համար իրեններուն։ Հաճախ միսիոնարներուն դիմեց սրտատրոփ բարի լուրի մը համար, որ կ'ուշանար։

Քարեն-իւայտեն ձայն ելավ, բայց Ուստրեն հույսի փըշ-ռանք մը, թեթև շող մը շցաթեց։

Քիչ ետք 95-ի շարդերն եկան և սարսափի ու թալան տառածեցին ամեն կողմ։

Հայկական բնագավառները ընդարձակ սպանդանոցի մը կերպարանք առին։

Չքավոր ընտանիքին այս միակ նեցուկը՝ Աբրահամն ալ գյուղեն տոռն վերագառնալու ատին կողոպտվեցավ և սպանվեցավ։ Անոր դիակը ուրիշ հազարավորներու հետ գետնին վրա փոփած մնաց անթաղ, աշքերը բաց, և հարցական անիմանափի շեշտով մը՝ վերեկի դատարկ և կապուտիկ երկընքներուն հառած…



Անդին, Միհրան Թելյան Ամերիկայի մեջ, կը հարստանար և կը հառաջադիմեր ամեն օր։ Իր ծառայությունները վարձատրելու նորանոր առիթներ կը գտներ և անոնց արդյունքը խելացի կերպով և ամբողջությամբ կը բարդեր իր գանձին վրա։

Կը խորհեր, թե ալ բեռը բռներ էր և ժամանակն էր, որ ամուսնանար, որովհետեւ այդ փափաքը սկսեր էր իր սրտին դուռը բախել և երես առած տղու մը պես անհանգիստ ընեւ գինք ամեն օր։

Սկսավ ավելի հաճախ ածիլվիլ և գլխուն մազերը ձեւ տակ դնել, կարճիկ հասակին վրա նոր զգեստներու շնորհքը ավելցնել, Մեծկակ քթին, ահավոր ականջներուն ու շրթունքին կարելի չեր դպշիլ։ Դանակի բժշկությունը այնքան հառաջադիմած չեր այն օրերուն։

Թելյան սակայն կը հաշվեր, որ խելք ուներ, բարեկամ և  
մանավանդ դրամի տեր էր, ո՞վ կրնար զինք մերժել:

Երկու տարի հոս հոն անհաջող փորձեր ըրավ և գեց  
կերպով մերժվեցավ:

— Հավերս աղջիկ ըլլան, այդ անպիտանին չեմ տար,  
ոչ ալ բարեկամիս աղջիկն ու քույրը, պատասխանեցին մար-  
դիկ միջնորդներուն և առանց այլեալի ճամբու դրին զա-  
նոնք:

Թելյան այդ լուրերն առավ, բայց մաղի շափ կարևորու-  
թյուն շընծայեց, պարզապես կը նախանձին, աշքերնին չի  
վերցներ, մրթմրթաց:

Ամերիկացի կին առնելե վախեցավ, լավ գիտեր, որ ա-  
նոնք իր դրամին տակեն պիտի մտնեին և վրայեն ելլեին,  
անկե ետք, ծրարնին առած պիտի հեռանացին նորանոր ար-  
կածախնդրությանց ետևեն: Եվ եթե լավ ու պատվախնդիր  
կիներ ալ կային, անոնք ալ իրեն ձեռքը չէին հասներ: Կա-  
րելի՞ բան էր:

Ժամանակը կանցներ, հարկ էր անծանոթ քաղաքներու  
մեջ փորձել և երկրեն՝ մեկու մը քույրը կամ ազգականը բե-  
րել տալ:

Մախքերու մեծ խնդիրը կար, սակայն խորհեցավ, աիրոչ  
կամ ազգականին հետ կես առ կեսի հաշվով կարգադրություն  
պիտի կրնար ընել: Դրամական խնդիրներու մեջ զինք գերա-  
զանցող շկար, վստահ էր ատոր:

Ուստի աշք ու ականջ բաց՝ և քսակը գոց՝ սպասեց:

Օր մը Պոսթոն բնակող բարեկամե մը լուր առավ, երկ-  
րեն աղջիկ մը եկած էր, բավական ուսյալ աղջիկ մը, և կը  
պատրաստվեր մեկնելու Քալիֆորնիա, իր նշանածին քով:

Ամեն գործ ձգեց ու շունչը Պոսթոն առավ, հագլած և  
հարդարված:

Աղջկան հետ իր տեսակցությունը շատ տպավորիլ ըն-  
ծայելու համար իր դրամապանակին մեջ լեցուց առատ դրամ,  
որպեսզի ատենը մեկ հաներ զայն և ապսպրանք մը ըներ,

սիկար մը, սիկրեթ մը խնդրեր, որ բերեին իրեն համար: Բնականաբար տանտերը պիտի շթուղատրեր, և ինքն ալ տուարի կուցտերով լեցուն գրամապանակը կրկին պիտի հորեր իր գրպանին հատակը: Ծրագիրը անարդյունք շմնաց: Գնաց և անցավ ուղղակի հարձակողականի: Քալիֆորնիո անապատային ու այգիներուն դժբախտ կյանքը պարզեց: Իր հարըստությունը, գիրքը, բարեկամներուն մեծ թիվը ինք իր բերնով խոսեցավ: Ազգականներուն բերնին մեջն ալ շաբարի հատիկներ նետեց... խոստումներով և երկու օրեն նշանվեցավ, հաջորդ առավոտուն ալ պսակվեցավ և հաղթական մուտք մը գործեց Ուստրի մեջ:

Հայ շրջանակներե կարելի եղածին շափի հետի՝ Տեր և Տիկին Միհրան Թելյան կոկիկ տնակի մը ծածքին տակ քաշվեցան երջանկությամբ առլի:

Մինչ Քալիֆորնիո դժբախտ նշանածը աշքերը ճամբուն՝ սպասեց ու սպասեց... Եկող, գացող չկար: Միրտը այրած և այրող արեններուն տակ քրանալից՝ անիկա սկսավ քանի մը հատ կոնծել ու մղմղալ.

«Թերթ կարդամ երես երես,  
Քոնտոքթոր, Աստված սիրես,  
Երբոր Պոսթոնեն դառնաս,  
Իմ յարս հետդ բերես...»:

Յարմար բերող չկար սակայն: Զգաց, որ շատ անգութ աշխարհ մը կար իր ուաքերուն տակ կամ գլխուն վերե:

Անդին Թելյան հարսաւութենեն ետք կին ալ ունեցավ:

«Ով չուստ, փորը կուշտ» կ'ըսեին երկիրը, ինչո՞վ հանցավոր էր Թելյանը, թող աշքերնին բանան, որ շխաբվին...:

Առաջ դրամ կար, գեթ հանդիստ կյանք մը ապահովելու շափ, ուստի գործավորական կյանքը նվաստ նշանակություն մը առավ Թելյանի աշքին, որոշեց գործը ձգել և առմտրական ձեռնարկներու դարձնել իր աշքերն ու հոտառու քիթը: Դրամները կրնար շահու տալ ու թողով որ՝ փոխանակ ինք աշխատելու՝ տոլարներն աշխատին:

Վաշխառության հիմնալի առիթներ՝ բազմաթիվ, ամեն քայլափոխի:

Կինը սակայն շատ անհանգիստ էր և մեծ բաղձանք ուներ այդ քաղաքեն հեռանալու: Պատճառներ ալ ուներ խեղճ կինը: Հայ գաղութին մեջ ամեն կարգի զրուց և ատելության խոսքեր անպակաս էին իրենց հանդեպ: Արրահամ հարդիկյանի գլխուն դրած գայթակղությունը չէր մոռցված: Կ. Պոլսո Ամերիկյան հյուպատոսարանեն փորձեր եղած էին Խելյանի հափշտակություններն ապացուցանելու, սակայն փաստերու պակասեն և զո՞ին սպանվելեն հետո՝ հարցը երեսի վրա ձգված էր:

Տակավին կային բազմաթիվ ուրիշ գայթակղություններ, խարերայություններ, անգետ գործավարներու քսակներեն շահագործումներ, և այլն, և այլն, որոնք ծանրապես կը խոցեին Տիկ. Թելյանը, որ չէր կրնար էրկանը ուշադրության շահնձնել զանոնք ատենը անգամ մը:

— Բոլորը նախանձի և շարության խոսքեր են, կարեորություն մի տար, ժողովուրդին կարծիքն եմ թքե, կը պատասխաներ Թելյան զայրույթով:

Հայ գաղութը կը շատնար ոչ միայն Ռւսարի, այլև Պոստոնի, Նյու-Յորքի և բոլոր շրջակա մեծ ու փոքր քաղաքներուն մեջ: Ազգային կազմակերպություններ, բարենպատակ և ուսումնասիրաց միություններ կազմված էին և եռանդագին աշխատանքի նվիրված: Թերթեր կը հրատարակվեին, բնմեր աղքային ցավն ու երազը կը հրահանգեին աննման խանդակառությամբ:

Երկրե հասնող լուրերը ամեն հայ սիրտ լացի ու սուզի կը մատնեին: Տարիներով շարունակվեցան այս գույժերը և մեծամեծ զո՞ողություններու մղեցին ամեն հայ մարդ և կին:

Եկեղեցիներ հաստատվեցան և հայկական բնականոն կյանքի մը կերպարանավորման նպաստեցին:

Թելյան այս բոլոր շարժումներուն վրա նայեցավ արհամարդհանքով և անտարբերությամբ: Երբոր դրամական նվեր-

ներու գար հարցը՝ և կինը քանի մը սենթի արտոնություն  
խնդրեր Պրն. Թելյանն, ահավոր փոթորիկը կը փրթեր:

— Հըը... ազգին փրկիչները շատցեր են, յա՛... և  
Թելյանն ըլ փարա պիտի տա օր... մեղա՛, մեղա՛... վա՛զ  
անցիր, կնի՛կ, խելքդ տուն կանչե... Երկիրը ես ազգական,  
ծնողք չունիմ, իմ ինչո՞ւ պետք, թող խելոք կենան, որ  
շարդվին...

Ու ձեռք և բաակ կապեր էր, երկաթե անծակ գոմգի  
մըն էր վերածեր: Դրամի փշրանք մը անհնարին էր, որ  
դուրս գար այդ մարդեն:

Ճարտարամիտ անձեր, բարեսիրտ կիներ, եկեղեցական-  
ներ բազմաթիվ փորձեր ըրին և Թելյանին դուռն ու սիրտը  
անբուժելի կերպով գոց գտան:

Երբ գաղութին մեջ համբավված զզվելի մը դարձավ և  
ամեն անկյունի վրա խոժոռ և նախատալից արտահայտու-  
թյուններ դիմավորեց, խորհեցավ ծախել ամեն բան և դեպի  
արևմուտք շվել, մեծկակ քաղաքի մը մեջ հաստատվիլ և հոն  
վերսկսիլ նոր կյանք և առևտրական հիմնական գործ մը:

Խորհածին պես ալ ըրավ: Օր մը էրիկ-կնիկ կապեցին  
իրենց ծրարները և սուսիկ-փուսիկ հեռացան Ռատրեն: Գա-  
ցին և հեռավոր քաղաքի մը լանջերուն վրա զարկին իրենց  
վրանը, գեղեցիկ բնակարան մը գնեցին և անոր մեջ ապաս-  
տանեցան:

Զավակ չունեին և ունենալու հույսն ալ շէին սնուցաներ  
արդեն: Ամերիկայի մեջ զավակ հասցնելն ու մեծցնելը դրա-  
մի կը նայեր: Թելյանի դրամները անգին, թանկագին էին...:

Իր նոր միջավայրին մեջ Թելյանն իր ներկայությունը  
գգացնելու համար նախ՝ կամաց-կամաց եկեղեցիի մը մո-  
տեցավ, ապա բարենպատ ձեռնարկներու հացկերուցին  
գնաց կնոջը հետ, միշտ գանգատելով, որ տոմսակները առտ  
էին և կերակուրները քիչ:

Կինը ուրախ էր. այս նոր քաղաքին մեջ հայ գաղութին  
ավելի մոտիկ կ'ապրեին և զիրենք ճանցող չկար, եթե տա-  
կավին շէին ալ սիրվեր, գեթ ատելովթյուն ալ չկար: Ժամ-

նակը՝ կը հուսար ավելի բարի պիտի ըլլար: Օտարներում հետ հարաբերություն հաստատել չէին կրնար, երկուքն ալ, ոչ լեզվական հմտություն ունեին և ոչ ալ անոնց բարքերում ընտանությունը:

Թելյան միշտ վերապահ և զգուշավոր՝ իր նոր միջավայրը ուսումնասիրեց, առատ ժամանակ տվավ և սկսավ գնումներ ընել՝ կալված, տուն, խանութ և անոնց եկամուտի առատ զուգերում տակ ապրիլ միշտ կծծի և միշտ շափավոր, իր խոսքով՝ «Հաշվագիտությամբ»: Քանի տարիներն անցան՝ բախտը այնքան ավելի բարի եղավ և միշտ ժամուն դեմք մը ցուցուց անոր: Ինչ որ գնեց՝ արժեքը բարձրացավ և հարստության բարձունքի մը հասցուց Տեր և Տիկ. Թելյանը:

— Անպատճառ հարյուր հազար մը կ'արժե:

— Ավելի՛, ավելի՛, ի՞նչ կ'ըսես, Ուստրեն եկած ատեն այդշափ բերած էր, կ'ըսեին, և ատիկա՝ շատ տարիներ առաջ էր: Հիմա ատոր առնվազն երկու անգամը...

Այս խոսքերը պիտի կրնվեին ամեն անգամ, որ հանդիպանակության մը ձեռնարկը կ'ըլլար գաղութին մեջ և թելյանի անունը կուգար ցանկին գլուխը, իբրև ունեոր մարդ, և անզավակ մարդ, որ կրնար առանց դժվարության կարեվոր գոմար մը արձանագրվիլ:

Հազիվ տասնըշորսը լրացուցած, բայց, այդ տարիքը ունեցող քուրդ աղջկներու պես, արդեն կատարյալ կին էլք շրադացանուհին. Հասակը, ինչպես իրենց բանաստեղծները կ'երգեն, «էլիֆ»-ի նման բարակ ու սլացիկ. Երկար թարթիչներու սավերին տակ սե ու խելացի աշքեր. մարմնուն և մերկ բազուկներուն գիծերը Հիանալիորեն ներդաշնակ: Հագուստը—ոտքերուն իջնող քրդական երկար շապիկ և կարճ թիկնոց—գեռ տակն ու վրա էր դամբոփին հետ մղած պայքարին: Թիկնոցի վիզը լայնորեն բաց կը մնար, մատնելով կուսական հպարտ կուրծքի մը սկզբնավորությունը, և մազի սեփ սե, անառակ խոպաններ ճակտին ու ծոծրակին խուժած էին, շրջանակելով անթերի ձվածեր իր նուրբ դեմքին:

Անձանոթը, սակայն, գրավված էր, քրդուճիին գեղեց կութենեն ավելի—ընդհանուր հատկանիշը լեռնական բոլոր ցեղերուն—այն ինքնուրուցն հմայքով, որ այդ գեղեցկության բացափիկ շնորհ և հրապուցը կուտար: Զարիի արձանային մարմինը երիտասարդ կատվի անկաշկանդ և ճապուկ շարժումները ուներ, անոր խոսվածքին համարակ շեշտը՝ երդի մը անուշություն. եղնիկի մեծ-մեծ աշքերուն նայլածքը՝ անհանդիստ բոց, արեախանձ մորթը՝ զարմանալի թափանցկոտություն: Եվ վերջապես լեռներու հովին ու արեկին մեջ հասունցած գեռատի աղջկան ամբողջ անձեն կը ծորեր նույն

խոռովիշ ջերմությունը, որ վայրի կենդանիներու հատուկ է, և որ անծանոթին մեջ սկսավ արթնեցնել պարզ հետաքրքրութենե բոլորովին տարբեր զգացում...

— Հսե՛ տեսնեմ, Զարի՛, շարունակեց խոսակցությունն անակնկալ այցելուն, ըսե՛ տեսնեմ, հայրդ ինչո՞ւ այստեղ եկեր ու ջրաղացան դարձեր է, քանի որ մեծ խան էր Լորիստանի մեջ:

— Շատ պարզ է, բացատրեց քրդուհին ոգմորված, հայրս թշնամիներ ուներ, որոնց դեմ տարիներով կովեցավ և վերջապես հաղթեց: Բայց հետո խարեցին զինք ու թեհրան կանչեցին, իբր թե մեծ պատիվ տալու համար, և ամեն ինչ հափշտակեցին ձեռքեն՝ հող ու հարստություն ու խանական իրավունք, և ստիպեցին, որ անգամ մըն ալ ոտք շննե լորիստան: Մայրս մեռավ կսկիծեն և հայրս, աշխարհեն զգված, քաշվեցավ այստեղ ու ջրաղացքը շինեց: Շատ տարի առաջվան դեպքեր են ասոնք, աղա՛, ես թեհրան ծնած եմ, լորիստանը շեմ տեսած, բայց հայրս կը պատմե, որ այնտեղ մեր լեռները ավելի գեղեցիկ են և մեր կյանքը ավելի քաղցր էր: Հայրս շատ կարուցած է լորիստանը: Քանի՛ անգամ մոշդեհիդներուն զիմեց իրավունք ձեռք բերելու համար, բայց զինքը ճամբեցին անիրավները...

— Կրնար դատավորի մը դիմել, Զարիի հորդանոս պատմությունը ընդմիջեց անծանոթը:

— Բա՛հ, մոշդեհիդ ու դատավո՞ր, հեզնեց քրդուհին արհամարհոտ, ի՞նչ օգուտ, երբ հորս թշնամիները ատոնցմեն շատ ավելի զորավոր են:

— Զէ՛, դոկտորե՞ր, լրջորեն վեճի բռնվեցավ մյուար, ատոնցմեն զորավոր չի կրնա ըըլլալ, բացի, անշուշտ, Շահնշահեն, որու տիվանխանեին առջե կը տեսնվին աշիրեթական բոլոր դատերը:

— Ա՛հ, Շահնշահին տիվանխանե՞ն... կը կարծե՞ս որ հայրս չի ճանշնար ու տարիներով չէ մաշեցուցած Շահին Դուռը: Անիրավներուն մեծը այդ Շահնշահը ինքն է, աղա՛, ան է հորս տոնը քանդողն ու մեղ աքսորի մեջ պահողը...

Վայրկյան մը մտածեց Զարիի խոսակիցը և պիտի պատասխաներ, երբ ջրաղացքն կրկին լսվեցավ Թուզեի ձայնը: Միևնույն ատեն վերևի ժայռերուն մեջ կը հայտնվեին խոռմը մը ձիավորներ, որոնք առաջինին նման, նեղ արահետը կտրեցին, բայց փոխանակ իրենց ճամբան շարումակելու, ձիերեն իջան ու խոր գլուխ տալով՝ մնացին անշարժ:

Քրդուհին, զարմանքի ու կասկածի անորոշ զգացումով համակված, քաշվեցավ ջրաղացքի դրան մէշ: Անոր զարմանքը կատարյալ ապշության պիտի փոխվեր՝ ձիավորներու խոռմին մեջ տեսնելով փախստական նժույգը, զոր անոնցմե մեկը սանձեն բռնած, բերավ սաքուին վրա նստող մարդուն և սկսավ խոսիլ, ձեռքերը կործքին և շարունակ կրկնելով գլխու ծիծաղելի շարժումը:

Ո՞վ են ասոնք, կը խորհեր Զարի, ի՞նչ կը փնտռեն Տամագենտի անկախ սարալանջին վրա, ուր, ինչպես հայոց կ'ըսեր, միայն օձը իր փորով և թռչունը իր թևով կրնային հասնիլ:

Ամեն պարագայի տակ, Զարի կյանքին մեջ տեսած չէր ասոնց նման շքեղ երկույթով մարդ. զինված ամենքն ալ, բացի առաջինեն, թանկագին փալվելով զենքերով, և հագած՝ մարմինը սեղմորեն կաղապարող նոր սարդարի: Իսկ իրենց նժույգներուն թամբերը, սապանդակներն ու ծածկոց շալերը՝ մեկը մյուտեն հարուստ:

Օտարականներուն մեջ, սակայն, ամենեն աշքառուն կը մնար առաջին ձիավորը, պատկառելի անձ, որուն, իրավ է, դժվար էր տարիքը որոշել, որովհետեւ պեխերն ու մազերը ներկված էին, բայց, հակառակ ատոր, կորովի տղամարդ էր, սե ու խոշոր աշքերուն նայվածքը՝ թափանցող, բարձրահասակ, թիկնեղ, յուրաքանչյուր շարժումն ու խոսքը տիրական:

Զարի, հմայվածի պես, աշքերը չէր կրնար անկե ազատել, մանավանդ, որ անիկա և ոտքի կեցող ընկերը շարունակ իրեն կը գառնային, ապահովաբար իր մասին խոսելով:  
— Է՞, Զարի, կանչեց վերջապես անծանոթը, ինչո՞ւ

քաշվեցար, մեր զրուցը չկրցինք շարունակել: Հայրդ ե՞րբ  
կը դառնա գյուղեն:

— Ի՞նչ գիտնամ, պատասխանեց ջրաղացպանուհին, վաղ-  
վան համար կարգադրություն ընելու դնաց, կրնա դեռ ուշա-  
նալ: Ի՞նչ պիտի ընես հայրս:

— Կուզեի զինքը տեսնել ու պատվիրել, որ իր գեղեցիկ  
աղջիկը այլևս առանձին չձգե ամայի լեռներու մեջ: Մինչեւ  
վերադառնա, ձիավորներես մեկ քանին կրնան այստեղ  
մնալ:

— Ավելորդ է, աղա՛, հսկողության պետք չունի մեր  
ջրաղացքը, բողոքեց Զարի, որուն, սակայն անծանոթին հա-  
ճոյակատար առաջարկեն զգացած հաճույքը անկարելի էր  
չնշմարել:

— Այդ պարագային, ավելցուց Զարիի տարօրինակ  
հյուրը, այս միրգային կը պատվիրեմ, որ վաղը գա և Ար-  
տեշիր խանեն տեղեկանա, թե ինչո՞ւ ստիպվեցավ թողու  
կորիստանը:

— Ի՞նչ օգուտ, որ տեղեկանա, հառաշեց Զարի, հայրս  
չուզեր նույնիսկ խոսիլ այդ մասին:

— Ինչալա՞հ ամեն ինչ կը կարգադրվի, եզրակացուց  
անծանոթը մեկնելու պատրաստվելով: Վստա՞հ, եղիր, ըստ-  
ծիգ պես անիրավ մարդ չէ Շահը, թերես ոչ իսկ տեղեկու-  
թյուն ունի հորդ գործեն: Պիտի տեսնեմ զինքը և միշնորդեմ,  
որ հորդ խանական իրավունքն ու հողերը վերադարձվին:

— Ինչպես թե Շահը պիտի տեսնե՞ս, թոթովեց Զարի,  
աչքերը խոշոր-խոշոր բացած, ինչպես թե պիտի խոսիս  
Շահի՞ն... Ըսե, աղա՛, իրավ, Շահին երեսը կրնա՞ս տես-  
նել... հետը կրնա՞ս խոսիլ...

— Ինականաբար, քանի որ Շահնշահին միրախորն<sup>1)</sup>  
էմ:

— Շահնշահի միրախորը... գոշեց քրդուհին հուզումն  
շառագովնելով, ուրեմն, աղա՛, եթե ուզես, կրնաս հաջողցնել,

<sup>1)</sup> Միրախոր—ախոռապետ, պալատին ամենակարենը պաշտօնակո-  
տարը.

որ վերադառնանք Խորիստան... Աղա՛, աղա՛, եթե այդ բարիքը ընկն, Արտեշիք Խանը, Հավատա՛, ապերախտ մարդ չէ, կրցածեն ավելին փիշքեշ կ'ընե քեզի, ի՞նչ որ ուզես, նույնիսկ այս ջրաղացքը...

— Ա՛յ գոխտեր, սրատպին խնդաց Զարիի Հյուրը, ջրաղացք մը ունիմ արդեն, զոր չեմ ալ կրնար պետք եղածին պես կառավարել: Ինձի Համար ատկե մեծ փիշքեշ պիտի ըլլա, եթե կարենամ ուրախացնել քեզ ու հայրդ:

Եվ մոտը կեցող մարդուն դառնալով ավելցուց.

— Գիտե՞ս, միրզա՛, այս խանումին անունը Զարի-Թաճ է եղեր: Է՞՞ կրնացի՞ր երևակայել նման թագ մը Տամավենափի ամայության մեջ... Ալլա՛ու էքեր, ի՞նչ Հրաշալի ծաղիկ ես ստեղծեր այս ժայռերուն վրա...

Միրզան, առանց ազգվելու տիրոջը բանաստեղծական պոռթկումեն, կը շարունակեր, միշտ պատկառու գիրքին մեջ, խոր գլուխ տալ և լուր հավանություն հայտնել անոր ամեն մեկ ըսածին:

— Մեկնի՞նք, Հրամայեց վերջապես մենավոր ջրաղացքին այցելուն, և սարդարին գրադանեն ոսկեդրամ մը հանեց.

— Զարի՛, ազիզ ջուրիդ փոխարեն թող Հիշատակ մնարովդ: Ինշալլահ կրկին կը տեսնվինք, կ'ուզեմ, որ հորդ Հետ համեստ բնակարանս պատվես: Մնաս բարո՛վ, սիրո՛ւն աղջիկ...

Զարիի խոսակիցը թեթևորեն նժույգին վրա ցատկեց ու մեկնեցավ, նորեն առանձին, ինչպես եկած էր: Քիչ ետքը իրեն Հետեցան մշուսներն ալ, մինչ քրդուհին գամբոը կ'արձակեր և կը փութար ջրաղացքին կտորը, զանոնք վերջին անդամ տեսնելու Զիավորները շուտով անհետացան թեհրանի ուղղությամբ, իրենց ետին փոշիի թեթև ամապ մը ձգելով, որուն դեմ թուլեն կը հաջեր Հաղթական, վատահ, թե իր անքոնաբարելի լիոներեն վերջապես փախցուց օտարականները, այդ ինքնակոչ և անախորժ Հյուրեր...

Թուլեի կարծիքեն չեր քրդուհին: Անոր Համար, ձիավորներուն այցելությունը ոչ միայն աննախընթաց դեպք, այլ

Հաճելի անակնկալ էր, որ իր միօրինակ, վայրի կյանքին քիչ մը կենդանություն կուտար: Այդ կյանքը, իրենց աբսուրի և թշվառության երկար շրջանը, պիտի փակվեր շուտով, ինչպես խոստացած էր միրախորը, այդ ազնվական ու գեղցիկ տղամարդը...

Եվ աշքերը անոր գացած ճամբուն վրա, Զարի երկարութեն թաղված մնաց, անձնատուր՝ անբացատրելիորեն քաղցր և անծանոթ հուղումներու իր վայրի աղջկան սիրոց վերջապես արթնցած էր թեհրանցիին կնամեծար խոսքերը լսելով, ինչպես վարդի կոկոնը կ'ըացվի առտվան առաջին ճառագայթներուն ջերմութենեն:

Բայց հանկարծ ինքովինքը թոթվեց քրդուհին: Աշխուժով իշավ կտորեն և սկսավ վագել կռնակի արահետն ի վեր, ուրկե ձիվորները եկած էին: Թուղեն, խոշոր ոստյուններով հասավ ու անցավ ընկերը, հետո, բարձրունքին ետ նայեցավ, և, ապահոված, թե տիրուհին իրեն կը հետևեր, հաջեց գոհունակ և անհետացավ լերան ժայռերուն մեջ:

Զարի, նույն կետին հասնելով, այծի ճամբան ձգեց ու շեղեցավ դեպի աջ, ուր գրեթե ոտք զնելիք տեղ ալ չկար, բացի նեղ անցք մը, որ կը հագներ տափարակ ու երեք կողմեն սարալանջին լերկ և ուղղաձիգ ապառաժներով գոցված գետնի մը. տեսակ մը պատշգամ, երկնքին ու հովտին միջն առկախ:

Այդ խոռոշը, զոր շրջակա գյուղացիներ անվանած էին Սարապ-նունուփար, իր լճակին ու ջրածաղիկներուն անունով, Տամավենտի ամեննեն քիչ հաճախված, բայց նաև, ամեննեն նկարչագեղ տեսարաններեն մեկն էր: Անոր ժայռերուն գլխապտույտ բարձունքն շրվեժ մը կ'իյնար մեծաշառած, կըսես ձյունասպիտակ փրփուրներու սյուն մը, ծիրանի-գոտիներով պսպղուն, որ կը փշրվեր լճակին մեջ: Նունուփարներն իրենց լայն տերևներեն ոսկի բաժակներ բարձրացուցած, անկուշտ կը խմեխն մաղվող զրափոշին, և իրենց դեղին աշքերով անվերջ կը ժպտեին օդին մեջ կամարվող ծիածաններուն...

Զարի, լեռներու աղատ կյանքը միայն ապրող քրդուհի, բնական է, որ շատ լավ կը ճանչնար Սարապ-Նունուֆարը, ժամանցի միակ ու լավագույն տեղը, ուր հաճախ կուգար ձանձրույթը փարատել, մանավանդ երբ ջրաղացքը կը լեցվեր գյուղացիներով. կամ լոգնել Թուլեն լճակին սառ ջուրերուն մեջ. և կամ, երբեմն ալ, երբ իրեն կը վիճակվեր հսկել սահանքին, որ Սարապեն հորդելե ետք, խելոք առվի փոխված, ջրաղացքին անիվը կը դարձներ:

Իսկ հիմա, կես մեջքով լճակին վրա հակած, անոր հայելուն մեջ ցոլացող գեմքը կը դիտեր, այնքան ուշադիր, որ կարծես նոր տեսած ըլլար ինքինքը, կամ ուզելով կորպել գաղտնիքը փաղաքշիչ բառերուն, զորս գեղեցիկ տղամարդը ուղղած էր իրեն:

Զարի, ինքնիրմով հափշտակված, լսեց նույնիսկ հեռավոր կանչը, որ քանի մը վայրկյան ի վեր Տամապենտիք արձագանգները կ'արթնցներ.

— Զարի', հո՞... հո՞... հո՞...

Թուլեն, զարմացած, տիրուհին նայեցավ, շհասկանաւով, թէ ինչո՞ւ կ'ուշանար և ձայնին չէր պատասխաներ Հետո հաշեց քանի մը բերան և պոշը թոթվեց անհամբերությամբ, և վերջապես, հուսահատ, սուրաց դեպի ձայնը, որ կը շարունակեր կանչել.

— Զարի', հո՞... հո՞... հո՞...

Քրդուհին գլուխը բարձրացուց: Աշքերը կը ժպտեին. դեմքը լուսավորված էր անսահման ուրախությամբ, և, սրդուղած ու նազ ընող աղջնակի մը նման, մատը շրթունքին, պահ մը լուս ականջ տվավ անունը երգող ձայնին, որ խանգարած էր իր գեղեցիկ երազները, և վերջապես ձեռքերը միացուց բերնին շուրջը.

— Համո՛, հո՞... հո՞... հո՞...

Շատ շանցած, գամբոը վերադարձավ երիտասարդի մը հետո:

— Թուլեն ըլլար, քեզ պիտի շգտնեի: Զրաղացքը մարդ չկար: Թուլեն եկավ և իմացուց, որ այստեղ ես, ըստ

Նորեկը, զրեթե պատանի մը, որուն վրա ամեն ինչ կը մատներ լեռներու մեջ ապրող գյուղացին. շարժումները դանդաղ, խոսվածքը ծանր-ծանր և գալարներով ընդմիջված, ուսերը ամբակուռ և մորթը արևախանձ:

— Լավ եկար, Համո՛, գոչեց Զարի, այնքան բաներ ունիմ պատմելիք: Թող այդ թուզեն, անզգամը հոգիս հանեց այսօր...

Եկ աղուն Հարցական, ակնարկին պատասխանելով՝  
ավելցուց պշըոտ.

— Կը պատմեմ, եթե փրցնես //սա նունուֆարը: Տե՛ս,  
Համո՛, ի՞նչ սիրուն է, փրցուր ինծի Համար:

Բայց կանխելով Համոն, Զարի ինք երկնցավ Սարապն  
ի վար, շանալով հասնիլ ցուց տված ծաղկին:

— Զուրը պիտի իշնաս, ազգարարեց լեռնականը, զի-  
տես, որ հայրդ արգիլած է խորունկ տեղերե նունուֆար քա-  
ղել: Չէ՞ բսած, որ Սարապին Հատակը վտանգավոր փոսեր  
կան:

— Բոնե՛ մեշքես, Հրամայեց կամակոր ազգիկը, եթե  
դուն չես ուզեր, ես ինքս կրնամ փրցնել: Բոնե՛ մեշքես...

Համո՛ Զարիին քով երեսի վրա պառկեցավ, մեշքեն  
ամուր մը գրկեց և երկուքը մեկ սկսան կամաց-կամաց տե-  
ղահան ընել Հատակի սեղերուն փաթթված զրատունկը և քա-  
շել դեպի ափ:

Զարի վերջապես տիրացած էր ցանկացած նունուֆարին,  
զոր խնամքով զետեղեց մազերուն մեջ և դարձավ տղուն ու  
բրդչաց.

— Զարին լա՞վ է այսպես, Համո՛...

Լեռնականը կարմրեցավ ամոթխած տղեկի մը պես և  
գոհացավ գլուխ շարժելով:

— Հիմա պատմեմ, շարունակեց քրդուհին, որ թըրվու-  
ցող թռչունի նման նյութե-նյութ կ'ոստոնուր, պատմեմ, թե  
ի՞նչ պատահեցավ: Խումբ մը ձիավորներ զրադացք՝ եկան և

դեռ քիչ առաջ այնտեղ էին: Այս շան լակոտը անոնց ձիեւ-  
րեն մեկը խրաչեցուց...

— Զիավոր՝ զարմացավ Համո, ի՞նչ ընելու եկած էին:

— Զհարցուցի, թերեւս որսի ելած էին, պատասխանեց  
Զարի, և սկսավ խառն ի խուն նկարագրել օրվան անցքերը,  
մանավանդ, թե ինչպի՛ս Շահին միրախորը պիտի միջնոր-  
դեր ու զիբենք վերադարձներ Լորիստան:

— Դուք չե՞ս, Համո՛, պատմության թելը հանկարծ  
խզեց քրդուհին, ազդված՝ տղուն խորհրդավոր լուստենեն,  
դուն ալ մեղի հետ Լորիստան կուգաս: Հայրս քեզմե՛ չի կըր-  
նար բաժնվիլ, դեռ այս առառ ձեր գյուղի մարդոց հետ կը  
խոսեր ու կ'ըսեր. «Քաջ, տղա է Համոն, լոր տղա է Համոն,  
Զարին իրեն պիտի տամ, հոգ չէ, թե արմանի (Հայ) ըլլա»:  
Խոսե՛, կ'ուզես որ այստե՞ղ մնանք: Բայց հա՞յրս: Ո՞վ ունի  
Հայրս Լորիստանի մեջ, եթե երկուքս այստեղ մնանք: Այն-  
պես չէ՝ Համո՛...

— Կ'երթանք, ընդմիջեց հանկարծ լեռնականը հազվա-  
դեալ ոգերորությամբ, լավ է, որ երթանք ու հեռանանք այս-  
տեղեն: Մինչև հիմա չէի ըսած, Զարի՛, թե շենք կրնար այս-  
տեղ մնալ և ամուսնանալ: Ես որբ տղա եմ, բայց վրաս հա-  
զար խոսող ունիմ: Երկու շաբաթե ի վեր Վանեքը գլխուս  
կրակ կը մաղե, որովհետև մուսիլման աղջիկ պիտի առնեմ:  
Աննան, է՛..., նույնիսկ Աննան, որ այնչափ կը սիրեր քեզ,  
հիմա կը ծամե ուրիշի բերնով, թե մեղք է ըրածս, ուրացու-  
թյուն է, պարսիկները կը լսեն ու Վանեքի գլխուն ձյուն կու-  
գա...

— Վանեքցիները գիտեն, որ մենք պարսիկ չենք, գոչեց  
Զարի, ձայնը դողահար և աշքերը լեցված, գիտե Աննան աւ,  
որ արմանիներու նիքահով պիտի կապվինք: Ի՞նչ կը խառ-  
նվին, Հայրս հավանելին ետք...

— Կ'երթանք Լորիստան, վճռեց Համո: Եկեր էի Ար-  
տեշիր Խանին ըսել, որ մենք պետք է ուրիշ տեղ երթանք,  
Զարի՛, տեղ մը, ուր մեզ ճանշող ու հալածող շումենանք,  
ուր կրնանք ամուսնանալ և ազատ ապրիլ: Որոշած էի Խս-

ֆահան քաղաքը, ուր կրնամ գործ ճարել, կամ Արազ, հայ գյուղացիներու մոտ: Բայց, եթե Լորիստան վերադառնաք, ավելի լավ, ես ալ Լորիստան կուպամ ձեզ հետ...

— Հայրս նորին մեծ խան կը գառնա, Համոի բերնեն խոսքը խեց քրդուհին հետզհետե ոգևորվելով, կը տիրանա շողերուն և հարստության: Մենք ալ կ'ունենանք մեր զալան ու ուզներ, մեր ծառաներն ու դոլամները, մեր ձիերն ու գենքը: Կը հեծնենք ու կ'որսանք ամին օր: Եթե թշնամիին դիմ կովի երթաս, զիս հետդ կը տանիս, Համո՛, ինչպես մայրս ալ շատ անգամ կոված է Հորս կողքին...

Սիրահար զույգը, անփործ ու պարզհոգի և արդեն Հարբած երջանիկ կյանքի մը հեռանկարով, կը շարունակեր նոր երազներ հյուսել, մեկը մյուսեն գունավառ, նման իրենց զլխում կամարվող ծիածաններուն:

— Միայն թե, առարկեց հանկարծ Համո, որուն մեջ զյուղացիի կասկածամտությունը բոլորովին չէր քնացած, միայն թե այդ միրախորը ետ շդառնա խոսքեն: 'Է՛՛, Զարի՛, թէհրանցիները չես ճանշար. ի՛նչ պարծենկոտ են ու ցուցամոլ: Ո՞վ գիտե, թերեւ միրախոր ալ չէր և ուզեց քթիդ խնդալ, կամ քեզ շլացնել:

— Ո՞ւ, ընդմիջեց Զարի վիրավորված, ո՞ւ վստահ եմ, որ զիս շխարեց: Իրեն պես մեծ խան մը ի՛նչ պետք ուներ ինձի պարծենալու, կամ իմ ներկայությանս միրզացին պատվիրելու, որ վազը զա և Հորս հետ տեսնի: Ո՞ւ, սուս խոսող մարդ չէր...

Իր գերագույն վիաստ, Զարի թիկնոցի ծալքերեն դուրս բերավ պալատականեն ընդունած ոսկին և Համոին ցոռց տակ առաջ, հիացիկ ակնարկ մը նետեց վրա:

— Տե՛ս, Համո՛...

Բայց մեկեն լոեց, կարծես թուքը բերնին մեջ շորցած էր:

— Ի՞նչ կա, Զարի՛, հետաքրքրվեցավ տղան:

— Նայե՛ անգամ մը սա պատկերին, կրցավ վերշապես վրա բերել աղջիկը, նայե՛, զրադացք եկող մարդուն կը նմա-

նի, ահա իր կախու ու երկար պեխերը, ահա նույն աշքերը, նույն կզակը: Ինչպէ՞ս կրնա ըլլալ... այս մարդը Շահնշահին միրխորն է...

— Շահնշահը ի՞նքն է, հայտարարեց Համո, ոսկին քննելե ետք, Նասրետտին Շահը, ի՞նքը: Վստա՞հ ես, այս մա՞րդն է, որուն հետ խոսեցար:

Քրողութին չկրցավ՝ ոչ իսկ պատասխանել. շվարած էր. ապշահար, զգեստնված: Այնքան վստահ էր ըստին: Ուրեմն խոսեր էր Շահնշահին հետ... Ես խոսած էի հիմար-հիմար, կարծես պարզ մահկանացուի մը հետ, նույնիսկ գանգստեալ լով անոր անիրավ դատաստանեն...

Սարսափով համակված էր լոր աղջիկը, ինչպես մեկը, որ խոշոր վտանգե մը անցնելե ետք միայն կը կրե անոր հակագործությունը, կամ ինչպես մեկը որ, արտակարգ ու հանկարծական բախտավորության մը առջև, փոխանակ ուրախանալու, կը համակվի անձկությամբ:

— Երեխա՞ ես, Զարի՛, ապահովուց Համո, թեև ինքն ալ կրած ըլլար, հոգ չեր, թե վայրկյան մը, նույն հուզումը, ի՞նչ կա իրար անցնելու, եթե Շահը քեզի գեմ նեղանար, այդ ձեռով կը վարվեր, նվե՞ր կուտար, կ'ըսե՞ր, թե Արտեշիր Խանի դատը պիտի կարգադրի: Կը տեսնես, Զարի՛, պիտի հարգե խոստումն ու ամենքս պիտի հեռանանք այս տեղն:

Ճիշտ այդ պահուն, իրիկվան արևը զարկալ Սարապ-նունութարի խոռոչին, զայն վերածելով դյութական պալատի մը: Անոր լերկ ապառաժները մեկ անգամեն փոխվեցան ձույլ ոսկի պատերու, և բարձունքն, ջրվեժին փրփրոտ ջուրերուն տեղը, կածկուող աղամանդներու տարափ մը սկսակ տեղալ Զարի՛ և Համոի վրա: Ծիածաններ, նման հազարագույն հսկա թիթեռնիկներու, կը պարեին անոնց շուրջը, նունութարներ կը լվացվեին լճակին բոսոր ջուրերուն մեջ և Տամավենտի վայրի աղջիկը, ինչպես հեքիաթներու կախարդող իշխանութին, կը ժպտեր, երազող աշքերը հառած, լեռնական տղեն հեռու, շատ հեռու, անորոշ կետի մը, ջրվեժին ադամանդյա տարափին մեջ...

...մէ քտիզվ տմբուց զգնմո մսմբուկ  
 :մովազիտ զորթունդն  
 -յո զվշտնդչտշ յազտիոց զգմի ող մս նսթ յա գմտց ժորտի  
 -մդ սպուշ իտու գ մզչմտնտմդի լոտալ մվնզտմդ —  
 յշամզյոց մսւսմ զվմոռ մախտմցմոյ իտնդիտունչ կտրտան  
 -տն մզչմտմ մս մեմդ կոզվմօվը ղիւսդ լզնդսց մրվդո դ  
 յոդստն մէ քտոկո խոշտմնպի հառ մմտժոդտկմդ գդտնմդ  
 :նզմո ձզտկոյ յա իտնու մմզմէտ գմտիզոց մզդան մէ զվո  
 -տմդ ժուզտն մմդ կիվունմդ յա տմտեզոց ալվր զդիւսդ

Նու ևստոմիտնու դ մը շուն տմի մզր մզգձվի մցութիւն  
մմզ գմզոմքոց ևսպտու ամզգոցովու թողոքու պկզզիզ  
վտփու պզմո մը վզու դ զը զվժունու մզր զվի ամգմանց»  
լու դժուկմզ զգեցոցու տրտեսու մտեսու զմոնզ մվլվց  
«ամգիզմ բվ կով մէ վիմմու իվո որտկզմու նոց մսկոց  
տղիուոյովչ զվուր զումզովիու նմուհուածու զրզմակ զուկ  
ամսիսո զմժունի վիտու զումիկմզր դ դումզգիտացթիւնց  
զնանամազ եվկունու և զտկոտգիսո քոյիչու տմի ամգա  
շունարկու մզգոսոս մէ մզր քոյեցու մը զամկցու  
տմի զութիւնցմու հաչու դ զութիւնցմու պի  
դրսենանս ուս լցեց քունսուց մէշ յունեց զմղիտու թեղը  
պղզըրտ դումզգրուսոս և զվժունուսու մսիցտ քոզք  
մի զումզովմիուցմ մի տոցու և լվմզիտ մբնումզ  
տի իրսմզգմմմ վլուքու և իրսմզկց պումու զրզմակ զվուկ  
տուտի մէ և զվենիտոսոս մէ զստովտկմն յուկ իրսնուողի  
մզմաս առց ամգիկմնու քոնումզ յուկ զառոց շունարց  
«մզգմոուիտու դ մզգմսիզմի ոգետուզիտու — «մբութիւնիու  
ամգինսնուենմ զվի քոյիսով մմզթթու զութիւնսոս շվճ  
շունուց և նզմն ամգիկիդիտնու իւլզմիտմ մմզզնմսնու  
զուրու ամգմնու կունումն վմումթվի զվզմու մէ մզոցս  
զրնոսոզ ձզր զբնսնսու իւլզսու մը դումթիստքմու թմուն  
զմգոսոց մէ մզունու տնունու և զմեզն Շուզուկ մվու  
մուկ զմգովկուուն ամգովիու պուտ մը վճմուրու պուկ  
սու զգեզու ամումի մզգնուվր մէ մմզմուիտու մքոցի  
վմուիտու ևսլու զգմզնսու ակդու մսզտ դ զցզց զվժունու  
մզմուկմզ զտասնսու զմու մուի զմժուկմզ մզինուց մէ մը  
զրսթիւսկու ևսուր զվիուուզու դ մէ սկդու թմուն

## ՅՊՂԿՎՑՈՒ ՎՃՂԿՍՑՅՈ

Չիկներուն զինչ, կամ հրացրուս ծիծաղը կը հնչեր Հեզ, կամ փրփրավագ առումներուն կարկաշին նման՝ կարծես արկածով մեր խորհուրդներն ու բառերը կը նետվեին իրենց հեռավոր տուներուն, որոնց խռովիչ կարուտները, տրտում ստվերներու վերածված՝ կը կախվեին անոնց տակավին ժապտող աշքերուն վրա և բերաններուն շուրջ:

— Կը խնդրեմ որ, ըստ նման վայրկյանի մը, ինծի պատիվ ընեք և թուզ տաք այս իրիկուն ձեր Հյուրընկալն ըլլամ. եթե կուգեք՝ նախ շարժանկարի մը կերթանք և հետո...

— Օ՛, չէ՛, ընդմիջեց հիսնապեա Յակոբ, մենք զորանոցին մեջ բավական ժապավեններ կը տեսնենք. երբեմն կը ձանձրանանք ալ. Հիմա ավելի լավ է, որ տեղ մը նստինք և քիչ մը խոսինք: Դո՞ւն ի՞նչ կը սես, Ֆի՛լ:

— Ես ալ այդպես կը խորհիմ, հարեց անոր ամերիկացի զինակիցը. մանավանդ, որ ժամը 10-ին որոշ դուռ մը ինծի պիտի սպասի: Ազգոր ազշիկ մը կա հոն, որ խոստացած է Հայրենասիրաբար զիս միսիթարել, Հիմա՞րը, ինչպես կրնամ մերժել զինք: Բայց դեռ ժամ ու կես կրնանք միսասինցնել: Հոս մտնե՞նք:

Սեղանի մը շուրջ և գարեջուրի երեք բաժակներու առջև նստած՝ մենք խոսեցանք զվարիթ ու լուրջ նյութերու մասին, մինչեւ որ հասանք վրդումիշ, երկյուղալի հարցումին: — Ժողովուրդներու և անհատներու քաղաքական ազատության ու անտեսական ապահովության համար մզկող այս ահոելի պատերազմը բրեական վատնում մը պիտի գտնա զարձյալ, թե ազգերու վարիչները այսքան կործանումն և փճացումն, այսքան արյունն ու տառապանքն հետո, պիտի հաջողին իրագործել այս սքանչելի կորուտներուն նպատակը, անոնց կրկնումը արգիլելով: Այսինքն՝ ճշմարիտ ազատությունը և արգարությունը, իրական եղբայրությունն ու հավասարությունը պիտի իշխե՞ն ազգերու և ցեղերու հարաբերությանց մեջ: Ու գտանք, որ մեր վստահությունը կը հիմնվեր ժողովուրդներու խորքով աղնիվ, խաղաղաւոր և ուղղամիտ խառնվածքին և իրենց սխալներն ուղղելու, իրենց

նկարագիրը աղարտող ատելության, կամ նախապաշարումի արատները սրբելու, այսինքն կատարյալին ձգտելու և դիմելու անոնց ընդունակության վրա:

Մեր այս եզրակացության իրեն զորավիր ապացուց էր, որ Ֆիլիք Ճեփսը պատմեց իրեն պատահած դիպք մը: Արտասովոր, կամ զգայացնեց ովինչ կը պարունակեր ան: Բայց Հակառակ անկե ի վեր ամիսներ անցած ըլլալուն՝ այդ մանրադեպը կառչած կը մնա հիշողությանս և հաճախ, իր մեջմ ու լուս գծերուն վճիռ ու սրտահուց շերմությամբ կը տաքցնե զիս:



Ֆիլիք Ճեփսըն ծնած ու մեծցած էր Ալապամա նահանգին մեջ: Իր ճանցած աշխարհին ամենալայն հորիզոնները՝ ծննդավայր ավանին արվարձաններեն անդին շէին անցեր երբեք: Անոր սահմաններեն դուրս գտնվող վայրերն իրեն ծանոթ և սիրելի էին քանի մը անուններ, որոնք Ճեփիաթներու հմացքով պարուրված՝ անմատչելի ու խորհրդավոր կ'երեսնեն միշտ: Հալիվուար առասպելական սրբավայրն էր, կիսաստվածներու և դիցուհիներու աստեղախոսմբով, որոնց մեջ Մերի Բերքորտ, Զարլի Չերլին, Թամ Միքս և ուրիշներ՝ իր մանկության տարիներու կուռքերն Փողեր էին: Զերմ մտերմություն մը կը զգար նաև այն քաղաքներուն ճետ, նիվ մտերմություն մը կը զգար նաև այն քաղաքներուն ճետ, նիվ Յորքին մինչև Շիկագո, Սիյնթ Լուիս և Լոս Անձելըս, որոնց Յորքին մինչև Մանհետեն գույքը կ'ամբավված խումբերով կը մասնակցեին ախոյանության մրցախաղերուն և իրենց հազարակները կը տարփողվեին լրագիրներու ճակատներուն վրա, չեն մինձր խորագիրներով: Մնացյալ անունները, Սիեթըլեն մինթանձր խորագիրներով: Մնացյալ անունները, Սիեթըլեն մինթանձր ամպին նույնիսկ մեկ ծվենին ստվերեն, անոնց մեջ բարձրացող բոցերու ճարճատին և ցավի հորձանքին ժիմ:

Սակայն զորականներու մեջ իր ապրած յոթը ամբանքը հատյնորեն բարեշրջած էին Ֆիլիբի ըմբռնումները: Ան կը սկսեր փնտռել և սիրել ուրիշ նահանգներե եկած դիմակիցներ և զարմանքով կը նկատեր, թե անոնց և հարավի միջև տարբերությունը բարի և շարի, լույսի և խավարի անհաջա հատկանիշները չոնքեր, ինչպես սորվեցուցեր էին իրեն պըդտիկուց: Ան նաև կը սկսեր հետաքրքրությամբ ու համակրանքով խոսիլ Ռուսներուն, Զինացիներուն, Հուգներուն, Յուկուլավներուն և ուրիշ Դաշնակից ազգերու մասին՝ որոնց շուրջ իր ամբողջ ծանոթությունը քաղած էր շարժապատկերներեն, ուր անոնք կը ներկայացվեին թեթևամիտ, գավաղորդ, կամ շարագործ տիպարներով:

Համոզված հակաֆաշիստ զինվորներու հետ իր ընկերակցության շնորհիվ՝ ան տակավ կը ճանչնար նացիզմին էությունը, որպես աղբյուր ցեղացին ատելության, տկարները նվաճելու և կողոպտելու հարձակողական, մոլուցքին, աշխարհին հաղթելու և տիրապետելու ուրագարած ցնորսին: Ան կը սկսեր թափանցել ներկա պատերազմին իրական պատճառներուն, որոնք նախապես այնքան բարդ ու խորհրդավոր կը թվեին: Բայց իր գիտակցության վրա պատվաստված այդ նոր գաղափարներուն իմաստը լիովին ըմբռնեց, երբ 10 օրվան արձակուրդով իր ծննդավայր քաղաքն ու հայրենի տունը վերադարձավ, մոտ յոթ ամիս բացակայելե վերջ:

Շաբաթ երեկո մինչև ուշ ատեն զվարճացան ընտանեկան երշանիկ մթնոլորտի մը մեջ, նախ վայելելով մորը պատրաստած համել ու բազմազան կերակուրները, հետո երգելով, կատակելով ու պարելով: Հյուրանոցը և ճաշասենյակը լիցվեր էին ազգականներու և մոտավոր բարեկամներու բազմությամբ: Զավկին ուրախությունը կատարյալ գարձնելու մտածումով՝ Ֆիլիբի մայրը դրացի տուներեն երեք ընկեր զինվորներ ալ հրավիրած էր երեկույթին: Արգարև Ֆիլիբ չէր հիշեր, թե ավելի երանելի ժամեր ապրեր էր երբեկիցին: Անխառն հպարտությամբ և անհում հրճվանքով ան կը նայեր իր մանկության նշանածին, գեղեցիկ ու շնորհալի

Հովհանն, որ հավերժահարսի մը հմայք կը սփռեր հանգեսին վրա: Երջանկությունը երբեք այնքան մոռ, այնքան թանձրացած ու մատշելի էքը երկցած իրեն, որքան այդ եթեկու իրեն կը թվեր, թե կրնար ձեռքը նետել ու բռնել զայն ու տիրանալ անոր: Միայն պատերազմն էր, որ շարաջաւք ու դաժան պատվարի մը նման կը ցցվեր իր և այդ լուսեղեն երազին իրականացումին միշեւ:

Եվ կարծես արձագանգ տալով իր խորհուրդին՝ մայրը հառաջեց դառն շեշտով.

— Ա՞յս, անզգամ պատերազմ, ուրկից ալ վրանիս նետվեցավ այս հրեշը և իր սոսկալի ճանկերով մեզմե հափչտակեց մեր անմեղ զավակները....

— Է՛, այո՛, բարեկամնե՞րս, հանկարծ բարձրացավ եղկելի ձայն մը. մենք կ'ողբանք, որ այս սարսափելի պատերազմը մեր ընտանիքները կը քանդե և երկիրը պարտփի տակ խեղդել կը սպառնա, բայց անոր պատճառները չենք փնտուեր, որպեսզի արդիւել կարենանք մյուս անգամք Մենք չենք ուզեր հասկնալ, որ եթե Հրյաները իրենց դրամապաշտությամբ իրար շխառնեին աշխարհը, հիմա պատերազմ պիտի շոնենալինք և այսօր կրնայինք մեր սիրելի Ֆիլիրին և Մերի-Լուփիին ամուսնական հանդեսը կատարել, փոխանակ Հիթլերին և Թոճոյին դեմ կովելու և անսահման դրամ ու թանկագին արյուն վատնելու.... Հարկավ այլևս ստիպված ենք խորտակել անոնց ուժը, քանի որ մեզի դեմ ելան. բայց ես չեմ կրնար շնչահատել այն մեծ կոտորածը, որ Հիթլեր գործադրեց: Աստանկ դաս մըն ալ մենք մեր Հրյաներուն և նեկըրներուն տալու ենք, որ իրենց տեղը ճանշնան և Աստուծո կամքով օր մը կը տեսնենք այդ երջանիկ օրը:

Բնազրութեն, Ֆիլիր դարձուց նայվածքը և իր զինակիցներուն աշքերը փնտուեց: Անոնք կախեր էին իրենց գլուխները, կարծես ամշնալով շուրջերնին նայելու: Ֆիլիր ապշեցավ,

որ բոլոր խոսողները, ավելի մեղմ կամ խիստ բառերով հավանություն կը հայտնեին և դեմք ձայնին արտահայտած ժողովուն: Եվ չիրնալով զսպել իր խոռվը, ան գանդաղորեն ելավ ստրի, համբ ու տատամսոտ քայլերով մոռեցավ խոսակցող խմբակին և հազիվ զգաց, թե դառն բառերը կ'իջնացին շրթներեն.

— Ներեցեք, որ ձեզի հիշեցնեմ, սիրելի՝ բարեկամներ, թե Հեռ Կյոպելլը ուրախացնելու հանձնառություն չունինք մենք հոս: Ճշմարիտ, չեմ գիտեր, թե նացի փրտիկանտին թյունը ինչպես սպրդեր . է ձեր հոգիներեն ներս: Ատիկա իրապես մեծ գժբախտություն մքն է: Սակայն կը խընդորեմ, որ քիչ մը փափկանկատ ըլլաք և Հիթերի ոճիրները չարգարացնեք Ամերիկացի զինվորներու քով, որոնք կանչված են, որ կռվին և ի հարկին սպահնվին, ֆաշիստ ևդեռադուներու անհեծքը երկրի երեսեն սրբել մաքրելու համար:

Կատարյալ ցուրտ ու մեռելային լուսությունն մը կտիրեց սենյակին մեջ: Ճակատներ ու գանգեր նախ այրեցան քըրտինքի տաք կալակներն և Հետո մսեցան Ֆիլիբի խոսքերեն ծավալող սառնաշունչ Հովին Հպումնեն: Զարմանք ծամածունը էր գեմքերը, որոնց վրայն՝ սրտմառությամբ, զղզումի և բողոքի զգացումները կը սահեին մոռայլ ստվերներ ձգելով: Չսի ձեռքով ծոծրակը շինեւն և զլուխը խոնարհած՝ Ֆիլիբ վերագարձավ իր բաղկաթորին ու նստելով երեսը սեղմեց երկու ափերուն մեջ և մատոներով սկսավ ճմրթկել այտերն ու ճակատը:

Լուփ թեր նետեց անոր ուսին և շրթները գրեթե կը փայփայեին տղուն բերանը, երբ մրժնչեց.

— Բայց, սիրելիս, նեղվելու ի՞նչ կար որ...

Իսկ մայրը խոր վրդովում մը մատոնելով՝ զսպված խուճապով եկավ սենյակին կեդրոնը և խոսքը բոլորին ուղղելու ձեռվ ըսավ.

— Կը հուսամ, թե մեր հարգելի հյուրերը կը հասկնան Ֆիլիբիս ընթացքը: Խեղճ տղաս լոթք ամիս կ'ընե, որ տուն բաժնվեր է, և ո՛վ գիտե, թե ի՞նչ տեսակ ընկերներու

շետ ապրեր է և կ'երեի ատիկա մեր փափաքածեն տարբեր ազգեցություն ձգեր է իր վրա: Ատկե զատ ամենցոց տիկին ճեքսըն բռնի ծիծաղով մը, վախնամ թե տղաս շատ ուրախ ըլլալուն՝ կրցածեն քիչ մը ավելի խմեց այս իրիկուն և...

— Բայց, մայրիկ, ի՞նչ պետք կա իմ կողմեն ներուղություն խնդրելու, արդյոք հանցանք մը գործեցի Հիթերի դեմ խոսելով, հարեց Ֆիլիք Հուզումեն թրթացող տիսոր ձայնով մը:

— Տղա՛ս, քեորդ Պիլն էր, որ կը խոսեր:

— Լա՛վ, ի՞նչ կ'ըլլա, ու Ֆիլիք կանգնեցավ ոտքի ենի ընդըլ Ովկիլըմզը վշտացավ խոսքերես՝ կը ցավիմ: Բայց դարձյալ կ'ըսեմ, թե մեզի ներելի չէ այդ տեսակ մտածումներ ունենալ այլու: Մենք առանց գիտնալու՝ Հիթերի և Կյոպելզի կը ծառայինք, անոնց հաղթանակին կ'օգնենք, եթք կը խոսինք հրյաներու նեկրներու կամ ուրիշ փոքրամասնությանց դեմ: Զե՞նք ուզեր հասկնալ, գոնե մեր ապագային սիրուցն, թե այս պատերազմը ինչո՞ւ և ինչպե՞ս սկսավ: Հապոնացիք, իտալացիք և գերմանացիք ցանկացին խոշոր կայսրություններ հիմնել, որպեսզի ուրիշ երկիրներու հարստությունները հափշտակելով յուրացնեին, փոխանակ ըրստությունները համար՝ պետք էր բռնակալ կառավարությունները: Հաստատեն և չնշեին ժողովուրդներուն ազատությունները: Եվ այդպես ալ ըրին, բանտարկելով, աքսորելով և սպանելով ընդդմադիր պետքը և լուծելով բոլոր համկախարական կազմակերպությունները, անոնք ըլլային քաղաքական, գործավորական կամ մշակութային: Եվ այն ատեն ճաքոնցիք ըսին՝ կը փափաքինք զարգացնել շինացիները: Իտալացիք հայտարարեցին թե՝ պետք է հաղախակրենի եթովպիացիները: Գերմաններ պոռացին, թե նոր կարգեռու բարիքներ կը բազմանք բաշխել Եվրոպային: Եվ անոնք ազգերու և ցեղերու միջն նախապաշտում և ատելություն գրգռեցին; մեղերու միջն նախապաշտում և ատելություն գրգռեցին; մեղերու մյուսին գեմ լարեցին, իրարմե բաժնեցին ու տկարացուելու

մոխ ճգի զտժոհու կ ժտգիր շալով առմի դասդդատակ  
առց զտնդիլան մբարթուսմիւնչը զտրոյ դասմդդդվմզր ո զի՞ն  
մշոտպամեց փուն վեզը ողիշ ձուծ փուն վեզը ժղսու ժտնատ  
վեզն զզբու ո մզոմմիկու մզոմմաց ժղունչուց ճգր զփիտզուց  
միտտավէ յուղլըտէի տրվչ նրանք մվլիկ նդիտամու վզչ  
մսոյ մի ողեւ նղսոյտ ծտսու լու ոդ մս մտդամու բդե —

ողիուր զվչզի զտիմդնիք  
ամսոյտաց խողենետոսոյ զտմբրոց զվնուն վեզնդիկ տղչ գրան  
զզմքուտողմ նղզմկ մմզնմսինզին ոմսէ տսիտսու նմսձուշ

\*\*\*

....զզնումնունք մտմսևոյթը զվիտնզդու մք խսնմք ըմտին  
մս զղնիւսի ըցմնոյլ մի իրուն ....մմզզուն ոնտ զիիթ մի  
վլուտայիւչու վեզչ ուղմզք մմ վլույլու մտրոց ովմսուն ողոն  
վտվին մք ժոխսքն դու ո վլզուցու մք տղուն զտրնուզմնիքի  
վլուտասունու ո տկուց մմվիմդ քտատկիզ ցամթիւնունմու շամզդ  
հետքմզք ոնտ մզչ զվտու ոմզի Ճգր վամթիկվլուց ոդ մզրենու  
մմզզլուկենդա վբատիկմզքու նղսոյտ բուկ ացնց բուկ մղլիվչ  
մս մղզզոսպտ վտվին ժղունք ոմտսն ձևս խսժնունց զթզ ուփի  
մզմօ քուկ ոմտսն զգմուսումինեն զվմմզզ ոնտ մզմլ մնեզտ ժղուոր  
մի լուկ իրուն ....ժկմտուզը մմզոյնաց մմզզվմվլիքի ժկն  
տկիվունդզը ժկմտունու մմզչզը ժկմտունու մմզիւնուն ժղզդ  
նուցփի գտցնեադչ ո ժղզգմսենումտոր մմզդկվլութու զավլիք  
զը ունու մմզզմիզ զավլիք ըւ ժղզգնունցու ստցչ ժղզդչ  
մմզզունց զավլիք նղի ուու ժղզզու ժղզզ ո եղր ստցչ լղիտս  
տի խսղնաց զգտուտկիսմի նղզմկ զմնսօնոց նղենունի ո մզ  
ժկն զթզ ումիմ զվմկմդ կվզունմզ ո կվնդնզե ոնտ մզր զչտտուն  
վտվին զթզ ումիմ ուղի լուկ նկիտունուն նղզմկ զտնդչուն  
միտտաց մմբրուն ո մց ումթիւնմլ տղվիսու մս սգրատոր  
ուուս ժնուտի նսթ լու մզզնմսիսնսք նսնուց տտես զպուցչուս  
տի շամզդկունու տովլուց մղսուն զվնդամնին մտմունսծուց  
ոյ զտնդկունու մտմունուտի ստցչ ո մմզչսն նղզմկ ումին

ւամդղտնուզմութ կտրվես

պմովք քոլիցտեռումզի ՝զգուց լունեաց վվեցնգիզ մէ քոն  
տառձու մը խնենցի նոյ մս ՝մեմոկ նմազեղվչ դշուց պամ  
զգումտառոց փառա լգքոքմսն զվբուզմի մզոյ զթ ՝մզմուստչ  
մէ մս Կմը մկնառնետ խսդստա մանսոյ նուսմոկ տմի զվու  
տեռ ւ մժվամսնան նուչմուն մժքուի հումիսը զվեսթն նմի  
քումտա մնմուն դ նուզմզմի մը դու քուինսար ոդքմոկ ՚իտուտ  
եզուկ քմուկոց նում ՝մը զումտառոց նումտա վիուի խոնուծ  
տստ զզմսմբաց ՝վեցնգիզ խտար զզմսնան մը մախովն ժմսար  
տոյը ։ զզր զութիւն քունունկմզ նուզնոյ մմոցտա մժնուտնոչ  
մուկ մժմուն նուզը զվիսիսչ դ մէ քուկո մժցույտունտնու

իսլուզգուա զցուացուկզմութ զվրնսկ տանց դ մմուր զվինսակ  
կոյք մէ մախովն զզրտ ՚տմի շամզզումտառոց տակմզ զունզի  
մախունզա ժզուզը ։ զզնմու զվզուար մէ զզուն վվեցնգիզ

րուսու

զուունտ ՚յուստմմութ ամզդղզմօ քուիտտուոոց զուկուսմութ  
րուսեակցսն ՝ըրուսնում զցամզզուսթիւսնզուտ մմուռ վլունի  
զու... ։ Նուկ դ մզգուուտտուու մէ մզուրուեու վզորմու զուբի  
շամզկզմ զուկուիուտ դ մչմուր ՚նուզու մզուուր զումբուսկում  
տվառուն դ յուսուս ՝մժունս մզր ժզզնքզը մէ խսդզուսթիւս  
զմոցսն Շուկ ։ մժզնենսան զվիսուտտուու ամզզվմուա մզր  
զունչպի մէ տոյուտ մս ՝ըրեսմզտուու ու վիքվզը ։

մզուուր մէ յուսմիւուուչ դ զիկոկ  
մսոյ մս ՝մզունք մաչ վմկլվզ խոնզբունու քմուկոց դազցիսմս  
զմուն զիսնզ զցուազ զվզոսոյ մէ զզմսնանչ դ խամզուկու  
տեռ մզուուր նուզմզ մմզնսոչ զվմունսկ զզուազ նուզը

։ մմումտ տենմուր իմզես

դ վիսմսկ զվզուուկ մէ մս ՝ովմմութզմ վմկլվզ զվզիսաբոչ  
մէ զմուքրոց որբչ սկզմզ նմայուդ ՚իբուտաշտումտ քուկ  
տոչմուրոց զվիզ մունչ ոզիուս մզուս ՝մմզնիմուզի մզ  
զուունտուսնեստկ մէ կուստկոց մաստ մժցույտուում  
դի մզր զզս ։ մզզ զցուետիու յուկ ժզզ մզմմուա զբնուսու  
ի սուզ ժզզ զթ ։ ոզոզտ մոյմէ բզ ոզ ։ ազչ նուզու ժումի

Նեկըր զինվորը վարանեցավ պահ մը: ան նախ նայեցավ սեերու բաժնին, որ զրավված էր ամբողջովին և քանի՛ մի հոգիներ ալ դեռ ոտքի մնացեր էին: Հետո նայեցավ ճերմակներու նստարաններուն, ուր բավական պարապ տեղեր կային: Եվ աչքերը բնագդորեն ինկան քովի վրդովմունք ու զայրույթ արտահայտող գիմքերուն. ակնարկը կրկին հառեց պատի ազդին, դառն հենանք մը ծամածովեցավ բերնին շորջ և դանդաղ քայլերով դարձավ ու զնաց կանգնեցավ աներուցիթ, բայց անանցանելի վանդակորմին ետև:

Խոսվեր հանդարտեցավ ու փափուրքը մարեցավ եկեղեցին մեջ: Հոմիվը կը շարունակեր իր սրուաշույզ քարոզը. — «Եվ ըսավ Հիսուս Քրիստոս մեր Տերը, — եկե՛ք ինձի, ո՞վ հոգնած ու վաստակաբեկ Հոգիներ, և ես հանդիսատ ու խաղաղություն պիտի տամ ձեզի, և թշվառնե՞րը, և գերինե՞րը, և հիվանդնե՞րը, և ախտավորնե՞րը, և հարստահարվածնե՞րը վազեցին դեպի...» Ֆիլիք գլուխը շրջեց ետ ու նայեցավ նեկըր զինվորին: Բարձրահասակ ու բարեկազմ տղա մըն էր ան, բաց պղնձագույն մորթով, զիսախորիվ մազերով, թանձր շրթներով և պայծառ ու թախծոտ աչքերով: Անոր կուրծքին քանի մը շքանշաններ կ'երենին և թերին վրա հիսնապետի երիզներ կը կրեր: Անոր ձախ բազուկը վիրակապով կախված էր զեկն: Ֆիլիք գլուխի թեթև շարժումով մը զայն հրավիրեց առաջ, բաց տեղ մը ցուց տալով: Մեղմ ու մոռալ ժպիտ մը ուրվագծվեցավ սեամորթ զինվորի գեմքին վրա, երբ ան ակնարկը նշանակի սեենեց պատի ազդագրին:

Ֆիլիք այլևս չկրցավ հետեկի պաշտամունքին: Ան զգաց, թե բողոքի, վշտի և բարկության խառն հորձանք մը կ'ուռեր սրտին մեջ: Զայն մը, հատու շեղբի մը նման, երեցավ ու պատոեց խիղճը և ճշաց անոր, թե ինք ալ իրավունք չուներ նստած մնալու, քանի որ իր զինակիցը, որ ռազմադաշտեն վերապարձեր էր պատվանշաններով ու վիրավոր՝ կը դատապարտվեր ոտքի կանգնելու: Եվ ելավ ֆիլիք: Մայրը անոր ձեռքեն քաշեց վար ու շշանցաց ականշին.

— Տղա՛ս, նստած ալ կրնաս աղոթել, պիտի հոգնիս...

— Ինչո՞ւ ուրեմն այն նեկըր զինվորը ոտքի կը կենար երբ ասդին շատ մը պարապ աթոռներ կան:

— Ասիկա՞... Բայց դուն, գտտես թե կանոնի հակառակ է, որ անոնք ճերմակներու զծեն անցնին... կը խնդրեմ, նըստե, զավա՞կս, բոլորը մեզի կը նային, ամոթ է...:

— Կ'ուզեմ ոտքի մնալ... կ'ուզեմ, որ այդ ճեթանոս կանոնը դնողները օրենք մըն ալ շինեն և անով փորձեն ստիպել ինձի, որ նստիմ... Ֆիլիքի ձայնը կը թրթուար անշամբեր դոզով մը:

Քանի մը վայրկյանեն, մյուս երեք զինվորներն ալ, իրենց ընկերոց հետևելով՝ իրարու ետևե կանգնեցան ոտքի: Հիմա չորս համազգեստավլորներ էին, հասակնին ուղղաձիգ, ապրուտամբ դեմքերնին գեպի ամպիոնը, կանգներ էին լուս իւ հպարտ, որպես մարմնացած ընդլուռմ ամոթալի անարդարության մը դեմ: Հանցավոր խոռվք մը կը ճնշեր հովիմն ու հուրը: Ազորքի խաղաղության տեղ՝ վրդովման անհանգությունը կը տիրեր եկեղեցին մեջ: Եվ զինվորները հատակորեն կը տեսնեին ատիկա: Եվ կը զգային, թե այդ բողոքի ցույցով կը վշտացնեին իրենց սիրելիներն ու հարազատները, որոնց հանդեպ անհուն կարութը դեռ մինչև երեկ կը տանջեր դիրենք և որոնցմե պիտի հեռանային դարձյալ քանի մը օրեն:

Սակայն գիտեին նույնպես, թե այդ նեկըր զինվորը, որ պատժվեր այսքան անողոքորեն, որովհետև Աստված կը պատժվեր այսքան անողոքորեն, որովհետև Աստվածավելի մութ ներկեր էր անոր մորթը՝ կը կրեր իրենց համազգեստը: Կը տեսնեին, թե կովկեր էր հայրենիքի հասարակաց թշնամիին գեմ, ուամկավարության հաղթանակին՝ այսինքն ազատության և համասարության համար և ան վիրավորվեր ու վարձատրվեր էր քաջության շքանշաններով: Ան հոժարեր էր իր կյանքը զոհել երկրին ու ժողովուրդին երշանկության համար, բայց ահա այդ երկիրն ու ժողովուրդը չէին զիշեր աթոռ մը շնորհել անոր, իրենց քով, հանրակառին կամ թատրոնին, նույնիսկ եկեղեցին մեջ:

Մինչև պաշտամունքին ավարտիլը չնստան անոնք: Եվ

փափկանկատ հովիվը իր հոտին հոգեկան շարշարանքը շեր-  
կարաձգելու համար՝ սովորականնեն կարճ ըրավ իր քարոզը  
և աղոթքները: Կանոնը կը պահանջեր, որ նախ ճերմակները  
ելեին եկեղեցին դուրս և սևամորթները հետեւին  
անոնց: Երբ Ֆիլիք և իր երեք ընկերները հասան նեկըր հիս-  
ուայետին առջև՝ զինվորական ակնածալի բարեով ողջունեցին  
զայն, ապշանքի մատնելով դիտողները, որոնք դիտեին, թե  
զինվորակոն բարե կը տրվեր միայն տեղակալի բարձր աստի-  
ճանավորներուն: Ոչ մեկ բառ փոխանակեցին անոնք: Բայց  
ակնթարթի մը մեջ, անոնց աշքերը իրենց խորհուրդներուն,  
իրենց զգացումներուն ու մղելիք պայքարին զինչ ու խորունկ  
իմաստը հաղորդեցին իրարու: Ֆիլիք և ընկերները անցան,  
կոկորդնին հուպումե բռնված, սևամորթ հիսնապետին թար-  
թիշներուն վրա նշմարելով արցունքի երկու վճիտ կաթիլներ,  
որոնք կարծես կը քողարկեին անոր աշքերուն մեջ խաղացող  
գոհունակությունն ու Հրճվանքը, որ ինք ի զուր շէր կոված...:

Օ Զ Ը

Ա.

Պալքանյան պատերազմը եթե մեկ օր առաջ վերջացած ըլլար՝ Թաթուլ Վահանյան առողջ և անվնաս պիտի վերադառնար իր սիրելիներուն մոտ:

Այս, եթե մեկ օր առաջ վերջացած ըլլար:

Սակայն ուղղմաճակատի վրա վայրկյաններ—ուր մնաց օրեր—հզի հն շարադես գետքերով. ինչպես որ այդ ճակատագրական օրը, պայթող ուստի մը կտորները խորտակեցին հայ հերոսի աջ սրումքը, այդպես վերջ տալով անոր մարտական խոյանքին:

Բարեբախտաբար թշնամին կը նահանջեր:

Հազիվ թե դաշտը պարպված էր կովողներե, Կարմիր Մահիկի պաշտոնյաններ Թաթուլի արյունաթաթախ մարմինը դրին պատգարակի մը մեջ և փոխադրեցին զինվորական հիվանդանոցը:

Ասիկա վրաներու խումբ մըն էր, կառուցված կովադաշտի թիկունքը: Յուրաքանչյուր վրանի մեջ պառկած էին տասնյակ մը վիրավոր զինվորներ: Վերքի բնույթին համաձայն՝ դարմանում տեղի կունենար վարժ հիվանդապահուհիներու կամ մասնագետ բժիշկներու կողմեն: Թաթուլի վերքը կը կարոտեր այս վերջիններու խնամքին, ուստի երկար սպասումն մը ետք՝ ան փոխադրվեցավ վիրաբուժական վրանը և դըրվեցավ գործողության սեղանին վրա:

Թաթուլը հանկարծ ցավագին ճիշ մը արձակելով սթափեցավ խոր թմբիրեն, զոր իրեն պատճառած էր սաստիկ ա-

բյունահոսությունը։ Նվազում աշքերը համրորեն պտտցուց շուրջը։ Տեսավ, որ մողական հարվածով ճակատի թռհ ու բոհեն փոխադրված էր հիվանդանոցի վրան մը, և հիմա սպիտակագեստ երիտասարդ կին մը կը քակեր սրունքին փաթթված նախնական վիրակապերը, մինչ բարի դեմքով բժիշկ մը կը հարցներ իրեն։

— Հա՞յ ես դոմ։

Վիրավորը իր մայրենի լեզուն լսելով՝ հոգեկան անդորրություն մը զգաց։

— Այո, շշնչաց ակուներու միշեն։ Ինչպե՞ս գուշակեցիք։

— Երբ հիվանդապահուհին ակամացավոց վերքո, քունիդ մեջ «Ա՛խ, մայրի՛կ» գոշեցիր, պատասխանեց բժիշկը գորովագին։

— Հիրավի կը ցավի վերքո, թոթովեց վիրավորը վշտահեղձ, ինչպե՞ս է վիճակս։

— Ուսմբի բազմաթիվ կտորներ միսրճած են բումբիդ մեջ՝ միենույն ատեն խորտակելով սրունքի ոսկորդ, ըսակ բժիշկը. բայց պետք չունիս մտահոգվելու, երկու շաբաթեն կառողացնեմ քեզ։

— Ծնորհակալ եմ, պր. բժիշկ, մրմնչեց թաթուլ։ Եկ որովհետև ուժասպառ էր՝ թաղվեցավ անզգայության մեջ։

Տք. Գաբրիելյան պահ մը կարեկցությամբ դիտեց վիրավոր երիտասարդը, որ դատելով երևութեն հազիվ 22 տարեկան, բարեկիրթ և զարգացած մեկը կը թվեր։ Այժմ թմրեցուցիչի ազդեցության տակ անխռով կը քնանար ան, վըստահ, թե իր ապաքինման գործը հանձնած էր ազգակից բժիշկի մը հոգատարության։

Ավելի քան կես ժամ աշխատեցավ Գաբրիելյան սրունքի դնդղուցներու մեջեն մետաղի կտորներ հանելով։ Տակավին գործին կեսը չէր լրացուցած, երբ վրա եկավ հիվանդանոցի վիրաբուժապետը զնդապետ Հաֆքը պեյ։

Հաֆքը պեյը հապճեպ ակնարկ մը նետեց վիրավորյալի

Հաշմված սրումքին վրա, ու խոսքը ուղղելով վիրաբուժին  
հարցուց.

— Ի՞նչ ազգ է:

— Հայ է, պր. բժշկապետ:

— Զեր ժամավաճառ ըլլալեն կուահեցի այդպիս ըլլալը,  
դիտել տվավ գնդապետը շնականորեն.—ապա կծու շեշտով  
մը.—Գաբրիելյան էֆենտի, զինվորականության մեջ ազգա-  
սիրական զգացումների պետք չէ տարվիլ:

— Կը ներեք, Հայ' քքը պեց, ըսավ Հայ բժիշկը ակնա-  
ծալիր, ևս իմ պարտականությունս կը կատարեմ ո՛չ թե որ-  
պիս Հայ, այլ՝ դիտության մարդ: Պարզ զուգադիպությամբ  
էր այս երիտասարդին խնամքը հանձնվեցավ ինձի: Ասոր  
Հետ մեկտեղ ի՞նչ է տարբերությունը, թե ան Հայ է կամ  
թուրք: Չէ՞ մի որ պետության զինվոր է և իր պարտականու-  
թյան մեջ վիրավորված:

Տք. Գաբրիելյանի այս խոսքերը շառաչուն ապտակի  
պես իշան ժյու թուրքի երեսին: Այսուհանդերձ դիվային  
ժպիտով մը խնդաց ան և ըսավ.

— Կը ցավիմ, որ սխալ Հասկցուցի միտքս: Այսինքն  
ըսել կուզեմ, թե անդին ունինք յոթանասունի շափ վիրավո-  
րյաներ, որոնք անմիշական օգնության կը կարոտին: Որ-  
քան ալ բարդ ըլլա վիրավորյալի մը վիճակը, անոր պետք  
չէ կես ժամեն ավելի ժամանակ հատկացնել: Գաբրիելյան  
էֆենտի, դուք գացեք մյուս հիվանդներուն քով... ևս կը  
վերջացնեմ ասոր գործը:

Հայ բժիշկը շկրցավ գերադասին ըսել, թե ինչո՞ւ ինք  
չէր երթար մյուս հիվանդներուն քով, փոխանակ այս մեկը  
իր ձեռքեն առնելու: Զինվորական կարգապահությունը կար-  
գիլեր նման դիտողություն մը ընելը. ուստի լուս բարեկց իր  
պետը և անցավ հարակից վրանը:

Թաթուկ երկու ժամ ետք կրկին բացավ աշքերը: Կը  
գտնվեր ընդարձակ վրանի մը մեջ, ուր իրեն պես բազմաթիվ  
ուրիշ հիվանդներ պառկած էին:

Հիշեց, թե վիրավորված էր ինք և հայ բժիշկի մը հուգածության ենթարկված: Վերմակի տակեն զգույշ ձախ ոտքը մոտեցուց աշ ոտքին՝ տեսնելու թե որքան ցավ պիտի ըզդար անոր հպումն:

Սկիզբ ցավ չզգաց, ատիկա վերապրելով վերքի ընդարձացած ըլլալու հավանականության. սակայն հետո անդրադառնալով, որ ողջ սրունքը կը սահեր անեզր պարապության մը մեջ... ընդուս մեկդի ըրավ վերմակը... ու այդպիս երեվան հանեց կարճ երանք մը, որ կը վերջանար արյունոտ փաթաթաններու և բամբակներու անկերպարան բարձով մը:

Թաթուլ պահ մը ակնապիշ դիտեց անդամահատված մարմինը, սիրտը ուժգին վեր ելած, կոկորդը հեծկլտունքներով սեղմված:

— Կորած են սրունքս... Ուրեմն հայ բժիշկը խարած էր զիս, մրմռաց սարսուագին փղձկումով մը:

Հետո բնազդական շարժումով մը գոցեց վերմակը... ու միւնույն ատեն աշքերը՝ շտեսնելու համար իր ահավոր գըժքախտությունը:

Անցյալի դեպքեր, հուշեր, դրվագներ՝ լուսանկարչական հավաքածոյի մը էշերուն պես թերթ առ թերթ բացվեցան ու գոցվեցան իր խոռվահույզ ուղեղին մեջ:

Գատը-գյուղի ծանոթ դեղագործներն վաղարշակ էֆենտիի միակ որդին էր ինք: Շրջանավարտ ելած էր իրենց թաշի Միխիթարյանց վարժարանն և երկու տարի ալ մասնավոր դասընթացքով հետևած էր տարրաբանության:

Քիմիագետ ըլլալու փափաքը իր մեջ արթընցած էր տակավին փոքր տարիքին, երբ օր մը դեղարանը նստած ատենը ակամա ունկնդիր եղած էր խոսակցության մը:

Ցավատանց դեմքով կին մը մտած էր ներս ու պատրաստ դեղ մը գնելե ետք՝ հարցուցած.

— Վաղարշակ էֆենդի, ասկե ավելի ազդու դեղ մը չունի՞ք: Միշտ կը գնեմ զայն, սակայն շատ քիչ օգուտ կը տես-

նեմ, ցալերս սաստիկ կը տառապեցնեն զիս. գիշերները մաւնավանդ երբեք չեմ կրնար քնանալ:

— Կը ցալիմ, տիկի'ն, ձեզի տվածու ամհնեն աղղունէ, պատասխանած էր Հայրը:

Ու Հաճախորդութին մեկնած էր, Հուսահատ մահապարտի մը քայլերով՝ քամակը կքած, ծունկերը ցալադինորեն կթուտած:

— Հա՛յր, ըսած էր Թաթուլ Հանկարծ կարեկցությամբ, որ Համակվելով դեպի հիվանդ կինը, կարելի չէ՝ պատրաստել դեղ մը, որուն մեջ ցալամոք տարրը ավելի քանակությամբ դրված ըլլա:

Հայրը պարզ լեզվով բացատրած էր, թե դեղերու բաղադրությունը գիտական հաշիվներով ճշգրոշված էր, և մեկ կամ մյուս տարրի հավելումը, եթե նույնիսկ օգներ հիվանդության՝ անդին ավելի մեծ վնաս կը պատճառեր տարրեր գործարանի մը:

— Բայց եթե քիմիական գործողությամբ մը չեզոքացվի դեղին վնասակար հատկությունը, դիտել տված էր Թաթուլ Հետաքրքիր:

— Գիտնականները տակավին չեն գտած նման գործողություն մը, ըսած էր Հայրը զառնագին:

— Թեղես ես կը գտնեմ, գոշած էր Թաթուլ մանկական խանդավառությամբ մը. Հա՛յր, երբ որ մեծնամ, ես կուզեմ քիմիական աշխատանոց մը ունենալ:

Վաղարշակ էֆենտին ծիծաղած էր որդուն փառատեն-շության վրա, այսուհանդերձ նյութական և բարոյական ա-մեն աջակցություն ընծայած էր անոր՝ Հետագա տարիներուն իրականացնելու համար մարդասիրական նպատակ-ները:

Քսան տարեկանին Թաթուլ Հորենական տան գետնա-հարկին մեջ ունեցած էր իր երազած աշխատանոցը: Այդտեղ Հաստատած իր դեղերն ու սրվակները, գիրքերն ու գործիք-ները՝ երիտասարդական անսպառ խանդով լծված էր ան-

փորձարական աշխատանքներու, երբ պայթած էր Պալքա-  
նյան պատերազմը:

Ուրիշ հայ երիտասարդներու կարգին, ինքն ալ զինվո-  
րագրված ու ղրկված էր ուղղմաճակատը:

Տունեն մեկնումեն վեց ամիս ետք՝ թաթուլ մորմեն ըս-  
տացած էր սև շրջանակով նամակ մը: Տիկ. Հոփափիմե այդ  
շարաշուր նամակով որդվուն կը գուժեր ամուսնուն վա-  
ղահաս մահը:

Հազիվ հոր մահը ողբալու և մոր առանձնության մասին  
մտահոգվելու ժամանակ ունեցած էր, ստացած էր երկրորդ  
նամակ մը, բովանդակությամբ ավելի սրտապնդիչ: Մայրը  
այդ նամակով կը տեղեկացներ թե՝ հավատարիմ բարեկամ  
մը ստանձնած էր դեղարանի տնօրինությունը, իսկ հեռավոր  
ազգականուհի մը ազնիվորեն ընդունած իր հրավերը՝ միա-  
սին բնակելու և տան գործերուն մեջ իրեն օգնելու:

Այդ հեռավոր ազգականուհին Հերանուշն էր, որբուհի  
մը, որ Պոլսո արվարձաններեն մեկուն մեջ կը բնակեր մո-  
րաքրոջ հետ: Հերանուշ ծնողքը չկորսնցուցած՝ կը բնակեր  
Գատը գյուղ և եղած էր թաթուլի պատանեկան օրերու  
խաղընկերուհին: Թաթուլ սիրած էր այդ արտակարդ գեղեց-  
կությամբ օժտված, մտացի և պարկեցաւ աղջիկը, թեև իր  
մաքուր սերը խոստովանելու համարձակությունը չէր ունե-  
ցած երեք:

Ու հիմա, երբ իմացած էր պարագաներու բերմամբ մո-  
ըլ հետ անոր բնակելու լուրը, ոչ ոք իրեն շափ տոշորված  
էր սիրելիներուն կարոտովը, և ո՛չ ոք իրեն շափ բաղձացած  
պատերազմի վերջավորությունը:

Անտարակույս թե վերջին գնդակի այդ երանելի օրը  
տեսնելու բուռն բաղձանքը՝ հետագային մղած էր զինքը  
ուազմազաշտի ամենավտանգավոր կետերը, մինչեւ որ այդ  
առտու ձախողորեն ստացած էր աղետալի հարվածը:

Թաթուլ արթնացավ ոտնաձայնե մը ու վրանի աղոտ

Հույսին մեջ տեսավ հայ բժիշկը, որ քովը եկած՝ բազկերակը կը քննել:

— Պր. բժիշկ, դուք ինձի խոստացած էիք, որ...

Հեղձամղմուկ ձայնը խեղդվեցավ կոկորդին մեջ:

— Արի եղիք, մրթմրթաց Տք. Գարբիելյան՝ զսպելով հուզումները, մխիթարյան, որ հոգիդ ողջ է: Ցա՞վ ունիս:

— Հոգս չէ մարմնույս ցավը, սիրու կարյունի:

Ազգակից բժիշկը քանի մը սփոփիշ խոսքեր ըրավ, հեշտոց շտալու համար իր արցումքները՝ գլուխը դարձուց և հեռացավ:

Հետևյալ օրը թմբուկի զորավոր հարումով հայտարարվեցավ պատերազմի վերջ գտնելը: Թաթուկ անգիտակցաբար հրճվեցավ լսելով երջանիկ լուր. սակայն մեկ երկվայրկյան ետք ուրախությունը սառեցավ դեմքին վրա, երբ հիշեց, թե իր մոր և սիրած աղջկան քով պիտի վերադառնար անդամահած սրումքով:

Իսկ օրեր ետք թաթուկի վիշտը հարյուրապատիկ ավելի սաստկացավ, երբ Պոլիս փոխադրվելու ատեն Տք. Գարբիելյանեն իմացավ թե՝ Հաքքը պեյ անունով ճիվաղ մը իր հայ ըլլալուն համար սղոցած էր սրումքը, փոխանակ զայն բժշկելու:

Թաթուկ անթացուպերու հենած՝ իջավ Սիրքեճիի կայարանը և ինքինքը գտավ սիրելիներու բազուկներուն մեջ: Այս վերջինները տեղեկություն ունեցած էին աղետեն, բայց այդ մասին երբեք ակնարկություն մը չըրին՝ չցավցնելու համար հերոսին սիրուը:

Տուն գալով՝ թաթուկ գրկախառնվեցավ բոլոր բարեկամներու և ազգականներու հետ, ու փոխանակ անոնց ցավակցությունները ընդունելու՝ կտրիճի վայել վեհանձնությամբ հայտարարեց.

— Կը կարծե՞ք որ հայրենիքիս մեկ սրունք տալով մեծ զոհողություն ըրած եմ: Ուրիշներ իրենց կյանքը տվին: Ուղախ եղիք, որ ես ավելի բախտավոր ծնած եմ:

Երկու օր հանգիստե ետք՝ թաթուլ Հերանուշի և մոլը ընկերակցությամբ մտավ աշխատանոցը: Ինք կը կարծեր, որ զինվոր մեկնելեն ետք ոչ ոք մտած էր հոն, և այժմ փոշիի թանձր խավով և սարդի ոստայններով պատած պիտի գըտներ իր սիրական առարկաները:

Սակայն զարմացավ՝ տեսնելով տիրող կարգ ու կանոնը: Քիչ հետո իր զարմանքը ուրախության փոխվեցավ, երբ մորմեն իմացավ, թե Հերանուշը իր թույլտվությամբ կը մըտներ հոն և հաճախ ժամերով կը պարապեր ուսումնասիրելով մասնագիտական գիրքերը:

— Հերանուշ, կը հետաքրքրվի՞ս իմ գործովս, — հարցուց թաթուլ՝ սիրազեղ նայվածքով մը պարուրելով ազգականուհին:

— Այո՛, — պատասխանեց այս վերջինը անկեղծորեն:

— Եվ կուզե՞ս օգնել ինձի:

— Մինչև կյանքիս վերջը:

Թաթուլ խանդաղատանքով բռնեց հայուհին ձեռքեն և զայն ներկայացնելով մոր՝ ըստավ.

— Մա՛յր, Հերանուշ այսօրվնե սկսյալ իմ նշանածս էր

Տիկ. Հոփիսիմե կաթոգին զրկեց մանկամարդ հայուհին և համբուրեց անոր ճակատը:



Այդ գիշեր թաթուլ ծրագրեց իր ապագա ընելիքները և իր ծրագիրը մոր և նշանածուհին հավանության ենթարկելով՝ ատեն մը ետք մեկնեցավ Փարիզ, ֆրանսացի՝ պրո-ֆեսորի մը հսկողության տակ կատարելագործելու իր ուսումը:

Թաթուլ վերադարձավ Պոլիս, ընդհ. պատերազմը սկսելեն ճիշտ ամիս մառաջ: Ծատ փոխված էր ան թե՛ միտքով և թե ֆիզիքականով: Արվեստական սրունք մը փոխարինած էր անթացուազը, իսկ ինքնավստահության գիտակցությունը

Հեռու վանած այդ անթացուակերու առթած ստորադասական գգացումը:

Միջոց մը հտք թաթուկ ամուսնացավ Հերանուշի հետ և լծվեցավ գիտական աշխատանքներուն:

Օր մը Հերանուշ տեսավ ամուսինը, որ մաքսատունեն եկած խորհրդավոր տուփ մը զգուշությամբ կը փոխադրեր աշխատանոցը:

— Ի՞նչ կա ասոր մեջ, հարցուց կնոջական հետաքըրքությամբ մը:

— Հարսանեկան նվեր է, ըսավ թաթուկ. ֆրանսացի ուսուցիչս դրկած է: Կը գրե, թե Տիտի և Պիպի շատ օգտակար պիտի ըլլան մեզի մեր փորձարկությանց ընթացքին:

— Տիտի և Պիպի... բայց ճագա՞ր են անոնք, հարցուց Հերանուշ ա՛լ ավելի հետաքըրքիր:

— Ո՞չ, ճագար չեն, սիրելի՞ս:

— Հապա ի՞նչ են:

— Զույգ մը իժ:

## Բ.

Գիշեր մը թաթուկ ընդուստ բացավ աշքերը փողոցի դռան զանգակի ուժգնակի հնչուններեն: Տեսավ, որ կինն աւ արթնացած և ահաբեկ շտկված էր անկողնին մեջ:

Տարի մը անցած էր իրենց ամուսնութենեն ի վեր, և տակամին մտքերու մեջ թարմ էր Ապրիլի ձերբակալությանց ու Պայազետի կախաղաններու սրտամորմոք հիշատակը:

— Ո՞վ է այս ատեն դուռը զարնողը, մրմնչեց ինքնի-րենց, — հետո սիրտ տալու համար կնոջ, — արդյոք դրացի մը հիվանդ ունի և օգնություն խնդրելու եկած է:

Թաթուկ վառեց փոքրիկ ճրագը. կռնակը առավ թեթև վերարկու մը և շտապեց վար, մինչ զանգակը շորրորդ անգամ ըլլալով կը ճռնշեր մահասարսու արձագանքով մը:

— Ո՞վ է, հարցուց կենալով դրան ետեր:

— Բայց դուռը, ոստիկան, պատասխանեց շոր ճայն մը:

Կարճ վարանումն ետք թաթուլ բացավ դուռը:

Ներս մտավ համազգեստավոր մարդ մը, որ ստուգելն ետք տանտիրոջ ինքնությունը՝ ըսավ.

— Ենդրեմ, հագեք ձեր հագուստը և ինծի հետ ոստիկանաւուն եկեք: Քոմիսար պեյզ ձեզի հետ խոսիլ կուզե:

— Այս ատե՞ն:

— Պր. թաթուլ, գիտեք որ երկիրը պատերազմի մեջ է: Կարգ կանոն չմնաց, գիշեր ցերեկ իրար խառնվեցան... անշուշտ ներողամիտ կը գտնվիք մեր պատճառած անհանգըստության համար:

— Բայց քոմիսար պեյզ ի՞նչ պիտի խոսի ինծի հետ:

— Կարծեմ ձեզմե փոքրիկ տեղեկություն մը պիտի ստանա: Բայց խնդրեմ, ժամավաճառ մի ըլլաք... մեկ վայր-կյանեն կը վերադառնաք տունը:

Թաթուլ ոստիկանը ձգեց դահլիճին մեջ, վեր եկավ և խնդրեց պարզեց կնոջ և մոր, որ նույնպես արթնացած հարսին քով եկած էր:

— Սուտ է, կը ձերբակալեն քեզ, աղաղակեցին երկու կի-ները հանկարծ՝ շար նախազգացումով մը համակված:

— Բայց ես մտավորական շեմ, կուսակցական շեմ... ինչո՞ւ ձերբակալեն զիս, դիտել տվավ թաթուլ:

Իր ըսածին ինքն ալ չէր հավատար, բայց կըսեր այդպես՝ սփոփիշ խոսք մը արտասանելու համար:

— Մի՛ երթար, պաղատեցին մայրն ու կինը հեծեծագին:

— Եթե շերթամ՝ բռնի կը տանեն, ըսավ թաթուլ, հետո կասկածելի անձ մը կը դառնամ և ոստիկանության ցառաւոմը կը հրավիրեմ վրաս: Երթամ, թերեւս իրավամբ տեղեկություն ստանալու համար կուզեն զիս:

Թաթուլ զգեստները հագավ, կինը սեղմեց կուրծքին վրա, համբուրեց զայն, նույնպես համբուրեց մայրը և գնաց ոստիկանին հետ:

Հակառակ որ գիշեր անց էր, անօրինակ եռուզեռ մը կը

ամիրեր ոստիկանատան մեջ: Պաշտոնյաներ լարված մեքենաներու պես ներս դուրս կերթենելեին. ուրիշներ նրբանցքներու մեջ աստ անդ կը վազեին: Բոլորը խոժոռ դեմք ունեին և խորհրդավոր ժպիտ՝ դեպի իրենց ընկերը, որ կը վերադառնար ձերբակալյալ հայու մը հետ:

Թաթուկ փոխանակ ոստիկանապետին քով առաջնորդվելու, առաջնորդվեցավ պահակ ոստիկանով պաշտպանված սենյակ մը, որուն դրան վրա գրված էին հետևյալ շարաշուրագուները.

### ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԶԲԱՂՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

Սենյակին խորքը, գրասեղանին առջև նստած էր դաշտան դիմագծով, թիկնեղ մարդ մը:

Առանց առնելու թաթուկի բարելը, նույնիսկ հրավիրելու, որ նստեր, մարդը պահ մը սեղանի վրա գտնվող թուղթի մը նայեցավ, հետո դանակի պես սուր նայվածքները միրճելով այցելուի աշքերուն մեջ՝ ստենտորյան ձայնով մը հարցուց.

— Դուք 1913 Ապրիլին Փարիզ մեկնած և 1914 Հունիսին Պուլիս վերադարձած եք, ճիշտ է:

— Այո, տե՛ր իմ:

— Կը հաճիք բացատրել, թե 15 ամիս ի՞նչ ըրիք թշնամի երկրի մը մայրաքաղաքին մեջ:

— Կը ներեք, տե՛ր իմ, իմ Փարիզ գտնված ատենս Ֆրանսա թշնամի երկիր չեր, ճշտեց թաթուկ հարգալիր:

— Զեղմն խելք չեմ հարցներ, գոչեց թուրքը խստությամբ. պատասխանեցեք հարցմանս:

— Տարրաբանական փորձարկություններով զբաղած եմ: Փարիզ գացի կատարելագործելու ուսումս, պատասխանեց թաթուկ:

— Կը հաճիք բացատրել, թե ի՞նչ է այդ տարրաբանագան փորձարկությանց բնույթը:

— Կաշխատեմ քիմիական նյութերու բուժիչ հատկությունը զորացնելու:

— Եվ կամ քիմիական նյութերով ուժանակ շինելու...  
չէ՞:

— Խնդրեմ, տե՛ր իմ, ես ոռւմբի, ուժանակի հետ գործ չոնիմ... իմ աշխատանքս զուտ գիտական է, բողոքեց թաւ թուլ:

— Դուք՝ խային միլիթ՝ ստեղծված եք ուրանալու հաւամար ձեր ոճիրները, գոռաց քաղաքական բաժնի պետը զայրացած։ Պատասխանեցե՛ք ինծի, ինչպես եղած է, որ երբ ամեն հայրենասեր մարդ զինվոր գացած է, դուք դասավիրենման տունը մնացեր եք։

— Տե՛ր իմ, զիս զինվոր չտարին... Հաշմանդամ եմ Պալքանյան պատերազմին հայրենասիրական պարտականությունս կատարելու ատեն մեկ սրունքս վրա տվի։

— Զըսեք թե ձեր սրունքը վրա տվի՞՝ ձեր հայրենադավական պարտականությունը կատարելու ատեն, որոտաց թուրքը։ Դուք հայերդ զինվոր գնացիք, ոչ թե այս երկրին ծառայելու, այլ՝ ձեր զենքով թշնամիին կողմը անցնելու և կամ լավագույն պարագային՝ թուրք զինվոր մը կոնակեն զարնելու։

— Ատիկա սուս զրակարտություն մըն է... ես աշքով տեսա որ...

Թաթուլ չկարողացավ ավարտել խոսքը։

Դաժան դիմագծով մարդը բորենիի պես ցատկեց տեղեն և ուժգին ապտակ մը իշեցնելով հայու դեմքին, մոնշեց։

— Լի՛րը, խայտառա՛կ, սրիկա՛... Տակավին կը հանդըգնիք պաշտպանելու ձեր ազգակիցները, որոնց դավաճանությունը միլիոն անգամ ապացուցված է։

— Բայց...

— Լոե՛:

Կիցի ահարկու հարված մը, որ իշեցված էր թաթուլի արվեստական սրունքին, գետին նետեց Պալքանյան պատերազմի վեթերանը։ Անգութ թուրքը շարունակեց իշեցնել կիցերը անպաշտպան հայու փորին, կողին, ուսին, դեմքին. ապա

Հոգնած զարնելե՝ հրամայեց դուրսը սպասող ոստիկանին, որ  
զո՞ր նետե արգելարանը:

Ոստիկանը ամուր բռնեց թաթուլի օձիքեն և ժամանակ  
շտալով, որ ան ելեր խարխուլ սրունքին վրա՝ քաշքեց սե-  
նյակեն դուրս, հետո քարե սանդուխն մը վար, դեպի մութ  
զնտան մը:

Արգելարանի դրան գերեզմանին մը կափարիչին պես  
զոցվելեն ետք՝ թաթուլ գիտակցեցավ թե պառկած էր լըպըր-  
ծուն և ապականյալ գետնի մը վրա: Խսկույն շտկվեցավ:  
Խարխափելով հառաջացավ և գտավ սնտուկի նմանող առար-  
կա մը, որ իր բանտին միակ կարասին էր: Հանեց թաշկի-  
նակը, սրբեց թաց ձեռքերն ու ծունկերը. հետո կեցավ ան-  
ջարժ և ապշա՞ար:

Չէր գիտեր, երա՞զ կը տեսներ, թե իրականությունը  
կապրեր: Եվ եթե այս վերջինն էր պարագան՝ հոգ ըներ իր  
լաւած նախատինքին համար, կերած ծեծին համար, անըս-  
տույգ ապագային համար, կնո՞ջ համար, մո՞ր համար և  
կամ... զավակին համար, որ տակալին չէր ծնած, բայց ա-  
պահովաբար պիտի ծներ օր մը... թերևս յոթը ամիս ետք:

Դեռ ժամ մառաջ պառկած էր իր համաստավետ անկող-  
նին մեջ: Ի՞նչ սե հակատագիր էր հայու այս անիծյալ հա-  
կատագիրը... չէին թողուր, որ մարդ հանգիստ ապրեր, պառ-  
կեր, աշխատեր: Հայրենիքին համար արյուն թափած էր.  
Կամբաստանեին զինքը, թե թուրք զինվորը կոնակեն զար-  
նելու համար զինվոր զացած էր: Մարդկության տառապանքը  
մեղմելու համար սիրտ և միտք կը մաշեցներ. կը զրպարտե-  
ին, թե պոմպա կը շիներ:

Թաթուլ բոռնցքը ամրապինդ բռնած՝ մտածեց երկար  
ատեն: Սակայն որքան ալ մտածեց, չկրցավ լուծում մը գըտ-  
նել, ո՛չ իր զանկը փոթորկող հարցերուն, ո՛չ ալ իր միտքը  
լլկող հոգետանշանքներուն:

Երեք օր մարդ շմտավ իր քովը: Նույն խսկ հաց և զուր  
բերող մը շեղավ իրին, հակառակ անոր որ, մայրը ամին օր

Երկու անդամ կերակուր կը բերեր ոստիկանատումը, խաբ-վելով անբարեխիղն պահակներու հավաստումն թէ՝ անոնք կը հանձնվեին որդույն:

Այդ այցելությանց առթիվ տիկին Հռիփսիմեի և ոստի-կաններու միջև տեղի կունենար գրեթե նույն հարց-պատաս-խանը:

— Կարելի՞ է, որ վայրկյան մը տեսնեմ զավակս:

— Կը ցավինք, տիկի'ն, հրամանը շատ խիստ է. ձեր-բակալյալներու արտաքին աշխարհին հետ հաղորդակցու-թյունը բացարձակապես արգիլված է:

— Ե՞րբ պիտի ելլե տղաս բանտեն:

— Շուտով դատարան պիտի հանձնվի: Իր անմեղու-թյունը հաստատելուն պես ազատ կարձակվի: Այս առթիվ՝ տիկի'ն, շմոռանանք ըսելու, որ թաթուլ շատ սիրած էր ուս-կումբու տոլման: Պատվիրեց, որ դարձյալ անկե բերեք... հե-տը անուշեղեն մի՛ մոռնաք:

Երրորդ օրը թաթուլ հանվեցավ արգելարաննեն, ու մինչ կը կարծեր, որ զինքը դատարան կը տանեին, շլթայակամ տարին Հայտար Փաշայի կայարանը: Հոն իրեն պես հա-րյուրի շափ կալանավոր հայեր կային, որոնք կը սպասեին Անատոլու մեկնող շոգեկառքի մը: Ոստիկաններ թաթուլի-շղթան կապեցին հարյուր հոգին զիրար կապող հավաքական շղթային:

— Ի՞նչ է այս... զիս Անատոլու պիտի որկեք, հարցուց խեղճ տղան սոսկումով:

— Այո, Զանկը պիտի երթաք, այդտեղի դատարանին առջև դատվելու համար:

— Առանց կինս ու մայրս տեսնելո՞ւ:

— Կերաղարձին կը տեսնեք զանոնք:

— Բայց ես դրամ չունիմ, փոխնորդ շունիմ... խնդրեմ...

— Կառավարությունը հոգ կը տանի... անհանգիստ մի՛ ըլլաք, պարո՞ն:

Այս անողոք խոսակցության միջոցին եկավ շոգեկառքը:

Թաթուկ մյուս կալանավորներու հետ առաջնորդվեցաւ՝  
կենդանյաց փոխադրության հատուկ վագոն մը, ուր հազիվ  
քառասուն հոգիի տեղ կար: Քիչ ետք շարժեցավ կառաշարը,  
ու մարդիկ գացին միօրինակ, խուզ դղրդյունով մը, որ կար-  
ծեք կը հիշեցներ մեռելային քայլերգ մը:

Գացին մարդիկը, բայց ինչո՞ւ:

Իրենք ո՞չ մտավորական էին, ո՞չ կուսակցական, ո՞չ ազ-  
գային երևելի դեմք: Իրենց միակ հանցանքը այն է, որ մին-  
իր բանեցուցած ճաշարանին մեջ հեղափոխականի մը կե-  
րակուր տված էր. երկրորդը իր տան մեկ սենյակը այնինչ-  
իսմբագրին վարձած էր. երրորդը այնինչ մտավորականի հար-  
կ նման մականուն ուներ. այսինքն իրականության մեջ ո՞չ  
մեկ հանցանք, բացի իրենց հայ ծնելու հանցանքեն:

\*\*\*

Կեսօր մը տիկ. Հոփիսիմե նոր վերադարձած էր ոստի-  
կանատունեն և հարսին կը խոսեր որդուցն կողմե ապապըր-  
ված կերակուրներու մասին, երբ նամակացրվիշը զարկավ-  
դուրը և երկարեց բաց գիր մը:

Գրաքննության պատճառավ արաբերեն տառերով գըր-  
ված էր բացիկը: Սակայն Հերանուշ քիչ մը կը ճանչնար այդ-  
գիրերը, ուստի հեգելով բարձրածայն կարդաց.

«Սիրելի՛ կինս և մայրս,

«Ողջ և առողջ հոս հասա: Իմ մասիս մի մտահոգվիք.  
շուտով դպտարանի առջև անմեղությունս կապացուցանեմ և-  
կը վերադառնամ: Խնամք տարեք Պիպիին:

«Համբուլըներ՝ թ.Ա.Թ.ՈՒկ»:

— Բայց ո՞ւր տարեր են, որ պիտի վերադառնա, բա-  
ցականչեց Հերանուշ, կանկածանքով նայելով նամակատան-  
կնիքին,—ու հոն կարդալով «Զանկըրը» բառը,—արդյոք նա-  
մակագիրը ուրիշ Թաթո՞ւկ մըն է:

Բայց ո՞չ, նամակագիրը ուրիշ մեկը չէր կրնար ըլլաւ,

քանի որ Պիտիի գոյությունը — Տիտին մեռած էր — աշխարհի մեջ երեք հոգի միայն գիտեին և այդ երեքն մեկը Թաթուլն էր:

— Ուրեմն ոստիկանատունը կը խարեի՞ն մեզ, բացականչեց հեք կինը սահմոված:

Ապա Հիշելով Զանկը ըստ տարված հայ մտավորականներուն սպասող ահավոր ճակատագիրը՝ սրտահույզ հառաշ մը արձակեց և ինկավ կեսրող թերուն մեջ:

Մոտավորապես ամիս մը ետք բաց գիր մըն ալ ստացան անոնք: Թաթով կը տեղեկացներ, թե քանի մը Հոգիի ազատ արձակման հրաման եկած էր Պոլսեն, և եթե Հոն իրենք պատկան իշխանությանց մոտ դիմում կատարեին՝ հավանաբար իր ներումն ալ ձեռք կը բերեին: Թաթով Հետ գոյության մեջ կավելացներ՝ թե մոտ ատենեն Պոլսի մեկնողներուն մեջ կը գտնվեր նաև Կոմիտաս վարդապետ: իր մասին ավելի տեղեկություններ կրնային ստանալ անկե:

Կոմիտաս վարդապետի և ուրիշ ազգակիցներու ներման արժանանալու լուրը Հույսով համակեց սրտերը: Հերանուշ բաց գիրը տարավ հայ փաստաբանի մը, խորհուրդ հարցնելու, թե ինչ կարելի էր ընել ապահովելու համար Թաթովի վերադարձը:

Փաստաբանը կացության փափկությունը նկատի առնելով շհամարձակեցավ գործի անձամբ Հետապնդումը ստանձնել, սակայն կարծելով որ Գատը գյուղի ոստիկանապետը անձնական թշնամության համար աքսորած էր Թաթովը, խորհուրդ տվավ տիկնոց անգամ մը դիմել Քաղաքական Բաժնի տնօրենին... թերևս աղերսանքով կրնար շարժել անոր սիրտը:

Հերանուշ կյանքին մեջ՝ պաշտոնատուն ոտք չէր կոխած, ոչ ալ կառավարչական պաշտոնյայի մը Հետ խոսք փոխանակած: Սակայն վտանգված ամուսնույն օգնելու փութկոտության մեջ մոռցավ ամոթիսածությունը և գնաց ոստիկանատուն: Նույնիսկ ան հանգուրժեց նվաստացման, երբ հայա-

տրաց գազանի դրան առջև սպասող պահակ ոստիկաններ զենք փնտռելու պատրվակով... սկսան շոշափել իր մարմնույն դուրս ցցված մասերը

Բայց ավելի շնական էր վարմունքը նույն ինքն տնօրենին: Այս վայրագ թուրքը առաջին ակնարկով հրապուրվեցավ իրեն ներկայացող հայուհիի առիքնող տեսքեն, և խորհելով թե կրնար օգտագործել առիթը՝ կեղծ հաճոյակատարությամբ մը հարցուց:

— Ի՞նչ կուզեք, տիկին, ինչպե՞ս կրնամ օգտակար ըլւալ ձեզի:

— Ամուսինս՝ թաթուլ անմեղ է, պատասխանեց Հերանուշ, եկա ձեզմե խնդրելու, որ ետ բերել տաք զինքը:

— Կը հավատամ ձեզի, ըսավ բորենին հուզյալ ձայնով մը: Զեր ամուսինը սխալ հասկացողության մը հետևանքով զանկրրը զրկված է: Հայրենիքին համար սրունքը տվող երիտասարդը դաշտան չի կրնար ըլլալ:

— Բայց ինչո՞ւ այդ սխալ հասկացողությունը, հարցուց Հերանուշ, խարվելով թուրքի մեղրածորան լեզվեն:

— Տիկին, կապրինք այնպիսի փափուկ շրջանի մը մեջ, որը ամեն հայ ոստիկաններու աշքին քոմիթաճի կերպի: Զեր ամուսնույն աշխատանքները կասկածի տեղի տված են, որքան ալ անռնք գիտական բնույթ ունենալին:

— Ուրախ եմ, որ դուք կընդունիք անոնց գիտական բնույթը ունենալը, ըսավ Հերանուշ հուսագրվելով: Ռուբեմն կը հաճի՞ք սրբագրել պատահած սխալը:

— Հայ-Հայ... ինծի համար հաճույք մըն է անմեղ Հայրենակցի մը օգնելը: Զեր ամուսինը ետ բերել տալու համար Հարկ է որ բեզբերե մը զրկեմ... դուք կընա՞ք անհրաժեշտ տեղեկությունները հայթայթել ինծի:

— Սիրով:

— Ուրեմն այս իրիկուն հրամմեցեք տունըս, միասին պատրաստենք տեղեկագիրը:

Մահատիպ դալկություն մը պատեց հայուհիին դեմքը:

— Բայց ինչո՞ւ ձեր տունը, թոթովեց անձկությամբ, կարելի չէ, որ հոս տամ ձեզի անհրաժեշտ տեղեկությունը:

— Տիկի՞ն, քիչ առաջ ձեզի հայտնեցի, որ շատ գեշ ժամանակի մը մեջ կապրինք, ըսավ տնորենը լրջությամբ: Վաղը եթե իմացվի որ ձեր ամուսինը ազատ արձակված է, հակառակորդներս կամբաստանեն զիս, թե կաշառ առած եմ: Այդ ամբաստանությունը կրնա պատճառ ըլլալ, եթե ոչ բանտարկությանս, գոնե պաշտօնե հրաժարեցմանս: Ատոր համար կուզեմ, որ այդ տեսակ խնդիրներ կարգադրվին լրտեսող աշքերե հեռու տեղվու մը մեջ:

— Բայց, տեր իմ, ես ամուսնացած կին մըն եմ, մըրմնչեց Հերանուշ դողոզում: Ի՞նչ կըսեն մարդիկ, երբ տեսնեն, որ իրիկունը ձեր տունը եկեր եմ:

— Գիշերը մութին եկեք, ըսավ խենեշ թուրքը, հայրատնայվածքով մը պարուրելով այցելուհին. ձեր բախտեն կինս օդափոխության համար Սեբաստիա ընտանիքին մոտ մեկնած է... կը վստահեցնեմ ձեզ, թե տանս մեշ նախանձող էակ մը շեք գտներ:

— Խոսք չեմ տար... անգամ մը մտածեմ, ըսավ Հերանուշ ու խելահեղ ինքզինքը դուրս նետեց գաղանի որջեն:

#### Գ

Որքան ալ անբնական ըլլար սուգի մեշ ուրախությունը, Պոլսո հայերը չկրցան զսպել իրենց ուրախությունը, երբ իմացան թե աքսորեն վերադարձած էր Կոմիտաս վարդապետ:

Կոմիտասի անձնական հմայքը բավական էր թունդ հանելու տրորված սրտերը, ուր մնաց, որ անոր վերադարձի լուրին կընկերանար հույսը թե՝ հետզետե ուրիշներ ալ պիտի վերադառնային և այդպես պիտի անհետանար հոգիներու վրա ճնշող ազգային բնաջնջման ծանր մղձավանջը:

Օր մը Հերանուշ գնաց վարդապետին քով իր ամուսնուցն մասին լուրեր առնելու համար, ու դեմքով իրեն ծա-

նոթ հայր սուրբին տեղ գտավ հոգեպես ցնցված կենդանի մեռյալ մը: Իր համերգներով Պոլսո ժողովուրդը ելեկտրականացնող երբեմնի մեծահանձար մահսթրոյեն շուք մը մնացած էր միայն:

Հերանուշ ներկայացուց ինքինքը և բացատրեց այցեւության շարժափիթը:

Կոմիտաս կարծեք չէր իմնար խոսված բառերը: Մտամուլոր կեցավ պահ մը: Հետո հանկարծ անդրադառնալով տիկնող ներկայության՝

— Թաթուլը... ո՞հ, այո՛, կը ճանշնամ, ըսավ տիրամած ձայնով մը: Արվեստական սրունք ուներ... Փարիզ ուսանած էր, գիտության մարդ էր... կը ճանշնամ, աղջի՛կս:

Ապա արձանի պես լուռ կեցավ, աշքերը անորոշ կետի մը հառած:

Հերանուշ սրտատրոփի սպասեց, որ վարդապետը խոսեր, բայց ան խորասուզված մտածումներու մեջ՝ մոռցած էր զինքը:

— Հայր սո՞ւրբ, կմկմաց պահ մը ետք հեք կինը անձակագին, ինչպե՞ս է թաթուլը:

— Հե՞:

Կոմիտաս ընդուստ ցնցվեցավ և ձեռքը տարավ տժգույն դիմքին.

— Թաթուլ:

— Այո, ինչպե՞ս է թաթուլը:

— Բայց ո՞վ եք դուք:

— Ես... կի՞նն եմ... թաթուլի կի՞նն եմ:

— Ո՞հ, այո՛, կի՞նն եք...

Վարդապետը քունե արթննալու պես սթափեցավ եւրազանքներեն և հատիկ-հատիկ արտասանեց.

— Տարին զայն... իմ մեկնումես երկու օր առաջ... ուրիշներու հետ տարին... գիշերը ժանտարմաները վերադարձան և պատմեցին, թե բոլորը կացինով կոտորած էին...:

Սարսուփի ալիք մը անցավ Հերանուշի ողնասյունեն վարտ

— Հայր սուրբ, վստա՞հ եք, թե Թաթուլ այդ տարված խումբին մեջն էր:

— Այո՛, ես օրհնեցի զինքը... Թաթուլը... մեկ սրունքը արվեստական էր... Փարիզ ուսանած էր... գիտության մարդ էր:

Կոմիտաս լուած էր կրկին:

Հերանուշ աղիողորմ ճիշ մը արձակեց և ելավ սենյակին՝ հոգեկան անհուն տառապանքներու մատնված, սիրտը խոր խոցված, բգբտված:

Այդ նույն իրիկունը ոստիկան մը եկավ Թաթուլինց տունը և հարգալիր բարեկելով երիտասարդ կինը.

— Հանը՛մ էֆենտի, Հաքըը պեյլ ձեղ տեսնել կուզե:

— Հաքըը պե՞յլ:

— Այո, Ոստիկանության Քաղաքական Բաժնի պետը:

— Բայց ի՞նչ պիտի ընկ զիս:

— Չեմ գիտեր... Հրամայեց, որ ձեղ իր քովը առաջնորդեմ:

Կարելի՞ն էր մերժել վերեն եկած Հրավերը: Հերանուշ հավկեցավ և ոստիկանի ընկերակցությամբ զնաց ոստիկանատուն:

— Նստեցեք, գոչեց Հաքըը պեյլ քաղաքավարությամբ դիմավորելով այցելուհին. Նստեցեք, ձեզի Հաղորդելիք բարի լուր մը ունիմ:

Հերանուշի սիրտը նստեց ուժգին: Արդյոք Կոմիտաս վարդապետի Հայտարարության մեջ թյուրիմացություն մը կար:

Թուրքը նշմարեց Հայուհիին Հուզումը և Հարեց.

— Բայց նախ ըսեք, ինչո՞ւ չեկաք այդ գիշեր... ձեզի երկար սպասեցի:

— Մայրս անհանգիստ էր, չկրցա առանձին թողուլ, ստեց Հերանուշ:

— Հուտամ, թե Հիմա առողջացած է ձեր մայրը, սսակ Հաքըը պեյլ սուր Հեղնանքով: Բայց գառնանք մեր գործին:

Թաթուլի մասին գրած էի Զանկըրըի ոստիկանապետին, որ  
իմ անձնական բարեկամս է: Ճիշտ հիմա հեռազիր մը ստա-  
ցա իրմե... կը գրե ձեր ամուսինը կրնա ետ դրկել, եթե ա-  
պացուցանեմ իր թյուրիմացովիշյամբ ձերբակալված ըլլալը:  
Ինչպես որ հայտնած էի ձեզի, իմ խիզճս չի ներեր որ ան-  
մեղ տղա մը դատապարտվի: Դուք պիտի օգնեք ինծի, որ  
դոկեմ պահանջված թեզիերեն:

— Ես պատրաստ եմ ձեռքես եկածը ընելու, ըսալ Հե-  
րանուշ: Ի՞նչ կուգեք գիտնալ. Հարցուցեք, պատասխանեմ:

— Բայց ըսի, թե հոս ըըլլար: Այս իրիկուն եկեք տու-  
նըս... գլուխ գլխի տանք և գրննիք տեղեկագիրը:

Հերանուշ նայեցավ խոսակցի դեմքին, որ երկու տեն-  
դավառ աշքեր կը շողային օծի մը աշքերու հանգույն:

Կը ստեր անպատկառ թուղթը կացինահար եղած մարդ  
մը ետ բերելու խոստումով, ինչպես որ իր ոստիկանները  
ստած էին աքսոր գացած մարդու անունով կերակուրներ  
ապսպիւրով:

Եվ սակայն փոխանակ իր նողկանքը նետելու հրեշի  
դեմքին, պատասխանեց ան մեղմիվ.

— Շատ լավ, կուգամ ձեր տունը... ձեր ուզած տեղե-  
կությունները տալու համար:

— Այս իրիկուն կուգա՞ք, Հարցուց Հաքքը պեց ուրախու-  
թենեն խայտալով:

— Ոչ, գիշե՞րը...: Կուգեմ, որ ոչ ոք տեսնե գալս:

— Քզըլ թոփրաք կը բնակիմ, ըսալ Քաղաքական Բաժ-  
նի պետը հասցեագրված թուղթ մը երկարելով հայուհիին:  
Ինչպես որ ըսի տան մեջ առանձին եմ... հանգիստ կը խո-  
սինք, — հետո շոյելով Հերանուշի այտը և տեսնելով որ ան-  
ամուսինը ազատելու սիրույն գերագույն զոհողության պատ-  
րաստ կը ձևանար, — կիսաբաց կը ձգեմ դուքը: Ներս մտեք...  
Եթե տեսնեք որ քնած եմ՝ համբույրով մը արթնցուցեք զիս:

— Այո՞ւ, համբույրով մը ... օ՛ձ:

Հերանուշ վերջին բառը մտքեն ըսալ, ու հետո այդ բա-

ոը տասն անգամ, հարյուր անգամ, հազար անգամ ինքնի-  
բեն կրկնելով՝ եկավ տուն և ընդերկար լացավ:

Միշոց մը ետք ան սրբեց արցունքները և իշավ ամուս-  
նույն աշխատանոցը:

Կուրծքը հառաջանքներով ուռած՝ դիտեց դեղերը, սըր-  
փակները, գրքերը, գործիքները: Հոն էր Պիպին, իր ապակյա  
վանդակին մեջ, ուր աչքերը բաց, կարծեք կը սպասեր տի-  
րոջ գալստյան: «Խնամք տարեք Պիպիխն», գրած էր թաթուլ:  
Ու Հերանուշ ամեն օր խնամած էր զայն: Սակայն մինչեւ  
երբ և ինչո՞ւ, երբ այլևս ոչ ոք պիտի շարունակեր ամուս-  
նույն ձեռնարկած դիտական աշխատանքները:

Հերանուշ հուզորեն կեցավ վանդակին քով:

Եթե մատը մտցներ կափարիշին տակ... իժը իսկուն  
պիտի փաթթվեր անոր: Թերևս խածվածքի թեթև ցավ մը պի-  
տի զգար, բայց այդքան միայն: Այնուհետև պիտի թաղվեր  
խոր քունի մը մեջ, և այլևս ոչ պիտի հիշեր, ոչ պիտի գի-  
տակցեր, ոչ ալ պիտի արթնանար:

Այո, բավ է որ մատը մտցներ կափարիշին տակ:

Բայց Հերանուշ հոն չէր եկած անձնասպան ըլլալու:

Այլպես՝ վլտահարար կազատեր ինք դառնակսկիծ մըշ-  
տեն ու սուգին, բայց միայն ի՞նք: Մինչդեռ անդին բազմա-  
թիվ իր արյունակիցները պիտի ենթարկվեին նույն վշտի և  
սուգի, եթե ողջ մնար Գատը-գյուղի մարդակեր օձը:

Սատկեցնելո՞ւ էր զայն, որպեսզի հետ այսու առիթ չու-  
նենար անմեղ թաթուլներ Զանկըրը զրկելու և հետո թեզիերե  
զրելու պատրվակով անոնց կիները գիշեր ատեն իր պիղծ  
տունը հրավիրելու:

Հերանուշ առանց կերակրելու Պիպին՝ վերադարձավ  
սենյակը:

Ան իր որոշման մասին շխոսեցավ կեսրոշ, գիտնալով,  
թե բարեպաշտ և աստվածավախ կինը պիտի սոսկար իր  
«ամբարիշտ» ծրագրեն և ամեն գինով պիտի արգիլեր անոր

պործադրությունը, մինչդեռ ինքը վճռած էր, որ անլուկ պետք չէր մնար իր ամուսնույն վրեժը:

Ուշ ատեն Հերանուշ քաշվեցավ ննջասենյակը: Ապահով ըլլալե ետք թե մայրիկը քնացած էր՝ ան իր դեմքը ծածկեց թուրք կանանց հատուկ քողով մը, հետո առավ խավաքարտե տուփ մը և իշավ աշխատանոցը:

Պահ մը ետք Պիպին փոխադրած տուփին մեջ ու տուփը թերին տակ պինդ բոնած՝ գաղտագողի կը մեկներ ան տունն:

Սիրտը կը բարախեր ուժգնորեն, երկար թոփշք կատարած աղավնիի մը սրտին պես, բայց վախ չուներ:

Հերանուշ քալեց քանի մը փողոց: Հետո վարձեց ձիակառք մը և գնաց Քզըլ Թոփիրաք: Անիվներու միօրինակ աղմուկեն ու օրորումեն թուցած էր ան, երբ հանկարծ ցնցվեցավ, լսելով կառապանին ձայնը.

— Ո՞ր փողոցը պիտի երթաք, տիկի՞ն:

— Կանգ առեք քիչ անդին:

Իշավ անշուք փողոցի մը անկյունը և հետիոտն շարունակեց ճամբան: Զով էր գիշերը. հակառակ ատոր սակայն, պաղ քրտինք մը կողողեր իր քոնքերը:

Հասավ իրեն տրված հասցեին.—գեղեցիկ ապարանք մը, ծառազարդ, ընդարձակ պարտեզի մը մեջ շինված: Երկաթեցանկապատ մը կեզերեր պարտեզը: Դուռը փականք չուներ, այլ անոր տեղը պարզ նիգ մը, զոր մարդ կը բանար դուրսեն քաշելով շղթան:

Հերանուշ մտավ պարտեզը և զգույշ քայլերով քալեց դեպի տունը: Մութ էին բոլոր սենյակները, ի բաց առյալ մեկ հատեն, որ կը գտնվեր գետնահարկի վրա: Պատսպարվելով թուփերու ետին՝ Հերանուշ մոտեցավ այդ սենյակի պատուհանին ու տեսավ ատելի թուրքը, որ իր ամբողջ հասակավ երկարած՝ կը մրափեր դիվանի մը վրա:

Հանգստության համար ան քակած էր բաճկոնակի կոճակները և թուցուցած մեջքի գոտին: Քովն ի վեր կը

բարձրանար սատափե սեղան մը բեռնավորված կիսալիք  
բաժակներով և պնակներով։ Ըստ երեսութին՝ Հաքքը պետ  
ճամբած էր տան բոլոր սպասավորները գալիք հյուրին հետ  
միս-մենակ մնալու համար. սակայն չաղթահարելով ար-  
բենալու փորձությունը՝ հյուրի գալին առաջ ճաշակած էր  
բոլոր գրգորի խմիչքներն ու աղանդերները, այդպիս պատ-  
ճառ ըլլալով իր զգայագիրկ անկման։

Հերանուշ արհամարհելով ամեն վտանգ և առաջնորդվե-  
լով միմիայն վրեժի զգացումն ու իր ազգակիցներուն ծառա-  
յություն ընկելու վեհ նպատակեն՝ մտավ տունը, որուն դուռը  
ըստ կարգադրության բաց ձգված էր։

Անձայն, բայց հաստատ քայլերով հառաջացավ գեղի-  
լուսավորված սենյակը։ Բաց էր անոր ալ դուռը։ Զգուշու-  
թյամբ գետինը շրջեց խավաքարտե տուփը։ Հետո առանց  
ժամանակ թողլու որ Պիպի գեպի իրեն գար՝ գոցեց սենյակին  
դուռը։

Հերանուշ կես ժամ ետք վերադարձավ տունը ու իր սե-  
նյակը քաշվելե ետք նշարեց, թե ինչպես ձեռքերն ու ծուն-  
կերը կը դողդղային հուզումն։ Աշխարհի մեջ ոչ մեկ կին  
պիտի համարձակեր նման հանդուգն արկածախնդրություն  
մը ընելու, եվ սակայն ինք ըրած էր՝ քնեածական վիճակի  
մեջ գտնվող անձի մը պես, առանց իր գործած արարքին ա-  
հավորութինեն սոսկալու։

Այդ գիշեր չկրցավ քնանալ երբեք, և կամ, եթի կոսկերը  
կապարի պես ծանրացան պահ մը, խսկույն բացավ դանոնք՝  
ցնցվելով խառն ի խուռն երազներու առթած երկյուղեն։

Առառն հիվանդի պես ելավ և գնաց խոհանոցը, ուր  
տիկ։ Հոիփսիմե առանձին կը նախաճաշեր։ Սեղանին վրա  
գրված էր հայերեն լրագիր մը։ Հերանուշ վերցուց զայն և  
արագ ակնարկով մը լափեց լուրերու խորագրերը։ Արտասո-  
վոր ոչ մեկ լուր գտավ անոնց մեջ, տարբեր հարց, թե եթէ  
արտասովոր գեպք մը պատահած ըլլար գիշերը... լրագիրը  
ի վիճակի չէր զայն անմիջապես տպելու։

Կեսօրը անց հնչեց փողոցի դրան զանգակը:

Կարծեք հանկարծ կեցավ հեք կնոջ սրտին զարկը: Արդյոք սստիկաններ գտած էին իժի հետքը և եկած զի՞նքը ձերբակալելո՞ւ: Գերմարդկային ձիգերով զսպեց հուղարմները և գնաց բացավ դուսը:

Ժամկոշ աղբարն էր եկողը, անձնվեր մարդ մը, որ համախ կայցելեր ձերբակալյաներու ընտանիքներուն, տեսնելու համար անոնց մանր-մուճր գործերը: Բուխսիրու հայքը բարեկց տանտիրութին և խեղզով ձայնով մը գոչեց.

— Տիկ, Հերանո՞ւշ, բարի լուր մը բերի ձեղի:

— Բարի լո՞ւր:

Հերանուշ ամբողջ էռվյամբ սարսուց, ու այցելուն կեսրոջ մոտ առաջնորդելով հարցուց թե՛ ի՞նչ էր բերած բարի լուրը:

— Զիմացա՞ք, գոշեց ժամկոշը հրձվագին, հայտայաց շունը սատկեր է:

— Ո՞ւ շունը:

— Գատը-գյուղի արյունարբու դահճապետը... հայ երիտասարդները Զանկըրը աքսորով Հաքըր պեյքը:

— Ինչո՞ւ... ի՞նչ եղեր է որ...

— Գիշերը, քնած ատենը, թունավոր միջատ մը կամ սոզուն մը խայթեր է զինքը: Կըսեն թե մարմինը սեփ-սեղեր է:

— Գտե՞ր են խայթող միջատը կամ սոզունը:

— Ուրկե՞ պիտի գտնեն... անշուշտ պարտեզեն եկավ և զարձյալ պարտեղ փախավ,—հետո խաչակնքելով երեսը, Ձորության մեռնիմ Ամենակարողին... եթե ուզե՛ ի՞նչ հըրաշքներ չի կրնար գործել:

Հերանուշ ավելի հարցում շըրավ. այժմ իր տեղը տիկ. Հորիսիմե դողդոջ ձայնով մը կը հայտարարեր.

— Բազմաթիվ անմեղներու արյան մտած էր... Զքրմանալի չէ, որ Աստուծմե գտած է իր պատիժը:

— Գիտե՞ք, տիկին, ըսավ ժամկոշ աղբար, ւելելով՝

Յուրը, այս Հաքքը պետք կոչվող ճիվաղը՝ քաղաքական ասպարեզ մտնելե առաջ, Պալքանյան պատերազմին բժշկապետ Ֆղած և շատ մը քրիստոնյա զինվորներու մահվան պատճառ եղած է: Անցյալները Տոքթ. Գաբրիելյան անունով զինվորական բժիշկ մը այդ մասին կը խոսեր մեր թաղի ավագերեցին: Անոնց խոսակցութենեն իմացա, որ պր. Թաթովի սրունքը կտրող մսագործն ալ՝ ան է եղեր:

Ժամկոչի մեկնումեն ետք հարս և կեսուր զարհուրած նայեցան իրարու երեսը: Եվ այնուհետև տիկ. Հոփիսիմեն երբեք չհարցուց Հերանուշին թե՝ ո՞ւր էր և ի՞նչ պատահած Պիպիին:

## ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

Ժամը մեկն էր, երբ Պրակա նավը իր կոկորդը լայն քացավ ու ճանկավոր երկաթները թափեց քարափի պղտոր ջուրերուն մեջ: Եվ քիչ մը հետո, քերվոտող գոմեշի նման՝ ցեխոտ կողերը բսեց եղերքի սպրկուկ քարերուն ու անշարժ կեցավ: Ապա նավաստիները տենդով կապեցին հաստ շվանները ամրապինդ սյուներուն: Չորս շաբաթ և երկու օր ճամբորդեր էր ծովերուն վրա, օվկիանոսին վրա ու հիմա թոքերուն աղի ջուրերը կը պարպեր ձայնավոր հևալեն: Շուտով ծանրությունը պիտի պարզվեր ու ինքն ալ պիտի հանգստանար, գոնե ատեն մը:

Զմրան արեւոտ օր մըն էր թեև, սակայն, ցուրտ հովը խենթ գալիք մը պես կը պարեր շոր կամրջակին վրա: Եվ ճամբորդներ, որոնցմե շատեր կուգային Մերձավոր Արևելքի հին ու թշվառ քաղաքներեն, անլեզու օտարականին հատուկ գողով շփոթված՝ անհանդարտ կը սպասեին պետական պաշտոնյաներու ժամանումին, ներքնասրահի մեջ, անկանոն խումբերու բաժնված:

Անոնցմե մեկը, վարագ Վարժապետյան, դեռ թարմ պատանի մը, կը ճեմեր վերի կամրջակին վրա: Անսովոր հոգերը իր ապրած կյանքին՝ վաղուց անոր դեմքին վրա գծեր էին լուրջ ու խոհուն երանգներ: Եվ անոր նեղ ճակատը, որ գիշերն ի լույս քրտներ էր տառապեցնող զերմեն, հիմա ուինտ էր ու վարունգի նման կը զովանար: Անօրինակ ու

միայն ոմանց ըմբռնելի տենչ մը կը խաղար անոր մտերիմ աշքերուն մեջ: Ու շարաձմի տղու մը պես ցատկութեց, ետ ու առաջ վազեց քանի մը անգամ ու հանկարծ կանգ առավ: Սուլեց եղանակը իր սիրուծ գեղջկական երգին ու սկսնակ պարողի մը նման քմահաճ զգայնությամբ ոստոստեց: Անոր ձեերը ձկուն և հաճելի էին: Շուտով տարօրինակ համարեց իր այդ ընթացքը: Առաջին անգամն ըլլալով իր տղայությունը այպանեց: Իր տարիքին, իր բնական խառնվածքին անհամապատասխան լրջություն մը եղավ իրենը: Անժանոթ միջավայրը ուժով մը ապտակեց զինք, անակնկալ կերպով, հանկարծ: Այլևս պիտի ծրարեր իր թեթևությունը տղայության ու հագներ տարացը հասակավորին: Ասիկա դժվար գործ մըն էր Վարագ Վարժապետյանի համար:

Համբաքայլ մոտեցավ կամրջակի ձովին ու անոր վստահացավիր գիրուկ կազմը: Եվ այդ գիրով գիտեց նավամատուցին: մեջ լիցված բազմությունը: Խսկույն մտարերեց իրեն տրված հրահանգը: Շիտկվեցավ, ծոցի գրպանեն հանեց հայերեն լրագիրը և անոր անունը այլոց ցուց տալու մասնավոր գիտումով ամբողջովին բացավ, բոլորովին տարածեց զայն: Ու իբրև թե անփուլթ իր այդ ըրածին՝ շանաց ուշադրությամբ կարդալ խմբագրականը, որ երկրորդ էջին վրա, երկու սյունակի լայնքով, վերեն կ'իշնար մինչև վարը: Հազիվ կարդացել էր պարբերություն մը, երբ նայեցավ մատվներուն՝ որոնց վրա գեռ սև բիծեր կային: Իր մատներով շարեր էր այդ հոգվածին և թերթին բոլորը տառերը հատիկ-հատիկ, հինգ շաբաթ առաջ, լման հինգ շաբաթ առաջ: Այն ատեն տղա էր, հիմա, սակայն տարիքավոր մըն է: Այնքան շուտ և շատ փոխեց զինք այդ համբորդովթյունը:

Լիբանանի փոքրիկ հանրապետության մայրաքաղաքին, Պեյրութեն, կուգար Վարագ Վարժապետյան: Թուրքիո հայոց բռնի արտագաղթի տարին, որբերու կարավանին հետ, ապաստանած էր հոն, և հետո դարձել էր անոր քաղաքացին, կնքված թուղթով, գիրերովը ֆրանսացիներուն և արաբներուն:

— Ատիկա ապահովության անբեկանելի վկայական մը չէ, ըսավ իրենց այն երեկո, ակումբին մեջ գասախոսող պարոնը, որովհետև Ֆրանսան, հետպատերազմյան Ֆրանսան դարձեր է անձնասեր, անհավատարիմ, եսապաշտ դիվանագետ:

Ուրիշներ ծիծաղեցան ու ծափահարեցին այդ խոսքերը, բայց Վարագ Վարժապետյան երեակայեց իր անցյալը ու Համարձակեցավ վանկ միսկ արտասանել:

— Կիլիկիան, բացականչեց այդ կուսակցական գործիցը, որ աշխարհը շրջեր էր քանի մը Հեղ, Հայկական Կիլիկիան, զոր բռնաբարեցին անամոթ ֆրանսացիք, օր մը, և շուտով, պիտի քրքչա իր դեմ դավողներուն երեսն ի վեր:

Վարագի դեմքին վրա ցատկեց խոշոր ժպիտ մը: Ինք դեռ կը մտածեր իր մասին: Գոնե այդ կնքված թուղթով ջընջեց իր ինքնության վրային մահիկին ստվերը: Լիբանանցի էր Հիմակ ու ամեն տեղ զինք այբակս պիտի ձանչնային պաշտոնյաները, ամենեն ստրուկները և ամենեն երեկիները:

Իր այդ բնթերցումին պահին Վարագ Վարժապետյան անհամբեր կ'ակնկալեր, որ մեկը, անձանոթ ձայնով, իր անունը կանչեր: Վայրկյանները կը շարժեին բաց ծովին վրա ծգված մակուցի դանդաղությամբը ու ուել ձայն լսեց, որ իրեն թվեր հայրական, մտերիմ ու սիրելի: Հուսախարի մը անախորժ տրտմությամբ լրագիրը վար առավ աշքերուն դեմեն: Նույն ատեն, անխուսափելիորեն, նայվածքը իշավ Հանդիպակաց կողմը, քարափի կայանը, ուր Հիմա, ավելի շատ թիվով, հավաքվեր էին իրենց ճամբորդները դիմավորողներ, երշանիկ հուզումով, կարոտի մորմոքով, իրենց մուշտակյա վերաբերուներուն մեջ առատորեն քրտնելով:

Զգայնոտի անհանգստությունն արդեն հապճեպով գրւտորվեցավ Վարագի աշքերուն մեջ ու երկար թարթիչները կարծրացան: Եվ Հարցական խորհուրդները իրարու բաղիսեցան իր մտքին մեջ: Արդյո՞ք ան չէր ստացած իր հեռագիրը, որ երեկ տվավ, անթելով: Անկարելի՛ է, բոլորովին անկարելի՛ է ատիկա, մրմռաց: Անպայման առավ հեռագիրս: Բայ-

մը պատահեցավ, թերեւ տգեղ, ողբալի, արգահատելի բան։ մը պատահեցավ։ Մտահոգող բառեր էին ատոնք և տրտմուռեն լոեց։ Հետո երկմտությունը զինք մոտեցուց ժխտական գաղափարին և ուժեղ ու դիմացկուն հավատքով ըսավ, օ՞հ, ատիկա բացարձակապես անկարելի է։ Եվ գրեթե այլայլանքով խուզարկեց գրպանը ճագեթին ու հոնկե դուրս բերավ տրցակ մը թուղթ։ Պահարաններուն մեջեն զատեց հատ մը, որուն վրա ապահովագրության կարմիր կնիքը իր ամուրդորշմը զարկեր էր տեղ-տեղ։ Բացավ զայն ու դարձյալ կարդաց խոշոր ձեռագիրը, Ամերիկայի թանձր թուղթին վրա.

«Կուսանկարիդ նման երեցիր կամրջակին վրա, տղա՛ս, որ ճանչնամ դքեզ։ Լրագրին ճակատը պարզե քարափին դիմաց և կարդալով զբաղվիր։ Բայց, չի մոռնաս, միշտ ունկընդիր եղիր ձայներուն, որոնց մեջեն պիտի իմանաս քու անունըդ կանչող իմ ձայնս։ Հոգիս կը վկայե, որ պիտի շշփոթվինք, իսկուն պիտի ճանչնանք զիրար...»։

Նամակին ընթերցումը դադրեցուց ու վերստին փորձեց իր ծանր դերը։ Իր տարազն ու ձևերը շիտակ էին։ Կապույտ կերպասե զգեստը աղվոր կը վայելեր իրեն, իսկ հորիզոնագույն փողկապը այնքան պարզ կ'երենար ճերմակ շապիկին վրա։ Գորշ գլխարկին լայն երիզները նորաձեռության համապատասխան էին։ Այդպես լուսանկարված էր Պեյրութին մեջ, վերջի օրերուն։ Եվ այդ նկարեն հատ մը դրկած էր իր անծանոթ հորը, սա մակագիրով, — «Զիս ճիշտ այսպես պիտի տեսնես, հա՛յր, միտքդ պահե։ Ես ալ քու նկարդ միշտ գըրպանիս մեջ կը պտտցնեմ»։

Բայց գեռ իրեն շհասավ ձայնը, որ իր անունը արտասաներ անծանոթ ճնշուններով։ Սիրտը նեղցավ ու մարմինը պրկվեցավ։ Ու այս անգամ իրավեն կարդաց լրագիրը, նույն իսկ քաղաքական լուրերը, նույն պահուն կարծես զգաց երեց ընկերոջ, Սեղրակին, ներկայությունը։ Ան, երբ կը կապեր թերթին փորձը, ուշիմ աշքերը լայն կը բանար և խզված ձայնով կըսեր.

— Այսօր ալ ստրուկ եղանք դիվանագիտության։

Ինք կը խնդար:

— Լրագիրը, տղա՛ս, Վարա՛գ, շար մարդոց ճարպիկ գործերուն արձագանքն է:

Ավելի շատ կը խնդար Վարագ:

— Որովհետև դիվանագիտությունը պիտի ապրի ու զարդանա, առառու և իրիկուն թերթի սյունակները պիտի կապվին ու մամուլին տակ պառկին: Եվ ատիկա ամեն օր, կանոնավոր և չափազանց կրկնված ձևով:

Վարագ խնդութքը կը դադրեցներ ու կը դիտեր ընկերը:

— Զէ որ արեն ալ այդպես կանոնավոր է: Լուսինն ու աստղերն ալ այդպես կանոնավոր են:

Կը վերադառնար քովք տառերու տուփին ու երերածով կը շարեր հողվածին մնացյալը: Սեղրակ դեռ կը քարոզեր.

— Այո, ձա՛ս, մենք քաղաքական լուրերը կը շարենք, որովհետև ատելություն դրդողները կը ստիպեն, կը պահանջեն:

— Մեր գործը լրագրություն է, Սեղրա՛կ աղբար:

— Եթե աշխարհի բոլոր թերթերը շտպեն քաղաքական լուրերը, բնա՛վ, այն ատեն դիվանագիտությունը սովամաշ՝ կ'ըլլա, ձագո՛ւկս:

— Ատոր կ'ըսեն պարապ խոսք:

— Եթե մարդիկ դիվանագիտություն շխաղային հայոց գլխուն ես ու դուն չորս անգամ գաղթական չէինք ըլլար: Վաղը մյուս օր դուն մեյ մըն ալ պիտի գաղթես, մինչեւ Ամերիկա պիտի երթաս:

Ու երկուքն ալ լոեցին:

Եվ հիմա ինք կանգնած է Ամերիկայի դուռին առջև, անբնական դիրքով: Զանձրացավ իր այդ արվեստական ձեւվերեն ու դարձյալ հենեցավ երկաթի ձողին, շափահաս աղշտկա մը մանրազնին հետաքրքրությամբ դիտեց ժողովուրդը, զիմա խումբերու բաժնված՝ կը շրջագայեր: Անշուշտ անոր հիմա խումբերու բաժնված՝ գրագայեր: Անշուշտ անշարելի էր այդ այլազան դեմքերուն մեջեն զատել հատ մը, որ նմաներ իր ծոցին գրպանը քրտնող լուսանկարին: Ու Վա-

գավագի սիրտը տրոփեց արագ, և ցավագին: Պիտի չգա ան,  
որբեթե լսելի ձայնով ըսավ ու գլուխը կախեց:

Բայց ինչո՞ւ չէր գար այն մարդը:

Իր տարիիքի ամբողջ օրերուն մեջ անհունորեն ցանկացեր  
էր այդ երջանիկ հանդիպումին: Պապենական օճախին առաջ  
նստած իր մեծ հոր փարթամ գրկին մեջ այդ օրը երազեր  
էր: Արյունի և մահվան օրերուն՝ զոհարան բարձրացող գառ-  
նուկի անմեղությամբ այդ հեռավոր մարդուն ներկայությու-  
նը բաղձացեր էր: Գերության մեջ, սովոր տիրապետության  
ժամանակ ուզեր էր, որ այդ մարդը օգնության հասներ և  
գինք փախցներ և ուսին վրա դրած՝ տաներ գեպի ազատու-  
թյուն: Արտագաղթի մշուշոտ ու ցուրտ գիշերները աղոթեր  
էր այդ մարդուն գրին և դրամին համար: Եվ այն ատեն  
հուսախար չեղավ: Ու ահա՛, երեսուն օր ու գիշեր օտար և  
անգութ ծովերու տարածությունը կտրելով, հասեր էր սա  
օտար նավամատուցը, որ այդ անծանոթ մարդուն գիրկը  
իյնար, վերստին մանկանար, և առաջին անգամ ըլլալով  
ուրախ ժպիտով հարեր՝

— Հայրի'կս, սիրելի՝ հայրիկս:

Ու շտեսավ այդ անծանոթ հայրիկը, Ասեց անոր օտառ-  
ուտի ձայնը: Խորունկ շոնչ մը առավ: Աղի ջուրեն կարծրա-  
ցած օդը ներշնչեց տարտամ մարդու մը տրամադրությամբ:  
Արդեն սիրտը սեղմվեր, բուռ մը եղեր էր: Աշքերը հայտնա-  
պես, կը տառապեին հուզումեն, արտասուրի ծանրութենեն: Հակասական ոշինչ ուներ անոր այդ զգայությունը: Իրավ որ  
չէր փախնար, չէր սարսափեր նոր Աշխարհեն: Վերջապես  
ինք կուպար Հին Աշխարհեն, կյանքի սպառնացող բոլոր ար-  
հավիրքներու միջավայրեն: Անցած էր իրենց կրկնության մեջ  
Յուշալին գեհեններե, ու, իշած էր վար՝ տաժանելի գոյզու-  
թաներե: Կասկած չկար, որ ան կը դիմանար ամեն տեսակ  
զրկանքի, միայն թե տեսներ այն մարդը, այսօր, սա քարա-  
փին վրա: Կուզեր, որ անոր թեւերը տարածվեին իր պարա-  
նոցին շուրջը, կուզեր, որ անոր խոսքերեն ծորած քաղցրու-

Բյունը վայելեր, և կուտակված սերերուն համը առնել կուզեր:

Բայց չկար այն մարդը:

Եթ ինքն ալ պատանի մըն է այլիս, պապենական հարեւեն վաղուց զրկված պատանի մը, ահավոր խորշակներեւ անցած: Իրեն հանդիպած մարդը կարծես դարձավ իր ոխերիմը, դաժան ու ահավոր: Դժբախտ հավատք մը եղեր էր իրենը, թե բոլոր մարդիկ չար են հոգիով, սրտով ու մտքով: Արոներ էր կենդանի ապացուց մը, որ թյուր կարծիքը փոխեր, բայց գեռ չեր գտած զայն: Չափազանց ծանր դատաստան մըն էր ըրածը, ինչու որ այդ անծանոթ մարդը, եղավ երկու տարի, իրեն գրեր է շատ նամակներ ու ճամբեր է առատ դրամ: Ահավասիկ անոր խոշոր պարգևը հիմակվան իր վիճակն է, այնքան ճոխ, այնքան հանգիստ: Ինք առաջին կարգի ճամբորդ մըն է վայելուշ զգեստներով, լեցուն քամեկով: Պետք է տեսնար այն մարդը, անպայման, անոր հայտնելու իր սրտագին շնորհակալությունը, իր երախտագիտությունը:

Բայց անոր ճայնը չելավ, ոչ ալ ինք երևավ:

Այդ անհավատալի կատարկը զգվելիորեն տգեղ էր, ցընցոտիներ հագած ուրվականի մը կը նմաներ: Համբերությունը սպառած, մտահոգ ու թախիծը աշքերուն մեջ՝ վարագ, դանդաղ քայլելով՝ իշավ ներքնասրահը, ուր, մեյ մեկ խորշոր սիկար բերանուն անկյունը նստեցուցած՝ պաշտոնյաներ հիմա կը հարցաքննեին ստորին կարգով ճամբորդները: Պահ մը համենալի հետո գնաց իր խուցը: Դուսին քով կանգնած էր սպասավորը: Ան եկած էր Վարագի պայուսակեները կրելու:

\*\*\*

Բայց այն մարդուն համար Վարագ գեռ տղա մըն էր, ծծեր մանկեկ մը, մոր գիրկին մեջ հազիվ ճպլակող: Պարզապես խմորի գունա մը, լբացված, չեփված: Այդպես կը հանջնար զայն իր հայրը, Տաճատ Վարժապետյան:

Ան, երբ տակավին ինքն ալ պատասի մըն էր, կ'առներ Վարագը կախօրանին մեջեն ու գնդակի նման վեր-վեր կը նետեր իր մեկ հատիկը, հետո կը սեղմեր կուրծքին, կը համբուրեր անոր սկ մազերն ու սրճագույն աշքերը:

— Հերի՛ք շարչրկես, տղա՛ս, Տաճա՛տ, հերի՛ք է, ձայ-նին մեջ առատ դուրգուրանք խառնելով կ'ըսեր իր գեռատի կինը:

— Ասիկա ե՞րբ պիտի մեծնա, կ'ըսեր ան, երախան կնոց թևերուն վրա գնելով՝ զգուշությամբ և հիացումով:

— Շուտո՛վ, Տաճա՛տ, շատ շուտով կը մեծնա իմ տղատ և օր մըն ալ, հասակ քաշած ու հաղթանդամ, դեմդ պիտի կանգնի: Այն ատեն դուն պիտի ամշնաս:

Տաճատ կը ժպտար ամեն անդամ, որ կինը այդպես կը պատասխաներ: Եվ անոր այդ խոշոր ժպտար կը վերածվեր խնդուքի, բարձր և անսահման խնդուքի, որ միշտ ալ երշտ-նիկ պահուն միայն կը հայտնվի մարդոց մեջ:

Եվ այդ տեսարանը պարզվեցավ Տաճատ Վարժապե-տյանի մտքին մեջ, երբ շոգեկառքի ճաշարանին մեջ, ճա-շավերճի սուրճը խմած պահուն սիկրեթը վառելու լուցկի մը կպցուց: Հապենապով քակվեցան ծրարները իր հին հիշատակ-ներուն ու ինք այլակերպվեցավ, վերստին ապրեցավ քաղց-րությունը հին օրերուն: Ինչքա՞ն տարիներ վագեր էին իրա-րու ետևե սա բանուկ մեքենային նման: Սակայն իրը եղած էր ճակատագիրը հայու մը, կարծր կապարով գրված, ան-սրբագրելի, անշնչելի: Արդեն տնկած շիթիւս ծառ մըն է եղեր հիմա, մտածեց, արմատները պինդ, տերեները դալար: Բայց, ափսո՛ս, ես պիտի դիմավորեմ երիտասարդ մը, որ ինծի օտար է, ես ալ անոր: Զարանե՞նք բախտ, շատ ուժով հարվածեցիր զիս, շատ ուժով:

Ամերիկայի հողին վրա ոտք դրած օրը Տաճատ Վարժա-պետյան ծունկի եկավ և ուխտեց, որ քանի տարին գյուղ պիտի վերադառնար: Բայց իր որոշման թվականի լրումին ծագեցավ Համաշխարհային Պատերազմը: Ալ մնացյալը գուն երևակայե՛, ընկերոջ մը ներկայությունը զգացողի մը մտեր-

մությամբ զրուցեց Վարժապետյան, միտքդ բեր մեր ցեղի նահատակությունը: Հայրս, քույրերս ու մեծ թիվով ազգականներս ինկան սուրերուն տակ ժողովուրդի մը՝ որ ոճիրին քուրմն է, արյունով կը հագեցնե ծարավը: Մեծ գերդաստանի մը բեկորները մնացին անտուն, անտեղ:

Արդեն որդեգրեր էր նոր հայրենիք մը, դարձեր էր անոր քաղաքացին հավատարիմ, վստահելի, ժիր ու կորովի, իր քրտինքի վաստակովն ապրող: Է՛ջ, Տաճա՛տ, շատ մի մտմտար, թող ըլլա ողջություն, միշտ նորեր կը ժմնին, կը բռնեն հիներուն տեղը: Աս ազատ երկրին մեջ պիտի գա ապրելու Վարագս, հանգիստ ու ապահով: Իրմով պիտի երարի կյանքը այստեղ հավաքված հայության:

Հիմա հովի արագությամբ կը սուրար շոգեկառքը, իր բարակ ձայնը տարտղնելով մերկ դաշտերուն վրա: Տաճատ Վարժապետյան կարծես լսեց արձագանքը վայրկյան մը առաջ ինքնովին ըստածներուն, ու հիմա այդ խոսակցությունը, առանց վերջակետի հոդվածի մը պես, խոտելի եկավ իրեն, ձևով ու միօրինակ տարագովը: Ինք հայրենակարուտ հայ մըն էր ու այդ տաքուկ իղձով մնաց անդամը ժողովրդական ակումբին, գնաց հոն գումարված ժողովներուն ու սարքված դասախոսություններուն: Հավատքնին լքողներ, դասալիքներ շատ կային, բայց ինք մնաց աննկուն, անդրդվելի, ընդունեց բախտին սաստիկ հարվածները: Ստույգ էր, որ այդ պարտությունը եղավ իր ազգին վիճակը, և սատնաշունչ մրրիկները գրեթե ամեն օր կ'իշնային հովիտները հայոց աշխարհներն Բայց հույսի պատիկ, նվազուն լույսը գեռ կը գիմանտար, զեռ կը պլալար բարձրավանդակին վրա:

Եվ բեմն ու մամուլը իրեն պես արի ու զոհող մարդոց կը խրատեին համբերություն, վստահություն, որովհետեւ շուտով պիտի սպառի հովերուն ուժը և այն նիշար լույսը պիտի ողողե գյուղ ու գավառ, դաշտ ու ավան, և մարդոց հոգին ու էությունը:

«Հայաստանի ապագան պայծառ է, ընկերնե՛ր, ու շուտով հոնկե մեզի պիտի գան աղվոր լուրեր: Անոնցմով պի-

տի սրտոտինք, պիտի թարմացնենք մեր սերը, մեր զգացումը, մեր հավատքը: Հիմա Քեռին կանգներ է մեր սահման-ներուն վրա և մեր հին թշնամին կը սաստե, որ կիձը ներս քաշե, խոժոռ չնայի մյուս ափը Արաքսի»:

Այսպես խոսեր էր գործիչը նախորդ իրիկուն: Այսպես կը մշակեին միտքերը այն ատենուն մարդոց՝ բեմն ու մամուկը: Վերջապես Տաճատ Վարժապետյանն ալ գիտեր, որ իր հասակակիցները, այսքան հեռու մայր երկրեն, բայց անոր ազատության համար պայքար վարեցին օտարին դեմ, թշնամիին դեմ, հայրենադավավներուն դեմ:

Եվ այդ գեղուն հրայրքով Տաճատ Վարժապետյան միամիտ իղձն ունեցավ իրարու բազգատել տղուն և իր գաղափարները: Դուրս բերավ քառակուսի գիծերով թուղթին վրա գրված նամակը, սփոնց զայն սեղանին վրա ու դարձյալ սիկար մը վառելով հանդարտ շունչով կարդաց:

«Եյս օտար քալաքին առջև, սիրելի՝ հայր, եղավ երկու օր խարիսխ ձգեր է մեր շոգենավը: Քիչ մը առաջ վերադարձա ընդարձակ քաղաքի բազմախուռն փողոցներեն: Չորս ժամ պտտեցա հոն կառով, ինքնաշարժով, ոտքով: Այստեղ մարդոց ճաշակը բազմագույն է, սուրբ է, զարդացած է, և անոնց ազատությունն ալ գրգիռ կուտա քեզի, որ անոնց մեջ կենաս, հալիս, ձուլիս: Ատոր համար ես հիմաշատ կը կարոտնամ պապենական տունս ու մեր հին ավանդությունները:

«Ես, որ ասոնք լման շտեսա, այլ սորվեցա մորմես ճամբաներուն եղերքը բերով գարնանային ճեղեղի նման կայտառ սիրով, և օտարներու մութ խոցերուն մեջ գիրկապ կարդացի գիրքերը մեր, ու մեր նահատակներու դիակուցտեն հարություն առնող վաղինակ երեցի սուրբ քարոզներովն ու հոգեզմայլ շարականներովը ճանշա իմ եկեղեցիս, իմ ազգությունս, ես ինքս, մկրտության հավատքով և սիրով:

«Ես կ'ուզեի վերադառնալ գյուղը հայկական ու հոն, ծերունի մշակին հետ, վառվուն ուսանողին հետ, խոհուն վարժապետին ու զվարթ աշուղին հետ լծկիլ անիվին, դարձնել

զայն այնպես արագ, այնպես սրտուտ, որ մեր կերտած կենցաղն ըլլա սքանչելիքը մեր ապրած դարուն:

«Եկեղեցի մը մտա, հաստ սլուներով, բարձր կամարներով պֆնազարդ խորաններով եկեղեցի մը, որ խունկին ու մոմին անուշաբույր հոտը իսկովն կ'սպառեր քարե ծերպիքուն մեջ: Մեր գյուղին մեջ մինչդեռ երկինքը այդքան ալ հեռու չէր մեզմե, և մասն ու նշխարը մեր ափերուն մեջ՝ սուրբերուն հետ կը մտերմանացինք:

«Կը վախնամ, կը դողամ այս մեծ քազաքի հոմանուշիներին, և դառն ակնարկով մարդոցմե: Անոնց շունչը ցուրտ է, անոնց խոսքերը շունին քաղցրիկ շեշտ մը: Այս ճամբորդությունը զիս դառնացուց: Ես Հայաստան երթալու էի: Եվ ահա Ամերիկայի Միացյալ Նահանգաց գեսպանի ստորագրությունը զիս իր երկիրը կը ճամբեր:

«Բայց ես կ'ուզեի մեկնիլ իմ Հայրենիքս ու հոն թափել բոլոր կաթիլները ճակատիս քրտինքին: Պարզապես կը սոսկամ ձուլում բառեն: Կը կարծեմ, որ անոր պատիժը ունի ահավոր ոխ մը, որ կը քամե, կը լուծե զքեզ: Ես կ'ուզեմ ապրիլ մեծ հորս պես, անոր կենցաղովը, հայուն հավատքովը, հայուն խոսքերովը, հայուն դիրքերովը:

«Սա Լիզպոն քաղաքի մեջ, կյանքը այնքան պերճ է, այնպես շքեղ ու գրավիչ, որ արվեստական ծաղիկի մը կը նմանի: Հոն շեմ լսեր հայերեն վանկ մը, բառ մը: Եվ հոդ, ավելի մեծ քաղաքներուն մեջ, հայ անոնք չի լսողներուն թիվը միլիոններու կը համնի: Ինչքա՞ն խորունկ է այդ ծովը, ինչպես ալեկոծ, մարդ կը խորասուզի, կ'անհայտանա:

«Երեսակայցե՛, իմ սերունդով վերջ կը գտնե արտագաղթը հայուն և Ամերիկայի հայությունը, ավազոտին մեջ լճացած շուրին նման, օյ մը պիտի ցամքի և հետքն ալ աներևույթ ըլլայ Երեսակայցե՛:

«Ես ավելի դժբախտ եմ, հա՛յր, որովհետեւ քու հոգեկան օրինակիդ կը հետեիմ: Դուն վերապրեցար, ես ողբավիրեն պիտի կորսվիմ:

«Եվ ահա ճամբաս կես եղած է արդեն, շուտով կուգամ

քովզ: Քեզ պիտի ճանչնամ, մտերիմդր ըլլամ, միասին խոսինք, միասին ապրինք, միասին գործինք: Բայց աս տեղ կը դնեմ մեկ պայման: Երբ բացվի գուռը Հայաստանի՝ միասին երթանք հաստատվիլ հոն ու բոլոր հալածանքներին վերապրած մեր տան անունը թող Հիշվի այնտեղ երկա՞ր, երկա՞ր տարիներ:

«Համաձա՞յն ես, Հայրի՛կս»:

Հին օրերու ժպիտը խաղաց Տաճատ Վարժապետյանի գեմքին վրա: Ինք դժբախտաբար չէր հասկցած այն սերը, որ մանկան հետ կը ծնի, անոր նման կ'աճի, հասակ կ'առնե, կ'աղվորնա: Գիտեր, որ այդ սերը կ'անցնի մարդուն երակներուն մեջ, սրտին խորը, ինչպես որ վճիտ առվակը կը հուսի ածուիի կորիներուն մեջն խոսելով, երգելով ու պարելով: Մինչդեռ նժդեհ կյանքի մեջ անոր ապրումը եղեր էր քարուտ դաշտի նման չոր, անջրդի և անախորժ: Բայց նա կերեր էր ծանրությունը մեծ պարտականության մը համառ ոգիով, անտրունչ, ապավինելով հույսին, որ իրեն պիտի քերեր վաղվան երջանկությունը:

Հիմա, սակայն, կը վախնար, կը տատամսեր մոտենալ իրականության: Այսքան տարի անծանոթ մնացեր էին տղան ու ինքը իրարու հետ, և միայն պզտիկ թել մը կար իրենց միջև, որուն մեկ ծայրը Վարագն էր բռներ, մյուս ծայրն ալ ինք: Եթե առաջին ծանոթությունը հիմնովին չհամակե զիւնք, և անոնք մնան առանց շաղկապի, մտքով ու սրտով, զգացումով ու ձգտումով, այն տտեն ի՞նչ պիտի ընե խեղճ մարդը, կծկե՝ այն հարաբերական շվանը, գրպա՞նը գնե, գլուխն առնե՝ հեռանա, կորսվի՝ զանգվածին մեջ:

Եվ ի՞նչպես ալ պիտի կանգներ դիմացը այդ համարձակախոս տղուն: Իր տիկնոց վաղուցվա խոսքը իրականացեր էր, ինք կ'ամշնար, իրավ որ կ'ամշնար իր որդին գիմավորելու:

Այս անգամ Տաճատ Վարժապետյանի ուրախությունը հուզիշ էր, և ընկճված կը զգար իր ամբողջ էռթյամբ: Հիշուզիշ էր, կ'անցներ կ'անցներ իրեն ծանոթ վայրերին: Մոտեցեր

իր վախճանը ճամբուն, և կ'երևնային տուները քաղաքին,  
որուն նավամատուցը պիտի փութար ողջունելու գալուստը  
իր պարմանին:

Պատրաստվեցավ վերադառնալու իր բաժնյակը: Միկա-  
րի տուփը գրպանին մեջ դրած պահուն մատները հանդիպե-  
ցան երկու քառակուսի տուփերու: Դուրս բերավ զանոնք  
ժպիտով մը: Մեկիկ-մեկիկ բացավ տուփերը և անսպառ  
չիացումով դիտեց զարդեղները: Մեկ հատը ոսկյա ժամա-  
ցույց մըն էր, փոքրիկ ու սիրուն: Շոյեց նուրբ շղթան, կա-  
խեց կուրծքին դիմաց, դիտեց, վերստին հավնեցավ ու մեյ  
մըն ալ զետեղեց տուփին մեջ: Մյուս տուփին մեջ, հարս ու  
փեսի ուխտով՝ իրարու քով պառկեր էին ինքնահոս գրիչն ու  
մատիտը: Քանի տեղ, քանի խանութ այցելեց մինչև որ ընտ-  
րեց այլ նվերները:

Բծախնդիր եղավ նաև Վարագի սենյակի առարկաներու  
գնումի ատեն: Լայն մահճակալը, թանձր անկողինով ու թեթև  
վերմակով, դրավ սենյակին կեղրոնը, պատուհանին դիմաց:  
Մահճակալին ձախ կողմը զետեղեց գզոցը, որուն մեջ  
կարգով շարեց շապիկներ ու փողկապներ, ճերմակեղեններ  
կուպաներ, թաշկինակներ ու անձեռոցներ, յուրաքան-  
ուրիս տասնյակ մը: Գզոցին վրա ալ դասավորեց խոզա-  
շուրեն տասնյակ մը: Գզոցին վրա ալ դասավորեց խոզա-  
շուրեն՝ վարսերու և ատամներու, սանտր մը, սրվակ մը  
անուշացնուտ:

Մահճակալին աշ կողմը, լուսամուտին առաջ, դրավ  
գրասեղան մը, որուն վրա, շքեղ շրջանակի մը մեջ առնված  
Վարագի մոր լուսանկարը զետեղեց: Հոն դրավ նաև նոր  
հրատարակված երեք հատ գիրք:

Տաճատ Վարժապետյան այդպես կահավորեր էր իր  
որդուն ննջարանը: Կը գնահատեր այս առիթը, սրտանց,  
որովհետեւ Վարագի շնորհիվ տուն ու տեղ պիտի ունենա:  
Էշ, Տաճա՛տ, մտմտաց, ասանկ օր մըն ալ պիտի դիմա-  
էշ, Վարժապետյան առաջական պատուի ծծկեր Վարագի:  
Վորես այն կինը, որուն թկերուն հանձնեցիր ծծկեր Վարագի:  
Կայարանի գիծերը ճռնշացին շողեկառքի ծանրության

տակ, և խոպոտ ձայն մը լեցվեցավ ամեն կառաշարք ներս՝  
կրկնվելով, նվազելով.

— Փրովիտե՛նս, Փրովիտե՛նս, Փրովիտե՛նս:



Ամեն թեև պայուսակ մը կախած՝ սպասավորը արագ  
քայլերով կ'անցներ բարձրության մեջեն։ Անոր կը հետեւ  
Վարագ, նայվածքը մեյ մը աշ, մեյ մըն ալ ձախ պտտցնե-  
լով։ Սպասավորը վար դրավ պայուսակները, առչեր դուռի  
մը, որուն ճակատի վրա կային սա բառերը, — Անչափահաս-  
ներու Օգնության Մարմին։ Ներսը, աստղագարդ դրոշակին  
ներքե, ժամացուցը երկու անգամ հնչեց, իսկ քիչ մը վար,  
գրասեղանին դիմաց օրացուցին թվանշանները կ'ըսեին  
Մարտ 4, 1925։

Վարագ դրամապանակը հանեց ծոցեն ու երկու կանանց  
թուղթ տվավ սպասավորին, որ, խոնարհաբար, հայտնեց  
խորին շնորհակալություն։ Իր կանգնած տեղը, զանց ընե-  
լով կենցաղի շվայելող բաները, Վարագ մեյ մըն ալ բացավ  
հայերեն լրագիրը ու շարունակեց խմբագրականին ընթեր-  
ցումը։

Նույն ատեն կառապանին սակը վճարելով՝ ընդարձակ  
սրահը մտավ Տաճատ Վարժապետյան։ Արդեն ըմբռնեց, որ  
ուշացեր էր և մտածեց տեղեկատու գրասենյակին դիմել  
ստուգելու հարկ եղածը։ Մանր սննդովներ սալլակին վրա  
բարձած՝ սպասավոր մը մոլտալեն կ'արշավեր։ Տաճատ իր-  
ուկ գգուշություն մեկ կողմ քաշվեցավ։ Իսկույն նշմարեց Հա-  
յերեն լրագիրը, զարմացավ, դիտեց ու կարդաց անունը, Հայ  
կյանք։ Կարծես Հայվատաց, իր գրպանեն հանեց այդ թերթի  
մինույն համարը, որ Վարագ իրեն ճամբեր էր։ Միենույն  
վերտառությունները — Ճեպել Տրուզեր անձնատուր Կ'ըլլան  
Ֆրանսական բանակին։ Երկարութիւն գործադուլը ձախո-  
ղած է։

Տաճատ մտնողի մը մանր քայլերով Տաճատ Վարժապե-

տյան մոտեցավ լրագիր ընթերցողին։ Կանգնեցավ ու հիացումով դիտեց անծանոթ որդին, Վարագը։ Պահերը սահեցան մեղմիվ։ Տիկին մը, որուն երկու փոքրիկները ներսն էին, քավելով Վարագին՝ անցավ գրասենյակ, ցնորական ճիշմը արձակելով։ Ատիկա պատճառ եղավ, որ Վարագ վարառնե լրագիրը։ Հիմա, լրագիրները ձեռքերնուն մեջ, հայրու որդի կը դիտեին զիրար, տարտամ ու անհամարձակ, սրտատրուի ու այլայլած, ուրախ ու երջանիկ։

— Վարա՛գս։

— Հայրի՛կս։

Հայ կյանքի համարները նույնպես կ'ողջագուրվեին գերինը, ոտքերուն քով Վարագ և Տաճատ Վարժապետյանի, իրենց լույս աշխարհ գալեն հինգ շաբաթ հետո, օտար նավամատուցի մը մեջ։

## ՏԻՊԱՐ ՀՈՎՀԱՆՆՈՒ ԵՎ ՀՈՒԴԱՅԻ

Ա.

Մոնիառնասի փառքը՝ Քուփուլ սրճարանը նստած ենք:  
Նկարիչներու այս սակարանին մեջ, արվեստագետները իրենք  
զիբենք ցուցադրելու եկած են: Երեք հոգի ենք, սեղանին վրա  
երեք գավաթներ, ոև ու ձերմակ իրար խառնված:

Սրճարանը լույսերու մեջ կը բարձրանա, արևելյան բաղ-  
նիքի մը աղմուկը տարբեր լեզուներու և հնչուններու, հա-  
մերգի վերածված, կը պլավի մտնողներուն օձիքին: Թավշա-  
յին ծուփը կը նկարվի բոլորին ալ աշքերուն մեջ, ու կը  
թուցնե խոռվահույզ հոգիները:

Հանկարծ ներս կը մտնե Աշոտ Ամիրխանյան, իր հի-  
նավուրց վերաբերին մեջ կծկտած, դեմքին դալուկը թեթև  
մը գունավորված, աշքերը պղտոր, բայց շարժական ու ան-  
հանգիստ:

Գուրսը՝ սաստիկ ցուրտ մը կա. Աշոտ՝ սրճարանին տաք  
օդեն կը թոթվի, ինչպես աքաղաղ մը, որ հավնոցեն գուրս  
կ'ելլե արևոտ օդով մը: Սրճարանին լույսերը զինք կը շւաց-  
նեն, վերաբերին օձիքը կը շտկե, կը նստի մեր քովը, ու  
կը նայի դառնացած մեր երեքին: Ցավագին ժպիտ մը կուր-  
փագծի իր մաշած դեմքին վրա. նիհար ծնոտին երկայնքին  
շագանակագույն մորուքը անկանոն բուսած, հաստ շրթնե-  
րուն վրա մութ շագանակագույն պեխերը խոզանակի նման  
կտրված, ավելի կը սաստկացնեն իր տխուր խորհրդավորու-  
թյունը:

— Զեր կործանելիք Փարիզը ձեզի, ես կը մեկնիմ այս  
Սողոմ-Գոմորեն:

— Ինչո՞ւ, ըսինք երեքս միաբերան:

— Կին մը զիս կը հետապնդե երեք օրե ի վեր:

Խնդացինք բրբջալիր. «բախտավոր ես, Աշոտ», ըսավ մեկը: Մյուսը վախցուց զինք,—գաղտնի ոստիկանունի մը կրնա ըլլա: Ես միշտն ճամբա մը գտնել կարծեցի.

— Հին բարեկամուհի մը, թերեւ, Աշոտ, մոռցված սեր մը...:

Խորապես ախրեցավ Աշոտ:

— Ի՞նչ կ'առնես, հարցուցինք երեքս միասին:

— Քաֆե քրեմ մը:

Քանի մը ըոպե հազիվ անցավ, երբ տակավին մեր գարմանքը շէր հանգստացած—Աշոտ ցատկեց, սոսկումե ավելի ջղային շարժուձև մը ըրավ և գույն նետեց: Կարծեք սատանա մը իր աշքին առջե կանգնած ըլլար, և հուզված՝

— Ահա զիս հետապնդող կինը, մոլտաց:

Արդարե, մեզի շատ մոտիկ, սեղանի մը առջև տեղավորվեցավ պարզ, բայց խնամքով հագված հասուն կին մը, ժպտագին մեզի նայեցավ, բայց նայվածքը սևեռած էր Աշոտին վրա, աշքերը սև էին, հոնքերը աղեղնածել քաշված, բայց մազերը, գարեջուրի փրփուրներու նման բաց խարսյաշ, ալիք-ալիք դուրս թափած էին իր պատիկ սև գլխարկին քովերեն և ծոծրակեն, դեմքը զգալի կերպով շպարված, այնպես որ ազգությունը ճանշնալ անկարելի եղավ:

Աշոտ ջղայնուտած, ուզեց հեռանալ սրճարաննեն: Թող շովինք որ մեկնի, մենք ալ մեր կարգին հետաքրքրվի սկսանք:

Կինը անտարբեր, գլանակ մը վառեց և գարեջուր մը ապսպոեց, տրցակ մը թուղթ դրավ սեղանին վրա և գծել սկսավ:

## Բ.

Պերլինեն նոր էր վերադարձած Աշոտ Ամիրխանյան:

Փարիզ եկած էր, շատերուն պես փրկության հույսով: Խոշոր գանգվածը հոս է, ըսավ, տեսնենք ի՞նչ կը բանին մայրաքաղաքներու ամեննեն ալեկոծին, Փարիզի մեջ: Աշոտ հուսաւըքված ուզած էր թաղել իր անցյալը, լույսերու հրաշախոռ պատրանքներուն մեջ: Զինքը կը գտնեինք Հայկական ամեն տեղ, սիրալիր և կասկածու:

Աշոտ շատ բան կարդացած էր և փիլիսոփայությունը լավ ուսումնասիրած, Քանթեն մինչև Պերկոն, Տարվինեն մինչև Այնշթյան, Տեքարթեն մինչև Քայզերլինկ, Նիցշե, Ֆրյոյտ և իր ուղեղը այնքան լեցված է, որ իր ներքին վառ երակեն եռուն գաղափարները հորդած են: Աշոտ պատմաբան է, ամեն մեկ խոսքին վրա կը բերե նշանավոր գիտնականի մը մտածումները, նման ուսուցիչն, որ գաս կուտա գիրքը ձեռքին: Ամեն դեպք պատմությամբ կլուծե Աշոտ, գրած է երկար ուսումնասիրություն մը, որուն անտիպ ըլլալը Հպարտությամբ կը հիշե:

Ուղղամիտ է Աշոտ, Հակառակ իր զարտուղի գաղափարներուն:

— Երկիր, Հայրենիք, ժողովուրդ առածգական բառեր են, կը գոչե Ամիրխանյան, բայց վի հուզմիր: Դրամատերները տգրուկներ են, որ ամբոխին արյունը կը ծծեն, եթե արյուն շունենա ժողովուրդը, տգրուկները շեն փակիր...

Աշոտ կյանքի հրատապ Հարցերուն առջև անտարբեր է, իսկ հիվանդագին Հետաքրքրությամբ կը տարվի աննշան դեպքերով: Կը սիրե կատակներ ընկել:

— Արվեստագետները՝ Հմայիշ խամաճիկներ են, գիտությունը փորձառու անծանոթ մը, որուն ով ըլլալը շենք գիտեր, և եթե գիտնանք՝ արգելքը կ'իյնա: Բնությունը անսահման թյուրիմացություն մը: Մարդը՝ նվազ ապուշ քանձակատագիրը, ավելի խենթ, քան բնությունը, Հավասարապես արագ ինչպես պատահարները, ուժեղ և անզգա՝ տարերային օրենքներու դեմ:

— Իսկ սերը, Հարցուցինք օր մը Ամիրխանյանին:

Դեմքը խոռվեցավ, շպատասխանեց: Պատմությամբ զայն զուծել դժվար էր, միայն զգացինք, որ զինք անհանգիստ ըրած ենք:

Ամբողջ ուսանողության շրջանին, ոչ մեկ սիրային արկած, ոչ մեկ կանացի ժպիտ չէ եկած խանգարելու իր աշխատանքները, և պայծառացնելու իր մոռայլ դասերը:

Ազգերու պատմությունը քանի ուսումնասիրած է, այնքան ատած է թագավորները, իշխանները, ավատապետները, որոնք սիրուհիներու կրքու ալեկոդումներուն մեջ խեղզած են ժողովուրդներու տառապանքի և զրկանքի աղաղակները: Ներոնյան շրջանեն՝ Կեսարի արքունական հեշտանքի, Խրախնանության ցանկահարուց կիրքերուն դեմ ընդվզումի ալերը ավելի դառնացուցած է:

Ճանշած է կինը, միսի և կիրքի խանութներուն մեջ, մաս առ մաս գնած էր զանոնք հնչուն համբուրներով, սակայն այդ կանացի գիրկընդիմառնումներուն գերագույն երանությունը ոչ մեկ սարսուռ տված է իր հանդարատ հոգիին և իր քարացած սերը ժխտած է զզվանքի հեշտախոռվ և զգայաճու մեղկությունը, այնպես որ իր զգացումները թառամած, իր պատանիի խենթ երակները վաղաժամ ցամքած ու կիրքերը մարած են, կարծեք Աշոտ պաշտոնն ունենար մարդկային ցանկությունները հիմքեն խախտելու:

— Կինը պուպրիկ մը, կինը աստվածային էակ մը, այս, կեղծ էակ մը: Կեղծիքի արձան մը, վա՞յ ձեզ կուապաշտներ...:

Թել այս տղան որբան մարդամոտիկ է և սիրալիք, ուրախ պահերուն գեղեցիկ կ'երգե, և իր անուշ քնարական ձայնը հոգիներուն խորը կը տանի երագի և դառնության աարսուռներ, հայրենիքի մելանուշ հնչյուններ արձագանգելով:

— Տըլե յամա՞ն...:

Ինքն ալ, երբ նոր եկած էր Վանեն, ուսանելու համար

Պերլինի համալսարանին մեջ, երազի նման խոռվիչ տղամարդ էր, ուժեղ, տիրական, գնդերները շլապինդ, նայվածքը կենդանի, այտերը առողջ և լեցուն, մինչդեռ հիմա հալածված մարդու մը վախը կա իր նիշար դեմքին վրա:

Քիչեր գիտեն, թե ինչ տիսուր բան է փիլիսոփայություն ուսանիլ, երբ թարմ երիտասարդ ես, որոն զգայարանները փոխված են մտածումի, քիչեր կը հասկնան այդ փորձության կախարդիչ գաղտնիքը: Ապրիլը հաճախ երանություն մը չէ եղած, ո՞ւր կը մնա փիլիսոփայորեն ապրիլը

Այս հարցերուն Աշոտ մեկ պատասխան ունի, անփոփոխ և տիսուր:

Խելք ծախելու համար, խենթ պատք է ըլլալ:

Ամիրխանյան խելք չէր ծախեր, այլ ձրի կուտար հանդիպողին, կուտար ունեցածն ու շունեցածը, առատորեն, անպառ...:

#### Գ.

Սարսափի մատնված է Աշոտ, կնոջ ներկայությունը զինք կը նեղե: Մրճարանեն դուրս ելավ, վիզը ներս քաշեց Մոնֆառնասի լուսաշող պողոտային. շիղերը այնպես լարված էին, որ սրունքները դողալ սկսան, սարսափելի ցուրտը գեմքին մորթը խածավ,՝ փոթթեց: Աշքերը ավելի խորը իշան, ինչպես երկու գամեր հաստ կաշիի մը վրա մխված, այնքան անգութ կերպով, այնքան բրտորեն:

Աշոտ անզգալաբար պանդոկ վերադարձավ, մտքին մեջ վախը և կասկածը զիրար կը բգքտեին: Թաշկինակի մեծությամբ սենյակ մը: Երկնքին կապույտը աշքի մը պես շարժական... Աշոտ երկնցավ անկողինին վրա, դողդողաց բուրը մարմինովը, այնքան որ հալածված կը զգար: Ինքինքը նավու մը վրա կարծեց: Շուրջը թուղթի դեղերով գիրքեր, կապոց-կապոց, բաց գիրք մը սեղանին վրա գերեզմանաքարի մը շափ խոշորցավ աշքին, մաշած համբու պայուսակ մը անկյունը կը քնանար քոսոտ շան մը պես, երկու աթոռ,

որոնք բեռնավորված էին հագուստներով...: Կառարանը աշ-  
քեր ունեցավ, հրեղեն փայլերով...: Աշոտի աշքերը մթագնե-  
ցան և ուղեղին մեջ խոշոր պարապ մը գոյացավ: Այսպես  
մնաց երկար, սաստիկ տկարություն. մը զգաց, ուզեց վեր-  
ցատկել, բայց ուժը պակսեցավ: Հանկարծ դուռը զարնվե-  
ցավ:

— Պարո՞ն, թույլ կուտա՞ք վայրկան մը ձեզ հետ տես-  
նիիլ:

Աշոտ արձանի պես լուս մնաց. ուզեց ճամբել կինը, որ  
զինք կը հալածեր այսքան ատեն, սակայն չկրցավ խոսիլ,  
լեզուն բռնվեցավ ու կնոջ նայեցավ պաղատագին...:

— Երկու խոսքով բացատրեմ այցելությանս նպատակը,  
հարեց կինը իր ամեննեն սիրուն ժպիտով:

— 1 —

— Թեսկս պառմանալի թվի այցելությունա:

— Յանուարի 1-ի 33 թվականի  
— Յանուարի 1-ի երեսը, տիկին, կմկմաց Աշուա:

— օճառը նկարուեմի մը, պարո՞ն:

— ի՞նչ ի՞նձմեն:

— Աշավասիկ, դուք այնպիսի դիմագիծ մը, այնպիսի...  
ինչպես ըստեմ, տիպար մը կը մարմնացնեք, որ կ'ուզեմ ձեզ  
նկարել, դուք առաքյալ մըն եք, պարո՞ն, իսկական առաքյալ  
մը, զոր կը փնտռեմ երկար ատենե ի վեր:

Աշոտ շունչ մը առավէ Նկարչուին մոտեցավ և հնատա-  
քը բրդությամբ գիտեց Աշոտին քայքայված ու մոխիր դարձած  
դեմքը, որ տակավին ազնվական նրբություն մը ուներ. գի-  
տեց զայն խելահեղ հուզումով, ինչպես վերագտնված թան-  
կագին հնություն մը: Հին բարեկամներու պես խոսիլ սկսան:  
Աշոտ հիմա հանգստացած էր, բայց տարօրինակ հուզում մը  
զգաց ինքն իր մեջ, անբացատրելի պահանջ մը վերհիշելու,  
վերապելու անցյալը:

Նկուրչուհին բացատրեց իր ծրագրած նկարին մասին,  
«Հիսուս և իր տասներկու Առաքյալները», որ կոչված է իր  
գլուխ գործոցը բլլալու. մոտիկ ժամանակեն պիտի վերջաց-  
ներ զան, և քմծիծաղով մը, որ ավելի փաղաթշական ընել

ուզեց նկարչուհին, Աշոտին բացատրեց, որ Հուդայի տիպա-  
քը պիտի ներկայացնե իր նկարին մեջ, և ավելցուց անմի-  
ջապես.

— Անշուշտ չեք վիրավորվիր, հոգիով և սրտով բոլորո-  
վին հակառակն եք Հուդայի Սկարիովտացիին, սակայն որ-  
քան նման եք իմ երեսակայությանս մեջ ծնունդ առած Հու-  
դային, մանավանդ, երբ ձեզ դիտեցի քիչ առաջ գուրսը, կը ծ-  
կըտած, նայվածքնիդ շվարած և մտահոգ: Չեզ կաշկանդող  
վախին մեջ գտնել կարծեցի Հուդայի ներքին տառապանքը:

Կինը կանգ առավ. պահ մը խոր լուսություն տիրեց, ու  
կամաց մը, գրեթե ամշնալով.

— Դուք պիտի ըլլաք անիմանալի Հուդան մտքիս պատ-  
կերին....

Աշոտ գլուխը երեցուց դատապարտյալի համակերպու-  
թյամբը, մինչ նկարչուհին կը խոսեր, գլանակները վիրար  
կը վասեին: Խոսեցավ իր փայլուն ապագային մասին, պատ-  
մեց ու Հոգնեցավ:

— Վեց տարի առաջ սկսած եմ այս նկարս Պերլինի  
մեջ. բոլոր Առաքյալները նկարված են մասնավոր մոտել-  
ներու վրա: Հիսուսը, որ մեծ խնամք և աշխատանք պար-  
տադրեց ինձի, Վենետիկի մեջ միայն հաջողեցա վերջացնել:  
Մանավանդ Հովհաննեսի և Հուդայի տիպարները դժվարու-  
թյամբ գտած եմ:

Աշոտին աշքեր տարօրինակ փայլ մը առին, նայվածքը  
դամված մնաց նկարչուհիին վրա:

— Հովհաննեսը նմանապես ձեր երկրացի, գեղեցիկ տղա-  
մարդ մըն էր, որ գտած էի Պերլինի մեջ, մոտավորապես  
վեց տարի առաջ:

Աշոտին մթագնած երեսակայությունը վառեցավ հան-  
կարծ: Հրաշքի նման բան մը լուսավորեց մտքին բոլոր ան-  
կյունները: Հիշողությունը երազի պես պրիսմակեց հոգիին  
մեջ՝ տիրանուշ երանգներով:

— Աչքեր մը ուներ, այդ արևելքցին, որոնք այնքան  
հմայած էին զիս:

Աշուտ ձեռքը ճակատին տարավ. քրտինքով ողողված էր:  
Մեղք մը խոստովանելու ճամար շարժում մը ըրավ ու մոտեցավ նկարչուհին և պատմեց, որ վեց տարի առաջ ինք արդեն նկարված էր Պերլինի աշխատանոցի մը մեջ: Նայեցավ երկար ու տխուր: Այս կինն էր ուրեմն, որ զինք նկարած էր իբրև տիպարը Հովհաննես Առաքյալի: Ուրեմն ինք այնքան փոխված էր, որ նկարչուհին չէր ճանչցած: Հովհաննես և Հուգա...: Վեց տարինե՞ր...

Բայց այս կինն ալ շատ փոխված էր, անճանաչելի ըլլալու աստիճան: Ավելի երիտասարդացած, ավելի թարմացած: Այն ատեն մազերը սկ էին, այտերը նիհար, հոնքեցը հաստ, մորթը անփայլ: Նայվածքը տարբեր էր: Իր վարպետ շպարին տակ ի՞նչ մոգական այլափոխություն, Աստվածիմ:

Անդունդի մը երկու եզրերը կանգնած՝ իրարու նայեցան: Աշուտին տխուր սենյակը տարօրինակ կենդանություն մը առավ: Կնոջ զգլիսիշ բուրմունքը, գրավիշ ձայնը խառնված՝ Հիշատակներու հետ գինովություն մը պարգևեցին Աշուտին: Այս հանկարծական հայտնությունը հոգեկան նոր պիճակի մը ենթարկեց զինք: Անցյալ գեղեցիկ օրերուն մեջ սուզլած, անով թաթախված իրեն այնպես թվեցավ, որ Հովհաննեսի կերպարանքը առած է ու նստած Հիսուսի կողքին: Միսիթիք թուզություն մը պաշարեց իր հոգնած մարմինը:

Նկարչուհին շվարած մնաց, նայեցավ Աշուտին երկա՞ր, երկա՞ր, և հուզվեցավ: Վեց տարվան մեջ այսքան փոփոխություն...:

Աշուտ ուզեց խոսիլ, պատմել, բայց հոգին այնպիսի փոթորիկի մը բռնված էր, որ կոկորդին մեջ ալեկոծություն մը զգաց, բառերը լեզվին ծայրը եկան ալիքներու պես և փշրկեցան ու մարեցան...:

Ինչպէս պատմեր իր վեց տարվան ուսանողության դառն զրկանքներն ու հուսախաբությունները, որ իրեն համար ամբողջ կյանք մը կ'արժեին հիմա, հավիտենականություն մը կը թվիր: Եվ հետո, այս կինը կրնա՞ր ըմբռնել այդ ան-

ցյալին բովանդակ տառապանքն ու մեծությունը. Հոգին  
նկարիչ մը չէր անշուշտ, ոչ ալ սիրտ թրթոացնող պարփկ մը:

Աշոտ ուրեմն պիտի ուզեր, որ այդ պահուն նկարչուհի  
մը չըլլար ան...:

Այլ սակայն ան ճիգ մը ըրավ, բացատրեց թե, ինք Փեր-  
լինի համալսարանեն փիլիսոփայության առքթորի վկայական  
ստացած է, ու գլուխը կախ, հեգնորեն ավելցուց.

— Վեց տարվան մեջ երկու տիպար ներկայացուցի...:

Նկարչուհին գուրգուրոտ խռովեր ըրավ, և մանավանդ  
հրաշալի գտավ Հուգայի տիպարը, և աճապարեց մեկնիլ իր  
արվեստանոցը:

Աշոտ ոտքի կանգնեցավ քոնեն նոր արթնցողի տատա-  
նումներով, և երբ գուխս ելան սենյակեն, նկարչուհին հար-  
գանքով մեկ կողմ քաշվեցավ և իբրև դերագույն մխիթա-  
րանք մը, մեղմորեն ըսավ.

— Զեզմե վերջ, խնդրեմ, Հե՛ր տոքթուր...:

## ՀԱՅՐԵՆԻՔԵՍ ԴՈՒՐՍ

Մութ էր: Խաթուն մայրիկ սրունքները տիղմի մեջ խրելեն, խարխափելեն հասավ տիկին Սիրանուշին տունը: Լուրերը լավ էին այդ օր՝ բաղդատաբար: Գաշնակից հարձակողականը սկսած էր ու թշնամիին գիծերը՝ ճեղքված: Գուցեայս վերջինը ըլլա, կըսեր ծերունին մտովին, ու վերջ գտնեպատերազմը:

Այդ իրիկուն չքակեց կծիկը հարցումներուն: Ուրախ, արյունի կայտառ վազք մը երակներուն մեջ, վերադարձավ տուն, ուր թոռները կը նիրհեին խոնավություն ծորող մթության մը մեջ:

Չորս ամիս կըներ, որ Խաթուն մայրիկին զավակը ռազմաճակատ զրկված էր: Ո՛չ լուր, ո՛չ թղթիկ: Եվ երևակայեցեք ընտանիք մը, առանց այրի, քաղաքի մը մեջ, ուր կամեն ինչ՝ բացի գութե ու կարեկցությունե: Տիկին Շուշան Խաթուն մայրիկին հարսը՝ տկար բազուկներուն դիմեց: Երկու ամիսներու աշխատանք մը քայքայած էր ամեն ինչ՝ հյուսվածք առ հյուսվածք, ու կարճ հիմանդրությունե մը ետք, մահը—օրհնություն մը թշվառին համար—վերջակետ դրած էր այդ կյանքին: Այժմ Խաթուն մայրիկ առանձին էր իր երկու թոռներով: Արամը՝ իննը, կուսինը հազիվ տասներկու տարեկան: Առանձին... քաղաքի մը մեջ, ուր կյանքը թշվառին համար գոյապայքար մըն է գառնուկի և գայլի: Իմացավ, թե կիներ, այրեր, պատանիներ ծովեզը կերթային քուրչի կտորներ, փայտ, երկաթ հավաքելու: Գնաց թոռներով: Կրցան հարմար վայր մը տեղափորվիւ: Մինչև կեսօր հավաքեցին բավական բան: Շախեցին: Վաթսուն դահեկան:

«Ղաթսուն դահեկան երեք հոգիի համար, քաղաքի մը մեջ, ուր հացին քիւն ինսուն դահեկան է:

Սակայն նյութականը չէր Խաթուն մայրիկին մտահոգությունը: Նեղ օրեր տեսած էր ան՝ շատ...: Վարժված էր զբուկանքներու, ինչպես իր ցեղը: Միշտ փառք կուտար պատառ մը հացին համար զոր հաճախ կ'ունենար, ու ամեն անգամ, երբ «փառք քեզ Տե՛ր» մը կը թուր շրթներեն, կը հիշեր զավակը, իր միակ հույսը, որմե ոչ մեկ լուր՝ չորս ամիսներե ի վեր: Ու ահա գեղ մտածումներ, մուրճի հարվածներ կարծես, կը ցնցեին խարխուկ կառուցվածքը ծերունիին քանդելու աստիճան: Ո՞ւր երթար, որո՞ւ դիմեր: Ո՞ւ որ կմոտենար իրեն, ոչ ոքի ինք կրնար մոտենալ:

Տեսավ մարդիկ, որոնք լրագիր կը կարդային: Լուրեր ուզգմանակատեն...: Մոտեցավ: Տարօրինակ անուններ լսեց: Հանկարծ մտածում մը ցաթեցավ ամմպոտ ուղեղին մեջ: Այդ անունները քաջամարտիկ զինվորներու անունները ըլլալու են, ըսավ մտովի: Եթե կարենամ լրագրին ունկնդրել ամեն օր, զավակիս անունն ալ պիտի լսեմ անկասկած: Միթե զավակս մյուսներեն նվաճ քաջ է:

Սակայն... ո՞վ պիտի ուզեր լրագիր կարդալ իրեն: Չուներ ազգական, ո՞չ մեկ սրտցավ հայրենակից, ո՞չ իսկ ծանոթ մը: Երկրի մեջ ունեին ազգականներ, բարեկամներ ու ծանոթներու անհաշիվ բազմություն մը: Ամուսինը սիրված հողատեր մըն էր ու քանինե՞ր ազատած էր ստույգ մահ: Սակայն ժամանակը հեղաշրջած էր ամեն ինչ. երախտապարտները անտարբերներու փոխված էին հիմա, նույնիմկ ապերախտներու: Բայց տիկին Սիրանուշը երեմն կ'այցելեր իրեն, որպիսությունը կը հարցներ, ու տոնական օրերում... փոքր ծրար մը: Ան կարդալ գիտեր: Վազեց, տկար սրունքները քաշքաշելեն: Խնդրեց, որ ամեն օր լրագիր կարդա իրեն: Պատճառը. չէր ուղեր ըսել:

Ու ամեն իրիկուն, Խաթուն մայրիկ, թոռները կես փոր կամ անոթի անկողնին ցրտության հանձնելե ետք, կ'երթար տիկին Սիրանուշին տոնը, մտիկ կ'ըներ լրագրին ծայրե-

ծայր... երբ չէր լսեր իր զավակին անումը, հուսաբեկ, խոր  
ու տիսուր «զարմանալի» մը կը շանջեր: Վերջին հանդիպումին  
մեծ հարձակողականը ուրախացուցած էր ծերունին, խորհե-  
լով, թե վերջինը պիտի ըլլար ասիկա, վերջավորությունը  
պատերազմին:



Խաթուն մայրիկին զավակը խորշակ կը զգար միայն  
դեմքին վրա, հոգիին մեջ: Զինվորագրված էր ան, ընտանիքին  
գոյությունը ապահովելու համար: Ամիս մը նոր ուազմաճա-  
կառ զրկված էր: Այժմ, չորս ամիսներ, չէր կարողացած  
դահնեկան մը իսկ ուղարկել: Գիտեր, թե կյանքը քաղաքին  
մեջ, թշվառին համար, օրոստօրեական մահ մըն էր: Ու իբ  
ընտանիքը, զավակները հապա...:

Այսող ավագի անհունությանը մեջ կապույտ երկինքներ  
կը հեռանալին ու գորշությունը կը տիրապետեր ձնշող  
մուայլությամբ: Ռումբերը, որ կը պատռեին շեկ միջոցը, կը  
պատռեին նաև իր հոգին, արյունող հոգին: Խրամի մեջ  
ավագե թումբերու ետին, հրացանը անորոշության, երեսկա-  
յությունը կը ճախրեկ երկիր, հայրենի տուն... Ահա երիտա-  
սարդ կյանքը, ուազմիկ կյանքը կը քալեր ուղեղին ծալքերուն  
մեջեն՝ հսկայածե:

Ծննդավայրի ինքնապաշտպանություն... կյանքի ու մահ-  
վան գոյապայքար... խոսմբ մը մարտիկներ, քառասուն օր,  
ոռումբի, հրղեհի, կրակի մեջ... փախուստը թշնամիին խու-  
ճապահար... հալածանքը փախչող թշնամիին... խրամե  
խրամ, տունե տուն, մահվան հետ գիրկընդիմառն, բայց  
մահվան տիրելով. կը խոյանա, կը հարվածե, կը ստանա  
վերքեր, սակայն փյունիկ մը կարծես... ու հանկարծ գեհեն  
մը պայման մշուշի մեջ կը թաղեր մարտնչող հական, և  
ահա դարձյալ հարցումներու ուրվականներ—մինչեւ ո՞ւր այս  
ավագի անհունությանը մեջ, ինչո՞ւ—կ'օղակվեին վիզինք  
շնչահեղձ ընելու աստիճան գինք:

Մութին մեջեն նահանջի ճամբան կորոներ, սոված դիմքերը  
դափակներուն՝ երևակայությանը մեջ՝ պաղատանքի մը պես  
կառող: Նահանջ... մեծագույն անարգանքը իրեն, ցեղին:  
Սակայն... մահ մը հոս, կ'ըսեր մտովի, չորս ուրիշներու  
մահը պիտի դառնա քաղաքի մը մեջ, ուր ապրելու համար  
պետք է մերկանալ ամեն բանե... Ու ահա, օր մը, թոթա-  
փած ամեն ինչ—քաջություն, խիզախություն, առնականու-  
թյուն—կը փախչեր ան կյանքի մը, որ անիմաստ էր, զգիւ-  
թի: Կը փախչեր հանգույցի հանգույց, կայանե կայան, մահ-  
վան սարսափը միսին ու ոսկորին նույնացած, երբ մահը  
գտավ զինք գորշ ամայության մեջ: Հեռուներեն, կապար  
մը—վատ ձեռքի ծնունդ—մովեցավ կողին ու տապալեց  
զինք: Խորունկ «օ՛ֆ» մը, խուլ հառաջներ և կցկոտոր բառեր  
քովի ընկերոջ փսխսալե ետք, անապատը զինք ալ ծածկեց—  
ինչպես բյուրավորներ—ավագ առ ավագ, առանց խաչի,  
առանց աղոթքի:



Խաթուն մայրիկ կը շարունակեր իր այցելությունները  
առանց ընդմիջումի: Ու միշտ նույն հարցումները, ան-  
մերք...: Տիկին Սիրանուշը բոլորին կը պատասխաներ համ-  
րերությամբ: Երբեմն կը ստիպվեր հերյուրել, սակայն չէր  
կարելի գոհացնել հետաքրքրությունը ծերունիին:

Ու օր մը, շարագուշակ շշուկներ իր զավկին մահը  
փսխսացին՝ անուղղակիորեն: Փախուստին միշոցին զարնվեր  
է, կ'ըսեին: Լուրը ցնցեց Խաթուն մայրիկը այնպես, ինչպես  
էլեկտրական աթոռ մը՝ մահապարտը: Սակայն ծերունին  
շուտով տրամաբանեց, թե լուրը ձիշտ չէր կրնար ըլլալ:  
Մյուրիմացություն մը ըլլալու էր՝ անկասկած: Իր զավակը  
փախուստ տար... անիմաստ էր, ծիծաղելի: Եվ ահա  
անցյալը, մշուշու ուղեղին մեջ պարզվեցավ հաստ գծերով:

«1920-ի շարդերու ընթացքին, կ'ըսեր Խաթուն մայրիկ  
մտովին, զավակս երբ հազիվ քսան տարեկան էր, ամիս  
մը կրակի ու հրդեհի մեջ, գնդակի ու ոռմբերու տեղատա-

քափին տակ, պաշտպանեց մեր բնակավայրը թշնամի խուժանին դեմ, ուր շորս հազարե ավելի հայեր ապաստանած էին: Վիրավորվեցավ քանիցս, սակայն պատնեշի վրա էր միշտ. խմբակին ջիղն ու կորովը:

«Դարձյալ, կիլիկիո պարպումին, երբ մեր կարավանը հարձակման ենթարկվեցավ արձակագիններու կողմեն, կրկին ինքն էր, իր ընկերներով: Շաբաթ մը ձյունի, բուքի մեջ մաքառելե ետք, ազատեց հազարավորներ կողոպւտե, մահեա:

Ո՞ւ ո՞ւ, կըսեր Խաթուն մայրիկ. տղաս չի փախչիր, տղաս չի նահանջեր, հայը չի նահանջեր: Ու կը պրատեր անցյալը, իր զավակին քաջությունը փաստող դրվագներ կ'ուզեր երևան բերել, համոզում գոյացնելու համար, թե իր որդին չէր ան, որու մասին կը խոսեին:

Սակայն կասկածը բույն դրած էր միտքին մեջ, ու կը կրծեր մասնիկ մը կյանքը, որ կը ծավալեր ցամաքած երակներուն մեջ: Խաթուն մայրիկ այլևս չէր գոհաննար տիկին Միրանուշին լուրերեն: Պարապո ժամերուն կը պատեր ու, երբ տեսներ լրագիր կարդացող մը, կը մոտենար.—ի՞նչ չուր, զավակս, կ'ըսեր մեղմ ձայնով. ու տարօրինակ, անծանոթ անուններ, նետերու պես կը մխվեին սիրտին:

Եվ ահա օր մը, անարկ օր մը—սովորական օր մը հայուն համար—կասկածը ձև ու մարմին առավ, իրականություն դարձավ: Ռազմաճակատեն վերապրող մը բերավ գումը, ականատեսի բառերով, և հանձնեց շնչին խնայողությունը զավակին:

Խաթուն մայրիկ լացավ, երկար լացավ: Սակայն այդ լացը սովորականնեն տարբեր լաց մըն էր: Արցունքե ավելի արյուն կ'արտասվեր: Մերունին նախ ողբաց կորուալը իր զավակին, ապա դառն ճակատագիրը իր թոռներուն, անքախտ թոռներուն:

Դուռ-դրացի փորձեցին սփոփել, մխիթարել, սակայն չկարողացան արգիլել այն, ինչ որ կը ճարճատեր Խաթուն մայրիկին ներսիդին: Փլուզումը եղավ դանդաղ, աննշմարեցի, սակայն վերջնական: Քարքայվեցավ ամեն ինչ. շիդ,

ուղեղ, դատողություն ու մնաց կմախք և մորթ՝ իր վախճանին սպասող:

Խաթուն մայրիկ ձգած էր լուր, լրագիր, ուազմահակատ: Իր երկրորդ տունն էր ծովեզը: Կ'երթար թոռներովը, կը հավաքեր ինչ որ կրնար, կը ծախեր ու պարապո ժամերուն տունե տուն, թաղե թաղ, սա հարցումը շրթներուն.

— Ո՞վ է այս երկրին մեծը, էն մեծը: Ո՞վ կը բնակի:

Ու նույն հարցումը բոլորին. ծանոթ, թե անծանոթ, օտարական, թե այլազգի:

Ոմանք կ'ըսեին, թե այս երկիրը մեծ չունի: Ուրիշներ կ'ըսեին, թե այս երկիրը շատ մեծեր ունի, ո՞ր մեկը կ'ուզես: Ոմանք կոնտոն է կ'ըսեին, ուրիշներ՝ նյու-Յորք:

— Ո՞ւր է կոնտոնը, ո՞ւր է նյու-Յորքը, կը հարցներ Խաթուն մայրիկ զայրացած: Ես էն մեծը կ'ուզեմ, էն մեծը, — կ'ըսեր ցուցամատը միշտ օդին մեջ, ու դգուհ արված պատասխանեն, կը հեռանար բաներ մը մրթմբթալեն:

Ոմանք կը ծիծաղեին, ուրիշներ կը խղճային: Զավկին մահեն ետք այսպես եղավ, կ'ըսեին:

Սննդենի գիներու օրըստօրեական բարձրացումը շատ նեղ կացություն մը ստեղծած էր Խաթուն մայրիկին համար, ու այս պարագան տեսակ մը կատաղություն հառաջ կը բերեր: Մուրա՞լ. կ'ատեր էությամբ: Սակայն գիտեր պահանջել իր իրավունքը, մահվան գինով իսկ:

Բոլոր մյուս օրերուն պես օր մըն էր. երբ Խաթուն մայրիկ Ամանոս հայավանեն Նոր-Հաճըն թաղամասը հասավ, խումբ մը երիտասարդներ մայթին վրա լրագիր կը կարդային: Մոտեցավ ու մտազբաղ երկույթ մը դեմքին հարցուց.

— Ո՞վ է այս երկրին մեծը: Ո՞վ կը բնակի:

Ո՛չ ոք իր ուշադրությունը ցրվեց: Շատ լսած էին այդ անիմաստ հարցումը՝ թափառող ծերունիին:

Խաթուն մայրիկ կրկնեց հարցումը:

Երետասարդները կ'ուզեին ձեռվ մը հեռացնել ծերունին, որ կ'ընդմիշեր իրենց ընթերցումը: Կարեոր լուրեր կային, մեծ հաղթանակներ: Խենթի հետ զբոսնելու ժամանակ չեր:

— Մայրիկ, կը տեսնե՞ս սա մարդք, ըսավ երիտասարդներեն մին, ցուց տալով դիմացեն անցնող սպա մը... ան է երկրին մեծը, էն մեծը:

Խաթուն մայրիկ անցավ պողոտան, Հասավ սպային-ետևն, նայվածքներ հանդիպեցան իրարու, կարծես ժամա-դըրված ըլլային, ու... կառչեցավ քղամիդին՝ ուժգին, երկու ձեռքերով:

— Զավակս ձեզի համար մեռավ, ձեր երկրին համար, էֆենտի, պետք է խնամեք թոռներս, կ'ըսեր ծերունին-ձայնով մը, ուր ցասում և հուզում կար խտացած:

— Ո՞վ է այս կինը, ըսավ սպան անակնկալի եկած:

— Խենթ է, խենթ է, կ'ըսեր հետաքրքիրներու բազ-մություն մը, որ կը ստվարանար տակավ:

— Ամիսներե ի վեր չոր հաց կ'ուտեինք, այսօր պա-տառ մը հաց իսկ չունինք, կ'ըսեր Խաթուն մայրիկ հուզու-մե դողացող շրթներով:

— Հեռացի՛ր, ըսավ սպան բարկացած:

— Չե՛մ ձգեր, մինչև որ շխոտանաս խնամել թոռներս, կ'ըսեր Խաթուն մայրիկ վերշին կայծերը աշքերուն մեջ կու-տակած: Հայրերնուն ողջությանը հիշ եկա՛, կլուխ ցավ-ցո՞ւցի: Չեզի համար մեռավ, ձեզի...:

— Ձգե՛, ըսավ սպան զայրացած ու ցնցումով մը, տա-պալեց ծերունին մայթին վրա:

Գոյապայքարը վայրկյան մը տեսնց հազիվ, սակայն-ան կը խտացներ դարեր, վեց դարերը ցեղի մը պատմու-թյան՝ այսպես, մեծ մոր մը պատմության մեջ:

«Մեռավ, շմեռավ, ուշաթափի է», կը վիճեին ներկաները:

Հաջորդ առավոտ Արամ և Լուսին առանձին գացին ծո-վեզր: Իրենց սովորական վայրը կանգնած, քով քովի, իրար-դրկելու աստիճան մոտ, քաղցած նայվածքներ ուղղելով գորշ անհունության, կը սպասեին փայտի կտորներ, քուր-չեր՝ ալիքներեն:

## ՍՈՒՐԲ ԶՅՈՒՆԻՆ ՄԵջ

Գիրուվկ Կարապետ աղան լավ պատմություն կը պատմեր: Ան նման հորս, որ զմեզ կը ձանձրացներ Ալեքսանդրիային Պոլիս երթու դարձի իր փորձառություններուն պատմությունը վերակրկնելով մեր տան ամեն այցելուի: Կարապետ աղան պատմություններու առատ պաշար մը ուներ: Եվ ամենքն ալ իրական էին: Ինք այդպէս կ'երգնուր: Եթե ես խելոք ըլլայի, երբ ան գար մեզի միջօրեին սուրճ խմելու կամ թուղթ խաղալու: Այսինքն երբ լոիկ ունկնդրեի տարեցներու խոսակցությանը և պարկեցած վարմունքով ալ հրամցնեի գավաթ մը ջուր պնակիկի մը վրա դրած՝ ամեն անգամ, որ իր կոկորդը չորանար, և կը թվեր, որ ատիկա շատ հեղ կը պատահեր—կը կամենար պատմությունը պատմելու: Հատկապես ինծի կը պատմեր: Եվ այն տեսակ պատմություն մը, որ կը կարծեր, թէ մանկական ականչները կը հաճոյացներ: Ասիկա իր մեկ կերպն էր հատուցանելու իմ փոքրիկ ծառայություններուս, զոր ես կը մատուցանեի անոնց այն երկար նիստերուն, երբ ձյուներ կամ անձրևեր և ես ստիպված էի տունը մնալ և ընթացք պահել անոնց մշտատե խոսակցության, թղթախաղին, և սուրճ խմելուն:

Այս մասնավոր իրիկունը ծանր կը ձյուներ և անոր ընտրած պատմությունը կամ իր հարատե դիտողությունը ահպատարափի նկատմամբ հայրս բմբոնելու էր իբրև ակնարկ հրավիրելու իր գիրուկ բարեկամը, որ կենա ընթրիփի: Կարապետ աղան լավ հասկցող մըն էր, անանկ մեկը, որոն ակնարկն ընդունիլը հաճույք կը պատճառե և զոհելն ալ աւրախություն: Իր սիկարը լմնցնելով՝ ան հատ մըն ալ

անցուց թախըմին ծալրը և երկար ատեն դիտեց գուրսը:  
Հետո նոր սիկարը վառելով բաւավ-

— Վո՞ւ, ի՞նչ սաստիկ ձյուն կը տեղա: Զայն դիտելն  
իսկ կը սառեցնե զիս: Ասիկա որքան կը հիշեցնե ինծի իր  
նմանը, որ պատահեցավ մեր գյուղին մեջ, հունվարին: Այո,  
և ասիկա միտքս կը ձգե պատմություն մըն ալ: Իրական  
պատմություն մը: Որդիդ բարի տղա մը եղավ այսօր, դի-  
տել տփավ հորս, և կը նշմարեմ, որ անհամբեր կը սպասե  
պատմություն մը լսելու: Դպավ ուսիս և հարեց, աս ցուրտ  
օդն ու ձյունը ինծի կը հիշեցնեն լավ պատմություն մը:  
Բարի տղու մը պես գավաթ մըն ալ ջուր բեր ինծի: Ասիկա  
վերջինն է, ապա քեզի պիտի պատմեմ պատմությունը:

Քաղաքավար ձևով իրեն մատուցի գավաթ մը ջուր և  
պատմելուն սպասեցի: Կարապետ աղան խմեց ջուրը և  
սկսավ.

— Դուն պիտի շգնահատես այս պատմությունը այնպես,  
ինչպես որ պիտի գնահատեր մեր երկրին մեջ հասակ առ-  
նող մեկը: Մեր հնամենի երկրին մեջ մարդիկ հազիվ թե  
կրնաին իրենք զիրենք ու իրենց ընտանիքը հոգալ ողջուց,  
ալ ո՞ւր մնաց հետ-մահու:

— Եվ կար ու շկար՝ մարդ մը կար մեր գյուղին մեջ:  
Ան կին մըն ալ ուներ: Անոնք շատ շքավոր էին, ինչպես  
շատեր մեր գյուղին մեջ աղքատ էին, և ձմռան գիշեր մը,  
հար և նման աս իրիկվան (գուրս դիտեց պահիկ մը իրեւ  
միջանկյալ), ծերունին հիվանդացավ ու մեռավ: Եվ ըստ  
սովորության, երբոր մեկը կը մեռնի, մենք կը դիմենք գյու-  
ղի երեցին և իսկույն թաղմանական կարգադրություններ  
կ'ընենք: Ու պառավը քուրչերն հագվելով գնաց տերպա-  
պին տունը: Բայց մեր գյուղի քահանան կծի, անգութ  
մարդ մըն էր, և երբ ալրին անոր ներկայացավ արտառվե-  
լով, ու գլուխն եկածը պատմեց և խնդրեց, որ ամուսնուն

Համարի բարի քրիստոնեի թաղում մը կատարե, կղերը հարցուց.

— Բարի քրիստոնեի մը հատուկ թաղումին վճարումն ընկլու կարողություն ունի՞ս: Գիտես, որ շնորհքով թաղում մը դրամ կը պահանջե: Ուէ թաղում դրամով կ'ըլլա անկասկած:

— Ինչո՞ւ տերտերը այդ հարցումն ըրավ, միջամտեց հայրս: Զէ՞ր գիտեր, որ կնիկը ստակ չուներ:

— Զէ՞ր գիտեր: Անշուշտ գիտեր, պատասխանեց Կարապետ աղան: Իմ մայրս, ամեն անգամ որ մեր սեղանեն կ'ավելնար, փիլավ կամ պանիր, կուտար, որ անոնց տանեի: Զէ՞ր գիտեր, շարունակեց Կարապետ աղան զայրացածերեցը շտեսավ ցնցոտիապատ պառավը: Անիկա իր հոտին մեկ անդամը չէ՞ր: Ամբողջ գյուղը գիտեր: Բայց հարցնեիք, թե բարի քահանան ի՞նչ տեսակ հավելված սենյակ պիտի կցեր իր տանը, և կամ ի՞նչ տեսակ՝ գինիի կարաս պիտի ավելցներ իր մառանին մեզ: Լավ էր այս տեսակ հարցումներ ընել, որպեսզի գիտցվեր, թե ինչո՞ւ աս նվասուը կը փորձեր քարը սեղմելով դրամ գյուցնել: Օ՛հ, ան գիտեր, շարունակեց Կարապետ աղան ճարտարությամբ մը: անշատ լավ գիտեր, չէ՞ որ այրիին լուման նույնքան արժեքավոր էր, որքան ուրիշներունը:

Սիրտս կը նեղանար այս բոլոր կողմնակի գրուցներեն, զոր ծերումները կը ստեղծեին: Աս մարդիկը որքան կ'ախորժեին լավ պատմություն մը կոտրածելու իրենց արգահատելի և զայրանալի միջամտությունով: Կարապետ աղան սիկար մըն ալ վառեց ու շարունակեց.

— Ստակ չոնիմ, ըսավ կինը արտասվելով, ամուսինս բնավ շխնայեց: Բայց խնդրեմ, տե՛ր հայր, թաղե զայն և ես ընդմիշտ պիտի աղոթեմ քու առողջության և աստուծուտան բարգավաճման համար:

Բայց բարի քահանան վստահ էր, որ եկեղեցին առանց պառավի աղոթքներուն ալ կրնար ապրիլ, և գիտեր, թե որքան ցուրտ ու անհանգստացուցիչ էր թափորին առջևն իշ-

Նալ եկեղեցին մինչև գերեզմանատունը, ձյունին տակ: Ու պատվիրեց, որ պառավն իր կարելին ընե ննջեցյալ ամուսնուցն: Իսկ գալով իրեն, ուրիշ թաղումի մը պիտի երթար—և իր ժամանակը սահմանափակ էր:

— Ստախո՞ս, բացականչեց Հայրս: Ո՞վ կը խաբես— երեխա՞ն: Ժանտախտ կա՞ր այն տարու գյուղին մեծ: Ո՞չ: Ու ապա ինձի դառնալով՝ երևակայե, մեր Համայնքը մատի վրա կը համրիքր: Ուրիշ թաղո՞ւմ ուներ կատարելու:

Ու կինը տուն վերադառնալով կսկծաց ու արտասվեց խեղճ ամուսնուն դիակին առջև: Այնքան բարձրաձայն լացավ անիկա, որ ամբողջ թաղեցիներուն սիրութ կտոր-կտոր եղավ: Անոր ողբը փշրեց ամենքին սրտերը և գթության կայլակեր արձակեց անոնց աշքերեն: Ու վերջապես քանի մը բարի մարդիկ դիմում կատարեցին քաղաքի մեծերուն, որ ձեռվ մը օգտակար ըլլան պառավին: Մեծերը լսեցին անոնց խնդրանքը ու որոշեցին այցի երթալ պառավին: Երբոր անոնք հասան տունը՝ գտան որ ծերուկ կինը նստեր է ամուսնուն դիակին քով և լալով հոգին կը մաշեցնե:

— Ես աղքատ եմ: Բարեկամ չունիմ: Խեղճ ամուսինս պիտի որդնոտի աշքերուս առջև և ես անզոր եմ բան մը ընելու: Տեր Հայրը ականջ չի տար ըսածիս: Խեղճուկ էրիկս անհող պիտի մնա: Եվ պառավը, այսպես, մեծերուն առջև սրտովին ողբաց:

Եվ ի՞նչ պիտի ընեին մեծերը: Անոնք ալ աղքատ էին— Հնակարկատ և հողագործ: Գլուխնին երերցուցին անոնք ու ամոթով մնացին պառավին առջև, որովհետև ոչ Հաց, ոչ դրամ, և ոչ ալ խորհուրդ մը բերեր էին անոր:

Հետո անոնք առանձնացան սենյակին մեկ խուլ անկյունը—խորհրդակցեցան: Խոսեցան ու խոսեցան, մինչդեռ տիկինը անհամբեր կը սպասեր: Խնդրուցն ելք մը չկրցան գտնել: Հայտնի էր, թե ծերուկը մեռած էր և հարկ էր զայն թաղեւ, բայց ի՞նչպես:

Վերջապես, անհուսության մեջ, Գիրգոր Կովկաս, մեծերեն մեկը, գաղափար մը հղացավ: Ան ըսավ, թե իր մտա-

ծումը թեև այնքան լավ չէր, բայց տեսակետով մը կը պատշաճի պառավին խնդրույն: Եվ, եթե տիկինը համաձայնի իր տեսակետին, նույն գիշերն իսկ կարելի է ընթացք տալ գործին:

— Ի՞նչ է այդ տեսակետը, անհամբեր հարցուցին իր ընկերները:

— Պարզ է, ըստվ Գիրգոր Կովկաս: Քանի որ երեցը պինդգուկի մեկն է, և առավելապես սատանային կը սպասարկե քան սատուծո, և քանի որ Հակառառողջապահական է ննջեցյալը պահել տունը, ուր կ'ապրի անոր տիկինը, և քանի որ մենք դրամ չունինք դիակը թաղելու, գտնելու ենք միջոց մը, անպայման, աս անել կացութենեն գուրս զալու, հարկ է, որ զայն տանինք թաղենք բլուրի մը վրա, ուր հողը ձրի է: Անշուշտ ատիկա մեզի նման երեք ծերունիներու գործը չէ: Սա ձյուներուն մեջեն մինչև բլուրը բարձրանալը երիտասարդի սրունք կը պահանջե: Եվ ննջեցյալը, ծերերուն համար, թեթև բեռ մը չէ: Զայն պետք է կրեն զորավոր երիտասարդ բազուկներ:

Ծերուկները համաձայնեցան: Այդ գործը հատուկ էր ուժեղ երիտասարդներու: Բայց անոնց վճարումը: Ոչ ոք պիտի գիմագրավե աս փոթորիկը առանց վճարումի: Եվ վերջապես, ննջեցյալը ախորժելի չէ, նույն իսկ երիտասարդներուն: Բայց Գիրգոր Կովկաս պատասխանը գիտեր.

— Գինին աման է: Ես կը նվիրեմ մեկ շիշ, եթե գուռք ալ կամիք: Մենք ալ երիտասարդ եղած ենք և գիտենք, թե պուտ մը գինին ամենածանր գործերն անգամ կը թեթևացնե և նույն իսկ ամենեն անախորժ գործը կը վերածե արկածականդրության:

Ընկերները հիացան հայտնված գաղափարին վրա: Ինչու նախապես իրենք շառըհեցան ատիկա: Եվ ծերունիները խոնարհեցին իրենց գլուխները և հանդիսավորապես ուխտելունքին մեյ մեկ շիշ գինի նվիրել: Երբ այրիին հաղորդեցին իրենց որոշումը՝ անիկա հանդարտեցավ ու սատուծո օրինակ հայտնեց անոնց գլուխներուն, անոնց կիներուն

գլուխներուն, անոնց մանկանց գլուխներուն, և անոնց թռուներուն գլուխներուն:

Կարճ ատենվան մը մեջ երեք շիշ գինիին լուրը տարածվեցավ գյուղին մեջ և նույն իրիկունը երեք բեռնակիրներ՝ փոթորիկը հաղթահարելով, Գիրգորի դուռը զարկին: Ամեն մեկը շիշ մը գինի բաժին առած՝ անոնք գացին այրիին տունը ննջեցյալը վերցնելու: Հոն տեղ շինեցին պատգարակ մը, և պառավը քիչ մըն ալ արտասկիլով, իբրև հրաժեշտ, ամուսինը համբուրեց: Երիտասարդները դրին զայն պատգարակին վրա ու սկսան իրենց գնացքը, դեպի բլուրը:

— Ա'խ, ահա՛ քեզի երիտասարդություն, բացականշեց հայրս:

— Ճիշտ է, շարունակեց կարապետ աղան, միենուզնատեն դուրսը գիտելով: Երիտասարդներուն համար եղեր են ձմեռները: Ի՞նչ կը մնա ծերերուն — ինքն իր մասին կը մտածե — ընելիք, բայց միայն արգելափակվիլ ներսը: Տեղավորվեցավ բազկաթոռին գիրկը ու իր սուրճը խմեց: Աւ երիտասարդները ճամբա ինկան խմելով, երգելով, և դիակը պատգարակին վրա օրորելով: Պառավի մրմուն ու օրհնեքը անոնց չհասած՝ կ'սպառեր փոթորիկին մեջ: Ատենը մեյ մը անոնք կանգ կ'առնեին հանգստանալու, խմելու, գոտեմարտելու և ամեն տեսակով զվարձանալու: Արդեն աղեկ մը գինովցան ու զարձան անփուլթ: Ցնցեցին դիակը ուզածնուն պես, ամեն տեսակ խաղեր խաղցան անոր հետ, և փորձեցին, առանց վար ձգելու, զայն վեր-վեր նետել:

Բայց տխուր բան մը պատահեցավ: Անգամ մը, երբ դարձալ պատգարակը վար դրին, որպեսզի հանգստանանկամ խաղան, դիակը սահեցավ ձյունին մեջ ու անհայտացավ: Բայց երիտասարդները, պատգարակը ուսերնուն վրա, քառորդ մղոն ալ ճամբորդելով, շըմբռնեցին պատահարը:

Վերջապես անոնցմե մեկը ըսավ.

— Տրդա՛տ, դուն ալ ինծի պես ուժով կըզգա՞ս: Գինին գորացուց զիս: Բեռը շատ թեթև կուգա ինծի:

Եվլ ի՞հարկե թեթև էր բեռը: Ամենքն ալ զննեցին պատ-  
դարակը ուշադրությամբ և ըմբռնեցին պատահարը:

— Ո՞ւր է մեռելը, հարցուց Տրդատ:

— Ի՞նչ պատահեցավ ծերուկին, հարցուց Աթանաս:

— Ի՞նչ, կատակ կ'ընես, հարցուցին իրարու:

Ցուրան ու մարդուն կորուստը զգաստացուցին զիրենք:  
Եվլ անոնք համոզվեցան, որ դիակը գտնելե զատ ոշինչ ու-  
նեին ընելիք: Բայց ո՞ւր:

— Գտնելու ենք, գոշեցին:

Խեղճ տղաքը այսպես փնտռեցին դիակը գիշերն ի  
զոււս: Բայց բախտը շպատեցավ: Շատ ձյուն տեղացած էր  
և կարգ մը տեղեր՝ մինչև անոնց ուսերը կը բարձրանար:  
Ք'նչպես պիտի գտնեին մեռելը: Անկարելի էր: Հոգնած ու  
սարսափած անոնք գյուղ վերագարձան նույն առավոտուն և  
պառավին պատմեցին պատահարը, և ըսին թե, ծերուկը  
ինչպես աներենութացեր էր պատգարակին մեշտն:

— Աներենութացա՛վ, բացականչեց պառավը զարմացած:  
Ըսել կ'ուղեք՝ կորսնցուցի՛ք, խենթ գինովներ: Օ՛չ, ամու-  
սինս, ո՞ւր ես, ո՞ւր ես: Ե՛տ բերեք զայն, ե՛տ բերեք զայն,  
Հշաց: Օ՛չ, գտեք զայն, կ'ուղեմ վերստին տեսնե՛լ անոր  
հոգնատանչ զեմքն ու ձեռքերը: Իմ սիրուլս գտեք զայն: Եվ  
պառավը անդադար աղերսեց:

Բայց երիտասարդները գիտեին, որ ատիկա անկարելի  
էր: Ամբողջ գիշերը փնտռեցին առանց բախտավորության,  
մինչդեռ պառավը կ'արտասվեր ու կ'ուղեր, որ ամուսիֆը  
ետ բերեին: Երիտասարդները, վախնալով, որ անիկա կսկի-  
ծեն կը խելագարվի, զացին Գիրգոր Կովկասի քով և եղե-  
լությունը անոր պատմեցին: Պաղատեցան, որ ան միշոց մը  
գտնե պառավը հանդարտեցնելու նախքան անոր ուղեղը  
վնասվելը: Գիրգոր անիծեց զանոնք:

— Խե՞նթ գինովներ, ամենքս ալ անպատվեցիք դուք:  
Հիմա ժողովուրդը ի՞նչ պիտի ըսե: Հետո սկսավ մտածիլ իր  
քարեկամներուն, մյուս երկուքին մասին, և մտմտաց, թե  
անոնց ի՞նչ պիտի ըսե:

— Ահա՛ քեզի երիտասարդություն, ըստավ հայրս: Հար-  
բիլ ու խաղալ: Ոչ տարիքի և ոչ ալ մահվան վերաբերմամբ  
հարգանք ունին:

— Ճիշտ է, համաձայնեցավ Կարապետ աղան: Միշտ  
ալ ըսեր եմ, եթե կ'ուզես բան մը շիտակ տեսնել, զայն մի  
վատահիր երիտասարդներուն, այլ ինքդ ըրե, չոգ չէ, թե  
նույնիսկ ծերացած և հոգնած:

Հայրս գլուխը երեցուց, իսկ Կարապետ աղան շարու-  
նակեց.

— Հաջորդ առավոտյան Գիրգոր տեսավ իր ընկերները  
և անոնց հաղորդեց պատահարը: Ծերունիները մատվըները  
խածին և իրենց ծնունդը նկովեցին:

— Այս անպատճությունը պիտի հետերնիս պտտի  
ցմահ, ըսին անոնք: Գյուղին ողջ բնակչությունը, երեցք,  
ի՞նչ պիտի խորհին: Գինով տղաք, գոշեցին անոնք:

Դեռ անոնք կ'անվանաբեկին երիտասարդները, երբ պա-  
ռավը դուռը դարձավ:

— Բան մի՛ ըսեք, խրատեց Գիրգոր Կովկաս:

Այդպես կծկվեցան անկյունը և երկար ատեն մտիկ  
ըրին պառափի ահծեքը: Հետո անիկա սպառնաց, որ ոստի-  
կանության և քահանային պիտի իմացնե եղելությունը:  
Նզովքը անոնց գլխուն թափելով կը պատրաստվեր մեկնիւ,  
երբ Գիրգոր Կովկաս կեցուց զայն: Մյուս ծերուկները կը  
դիտեին, թե ինչ պիտի ըներ:

— Քու կոկիծներդ, տիկի՛ն, մենք կրնանք վերածել եր-  
շանկության, ըստավ Գիրգոր: Եվ դեմքը խաշակնքեց: Մյուս  
ծերուկները նույնն ըրին:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց պառավը: Գտա՞ք ամու-  
սինս:

— Ատկե ալ աղեկ բան մը, պատասխանեց հարգելի  
Գիրգոր Կովկաս:

— Քրիստոնյական թաղում մը, հարցուց պառավը:

— Նույնիսկ ատկե ալ աղեկ բան մը, պատասխանեց  
Գիրգոր Կովկաս:

— Դուք կատակ կ'ընեք տնանկ այրիսս հետ, բարեկացավ անիկա, ու արտասուրը աշքերուն մեջ՝ սպասեց:

— Ո՛չ, ըսակ Գիրգոր: Մեյ մըն ալ խաչակնքեց դեմքը ու ըսակ, «Աղախի՛ն, քու ամուսինդ Համբարձեր է: Օրհնյալ ըլլա անոր Հոգին», և մյուսները կրկնեցին. «Ան կորսված չէ, անոր Հոգին»: Ու Գիրգոր շարունակեց. «Ան կորսված չեն տիկի՛ն: Հայոց որդիք կը պատվեն իրենց մեծերը: Անոնք ձյունին մեջ չեն անհայտացներ մեր ծերունի ննջեցյալը: Քու ամուսինդ բարձակ երկինք անմեղ աղավնիի նման: Ան ետեր ձգեց իր Հոգերը, իր պատդարակը, և աս անդութ աշխարհը»:

Ուրախութենեն լացակ խեղճ կինը: Եվ սրտանց հավատաց իմաստուն Գիրգորի ըսածներուն: Սուրբ պիտի կոչվի իր ամուսինը:

— Հիմա գնա ու բոլորին պատմե եղելությունը:  
Եվ տիկինը ամենուն ըսակ: Եվ գյուղացիք ապշեցան: Օրն ի բուն ժողովուրդը հրաշքի մասին կը խոսեր: Ամենքն ալ գեմքերնին խաչակնքելով կը կրկնեին. «Մեր Սուրբիաս Նալպանտյանը Համբարձեր է—սուրբ մը: Որո՞ւ մտքեն կ'անցներ»:

— Խելացի մարդ մըն է Գիրգոր, ըսակ Հայոս:  
— Խելացի մեկը, ըսակ Կարապետ աղան:  
— Այդքա՞ն, Հարցուցի ես:  
— Համբերե, պատասխանեց Կարապետ աղան: Ապա ըմպեց վերջին կաթիլը սուրբին ու ամբողջացուց պատմությունը:

— Արդեն ժամանակը ուշ է, ըսակ ան ժամացուցին նայելով: Մնացյալը պիտի կարճ կապեմ: Շատ բան ալ չի մնաց: Երբոր գարուն եղավ՝ ուրիշ հրաշք պատահեցավ: Ջուները հալելուն՝ ծերուկին դիմակը գտնվեցավ երեցի տան առջեւ:

— Օհո՛, ձայնեց Հայոս, քահանայի տան առջեւ, Հա՛:  
— Այո՛, ըսակ Կարապետ աղան, տան առաջ նույն կղերին, որ մերժեց զայն թաղել: «Հրաշք մըն է», գուեց

պյուզի բնակչությունը: «Սուրբ Սուրբիաս իշեր է դաս մը  
տալու վաշխառսին: Արհամարհե աղքատները, նոր տուներ  
շինե քեզի, կեր ու պարաբռացիր, մինչ որիշները կ'ըլլան  
սովամահ, աղաղակեցին: Ասովա՛ծ պահե Սուրբ Սուրբիասը:  
Ան պիտի պաշտպանե խեղճերին»:

Ապիրատ քահանան խելացի էր: Վախկոս ալ էր: Իր  
անձնական քսակեն զնեց գեղեցիկ դադար մը ննջեցաւ  
սուրբին Համար: Իր անձնական քսակեն զնեց գերեզմանո-  
ցին Հոգը: Իր անձնական քսակեն վճարեց սարկավագներուն  
ու դպիրներուն և ինք ձեռամբ կատարեց թաղմանական  
կարգը:

— Լա՞վ, ըստավ Հայրս:

— Անկե ի վեր մեր գյուղացիք մեռնիւը երջանկություն  
կը Համարեին: Այլև անոնք քաջ գիտեին, որ ունեոք կամ  
շունեոր, բարի բրիստոնեի թաղումին կ'արժանանային: Քա-  
հանան սորվեցավ իր դասը:

— Պատմությունը վերջացավ, ըստավ Կարապետ աղան:  
Զյունը շատ նստեր է, երկար ատեն պատուհանեն դուրս  
գիտելով՝ վրա բերավ. պետք է երթամ: Տիկինս աղջկանց  
գացած է և ես պիտի պատրաստեմ ընթրիքս: Մինչև որ  
տուն Հասնիմ՝ ժամը ութը կ'ըլլա:

Ոտքի ելավ ու Հորանչեց:


— Կը Հաճի՞ս վերարկուս բերել, խնդրեց ինձմեն:  
Հայրս պատուհանեն դուրս կը նայեր: Մտածկոտ էր:  
Երբ Կարապետ աղային Հրամցուցի իր վերարկուն՝ ան-  
տնտնաց Հագվիլ: Կը գիտեր Հայրս:

— Գավաթ մըն ալ զուր, խնդրեց:

Բայց այս անգամ վերադառնալուս՝ անոր վերարկուն  
ալլուրին վրա ձգված էր և ան ու Հայրս դարձյալ կը ծխեին:

— Պիտի մեկնի՞ս, Հարցուցի:

— Ինչպես պիտի մեկնի, խոսեցավ Հայրս: Զմեռը  
տղոցն է: Ավելի լավ է ասանկ օդին ծերերը ներսը մնան:  
Աշքով Հասկցուց ինձի. «Թնա մորդ ըստ կ'ըլլապետ  
աղան այս իրիկուն մեզի հետ պիտի բնիքի»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նրկու խռաք	ՀԱՓԱԾՈՒ	3
Վահան Թիմելյան—Ներկա Հայաստանին		7
Որբերուն ձեռքերը		8
Կամուրջ		9
Հայաստան առ Ռուսիա		11
Եվգիմեն Ավետիսյան—Հայաստանին		12
Կարոսի երգ		13
Արամ Զարզը—Մեծ Ստալին		15
Կ. Սիտալ—Հայ ժողովրդին		18
Սասան Ճոկեր (Հայովածներ պոեմից)		21
Ո՞վ իմ տուն		27
Մշակի սերը		29
Նոր հորդին		30
Գեղջուկ հրավեր		31
Զուրբելյան—Առացվածք ժառ անկերու առթիվ		33
Տունիս հիշատակը		34
Փախտը		35
36		
Վահե Վահյան—Ծաղիկ տարագեղ		37
Կարստ զվարթ բաներու		38
Արեին հետ		39
Աղբյուրի մը ակունքին		40
Ջանձրախա		41
Երջանկություն		42
Ծփանը		43
Պղախիկ արձագանք		44
Սիրմաւքաղ		45
Մէկնում		47
Սիտակ Մանուչյան—Մուսայիս		49
Ամբուլ հոգիս		50
* * *		51
Դործազուրկները		53
Սիրերգ		54
Ուրախություն		55
Ա. Մելքոն—Քարուն		56
Հայաստանին		57
Ներգաղթ		58
Նոր զատիկ		60
Հայաստանյան տարեդարձ		61
Վերածնունդի երգեր		63
Անվերնագիր		64
Սեմբն վրա		65
Զմեռք ցուբա մշուշով		66
Հայունաբաղմություն		


Արամ Արմեն—Պատճեն այս խաղաղ	67
Միջոցին մեջ տակավին	68
Խոչպես չերգեմ քեզ հիմա	69
Զորավոր Բազրությանի ողին	70
Գել առավոտ մը միտյն	71
Հայաստանի բանաստեղծներուն	72
Թաշքուս	73
	74
Եյուգանի Թոփայշան—Հայաստան	75
Հովի. Կուկայանի—Հայրենիքիս	76
Հայ զինվորին նամակը	78
Շուրջուար	80
<b>Զոյս (պահմաժից)</b>	81
Գրիգոր Կյուլյան—Գնդապետ Զաքյանի հիշատակին	83
Հովի. Ազգայանի—Սառալին	85
Անդրանիկ Թերզյան—Առվատական Հայաստանին երջոնկություն	86
Ամրատ Տեռուելյան—Ստալինգարդ	87
	91
Լուիզ Առանցիան—Հարցականի ուղիներով	
Շահան Շահնուր—Դերձակ մը, իր երկու հյուրերը և դանազան դեպքեր	104
Զ. Մ. Արքունի—Փորձը	132
Վահե Հայկ—Քնացիք, մամա	161
Աստ հանգչի	165
Անն Զ. Ասորինելյան—Հրեդեն ձին	182
Յոթը սպիտակ մաղեր	202
Բնիքանիմ Նարիկյան—Մաշած ավել	207
Բնիքանիմ Նարիկյան—Արցունքի կտիլիներ	213
Անդրանիկ Արդինատյան—Արցունքի կտիլիներ	229
Վահրամ Տատրյան—Օձը	241
Սուրեն, Մաթիվելյան—Հայր և որդի	267
Հ. Սարգսյան—Տիկար Հավհանու և Հուղարք	282
Տ. Վարժապետյան—Հայրենիքիս զուրու	291
Ֆիչերդ Հակոբյան—Մուրը ձյունի մեջ	298

գ. թ. 12639 Պատվիր 542 Տիրամ 5000


Տար. 19,5 մամ., Ստորագրած է այս. 12 XII 1946 թ.

ՀԱՅԿ. ՍՍՌ Մինիստրների Սովորին կից Պոլիցիաֆ և Հրատարակուու-  
թյունների Վարչության Հ 3 տպարան,  
Երևան, Ալահարդի պողոտա 65

2







[1p.]

